

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԼԱՅԵՐԷՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

305

П. М. МУРАДЯН

ГРУЗИНСКАЯ ЭПИГРАФИКА
АРМЕНИИ




ИСТОЧНИКОВЕДЧЕСКОЕ
ИССЛЕДОВАНИЕ



Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԼՅԵՐԵՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԱՂՋՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ
ԲՆՆՈՒԹՅՈՒՆ



197

Աշխատության մեջ հավաքված, վերծանված ու քննության են առնված Հայաստանի տարածքում պահպանված բոլոր հին վրացերեն արձանագրությունները: Վիճազիր ու մատենագրական այլալեզու տեղեկությունների համագրությամբ բացահայտված է այդ արձանագրությունների աղբյուրագիտական արժեքը՝ երկրի ժԱ—ԺԻ դարերի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային պատմության համար: Գրքում վերանայված ու ճշգրտված են հիշյալ դարերի հայոց և վրաց պատմության ու մատենագրության մի շարք կարևոր էջեր:

Առաջարկվող մենագրությունը նախատեսվում է պատմաբանների, բանասերների և կովկասագիտությամբ հետաքրքրվող լայն շրջանների համար:

Մ $\frac{10602-1}{704(02)-77}$ 25—70

© Երևանի համալսարանի
հրատարակչություն, 1977

Յ ար 70 ր թ 7 ր 0 1 0 1 0 1 0

ქართულნი წარწერანი სომხეთისანი

(სომხურ ენაზე)

ց ր 7 0 1 0 1 0 1 0 1 0

Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կովկասագիտության զարգացման արդի վիճակում հայկական և վրացական մատենագրական աղբյուրները հեռու են անցյալի քաղաքական, տնտեսական ու մշակութային պատմության առաջադրած բոլոր խնդիրներին զահացուցիչ պատասխան տալու կարողությունից: Եթե անգամ զանց առնենք միջնադարյան պատմիչների՝ եկեղեցու սպասավոր լինելու, հասարակական կյանքի ոչ բոլոր կողմերը նույն տեղյակությամբ ու մանրամասնությամբ ներկայացնելու և տեղայնության ու ավանդականության պարագաները, ապա պատմագրական երկերի շղթայական հաջորդականության պահանջին ստիպում է դիմել օժանդակ աղբյուրների՝ մերթ այդ ընդհատումները լրացնելու, իսկ հաճախ էլ առկա նյութի սուղությունը վերահասու լինելու, այն մանրամասնելու համար: Միջնադարի վերաբերմամբ այլալեզու աղբյուրների ուսումնասիրությունն ու մատենաշարային հրատարակչությունը միայն մասամբ են լրացնում այդ բացը, այն էլ գերազանցապես քաղաքական-եկեղեցական պատմության հարցերում: Ուստի լիովին հասկանալի է այն հոգացուցիչությունը, որ ցուցաբերվում է հազարավոր ձեռագրական հիշատակարանների, «մանր» համարված ժամանակագրությունների, ոչ զուտ պատմական նյութերի երևան հանելու և հրատարակելու գործին: Հայկական միջնադարյան վավերագրերի քննությունից ակնկալվող տեղեկությունները շատ չեն, որովհետև փաստաթղթերի աննշան մասն է միայն պահպանվել, այն էլ, ըստ մեծի մասին՝ ուշ դարերի և կամ գրչագրերից ոչ պակաս հետագա ընդօրինակություններով ու միջամտություններով: Ակադ. Հ. Օրբելու արդարացի դիտողությամբ «...թագավորական հրովարտակները, կաթողիկոսական կոնդակները, զանազան հրամանագրերն ու որոշումները, նվիրատվական փաստագրերը, պայմանագրերը, կալվածագրերը և այլն կամ չեն հասել մեզ, կամ հասել են ոչ թե ձեռագրերի ձեռով, այլ իբրև քարերի վրա փորագրված արձանագրություններ»¹: Վերջիններիս կշիռը պատկերացնելու համար թվարկածին պիտի ավելացնել շինարարական,

¹ Հ. Օրբելի, Հայկական վիժակյան արձանագրությունների գիտական նշանակությունը, «Գիտական հայ վիժագրության», պրակ I, Երևան, 1966, էջ VI:

միարանական, հիշատակագրային ու տապանագրային արձանագրությունները:

Ի տարբերություն մատենագրական-ձեռագրական աղբյուրների, արձանագրությունները գրեթե զերծ են ընդօրինակության միջոցին սխալագրությունների ներառելու, ընդմիջարկվելու վտանգից, խմբագրվել-սրբագրվելու հնարավորությունից և այլն, իսկ այդ ամենը նրանց բովանդակության հանդեպ առավել վստահություն է երաշխավորում: Երկրորդական իրողություն է նաև վիմագիր հուշարձանների անմիջական ու անվիճելի առնչությունը իրենց գտնված տեղին՝ սկսած ավյալ բնակավայրից մինչև դավան ու երկիրը:

Գիտելու է, որ ձեռագրական հիշատակարան-հիշատակագրությունների պես վիմական արձանագրություններն էլ գրառվում են անցուղարձի, պատմվող իրողության անմիջական աղբյուրության տակ, հաճախ իբրև նրա ուղղակի արդյունք, միշտ փաստական բովանդակություն ունենալով: Որքան էլ դրանց հաղորդած տեղեկությունները փոքր լինեն, հաճախ նույնիսկ մասնավոր, հետազոտողը նրանցով այլպեղան ստուգումներն ու համարությունները հարասելու, որոշակի նախասիրությամբ ու մտայնությամբ ներկայացնելու պատմիչի կանխակալություններից: Սակայն մատենագրական երկերի ուսումնասիրությունը, վիմագրության համեմատությամբ, ունի որոշ դուրսություններ. ձեռագրական այլընթացումների բաղադրությամբ կարելի է լրացնել կամ վերականգնել տվյալ գրչագրում պակասող բառը կամ նույնիսկ հատվածը, մինչդեռ վիմագրության մեջ նույնական տեքստեր ու տարբերակներ չկան (խոսքը բազմակիցության արձանագրություններին չի վերաբերում), ուստի ինչը հոգմահարվել ու ժամանակի ընթացքում կործանվել է՝ դիտության համար կորել է ամփոշու: Այստեղ վերականգնումներ հնարավոր են առանձին տառեր-տառաշարերի ու բառեր-բառակապակցությունների սահմաններում, այն էլ առ այդ վստահելի կովաններ ու տեղադրելի տարածք ունենալու պայմանով:

Ի վերջո, ոչ երկրորդական կարգի տարբերություններից մեկն էլ վերաբերում է հուշարձանների լեզվին: Անկախ բաղաբական վերաբերումներից, պատմիչի մտայնությունից ու ժամանակի «անդեպ» լինելուց, մատենագրական երկը գրվում է հեղինակի ու երկրի մայրենի լեզվով, մինչդեռ վիմագիր արձանագրությունների լեզուն հաճախ թելադրված է ոչ այնքան հրապարակման միջավայրին հասկանալի լինելով, որքան այն վիմագրելի տվողի բաղաբական, դավանական պատկանելությամբ և կամ այն նպատակագրումով, որ հետապնդում է նրա իրական հեղինակը: Այդ ամենին գումարելի է նույն միջավայրում այլալեզու էթնիկական միավորումների առկայության պարագան: Ահա այս գործոնների աղբյուրությամբ է, որ միջնագրում զիր ու գրչություն շունեցող Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ու էթնիկական միավորումների մոտ կարելի է շուրջ մեկ տասնյակի հասնող լեզուներով արձանագրություններ գտնել, երբ նրանցից և ոչ մեկը

տեղաբնիկի համար մայրենի չէ: Այսպես, օրինակ, Հյուսիսային Կովկասի վիմագրությունը ներկայացված է հետևյալ լեզուներով՝ հունարեն, լատիներեն, եբրայերեն, պահլավերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, Տաջիկերեն, վրացերեն, ուշ շրջանում՝ նաև արարատուս կամ վրացատուս տեղական մեկ-երկու լեզվով²: Հիշյալ լեզուներով գրված լինելու փաստն ինքնին արտացոլում է տեղիս բաղաբական իշխանության և աղբյուրության հաջորդականությունը, դավանական պատկանելությունը, դրանի էթնիկական միավորների բնակավայրերի գոյությունը, մշակութային աղբյուրության ուղղուր և շատ այլ իրողություններ: Այդ խայտարեղևության մեջ, ինչ խոսք, նշանակալի է և միասնական լեզվի ու գրի-գրչության շգոյության պարագան, բայց վճռականն այդ չէ, այլ այն հանգամանքները, որոնց թելադրությամբ կատարվել է լեզվի ընտրությունը:

Հայաստանն ու Վրաստանը դարավոր դիր ու գրականություն, գրաբեզու ժողովուրդներ ունեցող երկրներ են, բայց այստեղ էլ քիչ չեն վիմական հուշարձանների բազմակիցվածություն փաստերը: Վրաստանում պատկանելի քանակությամբ վրացերեն արձանագրությունների կողքին, որոնց ուսումնասիրման ու հրատարակման գործում մեծ է Մ. Բրոսելի, Ն. Մառի, Ե. Թաղաշվիլու, Գ. Բաբրաձեի, Իվ. Ջավախիշվիլու, Ա. Շանիձեի, Ն. Բերձենիշվիլու, Թ. Բարնավիլու և այլոց վաստակը, նշանակալի թիվ են կազմում հունարեն, Տաջիկերեն, արաբերեն, պարսկերեն, եբրայերեն և մի քանի այլ լեզուներով գրված վիմագրերը: Նույն իրողությունն է և Հայաստանում, ուր շուրջ տաս հազար հայերեն արձանագրություններին գումարվում են թվարկած բոլոր լեզուներով եղածները:

Հնարավոր է, որ Հայաստանում, Վրաստանում կամ Հյուսիսային Կովկասում ապրել ու ստեղծագործել են հույն, ասորի, պարսիկ, արաբ, թուրք և այլազգի մատենագիրներ, բայց նրանց թողած գրավոր ժառանգությունը քիչ է առնչվում այդ երկրների պատմությանն ու մշակույթին՝ հիմնականում մնալով երկի լեզուն կրող ժողովրդի սեփականություն, մինչդեռ այդպես չէ վիմագրության վերաբերմամբ: Վերջինս երկակի նշանակություն ունի. անկախ լեզվից, բովանդակած նյութի կարևոր-անկարևոր լինելուց, այն անմիջական աղբյուր ունի գտնված տեղի՝ երկրի կամ դավառի պատմության հետ, ուր հանգամանքների բերումով արձանագրվել է և ապա՝ տվյալ հուշարձանը չի դադարում այն երկրի պատմությանն ու մշակույթին աննշվելուց, որի լեզվով գրված է: Հիշյալ առումով հատկանշական է Վրաստանի արաբերեն արձանագրություններին վերաբերող ակադ. Գ. Մերեթելու զնահատությունը. «Ըստ էության արանք վրացական հուշարձաններ են, արաբերեն լեզվով ներկայացված, այնպես, ինչպես վրացական են Գիմիաթե արքայի, Թամարի, Լաշա-Գիորգիի, Ռուսուդանի և այլոց գրամները՝

² Արաբատու արձանագրությունների համահավաք հրատարակություն տե՛ս «Эпиграфические памятники Северного Кавказа на арабском, персидском и турецком языках», тексты, переводы, комментарии, введение и приложения Л. И. Лаврова, М., ч. 1, 1966; ч. II, 1968.

առկա արբերեն մակագրություններով, որոնց մեջ տրված են քրիստոնյա Արևելքի այն ժամանակվա ուժեղագույն պետություններից մեկի թագավորների տիպոսները՝ տարբեր բոլոր նման գրամների արձանագրություններից: Այդ պատճառով այս հուշարձանները պետք է վրացական հուշարձան համարենք, անկախ նրանից, որ արբերեն լեզվով են գրված³: Թերևս այսօրվա վերապահելի կետեր կան, բայց հիմնականն ու ընդունելին այն է, որ Վրաստանում գտնվող այլալեզու արձանագրությունները վրացերեններին հավասար չափով վերաբերում են ավելի երկրի պատմությանն ու մշակութային, ուստի նրանց ուսումնասիրության գործում առաջին հերթին շահագրգռված են վրացագետները: Վերջին տասնամյակներում կատարված ուսումնասիրությունները հրատարակումները լիովին արդարացրին այդ հարցադրումը. պրոֆ. Թ. Ղաուխիշվիլին ծավալուն մենագրությամբ ի մի հավաքեց, վերծանեց, թարգմանեց ու աղբյուրագիտական քննության ենթարկեց Վրաստանում պահպանված հունարեն արձանագրությունները⁴, Յ. Կախիանին առանձին գիրք նվիրեց Գմանիսի արբերեն արձանագրություններին⁵, Ն. Բաբալիկաշվիլին կազմել է երբայերեն արձանագրությունների դիվան⁶, իսկ պրոֆ. Լ. Մեղիբեկ-Քեկելը տասնամյակներ շարունակ հետաուսում էր Վրաստանի սահմաններում եղած հայերեն արձանագրությունների հավաքմանն ու վերծանությանը, որ նա ամփոփեց շուրջ բա՛ն տարի առաջ ավարտած ու Հայաստանի ԳԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտին ի տպագրություն հանձնած դիվանով: Փաստորեն՝ Վրաստանում պահպանված այլալեզու արձանագրությունների ուսումնասիրության ու հրատարակման աշխատանքն ավելի մոտ է իր լիակատար ավարտին, քան, թող այդ վարմանակի շրջան, վրացերեն վիճակները, իրերի նման վիճակը, ինչ խոսք, թեև գրված է վերջիններիս բողոքաբանականությամբ, այլևայլ առիթներով նրանց նշանակալի մասի հրատարակված լինելով, թեև դա ամենևին չպիտի դանդաղեցնի սպասելի հատորավոր դիվանների հրատարակությունը:

Ամփոփելով 1933 թ. Զավախբում կատարած վիճակագրական գիտարշավի արդյունքները, ակադ. Ն. Բերձենիշվիլին եզրակացնում էր. «Ընշված հարցը (ի՞նչ վիճակների հավաքումն ու հրատարակումը — Պ. Մ.) երկար ժամանակ վրաց գիտական շրջանների մտահույզության առարկան է: Այս

³ Յ. Վերդեղո, Լեմբերգի ցեղերի և մատի մեմբերգելոն յայտնող քաղաքային օրհանգրվան, տ. 1, հ. 1, 1947, թ. 46—47. Երևան, 1947, թ. 46—47. Երևան, 1947, թ. 46—47.

⁴ Օ. Կախիան, Երևան, 1965, թ. 3.

⁵ Օ. Կախիան, Նշվ. աշխ.

⁶ Տե՛ս «Մեդիա», 1970, № 6, նաև՝ Նիսան Բաբալիկաշվիլի, Еврейские надписи в Грузии (XVIII—XIX вв.), Тб., 1971. Հիմառ. Զ. Կիկնաձի գրախոսությունը, «Մեդիա» (Երևան և Լոռի, 1972, № 4, էջ 177—189.

⁷ Աս այսօր աշխատությունը շարունակում է մնալ հանգուցյալ վիճակում Ս. Բաբալիկաշվիլի անձնական արխիվում, և հրատարակությունը մեզ անհասկանալի պատճառներով չէր հասնում է:

գործը մի քանի անգամ ձեռնարկվեց էլ, բայց ձեռնարկման անարդյունք լինելը անհետևողականությամբ է բացատրվում... Մի ժամանակ այլ շատ ավելի գործերի մեջ սա բուրբից ավելի անհետաձգելին է: Ուշանալ-ես մնալու տխուր հետևանքը այսօր ամենից ակնհայտ է, ավելի մեծ ու դիտարկման համար ընդմիջող կորած են բազմաթիվ հնագույն արձանագրություններ և, որ ավելի ուրախ է, այսօր մեր աչքի առաջ մեծ արագությամբ ավերվում ու կործանվում է այն, ինչը ցարգ դիմացել է ժամանակների հողմերին: Այսպիսի պայմաններում մեր գիտական շրջանների պարտականությունն ու պատասխանատվությունը մեծ է ու լուրջ: Ժամանակը այլևս չի համբերում. այս մեծ գործը անհետաձգելիորեն պետք է կատարվի⁸: Ինչպես վերևում տեսանք, շատ հրատարակություններ արդեն իրականացված են, մասնավորապես, եթե նկատի ունենանք նաև Թ. Բարնավիլու, Վ. Յիսկարիշվիլու և ուրիշների՝ առանձին գավառների վիճակագրությանը նվիրված աշխատությունները⁹: Այդ ամենը, անշուշտ, կարելի է գիտել իբրև տպագրման մասնաշաղկապի հրատարակության նախապատրաստություն:

Վրացերեն արձանագրությունների աշխարհագրությունը, ինչպես և պետք էր սպասել, անհամեմատ ավելի ընդարձակ է, քան բուն երկրի պատմական սահմանները, թեև նրանց զերակելու մասը ներսում է գտնվում: Դիտելու է, սակայն, որ Վրաստանից դուրս գտնվողներն էլ անմիջական առնչություն ունեն երկրի բազմաբան, տնտեսական ու մշակութային կացությունը և հավասարապես նկատառելի են նրա պատմական անցյալն ուսումնասիրելիս: Հայերի հետ մի ժամանակ վրացիները ևս քրիստոնյա Արևելքի առավել նշանավոր սրբավայրերում և կրթօջախներում ունեին իրենց մենաստանները, որ ոչ միայն մատենագրական գործունեությամբ էին պարսպում վրացերենի վերածելով հունարեն, ասորերեն, հայերեն, արաբերեն և այլ լեզուներով գրված աստվածաբանական կարևորագույն երկեր կամ ստեղծելով ազգային մատենագրության նոր գործեր, այլ նաև կառուցում էին ճարտարապետական հուշարձաններ՝ վիճակը անհրաժեշտ հիշատակարաններով: Այդ շարժառիթով են զուգացել Պաղեստինի շուրջ հնագույն վրացերեն արձանագրությունները, որոնց գոյությունը վանական-մշակութային աշխույժ գործունեություն է վկայում 5—6-րդ դարերում¹⁰: Վրացի և վրացախոս միաբաններ կային Մե լեռների (Սամանուսյան լեռներ) վանական հաստատություններում, որոնք 13-րդ դարի սկզբներին համերաշխ գործակցության մեջ էին տեղիս հույն, հայ և ասորի պաշտոնակիցների հետ: Այսպիսի րնորոշմամբ «Թ տուն իշխանության հայոց և ասորի իշխանք

⁸ Ն. Բերձենիշվիլի, Նախորդող օրհանգրվանի լեզուներ, Երևան, 1964, թ. 45.

⁹ Տե՛ս Թեոֆիլ Բարնավիլի, Մեդիանի լեռների վրացերեն, տ. 1, 1961, նույնի՝ Կախիանի օրհանգրվանի լեռների վրացերեն, տ. 1, 1962 և այլու: Յ. Կախիանի, Քաղաքային ցեղերի և մատի մեմբերգելոն յայտնող քաղաքային օրհանգրվան, տ. 1, 1947, թ. 46—47.

¹⁰ Նրանց ուսումնասիրությունը և հրատարակությունը տե՛ս Յ. Վերդեղո, Մեդիանի լեռների վրացերեն լեզուներ, Երևան, 1960.

Գանձասարում՝ 87 (ըստ Հ. Օրբելու անտիպ աշխատության), Հովհաննավան-
րում՝ 80 և այլն: Հանդուցյալ վիմագրագետ Ս. Բարխուդարյանի նորերս
լույս տեսած «Ռիվան հայ վիմագրության» շորորդ պրակում ներկայացված
են Սևանի ավաղանի (Կամոսի, Մարտունու և Վարդգեսի շրջաններ, առանց
Սևանա կղզու) արձանագրությունները՝ 1547 միավոր: Ուստի չափազանցու-
թյուն չէ, երբ ասվում է, թե «Մեկ տասնյակ հազարից անցնում է դիտությունը
հայտնի հայատառ մեծ ու փոքր վիմագրերի ընդհանուր քանակը»²²:
Զմտնելով նման իրողության բացատրության մանրամասների մեջ, հարկ է,
սակայն, նկատել, որ ամենակարևոր գործոններից մեկը կենտրոնացած
պետականության տևական չորություն պայմաններում հրովարտակների,
կոնդակների, փաստագրերի, պայմանագրերի, նվիրագրերի և բազմաթիվ այլ
վավերագրերի հրապարակման վիմագրյալ եղանակն է, որ աստիճանաբար
ավանդական էր դարձել: Վրաստանում այդ անհրաժեշտությունը մեծ չէր,
որովհետև կալին փաստագրերը վերահսկող ու պահպանող արքունական,
կաթողիկոսական, թերևս և առանձին իշխանական տների դիվաններ, ուստի
միջնադարյան հայկական ոչ մեծ թիվ կազմող վավերագրերի դիմաց
Վրաստանում ունենք հսկայական հավաքածոներ, «մեկ տասնյակ հազարից»
ավելի փաստաթղթերով²³:

Այս իրավիճակը արտացոլվել է Հայաստանում պահպանված և հայագիր,
և այլալեզու վիմագրերի մեծաքանակության մեջ. այստեղ, վաղ շրջանի
հունարեն, լատիներեն, արամերեն արձանագրություններից հետո (այլ
երևույթ է ուրարտերենը), հայերենին զուգահեռ ու միաժամանակ փոքր-
զորվել կամ դեղազորվել են բավաթիվ արաբերեն, պարսկերեն, վրացերեն,
թուրքերեն և այլ արձանագրություններ, որոնց մեջ բավական մեծ տեղ է
հատկացված վրացերենին:

Այսպիսով, բնական է, հայ վիմագրագիտության առաջնահերթ խնդիրը
պատմական Հայաստանի տարածքում պահպանված վիմական հիշատակա-
րանների հավաքումն ու աստիճանական կամ հանկարծաճաս կործանումից
փրկելն է եղել, որ դեռ այսօր էլ չի դադարել օրակարգի հարց լինելուց:
Նման պարագաներում այլալեզու հուշարձանների ուսումնասիրությունը,
իրեն օժանդակ աղբյուր, գերազանցապես կապված է մասնագիտական
առանձնակի խնդիրների առնչությամբ նրանց դիմելու անհրաժեշտության
հետ: Վիմագրերի հրապարակման այս խնդրաբույլ հերթավարդը պայմանա-
վորված է և այլ գործոններով. եթե հայ վիմագրության մասնագիտը գործ
ունի հրապարակելիք նյութի զանգվածային տեղագրության հետ, որ
նպաստում է աշխատանքի ընդգրկումը ընդլայնելուն, ապա այլալեզու
հուշարձանները հիմնականում ցրված են, հաճախ մեկ-երկու օրինակով,

²² Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների հեշտունքանություն, Երևան, 1973,
էջ 12:

²³ Նրանց մասին ամփոփ տեղեկանք տե՛ս С. С. Какабадзе, Грузинские документы
Института народов Азии, М., 1967, էջ 6—13:

տարբեր շրջաններում, աննկատելի գառնալու շափ լուծվելով տեղի հայերեն
արձանագրությունների բազմության մեջ:

Հաջորդ խնդիրը այլ բնույթի է. եթե հայերեն արձանագրությունների
վերծանության-հրատարակության համար այլալեզու աղբյուրներն ու վիմա-
գրերը վճռական նշանակություն չունեն, ապա Հայաստանում եղած
այլալեզու-այլազիր արձանագրությունների ուսումնասիրության, նույնիսկ
հավաստի վերծանության համար պահանջվում է նույն հուշարձան-հուշար-
ձանախմբի հայերեն շատ արձանագրությունների հիմնավոր իմացություն,
իսկ վերջինս, ինչպես նկատեցինք, հարյուրավոր վիմագրերի դիտական
հրապարակումից հետո է հնարավոր դառնում: Խոսքը ամենից առաջ
վերաբերում է վրացերեն արձանագրություններին, ինչպես որ դժվարանում
ենք պատկերացնել Վրաստանում եղած հայերեն վիմագրերի ուսումնասիրու-
թյուն կամ հրատարակություն՝ առանց տեղի վրացերեն հիշատակարանների
հիմնավոր ծանոթության: Առանց Անիի, Պոնդաֆանի, Քրթալի, Կոշի և
այլ վայրերի հայերեն արձանագրությունների տվյալների գրեթե անհնար
պիտի լինե՞ր այնտեղ գտնված վրացերեն հիշատակարանների թվագրումը,
ներկայացվող անձանց ինքնության ճշգրտումը, հաղորդվող դեպքերի կամ
իրողությունների արժեքավորումը, մի խոսքով այն ամենը, ինչ ուսումնասի-
րալթյուն է կոչվում և ոչ սոսկ նույնական տեսուտի հրապարակում, թեև
վերջինս նախապայման է: Այստեղից բխում է Հայաստանում պահպանված
վրացերեն արձանագրությունների բնույթի մեկնարկական եղանակի անհրա-
ժեշտությունը, որովհետև նրանց բնագրի ու բովանդակության ճիշտ
ընկալումը, առավել ևս թարգմանությունը, աղբյուրագիտական հանգամանա-
լից աշխատանք են պահանջում:

Այս ամենի պատճառով է, ահա, որ Հայաստանի վրացերեն արձանա-
գրությունները տակավին սպասում են լիակատար հավաքման, վերծանության
և ուսումնասիրության:

Վերևում արդեն նշեցինք, որ այլալեզու արձանագրությունները կրկնակի
հետաքրքրություն են ներկայացնում՝ ըստ վիմագրման տեղի ու լեզվի,
բայց այժմ պիտի ավելացնենք, թե Հայաստանում եղած վրացերեն հուշար-
ձանների ո՛չ տեղը, ո՛չ էլ լեզուն համեմատելի չեն, ասենք, նույն Հայաս-
տանում կամ Վրաստանում գտնվող արաբերեն, պարսկերեն վիմագրերին:
Այնտեղ եթե խոսքը այլ երկիր նվաճելու, իշխելու, մայրենի լեզվով
հրահանգներ առաքելու, տեղում երկար բնակություն հաստատելու մասին է,
ապա մեզանում երկիրը չի նվաճվել, այլ ազատագրվել է (հիշենք անցյալի
դիմումը Գիորգի III-ին, Զաքարյաններին դիմավորելու խանդավառությունը
և շատ այլ փաստեր), մեզանում արտոնագրեր շնորհողը բնտանի է և՛
ծագումով, և՛ գործունեությամբ, այստեղ խոսքը նոր հարկեր սահմանելու
մասին չէ, այլ օտարից ազատագրելուց հետո այն թեթևացնելու, վերջապես,
խոսքը շինարարության մասին է և ոչ ավեր-ավարի: Ընդ որում՝ այդ
արձանագրությունների լեզուն (ինչպես և նրանով եղած մատենագրությունը)
բնտանի ու հասկանալի է ոչ միայն էթնիկապես վրացու, այլ դավանության

թեկզմանը իրեն վրացի համարող տեղացի հայի համար: Եկեղեցիներ օծելու առիթով Անի ժամանած վրաց ետիփան կաթողիկոսը դիմում է «այս քաղաքի բնակիչ վրացիներին», ուր «վրացի բառը մեր տեքստում ունի, անշուշտ, դավանական տերմինի նշանակություն. վրացիներ ասելով հասկացվում են ոչ միայն արշավը վրացիները, այլև հայ-քաղկեդոնականները»²⁴: Ի վերջո, Հայաստանի և Վրաստանի հիշյալ դարաշրջանների պետական, հասարակական-քաղաքական կացությունը, անտեսական-մշակութային ինտ-արիտունները, բարոյակրթական նորմերը այնքան ընդհանուր էին և շատ բնականավորը այնքան գերիշխաուն, որ Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրությունները, ինչպես որ հայագիր բազմաթիվ այլ հիշատակարաններ, հավասար չափով վերաբերում են և Վրաստանի պատմու-թյանն ու մշակույթին: Տեղին է վկայակոչել ակադ. Ն. Մատի բազմաթիվ իրողություններից բխող եզրակացությունն այդ ընդհանրության կապակցու-թյամբ. «Ով ուզում է ոչ միայն հաճույք քաղել վրաց հին գրականության պատկ «Ընձենավորից», այլև հասկանալ նրա հանճարող քերթող Շոթիկ Ռուսթավելուն, նա պետք է իմանա Անիի հայոց ճարտարապետության գեղարվեստական հուշարձանների պատմությունը, հատկապես քաղաքացիա-կան: Ով կամենում է հասկանալ մեծ մասամբ անանուն անցիլ խոշոր նկարիչ-ճարտարապետներին, նրանց դարմանահրաշ ստեղծագործություն-ները, նա պետք է խորանա վրացական ուսմանտիկական «Ընձենավոր» պոեմի՝ քրիստոնյա Արեևելի միջնադարյան քնարերգության այդ հրաշակերտի ուսումնասիրության մեջ: Բայց, այնուհանդերձ, նրանց այդ հոգեհարազատու-թյունը (сродство) հայոց՝ վրաց վրա, կամ վրաց՝ հայոց և կամ մահմեդա-կանների՝ մեկի և մյուսի վրա սոսկ ազդեցությունը չի գոյացրել: Պատճառները ավելի ընդհանուր ու ավելի խորն են: Հայաստանում ու Վրաստանում հենց 12—13-րդ դարերում, անկախ Բագրատունիների վրացական հյուղի հովանու տակ նրանց քաղաքական միավորումից, ավելին՝ հակառակ կրոնական բամանվածությունը, սոցիալական նույնական պայմաններում՝ քաղաքների ու քաղաքացիների նշանակության աճ, մշակութային-քրիստոնյա աշխարհի շփումն ու հաղորդակցումը մահմեդականի հետ, ձևավորվեց գեղարվեստական համանման ճաշակ: Եվ ահա, այդ անշուշտամբ հայերի մոտ գոյացած գեղարվեստական իդեալները, դրականությունը եկեղեցին տիրացած լինելու հետևանքով, արտացոլում գտան Անիի ճարտարապետական գծերի ու դեկորատիվ պատկերների հախուռն ծաղկման մեջ, իսկ վրացիների մոտ, վրացական արքունիքի ու առհասարակ վրաց ավատատիրական աշխարհի կողմից աշխարհական գրականության պաշտպանության պարագայում,

²⁴ Н. Мapp, Надпись Епифания, католикоса Грузии (из раскопок в Ани 1910 г.), ИАН, 1910, стр. 1441; *հմտ. նույնի՝ Иоанн Петрицкий*, Грузинский неоплатоник XI—XII века, стр. 8—9; *հմտ. В. Дондуа*, К социально-экономической жизни средневековой Грузии по анииской надписи (1218) Епифания, «АН СССР академику Н. Я. Мappу», М.—Л., 1935, стр. 663; *հմտ. Օլոս Բեռնարդ*, მხოთარ გომის ტრაქტატი «გარბველთაოის» და მისი ლიტერატურული წყაროები, «თსუ შრომები», ტ. VII, თბ., 1938, გვ. 102,

աշխարհական քնարերգության մեջ, ամենից առաջ այն պատկող Շոթիկ Ռուսթավելու ստեղծագործության մեջ»²⁵: Այժմ, կարծում ենք, ակնհեր է, թե ինչու Հայաստանում պահպանված վրացերեն արձանագրություններն ավելի անմիջականորեն են առնչվում այս երկու երկրների պատմությանն ու մշակույթին, քան այլ լեզուներով եղած վիմագրերը: Դրանք փաստորեն, մեկ ընդհանուր միջավայրում գոյացած հիշատակություններ են: Ն. Մատի ակնարկած «Բագրատունիների վրացական հյուղի հովանու ներքո» հայ-վրացական քաղաքական միավորումը նախա-պայման դարձավ ոչ միայն մշակութային սերտաճման, այլև օտարների աչքում նույնիսկ մեկ ամբողջական պետական ու էթնիկական միավոր դիտվելուն: 1255 թ. Անիում զանված ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուքը Շահնշահ երկայնարագուկին կոչում է «երբեմնի ամենագորավոր վրացի իշխան», հարկավ, ամենից առաջ վրաց պետականության սահմաններում նրա գործունեությունը նկատի ունենալով, թեև պակաս կարևոր չէ և «Նովմական եկեղեցու զավակ լինելու» պարագան²⁶: 12—13-րդ դարերում «վրացի» և «Վրաստան» հասկացությունները այնքան էին քաղաքական ու դավանական երանգ ստացել, որ պարսիկ պատմիչ Ահմեդ էլ-Ջաֆարին, «Երկարատանում» Մեկր-Շահի օրոք կատարված ղեկավարի մասին խոսելիս անգամ, Անին զետեղում է Վրաստանում, իսկ բնակիչներին վրացիներ համարում՝ դրա տակ հայոց քրիստոնյա լինելը հասկանալով. واهل گرج خرد و اجل گرج خرد — վրաց բնակչության մեծ մասը քրիստոնյաներ էին²⁷: 13-րդ դարի պարսիկներն մի աշխարհագրական երկուստեք²⁸ տառի տակ խոսվում է երկու քաղաքների մասին, ուր մահմեդականներ կան, բայց վրացիների ձեռքին են (در آنگا مسلمانان باشند اما در دست گرج مانند اند) Արևելագետներ Ռ. Կիկնաձեի և Յ. Կախիսիի ընդունելի եզրակացմամբ խոսքը Դմանխի և Դվինի մասին է²⁹: XIII դարի Հայաստանի և Վրաստանի անցյուղարձեռն լավատեղյակ Ջովինին Ջալալ էդ-դինի արշավանքների մասին խոսելիս գրում է, թե խոյից դուրս գալով նա «...շարժվեց դեպի Վրաստան և Դվինում, որ Վրաստանի սահմանն է, միմյանց միացան» (متوجه گرج گشت و در نون که سرحد گرج است بیکدیگر پیوستند) Այս ամենից ինքնին բխում է, թե մեկ հետաքրքրող արձանագրությունների մեծ մասի վիճարկման շրջանում 12—13-րդ դարերում, «վրացի տերմինը

²⁵ Н. Мapp, Ани, 1934, стр. 37—38.
²⁶ Հով. Զակարյան, Ուղեգրություններ, Ա, Երևան, 1932, էջ 19—20:
²⁷ SH^u N. Khanykof, Excursion à Ani en 1848, տե՛ս M. Brosset, Rapports sur un voyage..., St. Pet., 1849, p. 147, 151, հմտ. Н. Мapp, նշվ. աշխ., էջ 93—94:
²⁸ SH^u Н. Д. Миклухо-Маклай, Географическое сочинение XIII в. на персидском языке, «Ученые записки Института востоковедения АН СССР», т. IX, М.—Л., 1954, էջ 175—213:
²⁹ Ծ. Գանձոնի, նշվ. աշխ., էջ 13:
³⁰ SH^u Ռ. Կիկնաձեի հրատ. շրջանի Ընդունելի Գեղարվեստական Մեթոդ, տե՛ս, 1974, թ. 30 (10)



կարող էր նշանակել վրաց թագավորների իշխանությունն ընդունած բոլոր ժողովուրդները» (Ն. Մատ, անդ): Նման ընկալումը այնքան ամուր էր և այնքան տևական, որ նույնիսկ 19-րդ դարում, «Կաջարների պատմության» հեղինակ պարսիկ Միրզա Թաղին Գ. Շերմազանյանի այն զիտողությունը, թե նա «շատ անձնավորությունների անուններ հիշելիս ուր ուրեք հաչ և ուր ուրեք վրացի էր անվանում», «կարի ստանությունը» պատասխանում է. «Ի՞նչ զանազանություն ունի հայ գրած կամ վրացի, այն ինչ երկրում էլ խաշապաշտ են (խեչիերեստ) և մեկ երկրում, միասին խառն բնակվում են...», իսկ երրորդ զրուցակիցը՝ «մեկ գառամյալ երեկի գրագետ պարսիկ, որ ներկա էր այս մեր խոսակցություններին, ավելացրեց, թե մեր մեջ պատերազմական մարզն (սհար շմշիր—սրի, թրի տեր) կանվանենք գյուղջի, իսկ զվաճառականն, արհեստավորն և երկրագործն՝ էրմենի»³¹:

«Մեկ երկրում, միասին խառն բնակվելու» արձագանքը նկատելի է թե՛ մատենագրական հուշարձանների, ճարտարապետական կոթողների բազմաթիվ վավերական ընդհանրությունների մեջ և թե՛ իշխանական կամ թագավորական տան ներկայացուցիչների՝ երկրի իրական քաղաքական վիճակն արտացոլող տիտղոսներում: Եթե 1001 և 1036 թվականներին Անիում փորագրված արձանագրություններում Գաղիկ Բագրատունին «Հայոց և վրաց շահնշահ»³² էր կոչվում, ապա հաջորդ դարում արդեն վրաց Բագրատունիներն էին այդ տիտղոսի ժառանգորդը, մանավանդ 12—13-րդ դարերի սահմանադրված, երբ «Աստուածատէր իշխանը հայոց ազգատոհմիս»³³ Զաքարիա ամիրսպասալարն ու Իվանն ամիրսպասալարն երեկոց պիտի կոչեին «հաստարիմ ծառա» «աւծեալ և բարեպաշտ և թագոհնաց թագոհոյն Թամարի»³⁴, իսկ վիմագրված տասնյակ իրադարձություններ պիտի թվագրվեին «թագաւոր հայոց և վրաց» Դավիթ Շինարարի, Գիրգի 3-րդի, Թամարի, Լաշայի, Դիմիտրե Անձնուրացի իշխանության տարիներով: 1095 թ. այժմյան Կալինինոյի շրջանի Շահնազար գյուղում եկեղեցի կառուցող ոմն Չնելայի շորս որդիները իրենց ապրած ժամանակները ճիշտ բնորոշելու համար անհրաժեշտ են նկատել եկեղեցու շինարարությունը թվագրել Կյուրիկյան Աբաս I թագավորի և վրաց Դիմիտրե բահանայակոսի գահակալությունների հիշատակությունը: Որպեսզի թյուր կարծիք չտանջվի, թե «հայոց և վրաց» թագավոր կոչելը միայն բարի ցանկություն էր և ոչ փաստական-պաշտոնական իրողություն, անհրաժեշտ ենք համարում բերել Դավիթ արքայազնի 1285 թ. Ավանում հրատարակած արձանագրության սկզբածրը. «Ի թվիս ՉԼԴ (1285), յաշխարհակալութեան արքայից արքային Արղունին, ի թագաւորութեան վրաց և հայոց Դէմէտէի,

³¹ Գ. Շերմազանյան, Երեկի հայկազունքի Պարսկաստան, Բոստով, 1890, էջ 9—10: Հիշյալ պարագան, ցավոք, զանց է առնվել Մ. Թողուայի վերերև հրատարակած «Վրաց-պարսկական դրվագներ» գրքում (1971):
³² Դիվան I, 35, 48:
³³ Անդ, էջ 14:
³⁴ Անդ, էջ 58: Հմմտ. Զաքարիայի 1201 թ. արձանագրությունը Հառիճում (տե՛ս Հ. Եղիազարյան, Հառիճա վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1957, Ա, էջ 59):

և Դաւիթ որդի Դէմէտէի թագաւորին, թողի զԱւանայ այդեաց շարէան...»³⁵: Մեկ հովանու ներքո երկրի քաղաքական միավորման զգացումը այնքան ամուր ու տևական էր, որ նույնիսկ 18-րդ դարի վերջին տասնամյակներին հնդկահայ հրատարակությունների տիտղոսաթիթթը վրաց Հերակլ II թագավորի հասցեագրումով էր կազմվում:

Հայաստանի վրացերեն արձանագրությունների տեղագրական պատկերը ներկայացնելու համար անհրաժեշտ է դիմել Զաքարյանների վարած զինական գործողությունները պատմող աղբյուրներին: Քննությունը զանազան աղբյուրներից քաղված տեղեկություններով շճանարեռնելու համար կարելի է բավարարվել Կիրակոս Գանձակեցու ամփոփ, բայց շատ ընդգրկուն վկայությունը: Վիմական որոշ աղբյուրներում նույնիսկ «Բագրատունի» և «Թագաւոր» հորջորջված երկայնաբազուկ իշխանները ժամանակակիցներին ներկայանում էին իբրև «արք բաջր և ճուխ իշխանութեամբ, պատուեալք ի թագուհոյն վրաց, որ Թամարն կոչէր, զուստր Գիրգեայ բաջի, որդւոյ Դեմետրէի», որոնցից «Զաքարէ էր զօրավար վրաց և հայոց զօրուն, որ ընդ ձեռամբ թագաւորին վրաց, իսկ Իւանէ՛ ամբարակութեան պատուով»: Բայց կարևորն այդ չէ, այլ այդ ամենին հետևող շարունակությունը. «Սորա բազում մարաս քաջութեան ցուցին, քանզի զբազում աշխարհս հայոց, զոր ունէին պարսիկը և տաճկունը, առին ի նոցանէ յինքեանս՝ զգաւառս, որ շուրջ զծովովն Գեղարբունոյ, և զՏաշիր, և զԱլարատ, զԲջնի քաղաք և զԴուին, և զԱնրերդ, և զԱնի քաղաք և զԿարս, և զՎայոյ ձոր, և զաշխարհն Սինեաց և որ շուրջ զնոյլու են բերդք, քաղաքք, և գաւառք. հարկատուս արարին և զսուլաանն Կարնոյ քաղաքին. աւերեցին զբազում գաւառս Պարսից և զԱտրպատականու. ընդարձակեցին զսահմանս իրեանց յամենայն կողմանց»³⁶:

Ահա, այդ «չինքեանս առած» գավառներում նրանք հարյուրավոր շինարարական, նվիրատվական, արտոնագրային և այլ արձանագրություններ են հրատարակել՝ հիմնականում հայերեն, իսկ երբեմն էլ հայոց նոր կազմավորվող իշխանական տներին, եկեղեցական սպասավորների մի մասին ու բնակչության որոշ շրջաններին հասու վրացերեն լեզվով: Վրացերեն արձանագրություններ ունեցող Հայաստանի Անի, Չանգիլի, Կարս, Վաղարշապատ, Կոշ, Քեթառույք, Լեռնանցք, Հնեվանք, Շահնազար, Քորալը, Հաղաթո-Սանահին, Պղնձահանք, Կոպր-Բարանա քաղաքները, ավաններն ու մենաստանները գտնվում են Զաքարյանների ազատագրած հիշյալ գավառներում ու բնակավայրերում, և այնտեղի արձանագրությունները նշանակալի չափով այդ նախարարական տան անվան հետ են առնչվում: Այսպես, օրինակ, Քորալրի բոլոր վիմագրերը (16 միավոր) Զաքարյան շառավիղների շինարարական

³⁵ Տե՛ս Կարա Ղաֆազարյան, Ավանի երկնզյուն ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 18—19:
³⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությունը Կ. Ա. Մելիք-Շահնջանյանի, Երևան, 1961, էջ 162—163:

հիշատակարաններ կամ տապանագրեր են, իսկ Հնեվանքի, Պղնձահանքի, Թեժառույցի, Անիի և Կոշի շատ կարևոր արձանագրություններ գրված են կամ նրանց կողմից, կամ նրանց արևշատություն մաղթելով: Զաբարյան տիրույթներում պաշտոնավարող որոշ ձեռնավորներ, նախարարական այդ տան հովանավորությունը վայելող ավատատերեր ու իշխանական որոշ տոհմեր հարկ էին համարում հիշատակագրել երբեմն հայերեն, երբեմն էլ վրացերեն լեզուներով: Անիում, Երևանում, Մրենում և այլուր բազմաթիվ հայերեն վիմագիր արտոնագրեր ու կալվածագրեր թողած Մահմադինը վրացերեն արձանագրություն է հրատարակում Անիում, ամիրայան Բուբան ու նրա ժառանգները (Քերև նշանավոր Աբուլ-Հասանի տոհմից) Թեժառույցում իրենց հիշատակարանները վրացերեն են գրում, իսկ Գեղարքունիքում ու Սյունիքում՝ հայերեն հիշատակության արժանանում: Մահկանաբերդի Արծրունիներ Սագունն ու նույնպես թեև գրավոր արձանագրումները կատարում են հայերեն, բայց նպատակն էր Հաղարաի որմնակարները վրացերեն մակագրություններով օժտելուն, իսկ Աբուլեթյան տոհմի ներկայացուցիչ Իվանեն Բարանյում (Կողբի մոտ) ամրոցաշինության փաստը պատմում է իր մայրենի վրացերենով: Կարելի էր այլ օրինակներ ևս բերել, բայց այլևս պարզ է, որ վրացերեն արձանագրությունների տեղադրական բաշխումը լիովին համապատասխանում է պատմական աշխարհագրության մեջ տեղի ունեցող փոփոխություններին ու երկրի քաղաքական իրավիճակին: Նույնիսկ Չանգլիում ու Կարսում եղած վիմագրերը սահմանված ոլորտից դուրս չեն: Նման եզրակացության անբուխադրուկությունը կարելի է ապացուցել քննարկվող վրացերեն արձանագրությունների ժամանակագրական վերլուծությամբ:

Հարյուրից ավելի վրացերեն վիմագրերից հնագույնը թվագրվում է 1022 թվականով (Վանանա-վանք), իսկ ապա՝ այդ դարի վերջով (Շահնաղարի և Կուրթանի հիշատակարաններ)³⁷: Հիշյալ պարագան պայմանավորված է նրանով, որ Լոռի Կյուրիկյան թագավորության որոշ շրջաններ դեռ մինչև Բագրատ 4-րդի դահակությունը ընդգրկվել էին վրաց քաղաքական ազդեցության ոլորտը, իսկ հետո միացվեցին կենտրոնականացման ճանապարհին գտնվող վրաց թագավորության հարավարևելյան գավառներին կամ նրանց հետ հակամարտության մեջ գտնվող Լիպարիտյանների տիրույթներին: Դիտելով է, որ Քամար թագուհու օրոք Վրաստանի հետ անմիջական սահման կազմող մի քանի գավառներ ձեռնադրվեցին իբրև վարչական նոր միավորներ՝ ծառայողական էրին իսլամը երկրի ռազմական կյանքում, ինչպես նաև քաղաքական հարաբերություններում: Քամարի պատմիչի հիշատակությամբ այդպիսին էին Գագի, Չորագետ-Տաշիրի, Կարսի էրիսթավությունները: Ինչպես տեսնում ենք, Հայաստանում վրացերեն արձանագրությունների

³⁷ Մ. Զանաշիլու մատնացուցած Կարսի 990 թ. և Չանգլիի 1030 թ. արձանագրությունները իրականում ավելի ուշ շրջանի են: Նրանց մանրամասն քննությամբ կանգնեցնում ենք համապատասխան բաժնում:

երևան դալը փաստորեն հաջորդում է այս կամ այն դավառի անցմանը վրաց տիրապետության սահման: 12-րդ դարում գրված փաստորեն մեկ արձանագրություն կա, որ պատմում է 1154 թվականին Հնեվանքում (Չորագետի ափին) Սմբատ Օրբելու կատարած վերանորոգության մասին: Այստեղ դարմանալին նրա գույությունը չէ, որովհետև գավառը Գավիթ Շինարարի օրոք Վրաստանի կազմ էր մտնել և Օրբելյաններին իբրև տիրույթ արվել, այլ նրա պահպանության պարագան, քանի որ տոհմի 1176[7] ապստամբությունից հետո, ըստ Ստ. Օրբելյանի տեղեկության, «[Գեորգի] հրամայեց ջնջել գլխատակ ազգին Օրբելյանից ի պատմագրոց իրեանց, նաև չեկզկեցեաց... զի մի՛ ևս չիշեսցեն դանուն նոցա և մի՛ թողցեն ի նոցան էլ զբ ի վրաց աշխարհին»³⁸:

12-րդ դարի վերջերից սկսած, կապված Զաբարյանների առաջխաղացման հետ, մեղանում վրացերեն արձանագրությունները հաճախապես են դանում և առավել ստվարանում Իվանի քաղկեդոնական դառնալուց հետո: Անիի, Կոշի, Թեժառույցի, Քոնրայրի, Կողբի, Պղնձահանքի և այլ վայրերի արձանագրությունները (մի քանի տասնյակ) գրված են հենց 13-րդ դարում, հավասարապես բաշխվելով այդ դարի զրեթե բոլոր տասնամյակների միջև: 14-րդ դարում նրանց թիվը նորից նվազում է, իսկ Չանգլիի 1362 թվականի վիմագրով փաստորեն ավարտվում, եթե չհաշվենք 18—19-րդ դարերի որոշ տապանագրեր, այն էլ տոհմական տապանատներում, որ երկրի քաղաքական-մշակութային կացությանը գրեթե առնչություն չունեն³⁹:

Այսպիսով, հրատարակվող վրացերեն արձանագրությունները դերազանցապես 11—13-րդ դարերի են, պայմանավորված վերևում թվարկված պարագաներով: Բայց նրանց մասին ունեցած մեր պատկերացումները շատ թերի կլինեն, եթե անհրաժեշտ չափով չընդգծվեր քաղկեդոնականության դերը: Որքան էլ սուղալին դարձած միաբնակ եկեղեցին պայքար է մղել, այնուամենայնիվ 6-րդ դարից սկսած մեղանում քաղկեդոնականություն միշտ եղել է՝ մերթ ստավարթիվ մենաստաններով ու զորեղ, մերթ այս կամ այն ծառայողական անկյունում ապաստանած: Եվ ամեն անգամ, երբ նպաստավոր պայմաններ էին ստեղծվում, հայ քաղկեդոնականության գործունեությունը աշխուժանում էր: Առկա նյութերով կարելի է բուն Հայաստանում քաղկեդոնական օջախների անկաշկանդ վերելքի երկու շրջան մատնացուցել՝ 6—7-րդ դդ. դարազլիցի մինչև Մանազկերտի ժողովը (726 թ.) և 11—13-րդ դարերը: Նրանցից առաջինը կապված է Բյուզանդիայի ազդեցության ոլորտի հետ (Մավրիկից սկսած), երկրորդը՝ Վրաստանի: Եթե նախորդ դարերում հայ քաղկեդոնականները կարող էին նույնքան ազդալին ներկայանալու հավակնություն ունենալ, որքան պաշտոնականացած եկեղեցին, հավտ-

³⁸ «Պատմություն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 399:

³⁹ Այստեղ չենք արժարժում Զվարթնոցի ձեփերի կամ Օձունի խաչքանդակի վրա եղած վրացերեն մակագրությունների խնդիրը, քանի որ նրանց ժամանակը ստույգ սահմանելի չէ, իսկ բովանդակությունը միաբնակյուն ոլորտի հայեցույց այն կողմ չի անցնում:

նույնիսկ հեռավոր Անտիոքում. այնտեղի ս. Թովմաս եկեղեցում պահպանվել է այդ վիպառոչ ուշադրամ մի արձանագրություն, որի վերծանությունը, որ մեկնաբանությունը զբաղվել են Պ. Պետերսն ու Ռ. Բլեյզը: Հայ բաղկերչոնականները վրացերենով վիժագրել են՝ ԵՅԼԵՆՈՍ ԵՐՆ ԵՄԾԵՍՈՍ — եկեղեցին հայոց է, ուստի տեղիս վանական հաստատությունների հնագիտական, վիժագրական ու մշակութային պատմության ուսումնասիրությանը զբաղված Հ. Մսերյանը այն կոչում է «հայ-վրացական եկեղեցի»⁴⁴:

Անհրաժեշտ է, սակայն, մեկ-երկու լրացուցիչ պարագա ևս նկատի առնել. անցի մեծատուն Սահմադիրը դավանությանը ազդեցիկ եկեղեցու ներկայացուցիչ է⁴⁵, բայց և վրացերեն արձանագրություն է հրատարակում, մինչդեռ նրա հայրենակից Տիրզան Հոննցը՝ «Ջաբարյան իշխանների հավատարիմ ծառայ»⁴⁶, բաղկերչոնական է, այդ դավանության նշանավոր եկեղեցու կառուցող ու «պատկերագործ խտտերով» զարդարող («Գիվան», I, 63), բայց վրացերեն հիշատակարան չի թողնում (չհաշված որմնակարների վրա եղած մակագրությունները): Նշանակում է, չի կարելի վրացերեն արձանագրությունների գոյությունը բացառապես բաղկերչոնականությամբ բացատրել: Այն բացատրելի է թվարկված բոլոր հանդամանքների հանրագումարով⁴⁷: Վստահորեն բաղկերչոնականության հետ գործ ունենք, երբ այդպի-

⁴⁴ Jean Mécérian, Նշվ. աշխ., էջ 111—112:
⁴⁵ Այդ մակարեթում է երևանի Կաթողիկոսի վրա եղած նրա արձանագրության անկեղծ բանաձևից:
⁴⁶ H. Mapp, Նշվ. աշխ., էջ 93:
⁷⁴ Տեղին է վկայակոչել ակադ. Ն. Բերձևիշվիլու նորերս հրատարակված դիտողություններից մեկը. «Եվ երբ վրացական ոճով ու վրացական արձանագրություններով եկեղեցիներ էին կառուցվում Հայաստանում (Շանիձե), եպիսկոպոսություններ էին հիմնվում՝ Կարսի, Գլինի (?—Պ. Մ.), Վաղարշակերտի, Անիի, կամ կաթողիկոսություն՝ Գաղատանում կամ Օսեթ-Ալաներում (Թխորակերտ), [այդ] այն կառուցում էին ո՛չ վրացի միսթոներները, ո՛չ էլ Վրաստանի թագավորական իշխանությունը, այլ տեղական ավատատիրական հասարակությունը, որը այդ նշանով վրացականություն էր ընկալում: Սակայն նրանք այս վրացականության մեջ այլևս ամենից առաջ վրաց ավատական մշակույթ էին հասկանում...»

Տվյալ կրոնաբանում հատկապես ուշադրամ է դառնում տալեցի աղնվականության այդքան համատարած «բաղկերչոնականացումը» 10—11-րդ դարերում: Քարթլիի ավատական մշակույթը, երևում է, ուժգին էր ազդում տալեցի «հայոց» վրա: Եթե ոչ այս, դավանական տեսակետից անբերուն էլ՝ բաղկերչոնականությունն աշտուղ ինչու պետք է առնչվեր վրացությանը և ոչ հույների: Տալեցին ինչու էր դրսև ցավացնում հանուն «վրացականության», երբ հույնությունը նրա համար շատ ավելի հեռանկարային կարող էր լինել... Սույն հարցը կրթիական ազդակցությամբ բացատրելն անձարակ է:

Այնպես որ՝ շատ ավելի բնական է «հայոց» այս դավանական դարձը, այսինքն՝ «վրացականացումը» մենք բացատրենք վրաց ավատական մշակույթի տարածման հիմքի վրա, ուր բաղկերչոնականությունը մեկ ակներև նշան էր, բայց ոչ մեծական. և այս նշանն անբերձատ ավելի ու ավելի թիչ կարողության էր դառնում, ինչքան «Բեձևնավոր» կուլտուրան ավելի ցայտունորեն էր վերածվում («ԵՅՅՅՅՅՅՅՅՅՅՅ») Կովկասի միջազգային մշակութի...» (Ե. Նոյնմե-Պեղո, Նշվ. աշխ., Ծ. VII, օժ., 1974, 83. 91—92): Վկայակոչված համալսելի բնագրում, սեպագիր գրություն լինելու պատճառով, կան որոշ անհարթություններ, զուցե և անհարթություններ:

⁴⁵ Տե՛ս «Արարատ», 1900 թ., էջ 497—504, 562—568, 1901 թ., էջ 55—61, 121—127:

սիք վիժագրված են պաշտամունքային կառույցներին ու հաստատություններին առնչվող շարժառիթներով: Այսպես, օրինակ, Քորյայի, Կիրանց, Հոննցի եկեղեցիներում որմնակարների և, մասնավոր, վրացերեն մակագրություններն ունեցող որմնակարների առկայությունը բաղկերչոնականության բավարար ապացույց է, մինչդեռ Օրբելյանների, զուցե Չնելյանների, Արուսեանների վրացերեն վիժագրելը պայմանավորված է նրանց վրացի լինելու հանգամանքով: Չմոռանանք, սակայն, որ վրացի Օրբելյաններն էլ երբեմն հայերեն հիշատակագրություններ էին անում, որի ապացույցը Սանահնի նրանց միաբանական արձանագրությունն է:

Որքան էլ վերապահություններ անենք, այնուամենայնիվ՝ Հայաստանում եղած վրացերեն արձանագրությունների նշանակալի մասը հայ բաղկերչոնականների, մասնավորապես վանականության, անվան հետ է կապված: Բայց մեզ գրադեցնողը ոչ թե հարցի բրիտանոսարանական կողմն է, այլ, հասկանալի է, պատմական-մշակութային: Այդ իրողության նկատառումը մեծապես նպաստում է «հիսթորիայի կողմանց հայոց վարդապետաց» գործունեությունը, նրանց շատ աշխատությունների երևան գալու շարժառիթն ու նպատակը ճիշտ ընկալելուն ու բացատրելուն: Դավանական հարցեր բնարկելիս էլ խորատես ու իրատես գործիչ-մատենագիրները ոչ միայն չէին ընդդիմանում հայ-վրացական պետական-բարոյական միասնականությանը, այլև նույնիսկ փորձեր էին անում համատեղ քննարկումների միջոցով միազավանության հասնել (հիշենք Լոռեի, Անիի ժողովները): Հիշյալ առումով բացառիկ կարևորություն ունեցող աղբյուր է Մխիթար Գոշի «Թուղթը» Զաքարյան եղբայրների և վրաց բարձրաստիճան հոգևորականությանը⁴⁸: Իմանալով հանդերձ եղբայրների հակումը («հաւանելի թուելով ձեզ սասցեակըն առ ի նոցանէ»), Գոշը նրանց կոչ է անում դավանության շուրջ եղած վեճերը «շիջուցանել իմաստութեամբ, և հաւանել բանի, թէպէտ և անհնար ցուցար գծողովն լինել և զմիաբանութիւն» (էջ 497): Նա շատ կուզենար, որ «ամենայն ազգ միեկրան լինէր», բայց բանի որ դա անհնար է՝ «լաւ համարեցար որ զմիմեանս շիջնամանեմք», անգամ հակված է կարծելու, թե վրաց հոգևորականները «հոռոմներին լսելով» է, որ բանավիճում են, ուստի, «Մի, սիրելիք աստուծոյ, լսող լինիք թշնամեաց մերոց, զի շկայ ի Հայք հերձուած» (էջ 498): Գոշը հավատացած է, որ «բարեպաշտ թագաւորք մեր... Թամար և Դաւիթ» կարող են «թշնամութիւն բանալ», որովհետև «և դորա նախանձաւորին խաղաղութեան և սիրոյ առ միմեանս հաստացելոցս...» (անդ): Գոշը հավատում է և Զաքարյան եղբայրների իշխանական զորութեանը. «Ձի դուք իշխանք էք հայոց և վրաց կամարն աստուծոյ, և թէ կամիք՝ ծանուցանել աստուածաւր թագաւորացք (Թամարին և Դավ-թին—Պ. Մ.), որ արբայական իշխանութեամբ սաստ դնեն... և հաստատուն թիցեն զթագաւորութիւնն ինքեանց՝ բարի շառաւեղան, զեղեցիկ աթոռակալան, ի խաղաղական կեանարք և յազթութեամբ պատերազմաց և բարեպաշ-

⁴⁸ Տե՛ս «Արարատ», 1900 թ., էջ 497—504, 562—568, 1901 թ., էջ 55—61, 121—127:

տուժեամբ կեակ յաշխարհի, հանդերձ քրիստոսաւեր իշխանաւոր՝ քաղցր կամար և իրաւամբ... («Արարատ», 1901 թ., էջ 127):

Մխիթար Գոշը, փաստորեն, վրաց և հայոց թագավորության հաստատութիւնը, հաղթանակներն ու ապահովութիւնը գտնում է «միմեանց հաւանելու», հանդուրժողականութիւն և սեփական ավանդներին հարազատ մնալու իրավունքի մեջ, իր իսկ բառերով՝ «կալ յիրաբանչիւր կարգի ամենայն ազգ» (էջ 125):

Ինչպես երևում է, վրացերեն մի քանի արձանագրութիւնների երևան գալու խնդրում նշանակալի ազդակ է հանդիսացել իրավական վավերականութիւնը փաստաբան գործոնը: Հազիվ թէ Արագածոտն գավառի կոշեցիք Իվանե Երկանբարազուկի ու նրա կնոջ վրացերեն արձանագրութիւնը բնագրով կարգալու հնարավորութիւն ունենային, բայց միևնույն է՝ զոտ տեղական նշանակութիւն ալ փաստաթուղթը վրացերեն է հրատարակվել, թեև ո՛չ տեքստի հեղինակը և ո՛չ էլ վիճագրողը վրացերենի պահանջվելիք հմտութիւն չեն ունեցել: Մնում է ենթադրել, թէ արձանագրեր նախապես կազմվել է եկեղու լեզվով՝ հայերեն և վրացերեն, որից առաջինը գլուղայիններին է ծանուցվել սովորական բնթերցում-հրատարակումով, իսկ երկրորդը վիճագրվել է իբրև իրավական վավերականութիւն ունեցող բնագրի: Նման մեկնարանութիւնը հաստատում է գտնում Անիի արձանագրութիւնների բնձեռած նշույթով: Սուլթան Շեղզագիի 1198—1199 թվականներին զրված պարսկերեն արձանագրութիւնն ավարտվում է հայերեն տողով՝ «Որ հաստխտտ Կահնն՝ արհնին յասուծոյ, ամէն»⁴⁹: Մի քանի տարի անց, հայերեն վկայագրով է հրատարակվում Ետիփան կաթողիկոսի վրացերեն կարգավորագիրը՝ «Թվին ՈԿէ: Ես՝ տէր Գրիգոր իրիցապետ եպիսկոպոս, ես՝ վահրամ ամիրայ քաղաքիս վկայ ենք, որ կաթողիկոսին հրամանք եզ...» (Գիվան I, 61): Մեկ դար անց (1330 թ.) անհրաժեշտ է դառնում Արու-Սայրիք պարսկերեն հրովարտակր օժտել հայերեն և վրացերեն հաստատագրերով՝ «Հաստատուն պահողն արհնին յասուծոյ» և «Ճրտեօյունն օՄ. ձց օտօձօցն Յօթօրօն լաւօնօյցեօ»⁵⁰: Այժմ զժվար չէ հետևել, որ ժամանակի իրավական նորմերի համաձայն՝ վիճագրմամբ հրատարակվել են վավերագրերի բնագիր տեքստերը, անհրաժեշտութիւն պարագայում ալըգիսիք օժտելով տեղում հասկանալի հայերեն կամ վրացերեն post scriptum-ներով: Հետագայում բազմազգ բնակչութիւն տակաւութիւն փառտերի հետ հաշվի հատելը հանգեցրեց բազմալեզվյան արձանագրութիւնների հրատարակմանը: Գրանցից հատկապես նշանավոր են երկուսը՝ Գարեշալի բազմալեզուան (Նժոճալեօ)՝ 1252 թ. քառալեզու հիշատակարանը (վրացերեն-

⁴⁹ «Գիվան», I, 55, հմտ. Պ. Գ. Гюзальян, Персидская надпись Кей-Султана Шед-дади в Ани, «АН СССР академизму Н. Я. Марру», стр. 632—633:
⁵⁰ Լուսանկար տե՛ս «Գիվան», I, ագ. XX, հմտ. В. Бартольд, Персидская надпись на стене английской миссии Мануче, СПб., 1911, табл. I.

հայերեն-պարսկերեն-ուլղուրերեն)⁵¹ և Գրեմի 1595 թ. եռալեզու վիճագիրը⁵²: Այս փաստերի լույսի տակ Հայաստանում վրացերեն արձանագրութիւնների մի մասի գոյութիւնը լրացուցիչ պատճառաբանութիւն է ստանում:

Նախորդ արձարձումների ժամանակ վկայակոչելիք Հայաստանում պահպանված բազմաթիվ վրացերեն արձանագրութիւններ, որոնցից և ակներև էր նրանց բովանդակութիւն մոտավոր խմբավորումը: Փաստորեն հայ վիճագրութիւն ընդգրկած բոլոր բնագրվածներն այստեղ ներկայացված են՝ շինարարական, նվիրատվական, միաբանական, հովվապետական, հիշատակարանային, տապանադրական և այլն: Շինարարականներից բացառիկ հետաքրքրութիւն է ներկայացնում Իվանե Արուեթի որդու արձանագրութիւնը Բարանայում, ուր խոսվում է ամրոցաշինութիւն մասին: Առհասարակ վրացագիր արձանագրութիւնների մեջ Բարանայում եղածը բերդի հիմնարկութիւնը վերաբերող պահպանված ամենավաղ և ամենախարժեք վիճագրերից մեկն է: Հնեմանի Օրբելյան հիշատակարանի մասին արդեն խոսվեց: Այժմ ավելացնենք, որ պակաս կարևորութիւն չունեն և Քորայրի վերանորոգական-շինարարական արձանագրութիւնները, որոնք, բացի համալիրի պատմութիւնը վերաբերող թվալի տեղեկութիւններից, արժեքավոր հաղորդումներ են բովանդակում երկրի սոցիալ-քաղաքական իրավիճակի մասին: Եթէ այդ էլ մի կողմ թողնենք, որմնանկարներին վերաբերող թվալի հիշատակութիւնը արվեստի պատմութիւն համար ելակետային նշանակութիւն ունի, մտնավանդ որ հայ-բաղկեղոնականների մշակութային գործունեութիւնը տակալին ուրվագծված իսկ չէ: Քորայրի շնորհիվ մատչելի են դառնում և Պղնձահանքի, Հաղարատի ու մի քանի այլ մենաստանների որմնանկարչութիւն հարցերը:

Անդադառնալով նվիրատվական-միաբանական բնագրերին, սլիտի արձանագրերը, որ նրանք գերազանցապես նշանավոր կարող են լինել սովյան հուշարձանի կամ գավառի հետ կապված խնդիրներ արժարժելիս՝ անձանց ու զեպերի ժամանակագրութիւնը ճշտելու իմաստով: Մինչդեռ, եթէ խոսում ենք հովվապետական կամ արտոնագրային վիճագրերի մասին, ապա ետիփան կաթողիկոսի 1218 թ. արձանագրութիւնը միջնադարյան մեծարժեք վավերագիր է: Այստեղ է, որ փաստական հաղորդում ունենք 12—13-րդ դարերում հավատացյալների ու եկեղեցական սպասավորների միջև ծալր ստած բախումների մասին: Այդ իմաստով երկրորդական չէ և Կոշի արձանագրութիւնը: Տապանագիր-հիշատակարանները նպաստ են բերում առանձին նշանավոր գործիչների ինքնութիւնը, տոհմագրութիւնը ճշտելուն. օրինակ՝ Քորայրի տապանագրերի շնորհիվ Զաքարյան տան ճյուղագրութիւն մեջ սրբագրութիւններ են կատարվում, իսկ անձնանունների ուսումնասիրութիւն

⁵¹ Լ. Մելիքեթ-Բեկի վերջին հրատարակութիւնը տե՛ս «Эпиграфика Востока», VIII, 1953, էջ 56—62:
⁵² Տե՛ս Չ. Յանօյց, 3. Եղտալորօյց, Եմեղեօյցի Մօրմեղօյց 3-րդմի, Եմեղեօյց Եմեղեօյց, Գ. V—VI, տձ., 1940, թ. 1—11.

համար նրանք բավականազափ նոր նյութ են բովանդակում: Ավելին, Պղնձահանքի 1812 թ. տապանագրից տեղեկանում ենք, որ վաղամեծիկ Բարաթովն ու նրա կին Աննան «մի դժբախտ դեպքի պատճառով, կեսգիշերին մահճին բնած... անգլիորեն սպանվեցին» մեր դավաճան ծառաների կողմից: Եվ մեր արչունը հեղվեց մեր Հաղբատ գյուղում»: Եթե խոսքը սուկ տիրասպանությունը չի վերաբերում, ապա ուշագրավ վիպություն ունենք «տիրոջ» ու «ծառայի» հայրաբերության մասին Հաղբատում: Եթե պրոֆ. Լ. Մևիլիսեթ-Բեկը Վազարշապատում եղած հայ-վրացերեն շափածո տապանագրերից մեկը դիտում էր իբրև նոր էջ հայ-վրացական բանահյուսական կայքերի պատմությունից⁵³, ապա Քորալրում, հանձին խուաշի (") տապանագրի, 13-րդ դարի բնաբերությունն ուշագրավ նմուշ ունենք:

Վիմագիր արձանագրություններն առասպալակ հետու են արծարծած դեպքերն ու իրողությունները մանրամասնորեն պատմելու հնարավորությունից, ուստի նրանց բովանդակած նյութի լիարժեք բնութիւյն համար անհրաժեշտ է ուսումնասիրության ոլորտ ներառել և մատենագրական աղբյուրները: Այս խնդրում էլ Հայաստանի վրացերեն արձանագրությունները բացառություն չեն կազմում. հայկական ու վրացական ձեռագրերի հիշատակարանների, պատմիչների երկերի, մանր ժամանակագրությունների ու այլ ժանրի աղբյուրների համադրության շնորհիվ հնարավոր է դառնում իմաստավորել ու արժեքավորել վիմագիր համատու ակնարկները: Հիշյալ պարագայի թելադրանքով, ուսումնասիրության մեջ հաճախ ենք դիմում օժանդակ աղբյուրների վիպակոչությանը, նրանց և վիմագիր տեքստերի համադրական բնութիւյնը, իհարկե, եթե դրա անհրաժեշտությունը էական է: Վանանա-վանքի 1022 թ. արձանագրության հաղորդումներն ու այնտեղ հիշատակված անձինք անորոշ պիտի մնային, եթե Ասողիկի տեղեկության համադրմամբ չճշտվեր Գեմետրե մարգպանի ինքնությունն ու նրա որդու՝ վրացադավան արքեպիսկոպոսի ով լինելը, Գավթին Անհողինի հետ կապված անցուղարձերի կարեորությունը: 1236—1245 թվականներին գրված Շահնազարի արձանագրության մեջ ասվում է. «Ռուսուզան թագուհու ժամանակներից հետո ասված ի թագավորություն Գավթին լինի օգնական»: Արաբաբուս բանաձևային տեսք ունեցող այս կարճատև արձանագրությունը, փաստորեն, եզակի վիպություն է բովանդակում, եթե նկատի ենք առնում, որ «Վրաց ժամանակագրության» տեղեկության համաձայն Ռուսուզանի գահակալությունը տեկու էր մինչև Լաշայի որդի Գավթի շափահաս դառնալը, սակայն դեպքերը այլ ընթացք ստացան, և Ռուսուզանը ջանալ իր որդի Գավթին գահակալ դարձնելը:

1232 թ. Գեաիկում գրված հիշատակարանից կոահելի է դառնում, թե թագավորության որոշ զավառներում ու շրջաններում Ռուսուզանի թագավորությունը դեռավել է իբրև առժամանակյա աթոռակալություն՝ «Վասն զի վրաց թագաւոր ոչ գոյր, ունէր զաթոռակալութիւն զուստր թամարին [Ռուսուզան]»:

⁵³ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 7, էջ 59—60:

Հիշյալ օժանդակ նյութերի օգնությամբ պարզ է դառնում, որ Շահնազարի արձանագրության հեղինակը, Ռուսուզանի որդի Գավթին թագավորություն ստեղծելով, մատնում է այդ խնդրի շուրջ եղած հակամարտությունների գոյությունը և հատկապես՝ իր կուսակցությունը նրան: Հայաստանի երկու մերձակա զավառներում միաժամանակ գրված այս կարճատև վիմագիր ու ձեռագիր հիշատակարանները թույլ են տալիս այնպիսի կուսուհուներ անել, որպիսիք դժվար էր մակարերել նույն շրջանում գրված բազմաթիվ մատենագրական ծավալուն աղբյուրներից:

Քանի որ արձանագրությունների որոշ քանակությունն անմիջականորեն ստեղծում է տվյալ վանական հաստատությունը, ապա անհրաժեշտ եղավ դիմել տեղի հայերեն վիմագրերի բնութիւյնը, մատենագրական հիշատակություններին, տեղում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններին և այլն: Համագիր ուսումնասիրությունը նպաստեց թե՛ վանական կենտրոնի հիմնադրության և հետագա կրած փոփոխության հետ կապված հարցեր արծարծելուն ու որոշ ճշգրտումներ կատարելուն և թե՛ տվյալ գրության օջախի տեղն ու նշանակությունը որոշելուն: Գծվար պիտի լիներ հստակ պատկերացում կազմել Պղնձահանքի հիմնադրության ժամանակի, զավանություն, մյուս վանական կենտրոնների հետ ունեցած նրա մոխրանշտության, բնակավայրը էթնիկական կազմի, այստեղ կատարված մատենագրական թարգմանությունների ու մի բանի այլ խնդիրների վերաբերյալ, եթե տեղիս վրացերեն արձանագրությունների վերձանությունն ու մեկնարանություն ժամանակ չգիտնենք եղած հայերեն վիմագրությանը, Սիմեոն Պղնձահանքու ընդարձակ ձեռագրական հիշատակարաններին, սույն բնակավայրին առնչվող վրացական վավերագրերին: Իբրև արդյունք նման բնութիւյն, այժմ ուղղագծվում է թե՛ ճարտարապետական կառույցի, թե՛ կրթօջախի պատմությունը: Նույնը կարելի է ասել և Քորալրի վերաբերմամբ:

Հայաստանում, և հաճախ հայերի կողմից, կազմված ու փորագրված լինելու պատճառով, ներկայացվող վրացերեն արձանագրությունները շարահյուսական, բառազանձային ու հնչյունաբանական որոշակի ինքնատիպություններ են հանդես բերում: Նրանցում երբեմն խախտվում է ժամանակի վրաց գրական լեզվի շարահյուսական-ոճական կանոնիկությունը, տեղը զիջելով խոսակցական լեզվի նորմերին, իսկ երբեմն էլ՝ հայերենի պատճենմամբ կառուցված արտահայտություններին ու քերականական ձևերին: Նման իրողությունները բավական նշանակալի թիվ են կազմում և ակնհեր նոպատ բերում լեզվի պատմության ուսումնասիրությանը: Բարանայի արձանագրության մեջ, օրինակ, սուաչին անգամ վկայվում է ԵճԵՐԾԻ ԵՍՄՅԵՆԻ ԾՐԸԸԸԸ օԿԵՆ գարձվածքի գոյությունը («ձեր կայանը Բաղդադ դառնա»), որ բացատրելի է դառնում հայոց լեզվի որոշ բարբառներում եղած համարնություն արտահայտություններով: Քորալրում առկա է ճԵՅԵՅԵՅ բայական եղանակավոր ձևը, որ անժանոթ է վրաց բարարանագրությանը: Բազմաթիվ հայերեն ու վրացերեն արձանագրություններ թողած Իվանե Աթաբեկը Ինժաուրյում Զարարիային կոչել է ԾԵՐՅԵՐԸ, որ ոչ միայն հայերեն

մեծափառի պատճենումն է, այլ նույնիսկ վրացերենում պահպանել է հայերենի բարբառային փ—ր հնչյունափոխությունը (հմմտ. խաբանել): Ետիփան կաթողիկոսի նշանավոր արձանագրության մեջ Յ-ի փոխարեն Պ **անհնալը** (ՃՊՂՅՊՏՈ) ամենից առաջ բացատրելի է երկբարբառների պարզեցման հայերենի տեղեկեցով (հմմտ. իւ—ի, իւ—ու, ով—ու հնչյունափոխությունը), իսկ Չանգլիում յՎՕՆՇՕՆՈ վիճաբար պարզապես հետևել է բարբառային իր արտասանությանը, որի լավագույն ապացույցը նույն միջավայրի հայերեն արձանագրության տեքստում «կանկնեցաւ» ունենալն է: Կենդանի խոսակցական-բանավոր ավանդներին հետևելու միտումն այնքան նկատելի է, որ 13-րդ դարում Հաղբատի որմնակարներից մեկը վրացերեն և հայերեն մակագրություններով օժտելիս դեղագրողը չի հետևել նույնիսկ Հովհաննու Ավետարանի (Բ, 12) երկու լեզուներով եղած կանոնիկ տեքստին և «նոր լամբագրութեամբ» է գրել, հետևելով միայն մակագրության երկլեզու բնագրի լիակատար համապատասխանությանը:

Քվարկած փաստերը իրավունք են տալիս հուշալու, որ Հայաստանի վրացերեն արձանագրությունները որոշակի նպաստ են բերում երկու լեզուների պատմության ուսումնասիրությանը, ինչպես նաև նրանց լեզվական-բառագանձային առնչությունները մասնագիտորեն քննելուն: Այս կարգի խնդիրների հանդամանակից արժարժույթ մեղ կշեղեր բուն թեմայից, ուստի աշխատության մեջ զբաղեցել ենք նրանց գոյությունն ու պատմաբանությունը մասնացուցելով կամ անհրաժեշտ սահմաններում քննելով:

Հայկական միջավայրում և, ինչպես ասվեց, հաճախ հայ գրիչների կողմից վիճագրված հարյուրից ավելի վրացերեն արձանագրությունները երբեմն առանձնանում են իրենց հնագրական նկարագրով: Նրանց ուսումնասիրության շնորհիվ բավականաչափ ընդլայնվում են մեր պատկերացումները գրչության այս կամ այն տեսակի, առանձին տառապատկերների կրած փոփոխությունների, վիճագրման ավյալ եղանակի տարածման ոլորտի, հասպտման ու բառաշատման նշանների բազմազանության և շատ այլ խնդիրներում: Թե՛մատույրում ու Քոբայրում ունենք տառապատկերների ոճավորման ուշագրավ դեպքեր, Կուրթանի ձորում եղածը այսպես կոչված «ուլաբավոր գրչության» հնագույն նմուշներից է, իսկ Շահնազարի 11-րդ դարի արձանագրությունը մեզ ընդլայնելի և նույնպիսի գրչության (հմմտ. երկաթագիր և բուրբակիր) գիրկերնառն դործածության վաղ օրինակներից է: Խիստ կանոնիկ տառապատկերների կողքին երբեմն հանդիպում են գրչի նախասիրությամբ կամ տեղի թելադրությամբ առաջացած տարբերակներ, կցագրություններ և ոչ սովորական հասպտումներ: Հայ վիճագրության ավանդների նմանողությամբ, այստեղ էլ կան դեպքեր, երբ իրար հաջորդող նույն բաղաձայններից մեկը ավելորդ է նկատվում փորագրել (Հնեվանք) և այլ իրողություններ: Նման պարագաներում անհրաժեշտ էր նկատի ունենալ թվարկած ինքնատիպությունները և ձեռնամուխ լինել արձանագրությունների վերծանությանը, աչքի առաջ ունենալով թե՛ վրաց, թե՛ հայոց վիճագրության

ու գրչության առանձնական ավանդությունները՝ ճիշտ ու անբռնազրոսիկ բացատրություն տալու և բարոյաստոր ստույգ մակարերկու համար:

Արձանագրական նյութի ընդգրկումը որոշելիս մենք կլակիտ ենք ունեցել մեղանում ընդունված այն սկզբունքը, թե՛

«1. Յուրաբանչյուր արձանագրություն իմենքստինմյան մի ամբողջական պատմա-կուլտուրական փաստարուղք է. հետևաբար նույն ճշգրտությամբ պետ է հրատարակվի, ինչպես որևէ այլ ձեռագիր բնագիր»:

2. Յուրաբանչյուր արձանագրություն, անկախ նրա մեծ կամ փոքր, ամբողջական կամ քերի լինելուց, պետ է հավաքել ու հրատարակել. քերի, նույնիսկ մեկ բառ և կամ մի բանի տառ կազմող բեկորները նույն արձեմն ունեն, ինչ ձեռագրական պատարիկները:

3. Հավաքելու և հրատարակելու ընթացքում խորություն չպետ է դնել արձանագրությունների մեջ՝ ըստ նրանց բովանդակության, որովհետև մեկի համար այն ոչ կարևոր է թվում, մեկ ուրիշ մասնագետի համար կարող է արժեքավոր լինել»⁵⁴:

Ըստ այդմ՝ ներկա աշխատությունը հավանում է ամփոփելու Հայաստանի տարածքում պահպանված բոլոր վրացերեն արձանագրությունները՝ նրանց երևալու օրվանից մինչև 19-րդ դարի սկզբները ներառյալ: Ամբողջականություն երաշխավորելու համար մենք զանց չենք առել ոչ միայն 19-րդ դարի սակավաթիվ ու զուցե ոչ մեծ արժեք ներկայացնող վիճագրերը⁵⁵, այլև Հայաստանի թանգարաններում պահպանվող վրացերեն արձանագիր առարկաները, այդպիսիք առանձնացնելով իրեն ինքնուրույն միավոր: Վերջինների վերծանությունը կատարվել է վիճագրերի նկատմամբ կիրառվող նույն սկզբունքով, սակայն քննության ժամանակ բավարարվել ենք դերագանցապես տեղեկատվական արժարժույթներով, քանի որ Հայաստանի պատմությանն ու մշակույթին նրանք հիմնականում առնչվում են պահպանության վայրով: Ընտրությունը ենք ներկայացրել միայն որմնակարներին ուղեկցող մակագրություն-անվանակոչումները, ուր սուրբգրական գրքերից զանազան քաղուհներ են արված կամ տեսարանների ու սրբապատկերների վրացագիր անուններ հոլովված: Բայց, իբրև սկզբունք, դրանց գոյությունը հիշատակել ենք առանց բացառության, յուրաքանչյուր վանական հաստատությունից, եթե այնտեղ այդպիսիք կան, մեկ-երկու կարևոր օրինակների վկայակոչությամբ (Պղնձահանք, Հաղբատ, Քոբայր, Անի): Դա անհրաժեշտ էր, որպեսզի որմնակարչության պատմության մասնագետների ուշագրությունը հրավիրենք վանական տվյալ հաստատության վրա և մանավանդ՝ հայ բաղկեղտականների մշակութային գործունեության այդ բնագավառը ևս ուշագրությունից վրեպած չլինեն: Մենք կիսում ենք սակազ. Ն. Մատի այն գրույթը, թե

⁵⁴ Ս. Բարխուդարյան, Հայկական վիճագրություն, տե՛ս «Պիլան», I, էջ XXXII:
⁵⁵ Ուշ շրջանի մեմուարային վիճագրության կարևորությունը վերաբերյալ տե՛ս սակազ. Ն. Բերձնեշվիլու հույժածը՝ «ისტორიული გეოგრაფიისთვის», «საქ. ისტ. გეოგრაფიული», I, 17.

«Որմանակարգության հարցը՝ իբրև եկեղեցին քաղկեդոնականներին պատկանելու ապացույց, շատ նուրբ է»⁵⁶, բայց միաժամանակ և մասնավորեցնում, որ վրացերեն մակագրության առկայության պայմաններում քաղկեդոնականության ազդեցության պարագան գրեթե կասկածից դուրս է: Նկատի պետք է առնել, որ հայ քաղկեդոնականները երբեմն նոր սրբաբաններ էին կառուցում, բայց հաճախ էլ տիրանում էին ազգային եկեղեցու կառույցներին, մասնակի նորոգում-վերափոխումներով, ընդ որում «Երբեմն նորոգումը կայանում էր նրանում, որ քաղկեդոնականները եկեղեցին օծում էին որմնակարներով»⁵⁷: Անիրավացիորեն մենք հայաց մատենագրությունը, ճարտարապետությունը, արվեստը վրոված կլինեինք մի շարք կարևոր արժեքներից, եթե փորձեինք աչքաթող անել կամ «խորթ» համարել հայ քաղկեդոնականության միջավայրում ծնունդ առած գործերը: Պարզունակ պատկերացում կունենայինք իրերի փաստական վիճակի մասին, եթե վրացերեն մակագրություններով օծոված որմնակարները եկամուտ հայտարարեինք. նրանք օտար չեն, ինչպես որ արարական, պարսկական կամ սելջուկյան չեն բոլոր այն առարկաները, «որոնց վրա արարեան արձանագրություններ կան կամ որոնք գործածվում էին Հայաստանում քաղաքականապես իշխող ժողովուրդների կողմից վերջին դարաշրջաններում»⁵⁸:

Ինչ վերաբերում է արձանագրությունների տեղագրական ընդգրկմանը, մենք առաջնորդվել ենք խիստ որոշակի սկզբունքով՝ ներկայացնել ինչպես Սուլիտական Հայաստանի, այնպես էլ Արևմտյան Հայաստանի տարածքների վիճակը, որը և մեզ իրավունք է տվել աշխատությունը վերնագրել «Հայաստանի վրացերեն արձանագրությունները»⁵⁹: Ըիշտ է, հնարավորության սահմաններում աշխատել ենք ընդգրկած բոլոր արձանագրությունները հավասարապես հանգամանալից վերլուծության ենթարկել, ամեն անգամ ելնելով տվյալ վիճակի առաջադրած փաստական խնդիրներից, բայց միշտ չէ, որ բնագիրը քննելու նույնական վստահելի աղբյուր ենք ունեցել: Շուրջ մեկ տասնամյակ տեած պրպտումների ընթացքում բազմիցս եղել ենք Սուլիտական Հայաստանի տարածքում գտնվող հնավայրերում և տեղում կատարել վերծանությունը, ճշգրտել կասկածանքները, նոր նյութեր երևան բերել, ստուգել նախորդ գիտնականների հրապարակումները, օժանդակ նյութեր հավաքել: Այդ պատճառով էլ այստեղ առաջարկվող վերծանությունների մի նշանակալի մասը առաջին անգամ է հրատարակվում, իսկ նախորդ սերնդի

ընթերցած բնագրերում բազմաթիվ վստահելի սրբագրություններ են կատարվում: Կրկնում ենք, այդ ամենը կատարված է տեղում, արձանագրության բնագրի հետ աշխատելով: Բայց նույնը չենք կարող ասել Անիի, Չանգլիի, Կարսի արձանագրությունների վերաբերմամբ: Այստեղ առաջին հերթին ջանացել ենք ժամանակին կատարված լուսանկար ճարել, այդպիսին որոնելով և՛ հրատարակություններում, և՛ պետական ու անձնական հնագրարաններում, թողոններում: Այդ ճանապարհով հաջողից ունենալ Չանգլիի արձանագրության լուսանկարը, իսկ Անիի երկու հիշատակարաններից մեկը պատճենեցինք ն. Մառի հրապարակած լուսանկարից, մյուսը՝ սևապակուց: Ցավոք, Սահմադիրի արձանագրությունը, անհաջող թուրացման պատճառով, վերծանության աղբյուր չծառայեց: Անիի մյուս վրացերեն արձանագրությունները բաղել ենք ն. Մառի հաշվետվության տեքստից կամ պեղումների օրագրերից (ն. Մառի ծոցատետրից): Կարսի արձանագրության լուսանկար չձարվեց:

Ժամանակակից վիճագրագիտությունը պահանջում է տեքստի լիակատար վավերականություն, իսկ այդ ապահովելու միակ եղանակը ընթերցումը լուսանկարով (կամ գծագրական արտապատկերով) օժտելն է: Մենք հետևողականորեն կիրառել ենք և այդ սկզբունքը, ուստի առանց լուսանկարի են ներկայացված միայն այն արձանագրությունները, որոնք ժամանակին չեն լուսանկարվել (կամ մեզ հայտնի չեն) և այժմ տեղում չկան կամ ՍՄԸՄ-ի սահմաններից դուրս են ու պահպանվածության մասին տեղեկություն չունենք⁶⁰: Բարեբախտաբար, այդպիսի արձանագրությունների թիվը մեծ չէ: Գծագրական արտապատկերով ենք ներկայացրել առավել կարևոր վիճագրերը.

Քանի որ Հայաստանի վրացերեն արձանագրությունների հնչող մեծամասնությունը «մրդովանի» կամ «ասոմթավրուլի» գրչության է (հյերկաթադիր) և մի քանիսը միայն «նուսխուրի» (բուրագիր) ու «մխերուլի», նպաստակահարմար գտանք վերծանությունը միասնական տեսքի բերել «մխերուլի» գրադարձությամբ, որով նրանց բնագիրը հասու է դառնում գիտական լույն շրջաններին (այստեղ փոխվում է միայն գրչությունը, իսկ հնչյունական ու գրային համարժեքությունը պահպանվում է լիովին): Արժանագրության բուն գրչությունը ապահովում ենք լուսանկարով և կամ՝ գծագրական արտապատկերով: Վերծանությունը՝ հավաստի և վրացերեն տեքստի հաշիբն թարգմանությունը դուրակալիո դարձնելու համար անհրաժեշտ նկատեցինք փակագծային նշումով բացել և վերականգնել բոլոր հասկանալիներն ու կրճատագրությունները: Ի տարբերություն հայկական վիճագրության, վրացերեն արձանագրություններում հասկանալիությունները համատարած բնույթ են կրում, ուստի գրեթե անկարելի է ճշգրիտ վերծանություն առանց այդպիսիների բացման: Տողերի հաջորդականությունը նշել ենք կամ առաջադիր համարակալմամբ (եթե ծավալուն բնագիր է), կամ

⁵⁶ Н. Марр, Ани, стр. 132, прим. 259.

⁵⁷ Նշվ. աշխ., էջ 86:

⁵⁸ Նշվ. աշխ., էջ 109:

⁵⁹ Հիշյալ առումով Տալոյ աշխարհը առանձին միավոր է, իսկ այստեղ եղած վրացերեն վիճագիր արձանագրությունները՝ մշակութային այլ ոլորտում առաջացած: Կարծում ենք, որ հայագիտությունն ու վրացագիտությունը հավասարապես կշահեն, եթե այս գավառի վրացերեն, հայերեն, հունարեն և այլ լեզուներով եղած վիճագրերը միասնական, համադիր հրատարակվեն: Միայն հայերեն կամ միայն վրացերեն արձանագրությունների առանձնացումը հաշի է բյուր մեկնարանությունների վտանգով:

⁶⁰ Ավերող ենք նկատել բերել նաև Պղնձահանքում գտնվող 19-րդ դարի մեկ-երկու պարզունակ արձանագրության լուսանկարը:

նույնական պահպանությունը (եթե բնագիրը փոքրածավալ է և տողատելու անհրաժեշտություն չկա):

Պահպանելով վիմագրական corpus-ներին ներկայացվող բոլոր պահանջները, մեր նպատակը միայն արձանագրությունների հրատարակումը չէ, այլ նաև՝ նրանց աղբյուրագիտական բնությունը, ճիշտ կլիներ ասել՝ նրանց մեկագրական ուսումնասիրությունը: Ուստի աշխատության մեջ անհրաժեշտ տեղ է արված բննարկվող բնագրերի վերականգնմանն ու թվագրմանը, առանց որի դժվար կլիներ անցնել նրանց պատմա-բանասիրական վերլուծությանը: Խճարկե, նպատակ չենք ունեցել մեկ աշխատության սահմաններում սպասել այն բոլոր վկայությունների ու նորությունների արձարձումը, որ Հայաստանի վրացերեն արձանագրությունների այս բանսիրությունն է ներկայացնում, բայց և օանացել ենք ուսումնասիրության ոլորտից դուրս շնորհել աղբյուրագիտական առումով ամենակարևորները, միաժամանակ մատնացուցելով ու այլ բնագավառների մասնագետների ուշադրությունը հրավիրելով հարակից նյութերի վրա: Մատենագիտական տեղեկանքների և նշումների օգնությամբ կարելի եղավ խուսափել աշխատության ծավալումից, առաջնահերթ խնդիրներ համարելով ալլապան աղբյուրների համադրությամբ պատմական ու մշակութային հարցերի արժարձումը, սովյալ օջախի շարունակական պատմության ուրվագծումը և սրբագրումները⁶¹:

* * *

Վերծանության ժամանակ գործածված նշաններ:

- [] — տառը կամ տառաշարքը վիմագրված է, բայց ավելորդ է:
- [1] — նիշը հոդմանհարված է կամ կոտրված, բայց կարդացվում է:
- [] — լրացվում են տեղում չպահպանված կամ գրչի սխալով բաց թողած նիշերը:
- < > — նշանակված են նախորդ վերծանողների կատարած բնորոշ վերականգնումները:
- () — լրացվում են հայտնիված տառերն ու տառաշարքերը:
- { } — նշանակված են փորագրողի վրիպմամբ բուն տեքստից դուրս մնացած և առանձին վիմագրված հատվածները, որոնք միջարկելի են:
- | — մատնանշում է տողի սկիզբը:
- || — մատնանշում է նույն տողի շարունակությունը այլուր զետեղված հատվածում:

⁶¹ Մեր հաճելի պարտքն ենք համարում շնորհակալություն հայտնել Երևանի պետական համալսարանի պետական (պետական) ակադ. Մ. Գ. Ներսիսյանի, պատմության ֆակուլտետի զեկանատին և հնագիտության, աղբյուրագիտության ու ազգագրության ամբիոնին, որոնց սիրալիր աջակցությամբ մեզ հաջողվեց 1973 թ. օգոստոս ամսին վիմագրական գիտարշավ կազմակերպել և վերջին անգամ տեղում ստուգել ու լուսանկարել Սովետական Հայաստանի տարածքում գտնվող և այստեղ ներկայացված վրացերեն արձանագրությունները:

Ա Ն Ի

Արևելք գործողված ֆրանսիացի հայագետ Եվգ. Բորեն (1809—1878 թթ.) 1838 թվականին եղել է նաև Անիում (Թերևս Կարինից Թավրիզ մեկնելիս) և նկատել վրացերեն արձանագրության առկայությունը եկեղեցական կառույցներից մեկի վրա¹: Գիտնականը, ինչպես երևում է Ղ. Ալիշանի վկայակոչությունից, կարդացել է արձանագրության եզրափակիչ թվակիր (ՈԿԵ) հայերեն տողը («Ես՝ Գրիգոր եպիսկոպոս, և Վահրամ՝ պատրոն բաղարիս, հաստատեմք զհրամանս կաթողիկոսին») և արդարացիորեն այդ «մատուցեն՝ հուպ չապարանն» համարել «վրաց պաշտաման նուիրեալ»²: Այս դիտողությունից սկսած՝ դիտության մեջ ընդունված է հիշյալ կառույցը «վրացական եկեղեցի» կոչել: Վերջինիս համառոտ նկարագրությունը տրված է Հ. Օրբելու նշանավոր «Ուղեցույցում»։ Небольшая грузинская церковка базиличного типа сохранилась довольно хорошо. Самая церковь помещалась во втором этаже, нижний этаж, покрытый круглым сводом, служил кладовой или, может, склепом. Внутри церкви на северной стене имеются рельефные фигуры довольно примитивной работы, между прочим, изображение Благовещения. На южной стене церкви снаружи имеется пространная грузинская надпись 1320 г. (!—П. М.) инициальными церковными буквами. С юга к церкви примыкало какао-то здание, теперь вовсе разрушенное. Такая же участь грозит и самой церкви, подточенной со всех сторон»³.

¹ Եվգ. Բորենի աշխատությունը հրատարակված է „Correspondances et mémoires d'un voyageur en Orient“ խորագրով (Փարիզ, 1840): Հեղինակի մասին տե՛ս [Գ. Շրուստի և Գ. Զարբնանյանի], Ուսումնասիրությունը հայ լեզուի և մատենագրության յԱրևմուտս, Վենետիկ, 1895, էջք 229, 232:

² Եվգ. Բորենի աշխատությունը ձեռքի տակ չունենալու պատճառով քաղում ենք Ղ. Ալիշանի վկայակոչությունից (տե՛ք նրա՝ «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 49), հմմտ. M. Brosset, Les ruines d'Ani, t. I, St.-Petersbourg, 18 0, p. 5.

³ Ի. Օրբելի, Краткий путеводитель по городищу Ани, СПб., 1910, стр. 30. Վերահրատ. տե՛ս Ի. Ա. Օրբելի, Избранные труды, Ереван, 1963, էջ 120, նույնի՝ «Անույ առերակները (պատմություն, ալթման վիճակ, պեղումներ)», Թարգմ. Բուսերենից և կազմեց՝ Յուսիկ Արբելյանի կողմից, Վաղարշապատ, 1911, էջ 35: 2. Օրբելու նկարագրության մեջ

Քանի որ Բորիս խոսքը ևս հաստատապես վերաբերում է այս եկեղեցուն, այդ հասկանալի է, Օրբելու ականակամ կառույցը («հարավից եկեղեցուն հարել է ինչ-որ շինք՝ այժմ ամենևին ավերված») Բորիս այցելության տարիներին (1838 թվականին) տակավին կանգուն է եղել⁴, որի վրա և գտնվել է հայերեն ավարտ ունեցող վրացերեն արձանագրությունը: Վրացական եկեղեցին և նրան հարող շինքը փլատակ են դարձել մինչև անցյալ դարի 40-ական թվականները: Ահա թե 1846 թվականին Անի այցելած ն. Սարգիսյանը ինչպես է նկարագրում այդ հուշարձանը. «Սա որչափ ինչ լյուրակացն նշմարի, մի ի գեղեցկաշէն եկեղեցիացն էր. այլ արդ հիւսիսային կողմն միայն կայ հանդերձ մասամբ խորանին, այլոցն առ հասարակ փլատակ կուտեալ շուրջանակի: Եկեղեցիս թէպէտ և փոքր է տարածութեամբ, այլ այնու առաելու քան զայս զի բնոյ յատական ծայր ի ծայր ներքնասուն է գետնափոր կամարակապ և ցարդ անկործան: Արձանագիր շերի ուրե՛ք ի մնացորդ մասունն նորին»⁵: 1910 թվականի ամռանը «պեղումներից ազատ ժամերին» ն. Մառը հետամուտ էր հիշյալ եկեղեցու հարավային պատին արտաքուստ եղած Սահմադիրի վրացերեն արձանագրության, ինչպես ինքն է ասում, «լուսանկարի ստուգմամբ»: Պակասավոր մասերը լրացնելու ակնկալությունը նա ձեռնարկում է «հետախուզական պեղում», որի ընթացքում, ճիշտ է, «Սահմադիրի արձանագրությունը աճ չունեցավ, բայց երևան բերվեցին մի քանի վրացերեն նոր արձանագրություններ կամ նրանց պատասխինները: Նրանց թվում, զրեթե ամբողջությամբ, գետնի տակից դուրս եկավ Վրաստանի կաթողիկոս Եպիփանի արձանագրությունը»⁶: Այն ընդգրկել է պատի հինգ շարք, առաջինում և երրորդում հնգական տող, երկրորդում և չորրորդում՝ շարական, հինգերորդում՝ երկու, բնոյ որում վերջին հայերեն: Ն. Մառի համարակալմամբ՝ արձանագրությունը պետեղված է եղել շուրջ 50 բարի վրա, որից տեղում գտնվել է 44-ը: Տողերի թիվը քսան է: Այսպիսով, այն Հայաստանում պահպանված վրացերեն ամենաբնութագրական արձանագրությունն է, եզակի նաև իր հաղորդած տեղեկություններով ու բովանդակած որոշ լեզվա-քերականական խնդիրներով: Այդ պատճառով էլ ակադ. ն. Մառը օր առաջ չանայ այն հրատարակել՝ դիտական շրջանառության մեջ դնելու ցանկությամբ: Հրատարակությունը կատարված է փաստական ու անհրաժեշտ ծանոթագրություններով, ուշադրու-

⁴ 1320 թ.-» գրությունը վրիպակի կամ թյուրիմացության արդյունք է. պետք է լինի 1288 թ.:
⁵ Վրայրիմացությունից խուսափելու համար նկատենք, որ Բորիս և Օրբելու հիշատակած արձանագրությունները նույն կառույցի վրա են, բայց ոչ նույնը: Ավելի մանրամասն կետավոր ստորև:
⁶ Ն. Սարգիսյան, *Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վնէկտիկ, 1864*, էջ 136:
 6 H. Я. Марр, Надпись Епифания, католикоа Грузии (из раскопок в Ани 1910), ИАН, 1910, стр. 1433. Քանի որ բուն արձանագրության մեջ գրված է եոիխան, մենք գերադասեցինք պահպանել ալանդված ձևը, որ սուբստիտուցիայի արդյունք է: Կաթողիկոսության տարիներն են 1210—1220 թթ.: Նրա անունը հիշատակված ենք գտնում Ք. Փորգանիպի հրատարակած «ժամանակագրություններում» (յրօնոյցձեմ, I, 80, 81):

թյուն հրավիրելով բոլոր կարևոր հաղորդումների ու լեզվական իրողությունների վրա: Քանի որ արձանագրությունն այժմ գիտությունը հայտնի է միայն Ն. Մառի հրատարակած լուսանկարով, անհրաժեշտ է նկատի ունենալ նրա բացատրությունն այդ կապակցությամբ. «Տեքստը լուսանկարվեց մաս-մաս, քանի որ անկարելի էր համատեղել բոլոր հինգ շարքերը: Վերին շարքը հանված է առանձին, երկրորդ և երրորդ շարքերը՝ միասին, իսկ չորրորդ և հինգերորդ շարքերը՝ առանձին: Բնական է, յուրաքանչյուր խումբ ստիպված էինք նկարահանել տռանձնակի լուսավորմամբ, որը արտացոլվել է և լուսանկարչական վերատպության մեջ: Բացի դրանից, որոշ հատվածներ դանդեցին համատեղած շարքերի լուսանկարումից հետո, և այդ բնկորները նկարում չկան»⁷: Հիշյալ պատճառով է, որ արձանագրության վերջին հայերեն տողում (ն. Մառի համարակալմամբ՝ քար № 45) ՈԿԷ-ից առաջ վերծանության մեջ առկա «թվ 1»-ն չկա⁸: Հետագայում Ետիփանի կաթողիկոսի արձանագրության այսպես կոչված դիվանագիտական և սոցիալական կողմի ուսումնասիրությամբ զբաղվեց պրոֆ. Վ. Դոնդուան¹⁰, իսկ հարկային որոշ տերմինների քննությանն անդրադարձավ ակադ. Իվ. Զավախիշվիլին¹¹: Ներկա դեպքում մեզ հետաքրքրում են արձանագրության պակասավոր տեղերի՝ Վ. Դոնդուայի առաջարկած վերականգնումները, որոնք, կարծում ենք, ընդունելի են: Այսպես, իրոք սպասելի էր, որ պատկերության համար հարյուր դրամ ամենը «ամենևին անկարգ» համարող կաթողիկոսը 6-րդ տողի շարունակության և 7-ի սկզբում կհամանար «կարգավոր շափը», թերևս հիշյալի կեսը (?), որով կունենայինք ս(տղա) և ք(տղա) ան ուղե... ձևներն ընդունելի է և 7-րդ տողում թ[խ]-ի վերականգնելը, որովհետև այդ օ-ի և հաջորդ բառասկզբի օ-ի արանքում ճիշտ և ճիշտ մեկ տառանիշ տեղ հողմանհարված կոտրված է¹²: Շարադրանքի ոգին էլ արդեն այստեղ

⁷ Տե՛ս H. Marр, նշվ. աշխ., ներքին 1436 և 1437 էջերի արանքում, նաև H. Marр, Ани, ақ. XLII:
⁸ H. Marр, Надпись..., стр. 1437, прим. 1.
⁹ Լուսանկարը հինգ ունենալու պատճառով է, որ այն վերականգնման նշանով է հրատարակված ակադ. Չ. Օրբելու կազմած «Գրվանում...» (I, էջ 61): Իրականում լրացնելիքը միայն վերջին երկու տառանիշն է թվ[խ]:
¹⁰ В. Дондуа, К социально-экономической жизни средневековой Грузии по аннийской надписи (1218) Епифания, *Изв. Академику Н. Я. Марру»,* էջ 643—670:
¹¹ օչ. ճշգնեսցեզլո, სოციალური ბძობლის ისტორია საქართველოში IX—XII საუკუნეებში՝ ტფ., 1934; *նույնի՝* ქართველი ერის ისტორია, ტ. III, თბ., 1966, გვ. 474—481. *ხა-ი-ფანის արձანագրությունը վերահրատարակված է «ქართული საბჭოთისი ძეგლები»* ժամանակագրի III հատորում (տბ., 1970, էջ 153—154), բայց, ցավոք, առանց Վ. Դոնդուայի վերականգնումների:
¹² Նկատի պետք է ունենալ, որ ետիփանի արձանագրության մեջ ք-ն գրվում է մեկ երկով՝ միայն բաղադրիչ օ-ով:

«Քե» է պահանջում: Տեղին է և Տ-րդ տողի վերջում առաջարկվող վերականգնումը. «հաց ուտեցնելու» մասին խոսելիս կաթողիկոսը նախորդ հատվածում անհրաժեշտ է նկատել ավելացնել՝ թե կարողա՞նք: Ամենայն հավանականությամբ, երկրորդ անգամ սույն արտահայտությունը կրկնված է եղել ամբողջությամբ, ուստի արդարացի է վերականգնել՝ և՛ [տղ ժալո յը-ցախ] քորո օքիմոս, և՛ վերջո, արձանագրության 19-րդ տողը հասկացված է աննժքի բանաձևին, բայց ոչ սովորական ձևակերպումով: Վ. Գոնզուայի համոզմամբ «выход намечается в вопросительном обороте речи, имено, это место может гласить следующе: ვინცა ესე ჩემი ვავებული შეცვალო, არ[օვე] ცვალოა მან[] ბრძანებეჲ ღმრთისაჲნი და მისთა წმინდათაგან?»¹³.

Նվ, հիրավի, հարցական ոճը (ավելի ճիշտ՝ հարցմամբ հաստատելու եղանակը) բնորոշ է և արձանագրության այլ հատվածներին¹⁴: Կարծում ենք, այս վերականգնումը ևս ընդունելի է, մանավանդ որ բունկեր տարածքի իմաստով միանգամայն գեոտեղելի է (նրակես ունենք այդ տարածքի դիմաց նախորդ տողում աղատ նիշերի քանակը):

Այսպիսով, լրացման կարող է մնում 7-րդ տողի ավարտը՝ ղոմջլո օն օն [. . . .], ինչպես նաև հայերեն տողի շարունակությունը՝ հրամանք եղ [. . . .], իսկ տողի միջամասի իրի[ՅԱՊԵՏ ՆՊԻՍԿՈ]ՊՈՍ մառայան վերականգնումը սպասցուցված ու արդեն ընդունված է (նկատի ունենք ընթերցման առկայությունը Լ. Օրբելու հրատարակության մեջ)¹⁵, Հայերեն տողի ավարտմամբ վերականգնելու համար որոշ կոմպոնենտ կան. Գրիգոր իրիցապետն ու Վահրամ ամիրան այլ նպատակ չունեն, քան վկայել, որ վրացերեն լեզվով և կաթողիկոսի անունով կատարված հրապարակումը իսկազիր է, իրաք նրան է պատկանում: Գուցե զմարանայինք նման եզրակացության գալ, եթե վրացերեն տեքստում հատկապես նշված չլինեն, թե յեց մե ցժոջանց Կատոլոցոնես հմոտա շքլոտա լամիցճրոտ, ղոլցես անիս ցլոց-լոսան ցաքլոտեցն — «Սույնք ևս՝ Նախիան կաթողիկոսս, իմ ձեռնով եմ գրել, երբ Անիում եկեղեցիներ էի օծում»: Իսկ այդ պարագան շեշտելու անհրաժեշտություն է առաջացրել, որովհետև կաթողիկոսը հոգևորականների ու աշխարհականների միջև ծայր առած անհամաձայնությունը կարգավորելու հորդոր է կարգում և մանավանդ՝ երկուստեք սաստում է, սուրբերի նոր չափք սաճմանում: Գրիգորն ու Վահրամ ամիրան, իբրև առավել իշխանավոր ու հեղինակավոր անձիք, վկայում են դրությունս կաթողիկոսին պատկանելիք, ուստի «հրամանք եղ...»-ը կարելի է կարգող իբր «հրամանք և զ[այս]»¹⁶: Այդ է հուշում և արձանագրության ավարտի համար մնացած

¹³ В. Дондуа, նշվ. աշխ., էջ 652: վերականգնումն առաջարկված է Կ. Գ. Գոնզուայի կողմից, տե՛ս նշվ. աշխ., էջ 649, ժան. 3:

¹⁴ Հմմտ անդ:

¹⁵ Լ. Օրբելու կամ «Գիվանի» խմբագրի ուղարկությունից վրիպել է ոչ միայն վերականգնմանս ն. Մառի նպատակները, այլև նույնիսկ վերջինիս հրատարակությունն իսկ:

¹⁶ Հայերեն տողում Լ—Լ գրերի խիստ տարբերակում չկա (Հմմտ. ՈՒԷ-ն), ամենին բացառված չէ նաև է-ի փոխարեն և գործածելը, առավել և՛ երբ տողում գրաբարյան նորմերի

տեղը (զ-ից հետո մինչև ողջ տեքստի ավարտագծին հասնելը քարի վրա գեոտեղելի է 2—3 նիշ ևս, ինչպիսին մեր առաջարկած զ[այս]-ն է):

Ն. Մառի վերծանած ու հրատարակած վրացերեն ընագրում մեկ-երկու սրբագրելիք-վերականգնելիք ևս կա. 10-րդ տողի վերջամասի ղ օ ց օ ֆ ֆ վերականգնելի է ղ օ [ք] օ (օ -ից հետո նա մեկ տառանիշ էլ է ննթղղղ տարը): որպիսին, մեր համոզմամբ, պիտի լինեն [օցօ] -ի առաջին տարը): 16-րդ տողում առկա օ ֆ ֆ -ը պիտի սրբագրել օ ֆ ֆ [կ], քանի որ խոսքը ոչ թե Անիի, այլ Անիում եկեղեցիներ օրհնելու (օծելու) մասին է: Գիտնականի ուղարկությունից վրիպել է, որ վրացերենում Աճի-ի ուղղական ձևը Անիի (օ ֆ ֆ ֆ) է, որից պետք է ունենայինք կամ օ ֆ ֆ ֆ [ի մ ա ն լ օ], կամ օ ֆ ֆ ֆ [ի մ ա ՛ յ Ա ն ի]: Նախընտրելին, հարկավ, երկրորդն է¹⁷:

Նախիան կաթողիկոսի սույն արձանագրությունը ունի և զրչական մի քա. ի ինքնատիպություններ, մասնավորապես.

ա) Մի-ի գործածություն՝ սպասելի 3-ի փոխարեն (օ ժ յ յ յ, ց շ ղ ղ ղ, ց շ ղ ղ ղ, տ ղ ղ ղ, տ ղ ղ ղ). Ն. Մառը արգարացել է վարվել, որ տն հայավումը բացի է տ ղ ղ և ոչ տ շ ղ. Նույն սկզբունքին ենք հետևել և մենք:

բ) Մի-ի փոխարեն գործածված է միայն օ: Ն. Մառի դիտողությամբ օ և օ յ -ի համար կարծես թե գծապատկերը տարբերվում է Մի-ի դեպքում ուղիղ ելուստ, օ -ի համար՝ փոքր-ինչ կոր, բայց լիակատար հետևողականություն չկա¹⁸: Գրադարձության ժամանակ մենք ևս Մի սպասելի տեղերում այն վերականգնեցինք, քանի որ գործ ունենք օ շ -ի կրճատ գրության հետ և ոչ հնչյունափոխության: 3 գործածելու միակ դեպքը բրնիկիումն է՝ իվական արժեք արտահայտելու անհրաժեշտությունն է:

գ) «Հնարավոր է, որ բարբառաչության արդյունք պետք է համարել և Մի-ի բացթողումը ց շ օ ր -ի հիմքում (ց շ օ ր 13_բ; ճ շ օ ր 13_գ; շ օ ր 13_դ; ճ շ օ ր 15): Մի ձայնավորի բացակայությունը չափազանց հաճախակի է, որ կարողանայինք սովորական վրիպումով բացատրել»¹⁹: Նման դեպքերում գրադարձության մեջ Մ-ն վերականգնվում է անկունավոր փակադեղնում, քանի որ իսկապես բարբառաչության արդյունք համարելու օրե՛ս երաշխիք չունենք:

Դ) Բնագրում կան մի քանի ակնհայտ վրիպումներ, որոնց մասին խոսված է և Ն. Մառի հոդվածում. Մ ք օ (3_բ)—Մ ք օ յ, օ ղ (3_գ)—օ ղ, օ ղ (3_դ)—օ ղ, օ ղ (3_ե)—

խախտման մի քանի օրինակ կա. իրիցապետ, վկայենք (վկայ ենք), կաթողիկոսին հրամանք (կապի գործածությամբ), այս վիճակում սպասելի է և զայս (?) սխալ ձևի առկայությունը: Ն. Մառի ենթադրությամբ, կաթողիկոս ձևը վրացերեն Կատոլոցոնի-ի տառագրությունն է (նշվ. աշխ., էջ 1434): Նման եզրակացության հետ չի կարելի համաձայնվել, որովհետև վրացերեն ընագրի իր իսկ վերածնության մեջ ունենք Կատոլոցոնի, որ և ճիշտ է Մի ձայնավորի նկատելու է, թե «կաթողիկոս» գրություն ունենք շատ ավելի վաղ շրջանի հայերեն ուղարկումներում, այդ թվում և Ն. Մառի վերծանած ու քննած Տեղիքի տառարկության մեջ («կաթողիկոսիան», նաև «[Ե]պիսկոպոսի»):

¹⁷ Հմմտ. В. Дондуа, նշվ. աշխ., էջ 648:

¹⁸ H. Mapp, նշվ. աշխ., էջ 1434:

¹⁹ H. Mapp, նշվ. աշխ., էջ 1435:

(грамота) այն հիմնական մասը, որ սահմանվում են կողմերի պարտականությունները³⁰: Մեր արձանագրությունն էլ, փաստորեն, նվիրված է հողերականների ու աշխարհականների պարտականություն-իրավունքները սահմանելուն, բայց քանի որ սահմանողը կաթողիկոսն է, ցանցվածում -ի տակ նուրբար, կարգավորություն պետք է հասկանալ: նվ իրոք, հայերեն «հրամանք» տերմինը, հակառակ նրա բերականական-կառուցվածքային նորատեսությունը, նշանակում է՝ պատվեր, պատվիքան, պատգամ, կարգավորություն և այլն: Առավել նախընտրելի և վրացերենին համապատասխանող նշանակությունը կարգավորությունն է³¹: եթե ցանցվածում -ն веление—հրաման նշանակել, ապա նույն նախադասության մեջ այլևս ծրծանցե՞ա չէինք ունենա, մինչդեռ կաթողիկոսը այս երկրորդ տերմինի տակ «հրամանն ասածո» նկատի ունի (ծրծանցե՞ա լմծոտեսգճճն): Ուրեմն, ցանցվածում —հրամանը ասելով «գիր կարգավորության» պիտի հասկանանք և ոչ՝ ծրծանցվածում³², Տերմինների առաջարկվող ճշգրտումը նպաստում է վրացերեն տեքստի և հայերեն ավարտատողի առնչակցությունը պարզելուն: ն. Մառը ժամանակին խին ու ռազարավ հարցարդում է կատարել. «В двуязычности надписи, собственно в армянском свидетельстве на грузинском памятнике—главная ценность надписи для истории города Ани, так как грузинский текст представляет обращение католика Грузии к его православной пастве в Ани в эпоху мощи грузинского государства, когда входил в его состав, и тем не менее акт главы государственной церкви снабжен свидетельством местных властей автономного армянского города на армянском языке: свидетельствуют армянский епископ Ани, владыка Григорий, и эмир города, армянин Вахрам. Дальнейшее исследование анийских материалов должно установить, выступают ли епископ Григорий и эмир Вахрам в качестве простых свидетелей, удостоверяющих принадлежность акта католику Грузии, или они, эти высшие власти армянского города, свою надпись утверждают обязательность распоряжения грузинского католика в пределах Ани»³³.

Ինչպես վերևում նշեցինք, տողի ավարտը թերի է, իսկ արձանագրության հատարելուց ու հրատարակիչը չի փորձել վերականգնել այն: Այժմ, եթե մեր առաջարկած վերականգնումը հավանական է, իրիցայետ Գրիգորի ու ամիրա Վահրամի վկայությունը միանգամայն այլ բացատրություն է ստանում: Նրանք վկայում են («վկայ ենք»), որ կաթողիկոսի «հրա-

³⁰ օց. ցանցվածում, լմծոտեսգճճն, լեզ. 1926, ցց. 98—99, նմտ. В. Дондуа, նշվ. աշխ., էջ 645:

³¹ Գրոֆ. Վ. Գոնդուան «հրամանք» բառացի թարգմանում է—վելение (նշվ. աշխ., էջ 645, ծան. 3, էջ 649): Կարծում ենք, հիշյալ առումով մասամբ վերանայել է և վրացերեն ցանցվածում և ծրծանցվածում տերմինների լեռաբեք համանիշությունը փաստարկը (անց): Հրամանքը վելение է թարգմանել և ն. Մառը (նշվ. աշխ., էջ 1439):

³² Վավերագրական-փաստաթղթային տերմինների անդրադարձել է նաև Ս. Ս. Կակարածնի (տես՝ նրա՝ «Грузинские документы Института народов Азии», էջ 14—19):

³³ Н. Марр, անդ:

մանք» է, այդ արձանագրության մեջ զրվածը իսկապես կաթողիկոսին է պատկանում, և ուրիշ ոչինչ: Վերևում արդեն ասացինք, որ ետրիփանն ինքն էլ անհրաժեշտ է համարել շեշտել, թե «սույնը ես՝ ետրիփան կաթողիկոսս իմ ձեռքով եմ գրել»: Ուրեմն, հաստատագրություն-վկայության կարիք է ունեցել ոչ թե «գիր կարգավորության» օրինական կամ կիրառելի լինելը, այլ այդ գրության՝ կաթողիկոսին պատկանելը, ինչպես որ Շահնշահի նվիրագրի ավարտամասում է ասվում, թե «Ես մանդալորիությունցես Համապատգամ որդի Մարգարի, տէրս Աղէկու վկայ եմ. պարուն Շահնշահի հրամանք է այս» (Մատենագ. ձեռ. № 3031, էջ 34v): Այստեղից հետևում է, թե ետրիփանի արձանագրությունը փաստորեն առնչություն չունի «ավտոնոմ հայոց քաղաքի» ու նրա «տեղական իշխանությունների» իրավասության աստիճանի հետ: Հիրավի՞ և՛ կաթողիկոսի, և՛ տեղիս քաղաքական ու հողեր իշխանավորների համար Անիի քաղկեդոնականների՝ վրաց Էկեղեցուն պատկանելու փաստն այնքան որոշակի է, որ արձանագրության մեջ նրանք, այդ քաղկեդոնականները, «անեցի վրացիներ» են կոչված, թեև, ն. Մառի արդարացի կոհսմանը, «Во всяком случае слово „грузины“ в нашем тексте имеет, несомненно, значение конфессионального термина: под грузинами подразумеваются не одни грузины по крови, но и армяне-халкедониты. С этой стороны памятник является весьма желанным вкладом в источники об армянах-халкедонитах...»³⁴. Նման պարագաներում, ինչ խոսք, վրաց կաթողիկոսի «կարգավորության գիրը» կարող էր վկայվել իր պատկանելության առումով և ոչ վավերացնելու: Ուստի, ն. Մառի վկայությունով ուղարկված հարցարդումը, ինչպես մեզ թվում է, չի բխում այս արձանագրության բովանդակած փաստից³⁵:

Ետրիփանի կաթողիկոսի արձանագրությունը, ինչպես արդեն նկատված է, քաղմաթիվ առումներով ուղարկված հուշարձան է: Այն հասցեագրված է Անիի քաղկեդոնական համայնքին ու նրանց սպասավորող հողերականներին: Իրրև Անիի բնակիչներ, հարկավ, քաղկեդոնականները ենթարկվում էին տեղիս աշխարհական իշխանություններին ու նրանց սահմանած նորմերին, ներառյալ հարկային պարտությունները, բայց հօգուտ եկեղեցու սահմանված հարկերի ու տուրքերի առումով դավանական համայնքները միմյանցից անկախ էին: Նման հարցարդման կարևորագույն սղբություններից մեկը հենց մեր արձարած վրացերեն արձանագրությունն է: Անիի հայերեն արձանագրություն-

³⁴ Н. Марр, նշվ. աշխ., էջ 1441, նմտ. В. Дондуа, նշվ. աշխ., էջ 663:

³⁵ Իր ուսուցչի հետևողությամբ ակադ. Հ. Օրբելինը ևս գրում է. «Վրաց եպիփան կաթողիկոսի այս հրովարտակի տակ կա տեղական հոգևոր և աշխարհիկ իշխանությունների վավերացումը: Այս արձանագրության գիտական նշանակությունը շատ մեծ է և բազմազան» (նշվ. աշխ., էջ 52—53): Որ իրոք Օրբելինը նկատի ունի վավերացման փաստը, երևում է նրա մեկ այլ արտահայտությունից. «[Ետրիփանի արձանագրությունը] Անիի քաղկեդոնականության մասին ընդհանրապես դատելու նոր նյութ է տալիս և բնորոշում է տեղական իշխանության նշանակությունը» (նշվ. աշխ., էջ 52): Վ. Գոնդուան ևս համոզված է, որ հայերեն ավարտատողը ունի օրինականացման նպատակ՝ легализующее значение (նշվ. աշխ., էջ 668):

ներից մեկում վկայված է, որ կաշի (մորթի էին) վճարում և միարնակ անեցինները. «Ե միտում ամի, որ էր թուտկանս ՈԿԶ (1217) կամուրն աստուծոյ, ես՝ ար Գրիգոր, որդի Ապուլամբի, արհիեպիսկոպոս, կամեցաք առնուլ զեղեալ հարկի ի մեր գաւառէս Շիրակա եւ ի քաղաքիս եկեղեցեացս ի յԱնուլ, զի սահման էր ի սկզբանէ յամենայն զեղէ երկու զրիւ հաց յաթոս տալ, եւ ի Բաղաբիս ամենայն եկեղեցիս մորթի մին զառիկն տաիք: Արդ ես, յաղագս երկար կենաց պատրոնացն իմոց եւ ազգականաց, եւ եղբարց իմոց, եւ վասն հոգւոցն ննջեցելոց մերոց, թողի զայս հացս ամենայն զեղի մեծի և փոքու և զառիկ մորթին ամենայն եկեղեցոյ: Եւ չունի քո իշխանութիւն պահանջել...»³⁶: Գրիգոր արքեպիսկոպոսը, որ վրացերեն արձանագրութեան նույն տողի Գրիգոր իրիցապետ եպիսկոպոսն է³⁷, Ետիփանի ժամանակից մեկ տարի առաջ (1217 թ.) արդեն թողել է «զատիկ մորթին ամենայն եկեղեցոյ», բայց այն չի տարածվել քաղաքի «այլադին» համայնքի վրա, քանի որ տեղիս քաղկեդոնական եկեղեցիները վրաց կաթողիկոսութեանն էին ենթարկվում: Այդ պատճառով էլ վրաց կաթողիկոսի «կարգավորութեան զրի» անհրաժեշտություն է առաջացել: Ընդ որում, «լուսավորչականները» մինչև հարկիս վերացումը «ի քաղաքիս ամենայն եկեղեցիս մորթի մին զառիկն տարին», իսկ քաղկեդոնականների միջավայրում այդ հարկը միայն «զատկական» չի եղել, այլ, ինչպես երևում է, առնելիք պատարագի համար (կնուքը, մահ, պատկազդութուն և այլն): Տարբեր է և նոր սահմանումը: Գրիգոր եպիսկոպոսը հարկը առհասարակ է թողել, մինչդեռ Ետիփանը կրճատել է մեկական կաշեծող³⁸: Պիտի ենթադրել, որ քաղկեդոնական համայնքի և նրանց հոգևորականների միջև եղած դժգոհությունների մեծացմանը նպաստել է և միարնակների վաստակած այդ արտոնությունը, քանի որ զավանական մասնատվածությունը ամենևին էլ Անիի քաղաքային կյանքի մասնատվածություն չէր նշանակում³⁹:

Թեև արձանագրություն համակողմանի քննությունը այստեղ մեր նպատակից դուրս է, բայց նրա կարևորությունը շեշտելու համար ասենք, որ պրոֆ. Վ. Գոնդուալի հավաստմամբ՝ «տփիլուրի (տփիլյան) դրամը» վկայված է միայն այստեղ և այն իր արժեքով չի նույնանում տեքստում եղած «դրամի» հետ, ընդ որում название тфилур выработалось в самом Ани в соответствии с калакур „городской“, термином, неудобо-понятным для не-грузин (էջ 655): Այս ճիշտ պատճառաբանությունը պիտի

³⁶ «Գիլան», I, 16: Հմմտ. Н. Марр, նշվ. աշխ., էջ 1440, В. Дондуа, նշվ. աշխ., էջ 657:
³⁷ «Գիլանի» անձնանունների ցանկում նրանք տարբեր մարդիկ են դիտված, որ ճիշտ չէ:
³⁸ Վ. Գոնդուալի հաշվումներով այդ «կաշեծողը» մտավորապես նույնական պիտի լիներ Ավանկթում ընդունված չափին. «длиной около 65 см; сванский шолт рассчитан на выделку пары лаптей» (նշվ. աշխ., էջ 657):
³⁹ Ի դեպ, XIII—XIV դարերում զժկամությունը եկեղեցի հանձնելու վերաբերյալ կան հայկական մասնագրական վկայություններ (տե՛ս Լ. Խաչիկյան, 1280 թվականին երզնկայում կազմակերպած «եղբարցությունը», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 82, հմմտ. նույնի՝ «երզնկա քաղաքի «եղբարց միարնություն» կանոնագրությունը (1280 թ.)», «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 370—371):

ավելացնենք միայն, որ «քաղաք», «քաղաքային» սակելով անեցին կամ առհասարակ Շիրակի բնակիչը Անի պետք է հասկանաք⁴⁰, ուստի անհրաժեշտություն է եղել մասնավորեցնել ըստ գործածություն ու ծագման վայրի՝ Թիֆլիսի: Կարծում ենք, համոզիչ պիտի նկատել «քաղաքային» և «տփիլուրին» նույնացնելու Վ. Գոնդուալի դրույթը, թեև նրա արժեքի սահմանումը տակավին ճշգրտման կարոտ է⁴¹:

Ետիփանի արձանագրության մեջ ասվում է, որ կաթողիկոսը Անիում է գտնվել եկեղեցիներ օծելու (օրհնելու) կապակցությամբ, որից պիտի հետևեցնել, թե քաղաքում «վրացական» կոշիկը այլ եկեղեցիներ ևս եղել են: Մտոի ապացուցումներով «իրև վրացական՝ դավանական առումով, այսինքն՝ քաղկեդոնական, պիտի ընդունել, րբան առայժմ հայտնի է, միմիայն հերթան Հոնենցի հոյակերտ կառույցը՝ սբ. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին»⁴²: Ինչ խոսք, Անիում բավական նշանակալի կշիռ ունեցող քաղկեդոնականները այլ կառույցներ ևս կունենային, որպիսիք կամ շեն պահպանվել, կամ շեն պղծվել: Համենայն դեպս, «եկեղեցիներ օծելու» վերաբերյալ Ետիփանի հայտարարությունը ճշտով պիտի համապատասխանի իրականությանը, մանավանդ որ՝ այդ մասին խոսվում է «հրամանքը վկայող» եպիսկոպոսի ու ամիրայի գիտությունը:

Մեր քննության սկզբում վկայակոչեցինք Ն. Մառի խոսքերը, որ պատմվում է «վրաց եկեղեցու շրջանում» հետախուզումներ սկսելու շարժառիթի մասին՝ Սահմադիկի վրացերեն արձանագրության բեկորներ որոնելու համար: ՍՀՍ հնց այդ արձանագրությունն էլ Անիի վրացերեն առավել ծավալուն հիշատակարաններից մեկն է, որի վերծանությունն ու հրատարակությունը, Ն. Մառի երկիցս հրատարակած ծանոթություն համաձայն⁴³, ստանձնել է ակադ. Իվ. Զավախիշվիլին: Արձանագրությունը վիմագրված է եղել վրացական եկեղեցու վերին հարկի հարավային պատին, արտաբուստ: Հրատարակված լուսանկարի համաձայն⁴⁴, արձանագրությունն սկսվել է բիվին հարող երգափակիչ շարքից և ավարտվել վերևից 6-րդ շարքով, քսան տող (?): Ընդգրկումով: Արձանագրության կեսը՝ վերից վար, այլևս կորած է եկեղեցու հարավ-արևմտյան հատվածի կործանված լինելու պատճառով: Առանց այն էլ պատասխանով պահպանված արձանագրությունը խիտ հողմնահարված է, մանավանդ երրորդ-չորրորդ շարքերում: Առայժմ գիտությունը

⁴⁰ «Քաղաք» սակելով Անի է հասկանում հնց մեր վկայակոչած 1217 թ. արտոնագր-արձանագրությունը:
⁴¹ Նա գտնում է, որ Ետիփանի ԹՅԾՈ Յ արտահայտության Յ -ն (3) պիտի եռադանգ դրամ հասկանալ, որով որոշած կիլենք «տփիլուրի» նյութական արժեքն ու, նույնիսկ, նրա կերպը, նույնացնելով թամարյան շրջանի ԹՄՆ իշ ռենցող դրամի հետ:
⁴² Н. Марр, նշվ. աշխ., էջ 1440—1441: Գիտականը առաջարկում է սրամիտ լուծում. այդ պարագային Հոնենցի շինարարական արձանագրության 1215 թվականը պիտի ընդունել իբրև հիմնարկության սկիզբը, ավարտը տեղափոխելով 1218 թվականը, երբ Ետիփանն այստեղ է գտնվել:
⁴³ Н. Марр, նշվ. աշխ., էջ 1433: Հմմտ. նույնի՝ «Ани, книжная история...», էջ 85,
⁴⁴ Տե՛ս Н. Марр, Ани, աղ. XIII (նկ. 121):

հողով և ջրով և իրատունք զայս արարի. հայրենիք որ զնած ելանի ու զիր առած վկա[յ]ար ու զահիարն տուած կամ հայրենիք որ փոխած լինի ու մին տարի անցե(ա)լ լինի՝ այլ չես չհասանի: Թէ ով էք (իմա՛ որ—Վ. Գ.) ծո՛ղ կամ մարդ որ ի խոսմութեան վերայ կաշառք ասէ՝ թլ սուտ է ու թէ զորգ՝ զկաշառանցողն ապա. ով այս բանին հակառ կա ու զայս զրեալս խափանէ՛ չէրից սուրբ ժողովոցն նդովեալ եղիցի, մասն զՈւրայի ժառանկէ և աստուծոյ խոովութիւն անկանի և ամեն յազգէ նալաթ իրեն վերա»⁵²:

Պարզ է այլևս, թե Սահմադինը 13-րդ դարի երկրորդ կեսի առավել զորեղ ավատատերերից էր, վանական որոշ միաբանութիւնների պատրոն-հովանավորը: Սակայն դժվար է ասել, ի՞նչ նկատառումներով է վրացերեն լեզվով արձանագրութիւն թողել Անիում: Սկզբում մենք հակված էինք կարծելու, թե նա բաղկեղոնական դավանութիւն հետևորդ պիտի լինի, որի պատճառով էլ վրացերենով է արձանագրել: Բայց Երևանի Կաթողիկոսի արձանագրութիւնը կասկածելի է դարձնում նման ենթադրութիւն հնարավորութիւնը. անեծքի բանաձևում նա սպասում է՝ «...չէրից սուրբ ժողովոցն նդովեալ եղիցի»: Բաղկեղոնական դավանութիւն ունեցողը չէր մտանա առավել նվիրական շորտերով ժողովը: Հազիվ թե այստեղ Սահմադինը որևէ «գրվանագիտական» նկատառում ունենա և կամ նկատի առած լինի երևանցիների համար (իմա՛ միաբնակիների) երեք ժողովների ընդունելի լինելը, ինչպես Շահնշահն է վարվում իր մի արտոնագրում (ձեռ. № 3031, էջ 32բ—35բ): Մնում է եզրակացնել, թե վրացական եկեղեցու վրա եղած Սահմադինի արձանագրութիւնը անմիջական աղերս ունի տեղիս բաղկեղոնական համայնքի հետ, որի պատճառով էլ վիճաբան էլ է այստեղ և այս լեզվով: Ուրեմն՝ վրացերենին Անիում դիմում էին այլևայլ նկատառումներից ու դրդումներից ելնելով. Սահմադինը, ինչպես ասվեց, բաղկեղոնական դավանութիւն հետևորդներից չէ եղել:

Ետիփանի և Սահմադինի արձանագրութիւնների ամբողջականացման նպատակով կատարվող պեղումների ընթացքում, նույն վրացական եկեղեցու փլատակներից, Ն. Մառը երևան է բերել մի քանի այլ արձանագրութիւնների բեկորներ ևս: Նրանց մասին տպագիր հաղորդումներում որևէ տեղեկութիւն չկա, բայց հիշյալ 1910 թվականի պեղումների օրագրում (Ն. Մառի ծոցատետր) գտնվեցին այդ բեկորների ընդօրինակութիւններ⁵³: Ճիշտ է, արձանագրական ընդօրինակված պատահիկներից որևէ ամբողջական և կապակցված իմաստ մակարերել անկարելի է, սակայն նրանց բնույթի մասնակի կոահշում հնարավոր է: Եթե նույնիսկ այդ պարագան էլ մի կողմ թողնենք,

⁵² Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 170—172, հմտ. նույնի՝ Երևան (միջնադարյան հուշարձանները և իմասական արձանագրութիւնները), Երևան, 1975, էջ 137: Երկու հրատարակումների մեջ կան մասնակի տարբերութիւններ:
⁵³ Տե՛ս ЛО Архива АН СССР, ф. 800, оп. I, № 1992, лл. 24—38:

այլ արձանագրութիւնների զոյութիւն փաստն ինքնին կարևոր է, որովհետև այդպիսիք վկայում են Անիում նրանց ոչ պատահական լինելը:

Ձեռքի տակ միայն ծոցատետրային գրառումներ ունենալով, հասկանալի է, չպիտի կարողանանք խոսել այդ արձանագրութիւնների տեղադրութիւն, հնագրական նկարագրի և ժամանակագրական սահմանների մասին, թեև ենթադրելի է, որ դրանք գերադանցապես 13-րդ դարի վիճագրութիւններ պետք է լինեն: Ն. Մառը վերծանութիւններն օժտել է խիստ համառոտակի տեղեկութիւններով, մասնավորապես՝ из другой надписи⁵⁴.

Մոցաւետ, էջ 24բ

<Ն>ատա՞նա ո
 ման ան
 և լծմբոտ <Ձ>
 օ

էջ 25բ

Յցո: Ենշարոտ <օ>
 օԵման: հցմոնս ջշարոնս
 <օ>ձան: լծմԵյոԵոն: օԵշրոտն
 տա <Մ>մոլտա: մալլոտ < >

«Այլ արձանագրութիւնից, երկրեկոր քար».

և: ց: Յ. ԵՄՆ < >
 լծման օցանո
 <Մ>ցետա ժմոնս
 <օ>Նալո ԲՅլո
 օց <ո> ատո < >

էջ 26բ «Այլ արձանագրութիւնից, ներքեկ բեկորի վրա».

< >նտա < >
 < >ցծր օյո
 < >նի < >օ

«Այլ արձանագրութիւնից, ձախ կողմից կոտրված քարի վրա».

<՛>ալտա
 < >ամօցա յ
 < >աջօրոտ < >
 < >ամ < >

էջ 27բ «Այլ, բայց ո՞ր արձանագրութիւնից».

< >
 եցծաո < >

⁵⁴ «Այլ արձանագրութիւնից» ասելով նկատի է առնվել Ետիփանի և Սահմադինի արձանագրութիւնների բեկորներից չլինելը:

F < > : ԼԻԹ ԵՂ
 : ՖԵ ԵՅՈՂԵ < >
 < > : ՄՄ⁵⁵

«Բեկոր այլ արձանագրությունից».

G < > ԵՅՈՂ
 < > ԵՅՈՂ < >

էջ 28Դ «Նեղ քար (բարձր. 48սմ, լայն. 11 սմ), կտրվածքով».

1) Ճակատային կողմում երկտող մակագրություն (графитти).

H + ԵՅՈՂ
 ԵՅՈՂ < >
 ԵՅՈՂ

2) «Արձանագրություն կտրված մասում».

I ԵՅՈՂ ԵՅՈՂ < >

էջ 29Դ «Առանձին, երկու առանձին արձանագրություններից, թեև նույնատիպ տառերով, բայց ոչ նույնական: Նրանց արանքում՝ դատարկ տարածություն»:

J < > ԵՂ
 < > ԵՂ : ԼԻԹ : Ճ
 < > ԵՂ : ԵՅՈՂ : ԵՅՈՂ
 < > ԵՂ : ԵՅՈՂ : ԵՅՈՂ
 < > ԵՂ : ԵՅՈՂ : ԵՅՈՂ
 ԵՂ ԵՂ

էջ 30Դ «Երեսպատման քար մակագրություններով».

1. Հայ. Ս
2. Հուն. (Никофор?)
3. Վրաց. խուցուրի մանր գլխատառ

L ԵՅՈՂ ԵՅՈՂ

4. Վրաց. խուցուրի մանր գլխատառ

M seviptio plena
 յիօսեթ

էջ 31Դ «[Վրացական] եկեղեցու հարավարևմտյան անկյան մոտ վերելում՝ քարերի կույտ. նրանց վրա պահպանվել է երեսպատման նեղ կողմը՝ մանր գլխատառ արձանագրության բեկորով, զրերի (էջ 32Դ) բարձր. 09 սմ և պակաս, ողջ պահպանված տողի երկարությունը 19 սմ».

⁵⁵ Պ -ի տակ գրված է Ե, որ նշանակում է, թե պահպանվել է երկնիշ Պ -ի տառչին տառը:

N ԵՅ(Ե)ՅՐ ԼԵ

Այս 13 պատտրիկները, ինչ խոսք, նույնքան առանձնակի արձանագրությունների գոյություն չեն վկայում մի եկեղեցու սահմաններում: Թերևս նրանց մեջ կան նույնիսկ Սահմագինի արձանագրությունից պոկված բեկորներ, որ այժմ անճանաչելի են: Այնուամենայնիվ, ինչ-որ հիմքեր կան ենթադրելու, թե EBA բեկորները մեկ արձանագրության են պատկանում, հավանաբար հնագրական նույն նկարագիրն են ունեցել, ուստի Ն. Մառք փորձել է համադրել (էջ 25Վ).

E B A
 < > ԵՅՐԵՅՐԵ | < > ՅՅԵ ԵՅՐԵՅՐԵ | < > ԵՅՐԵՅՐԵ
 < > ԵՅՐԵՅՐԵ : < > ԵՅՐԵՅՐԵ ԵՅՐԵՅՐԵ ԵՅՐԵՅՐԵ ԵՅՐԵՅՐԵ
 < > ԵՅՐԵՅՐԵ | < > ԵՅՐԵՅՐԵ ԵՅՐԵՅՐԵ ԵՅՐԵՅՐԵ | < > ԵՅՐԵՅՐԵ
 < > ԵՅՐԵՅՐԵ | < > ԵՅՐԵՅՐԵ ԵՅՐԵՅՐԵ ԵՅՐԵՅՐԵ | < > ԵՅՐԵՅՐԵ

Ա III (3)

Թարգմանություն⁵⁷. ...Ինչ մարդ էլ իմ տոհմից [իհնի] կամ... հագաբացի (*) հաստատի—աստված օրհնի... և նրա սրբոց շնորհով...

Դատելով արձանագրության բանաձևային բնույթից, պահպանվել է տեքստի վերջին մասը, որին պետք է նախորդեր բուն խնդրի շարադրանքը: Թե ինչի՞ն է վերաբերել՝ կոաչելի չէ («ուշխարների» հիշատակությունը բնույթի համար բավարար հիմք չէ), բայց այնպիսի մի կարևոր խնդիր է արծարծվել, որ տոհմակից կամ ալլազգի մարդկանց՝ հաստատուն պահելու անհրաժեշտություն է եղել:

CD բեկորները, պիտի ենթադրել, միևնույն արձանագրությունից են, ընդ որում C-ի ԵՅ-ն թվական արժեք ունի (այդ է մատնանշում երկու կետերով անջատված լինելը), իսկ Ե -ն, ամենայն հավանականությամբ, [յիօսեթ] թառի վերջի զիրն է

G D
 [ԵՅ : ԵՅՅՅ |
 [ԵՅՅՅ ԵՅՅՅ |
 [ԵՅՅՅ ԵՅՅՅ | ԵՅՅՅ ԵՅՅՅ
 [< > ԵՅՅՅ ԵՅՅՅ | ԵՅՅՅ ԵՅՅՅ
 [ԵՅՅՅ < > ԵՅՅՅ | < > ԵՅՅՅ < > ԵՅՅՅ

Ա IV (4)

⁵⁶ Առաջին տողը ամբողջությամբ մնում է շեղանկյունի, հասկանալի է միայն ԵՅՅՅ-ն—ուշխարների:
⁵⁷ Ճիշտ կլինի ասել՝ Թարգմանության փորձ:

Թարգմանություն. ... (Քրոնիկոն)ի 507 (1287 ք.): ...լս իվան... շեսի կղբուրդու (" ... բառ նոր ծնսի եղավ...⁵⁸:

Այստեղից միայն մեկ իրողություն է պարզ. վրացական եկեղեցու պատերից մեկի վրա եղել է 1287 թ. վիճաբանած արձանագրություն (Մահմադիների վրացերեն արձանագրությունից մեկ տարի առաջ): Թերևս նույն այս արձանագրության շարքի նախորդ բարերից է և F-ը (այդ հուշից միակ պարագան 5 տողի առկայությունն է): Ինչ վերաբերում է մակագրություններին (H, I, L, M), ապա նրանց վերծանությունը կասկած չի հարուցում.

1 (H) + ՄԾ(սլո) Մ(յոֆյալ)ց | Գ(հո)ը <Յ>[լըցլո . . .]ս(ն) Ե.
Ա V (5)

Թարգմանություն. Տեր, ողորմյա՛ հույժ մեղավոր [. . . ին], ամեն:

2 (L) խ(ոսժ)ց Լ(թյր)տո.
Ա VI (6)

Թարգմանություն. Քրիստոս աստված:

3 (L) խ(ոսժ)ց Մ(յոֆյալ)ց.
Ա VII (7)

Թարգմանություն. Քրիստոս ողորմյա:

4 (M) խ(ոսժ)ց—Քրիստոս:
Ա VIII (8)

Այսպիսով, Ն. Մառի ծոցատերից բաղված պատարիկները ոչ պակաս, բան 8—9 արձանագրությունների գոյություն են վկայում, որից չորսը (E+B+A; C+D; J; K) ընդարձակ տեքստ են ենթադրում, իսկ մյուս չորսը՝ կարճատեքստ մակագրություններ են (H, I, L, M):

1848 թ. Անի ճանապարհորդած Ն. Խանիկովը մասնավոր ուշադրություն է դարձրել հետազայում «Մանուչի մզկիթ» անունով հայտնի կառույցի արձանագրություններին: Իր նոթերում նա հրապարակել է (Աբխիի պատճենահանանումներից բաղկով) մզկիթի հյուսիսային պատի արարերեն և ապա փոքր-ինչ ներքև նրան հարող հայերեն, պարսկերեն և վրացերեն արձանագրությունները, թարգմանելով ու մեկնաբանելով Մ. Բրոսսի օգնությամբ⁵⁹: Արժանվույնը պիտի հատուցել Մ. Բրոսսին, որ այդ բավականաչափ ոչ ճշգրիտ ու մասամբ էլ աղավաղ ընդօրինակությունից կարողացել է հասակ

բովանդակություն մակագրել, տալով հիմնականում ստույգ ընթերցում: Արձանագրությունը երկտող է, որին վերից եղբրում է արարերեն նշանավոր նախադիր արձանագրությունը, ձախ կողմում՝ պարսկերեն արձանագրության երկու տողերի սկիզբը, իսկ ներքևում հայերենն է՝ «Հաստատուն պահողն ավրհնին յա(աստուծո)յ»⁶⁰: Ն. Խանիկովի նոթերին կցած ծանոթագրության մեջ Մ. Բրոսսն վրացերենը կարդում է. յոհոհոհոհոհոհ ՄԾ, թյ օտօծօծօծ Նօժօհօհօհօհ թօծօծօծօծօծ—En l'année pascalle 450, moi l'atabek Zakaria, j'ai confirme ceci⁶¹ (իմա՛ «Քրոնիկոնի 450 (=1230), ես՝ աթաբեկ Զաքարիա, հաստատել եմ»): Բրոսսն երկմտել է բրոնիկոնը վերծանելիս, իբրև հնարավոր պատժաներ դիտելով ԾԾ (550), ՅԾ (508), օԾ , բայց ժամանակագրական նկատառումով (Զաքարիայի՝ աթաբեկ լինելու հանգամանքը) դերպասել է ՄԾ-ն (1230 թ.): Նա հետագայում նորից է անդրադարձել այս բրոնիկոնի ինդրին և մասամբ վերանայել իր առաջարկածը, կարդալով ՄԾ(չ (1238): Բրոսսի վերծանությունից օգտվող Ն. Սարգիսյանը վկայակոչել է այդ ընթերցումը և թարգմանել. «Ի թուխ ՆՄԸ (1258) ես աթապեկ Զաքարիա հաստատեցի»⁶²:

Որքան էլ փոքր ու դժվար նշմարելի, այնուամենայնիվ, արձանագրության պահպանված լուսանկարը որոշ ճշգրտումների հնարավորություն տալիս է⁶³: Տողասկզբի խաչանշանը արդարև վրացերեն չ է, որին հետևում է կիսով երևցող յ-ն⁶⁴: Հաջորդ տառանիշերի ընթերցումն առավել որոշակի է, մանավանդ հնարական ինքնատիպությունները նկատի առնելու պարագայում. Ե-ի վերին աջ ելուստը մասամբ վայրահակ կորույթովն ունենալու պատճառով դրեթե միացել է Ն-ի ստեղծին, իսկ վերջինիս ստորին կեսը ավարտվում է օ-ին հատվելուց հետո: օ-ն բավական ուշադրավ տեսք ունի՝ վերին հորիզոնական գիծը աղեղնաձև է (այդպես է և մյուս բառերում), իսկ ստորին սպասելի կիսաղեղը կամ ուղղագիծ է, կամ հակառակը՝ աջ ծայրով վայրահակ: Այսպիսով, առկա է չժժ օ, որը բացելով կլինի՝ յ(ոհոհո)յ(ոհ)նօ. Քրոնիկոնի բուն թվականն արտահայտելու համար մնում է երկու նիշ, որից երկրորդը արգարև Թ է (8), իսկ նախորդը չի կարելի կարգալ ո՛չ օ, ո՛չ Մ և ո՛չ էլ Ծ, քանի որ շունի առ այդ անհրաժեշտ էլուստը կամ փորակը: Ուշադիր զննումից պարզվում է, որ փորագրված է օ և սոսկ պատահական կամ սխալմամբ առաջացած բոլորակն է, որ առաջին հայացքից խաթարել է տառապատկերը, այն վերածելով Ծ-ի նման մի

⁵⁸ Վերջին տողում թերևս եղել է [ց]ոհո օտո[տեծօծ] կամ օտո[ոծօծ]—շահեց (ստապավ) տասչոս (տասերկու):

⁵⁹ N. Khanykof, Excursion à Ani en 1848 (տե՛ս M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, exécuté en 1847—1848, 1^{er} livraison, St.-Pét., 1849, p. 138—139).

⁶⁰ Հայերենը սկզբից իսկ կարգացվել է հելս (տե՛ս M. Brosset, նշվ. աշխ., էջ 139): Ինչպես երևում է, Աբխի-Խանիկովի ու Ն. Սարգիսյանի այնչափան տարիներին տեղում է եղել հայերեն արձանագրության երկու տողերի սկիզբը բովանդակող բարը, որ հրապարակված լուսանկարում այլևս չկա (տե՛ս «Գիտն», I, էջ 54 և աղ. XX):

⁶¹ Անդ:

⁶² Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 137: 1258 թվականի մեջ, անշուշտ, վրիպակ կա, պիտի լինի՝ 1238 (458+780=1238):

⁶³ «Գիտն», I, տախտ. XX:

⁶⁴ Երկրորդ տողում նորից յ ունենք:

բանի: Մեր վերծանությունից հետևում է, որ թվականը օՄ (18) պետք է կարգալ: Ինքնին հասկանալի է, խոսքը բրոնիկոնի հաջորդ պարբերաշրջանի մասին է (780+532+18 = 1330 թ.): Այստեղ արդեն բացահայտվում է Ջաբարիա աթաբեկի ինքնությունը: Մ. Բրոսեն նրան նույնացրել է Շահնշահ Ա-ի որդի Ջաբարիայի հետ, որը մահացել է 1261 թ., ուստի կարծել է, թե 1230 կամ 1238 ունենալու դեպքում թվականը ճիշտ կլինի⁶⁵: Սակայն շախտի մոտանալ, որ Իվանի մահից հետո (1227 թ.) աթաբեկը նրա որդի Ավագն էր (մահ. 1250 թ.), որից հետևում է, թե Շահնշահի որդի Ջաբարիան այդ տարիներին հիշյալ տիտղոսը կրել չէր կարող: Նա միայն 1251—1261 թթ. արանքում փոխարինեց Ավագին⁶⁶:

Ուրեմն՝ Մանուչեի մզկիթի արձանագրության Ջաբարիա աթաբեկը այլ անձնավորություն է. խոսքը Շահնշահ Բ-ի որդի Ջաբարիայի մասին է: Առաքելից եկեղեցու գավթի 1320 թ. արձանագրության մեջ կարդում ենք. «Թվին ՋԿԹ: Ողորմութեամբն աստուծոյ ես Խուանդղէս՝ զուգակից արքայ Շահնշահի, որ յայսմ ամի ել յաշխահէ և տրամութիւն մեծ եղև մեզ և աշխահնիս արևելից, ես ամուսին նորա՝ ղուսար Շամշադին Սահիպդիանին և պարոնն Խալաֆին, թոն Իանէ արաբակին և (իմ) որդիս իմ Ջաբարիա յալաֆս պատրոնին հոգոյն փրկութեան և եղբաց իմոց երկարեկողանութիւն⁶⁷, ի մեր հայրենիք Լաղաֆս ի յԱնի բողաֆ զհովեայն...»⁶⁸: Նույն թվականին էլ Սարգիս Միլենց բաժարը թողել է Արշուառն մեծ ու փոքր բաժր՝ «վասն հանկրտեան պատրոնին մերո Շահնշահի և անասուր զաւակաց Ջաբարիայի և եղբաց նորա...»⁶⁹: Ինչպես երևում է, հոր մահից հետո աթաբեկության պատիվն անցել է որդուն՝ Ջաբարիային, որը եղբայրներից երեքը պետք է լինեն: Հենց այս աթաբեկն էլ հիշված է մեզ հետաքրքրող արձանագրության մեջ:

Որոշ սրբագրության կարիք ունի նաև Բրոսեի ՅձճՐՕՁՁՁ մոմոթյոցցծոս ընթերցումը: Ընդգծված օ-ի փոխարեն լուսանկարում կարդացվում է լ, այն էլ ուշագրավ զըշյոթյամբ (փորակի կարասաձեռություն), ուստի այն պետք է կարդալ հաջորդ բառի հետ՝ լ(օ)մոմոթյ(ո)ց(յ)ծոս:

Այսպիսով, Մանուչեի մզկիթի վրացերեն արձանագրությունն է.

յ(լ(ո(ո(ո(ո(ո)յ(ո(ո)ն) օՄ. ձց, օտ(օ)ծ(օ)ցլև Յ(օ)յձՐՕ(օ)ն և մոմոթյոցցծոս.

Ա. IX (9) Աղ. II, 2

Թարգմանություն. Քրոնիկոնի 18 (=1330): ես՝ արաբեկ Ջաբարիա, հաստատել եմ:

Ապացուցելու հարկ չկա, թե վրացերեն և հայերեն արձանագրությունների (ճիշտ կլինենր սակը՝ հաստատագրերը) վիմագրված են նույն առիթով,

⁶⁵ Այդ թվականը երկրաչիլ է համարել և Ղ. Ալիշանը. տե՛ս նրա՝ «Շիրակ», էջ 56, ծան. 2:

⁶⁶ Տե՛ս Բարանայի արձանագրությանը վերաբերող բաժինը:

⁶⁷ Կարգալ՝ երկարեկողանություն:

⁶⁸ «Գիվան», 1, էջ 27:

⁶⁹ Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 74, հմմտ. «Գիվան», 1, էջ 3:

նույն շրջանում և նույն բովանդակությամբ, սակայն այն տարբերությամբ, որ հայերենում թվական ու հաստատողի անուն չի հիշատակված: Այժմ կարելի է ճշգրտված համարել և հայերեն արձանագրության ժամանակը՝ 1330 թ.: Ինչպես երևում է, այդ թվականին պետք է գրված լինի և պարսկերեն արձանագրությունը: Հիշյալ լուսանկարում, ն. Խանիկովի հրատարակության համեմատությամբ, նրա շարունակության մեկ քար ընկած է. Խանիկով-Բրոսեն հրատարակման մեջ ունենք. *در سوره سنه ... منكر اتاجك [ازكرجا ...] و...* թվի ամսոց ...անարժանս Ջաբարիա աթաբեկ՝ որդին հանգուցյալ ...»⁷⁰:

Ն. Խանիկովը թվականի բաժինը վերականգնել է *خمس وثلاثين وستماية* որ է հիջրի 635 թ. և համապատասխանում է մեր 1237/1238 թվականներին: Բայց նման լրացում առաջարկելու միակ ելակետը Մ. Բրոսեի կողմից վրացական բրոնիկոնի 1230 կամ 1238 կարգալն է, որ, ինչպես տեսանք, ճիշտ չէ: Վրացերեն տեքստին միանգամայն համապատասխան պարսկերենում պիտի ունենայինք հիջրի 730 կամ 731 (=1330 թ.)⁷¹ — *حادی وثلاثین وستمائة* — Ջաբարիան պարսկերենում էլ իրեն կոչում է «աթաբեկ» ու մանավանդ «որդին հանգուցյալ [Շահնշահի]»: Կարելի է վստահորեն ասել, թե պարսկերենում ևս խոսվելու էր «հաստատուն պահելու» կամ «հաստատելու» մասին: Ուրեմն, եռալեզվյան այս արձանագրությունը գրված է միաժամանակ և նույն առիթով⁷²: Բայց ի՞նչ են «հաստատ պահելու», կամ այս կարևոր խնդիրը զրեթե վրիպել է արձանագրությանս այս առանց չափով անդրադարձած զիտնականների ուշագրությունից: Հայտնի է, որ եռալեզու այս տեքստի վերին շարքում արաբերեն դատերոսը երկար արձանագրություն է, բայց Ջաբարիա աթաբեկի խոսքը նրան չի աննշվում, քանի որ այն մզկիթի շինարարությանն է վերաբերում⁷³, գրված Մեխր-Շահի օրոք, 1072—1074 թվականներին⁷⁴: Ջաբարիա աթաբեկը այստեղ հաստատելիք չուներ: Ամեն ինչ պարզ է դառնում, երբ դիմում ենք նույն պատին, արաբերենից վերև գրված պարսկերեն ընդարձակ արձանագրությանը: Վերջինիս նորոտակ վերծանությունն ու հանգամանալից բնու-

⁷⁰ M. Brosset, նշվ. աշխ., էջ 139: Ալիշանի թարգմանությամբ. «ես մեղաւոր Ջաբարէ Աթաբակ, որդի հանգուցեալ... հաստատեցի ի թուին 635 (հազարաց) և վրացն 458» («Շիրակ», էջ 56): Իրականում յայսպիսի տեքստ չկա:

⁷¹ Ն. Խանիկովը թեև առաջարկում է միավորը *خمس* — հինգ կարգալ, բայց վերծանության մեջ տալիս է *ح* որ *حادی* — մեկ թվի սկզբնատան է: Ն. Սարգիսյանի գրքում վրիպմամբ «սաղ» (*ح*) է, նույնն է և Ղ. Ալիշանի մոտ («Շիրակ», էջ 56):

⁷² Արձանագրությունն եռալեզվյան է կոչում և Մ. Բրոսեն (l'inscription trilingue), տե՛ս նրա՝ Les ruines d' Ani, I, p. 31.

⁷³ Ահա հայերեն թարգմանությունը. «Հրամայեց կառուցել սույն մզկիթն ու մինարեն փառավորյալ էմիր Շուշա աղ-ղովյա Աբու Շուշա Մանուչեհ՝ որդին Շավորի ... Այլի Աբալանի որդի Մեխր Շահի իշխանության օրոք»: (Տե՛ս В. А. Крачковская и И. Ю. Крачковский, Из арабской эпиграфики в Анни, «Академику Н. Я. Марру», М.—Л., 1935, էջ 671—695, հատկապես 695):

⁷⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 694:

Թյունը պատկանում է ակադ. Վ. Բարտոլդին⁷⁵, որի աշխատությունից էլ ստորև բերում ենք տեքստը.

الله لطيف بعباده
ابو سعيد بهادر خان
يرليغ در اين وقت كه از تختگاه
پادشاه روی زمين
سلطان عالم غلاء الدنيا والدين خلد
ملك
كه از مشرق تا مغرب جهانيان در
سايه مرحمت و معدلت او اند حق
تعالي حكم و فرمانشها بزيادت
باتمام رسانند
و ديگر حكم چنانست كه چنانك روى
زمين بفرمان و حكم ديوان بسر قلم
اوست تا هيچ افریده كس و بيشى
نتواند كرد
و بغير از تمغلا و باج بواستى
چيزى ديگر نستانند و از هيچ
افريده بعلت قتلان و نمازى و طرح
و غيره چيزى نخواهند
چنانكه بيشتر از اين بر شهر اى و
ديگر ولايت گرجيستان سبب قتلان
و نمازى و حوالات ناواجب و طرح
زيادى
كرده بودند و زور رسانيده روى بخرابى
نهاده و رعايامتفرق گشته و كندخدايان
شهر ولايت سبب قتلان و ترسناكى
ملك

- 1 Աստված հասու է իր ծառայոց:
- 2 Աբու-Սալիդ Բահադուր խան:
- 3 Հռովարտակ. Արդ, երբ երկրի երեսի արբալի նստոցից—աշխարհի սուլթան,
- 4 բարձրյալն երկրի և գեների, թող հավերժի (նրա) թագավորությունը,—երբ ա-
- 5 ընկերից մինչև արևմուտք երկրայինք նրա ողորմածությունն ու արդարության հավանու տակ են—թող բարձրյալն արդարև նրա իշխանությունն ու հրա-
- 6 մանը առավել կատարելություն հասցը-նի,—այլև հրամանն այս է. բանդի երկրի երեսը [ենթակա է նրա] հրա-
- 7 մանին և Գիլանի կարգադրությունը նրա գրչի ծայրին է, թող ոչ մի արա-
- 8 րած չկարողանա ավելի կամ պակաս անել՝ և բացի թամզայից ու արդար բաժից ուրիշ ոչինչ չառնեն, և ոչ մի արարածից զալանի, նեմարի, թարհի ու այլ պատրվակով ոչինչ չուզեն, ինչպես որ սրանից առաջ Անիում և
- 9 Վրաստանի մյուս զավառներում զալա-նի ու նեմարի, ապրիլի պարտությունների և թարհի պատճառով ավելորդու-թյուններ էին արել և ուժ գործադրել. սեղանքը ավերակի վերածվելով՝ բայա-

⁷⁵ SL^u В. Бартольд, Персидская надпись..., «Ангийская серия», № 5, СПб., 1911. Վերահրատարակություն տե՛ս Академик В. В. Бартольд, Сочинения, IV, М., 1966, стр 313—338.

⁷⁶ SL^u В. Бартольд, նշվ. աշխ., էջ 5: Գիտնականը իրավացիորեն նկատել է, թե պարսկերենում կան ոճերի կամ դարձվածքների անհարթություններ, փերականական անհետևողականություն: Նա չի փորձել քննության առնել դրանց գոյացման պատճառը: Անհրաժեշտ ենք համարում մի երկու իրողության անդրադառնալ. **و ديگر حک چنانست** և դարձվածքի առաջին մասի կառուցվածքը պարսկերենում պատճենման սպալմբություն է թողնում. այն ստացիորեն համապատասխանում է հայերեն «այլև»-ին: Ուղղակի անսովոր է պարսկերենում, **و ديگر ولايت**, կարգալ. **و ديگر شهر اى و ديگر ولايت**, պատճենված է հայերեն «վերաջ-ն (խա՛) հանդեպ վերաբերմամբ, շուրջ, մասին»), այնպես սպասելի էր **ای** կամ **در** (?) չ: Երբ սպասելի և վերացրեցին **و ديگر**-ն պատճենելու գեղարվ. նպատակով: Երբ հարկադրված էին արձանագրու-թյան մեջ հրովարտակը վերապատմված է, այն էլ պարսկերենին ոչ շատ հմուտ և հայերենախոս մարդու կողմից: Թերևս համաատուր-վերապատմողը ինքը՝ Զաքարիա Թա-րևելի է եղել:

10 **واسباب و اسباب و اسباب و اسباب** 10 ները ցրվել են եկել, բաղաբի ու զավառի քեթխությանը զալանի ու գննագրի (Քերնագիր) պատճառով ունեցվածք ու ինչք, իրենց տան ու տեղ թողել գնացել են: Կարգադրություն գրեցին, թև արդարև բարձրյալն [աստ-ված]՝ վերին հովանին (հպատակնե-րի՞) գլխից⁷⁷...

Աբու-Սալիդի հրովարտակ-արձանագրությունը անսպասելի ընդհատվում է⁷⁸, ուստի գիտնականները նրա հրապարակման ժամանակը որոշում են բառ հիշատակված սուլթանի իշխանության տարիների, նրա՝ բանադուր տիտղոսն ստանալուց հետո, 1319—1335 թվականներին⁷⁹: Վ. Բարտոլդի կերակացու-թյամբ, վիժագրումը ավելի շուտ վերաբերում է այդ շրջանի երկրորդ կեսին: Այժմ վրացերեն արձանագրության շնորհիվ կարող ենք վստահ առել թե հրովարտակի հրապարակումը տեղի է ունեցել նույն 1330 թվականին, քանի որ վավերացում-վկայություն պահանջվում էր հենց հրապարակման շրջանում: Զաքարյան տան վերջին շառավիղն ինքն էլ մինչ այդ հրովարտակը, մեր կամակցությունը, աշխատել էր բնակչությանը շնորհիվ քաղաքի և զիջանուն գնամրելուն և զոստիկոն մեծի և զիսոխոն⁸⁰: Բայց այդ ու մյուս գիշումները անբավարար են եղել, ուստի, պարսկերեն արձանագրության տեղեկություններ, բազմաթիվ բնակիչները լքում էին Անին, թողնում-հեռանում: Ամայացումը կանխելու միակ եղանակը հարկերի թեթևացումն էր, որ և կատարվել է Աբու-Սալիդի հրովարտակով: Ընդ որում, Զաքարիա Թաթևելի իր եռալեզ-վյան հաստատագրով շանացել է հրովարտակի բովանդակությունը հասու և պարտադիր դարձնել բաղաբի բազմազգ ու բազմալեզու այլազան ողջ բնակչությանը: Որ իրոր անհրաժեշտ էր հավասարապես գիտել բոլոր էթնիկական կամ զավանական համայնքներին, որոշ է և այստեղ վկայակոչ-ված հայերեն արձանագրության ավարտից, ուր կարգում ենք. «Որ և զմեր

⁷⁷ Հրովարտակի ֆրանսերեն թարգմ. տե՛ս M. Brosset, նշվ. աշխ., էջ 30: Ղ. Ալիշանը հրատարակել է պարսկերեն բնագիրը և օժտել դրաբար թարգմանությունը (տե՛ս «Շիրակ», էջ 56): Ծիշտ է, դրաբար այդ թարգմանությունը զեղեցիկ է հշուտ, բայց կատարված է ոչ թե բնագրից, այլ Բրոսսեի հիշյալ ֆրանսերեն թարգմանությունից, պահպանելով վերջինիս բոլոր հեռացումները: Աղբյուրագիտական ուսումնասիրությունների համար այն ամենևին հանձնարարելի չէ:

⁷⁸ Մ. Բրոսսեի այդ պարագան բացատրում է տեղ չլինելով, սակայն Վ. Բարտոլդի իրավացիորեն առաքիում է և գտնում, որ տեղի պակասության հարց չկա, այլ արձանագրված է հրովարտակի համատարած-վերապատմված պատճենը, ընդ որում «մզկիթի պատին վերադարձված է հրովարտակի այն մասը, որի վրա ուղեցել են գերազանցապես հրավիրել րականների ուղարկությունը» (В. Бартольд, նշվ. աշխ., էջ 8—9):

⁷⁹ Իշխանության տարիներն են՝ 1317—1335 թթ. (տե՛ս К. Э. Босворт, Мусульманские династии, М., 1971, էջ 200): Տիտղոսի մասին տե՛ս V. Minorsky, Iranica, 1964, p. 82.

⁸⁰ «Գիլան», I, էջ 27:

աւանդս խափանել ջանայ՝ բ'է հայ լինի կամ վրացի, կամ տաճիկ՝ հանէ դատի և դատապարտի յատուծոյ, մասնակից և գեհնակից սատանայի եղիցի, և վրացին կրօլ և անիծած լիցի և տաճիկն յամենայն փառաւորեալ փեղամբարաց ամաւրով և սևերես լինի...»⁸¹: Մի դեպքում հայերինով է դիմել՝ առանձին-առանձին թվարկելով, մյուս դեպքում չի թվարկել, այլ նրանց է հասցնագրել՝ յուրաքանչյուրին իր լեզվով⁸²:

Ընդ որում, այս ամենից հետո է միայն պարզ դառնում, թե ինչու է հաստատագիր պարսկերեն տեքստում Զաքարիան իրեն կոչում *کهن*: Մ. Բրտսնն այս տերմինի գոյությունը արդարացնում է հայոց և վրաց հիշատակարաններում «մեկավոր», «ՅՈՒՅՈՒՄ», «ԳՐԻՍԻՍ» և «ՅՈՒՅՈՒՄ» արտահայտությունների համախաղեկությունը⁸³: Այդ ամենը, իհարկե, ճիշտ է, և Զաքարիան պարսկերեն արձանագրելիս կարող էր տեղական ավանդույթից ելնել: Բայց մոռանալու չէ նաև, թե վիճաբար արքայի է, որ իր հպատակներին հասցնագրված խոսքում հաղիվ թե սեփական հասցեին այդպիսի արտահայտություն գործածեր: *کهن* նշանակում է «ուրացող», «ծխող», «հերքող», «հավատարաց», բայց նաև՝ «անարժան», «մերժյալ», «արգելյալ» և այլն: Այստեղ գործածված է, հարկավ, «անարժան» իմաստով, որ նույնն է, ինչ միջնադարյան գրիչների «փծուն» ու «եղիկին»: Բայց գործածության բուն շարժառիթը իրեն նվաստացնելու միտումը չէ, այլ «աշխարհակալ» Աբու-Սալիդի աված հրովարտակը «հաստատելու» պարագան: Տերմինիս կիրառության փաստը արդեն հուշում է Զաքարյան տոհմի այս վերջին ներկայացուցչի կախյալության աստիճանը: Ավելին, տեղական իշխանավորների իրավասությունն ու կարողությունը այնքան էր նվազել, որ ծանրացած հարկերը թեթևացնելու և քաղաքի ամրացումը կանխելու համար անհրաժեշտ է եղել Աբու-Սալիդի միջամտությունը: Ահա թե ինչու հրովարտակը հաստատակիս ավարեկն իրեն *کهن* է կոչում:

Ինչպես վերևում նշվեց, Անիի քաղկեդոնական կառույցների թվին է պատկանում նաև Տիգրան Հոնենցի կառուցած ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին⁸⁴: Ն. Մասն այն կոչում է «կիսահայկական, կիսավրացական, մի խոսքով՝ քաղկեդոնական-ուղղափառ եկեղեցի»⁸⁵, որը «զարգարված է կենդանական զարգանախով՝ կեղծ կամարների բուսական ֆոնի վրա... Եկեղեցու արմատյան թևը ծածկված է որմնանկարային պատկերներով, որոնց մեջ տրված են Գրիգոր Լուսավորչի վարքի մի շարք թանկարժեք իլյուստրացիաներ՝ վրացական եկեղեցական (իմա՝ խուցուրի—Պ. Մ.) արձանագրություններով... Այդ որմնանկարությունը գրեթե ամբողջությամբ հարում է հայերի քաղկեդոնական ավանդություններին այն տեսքով, ինչպես

⁸¹ «Բիվան», I, էջ 27;
⁸² Պարսկերեն արձանագրության աղբյուրագրական քննությունը չենք անդրադառնում, որովհետև սկազ. Վ. Բարտոլոյը այդ կատարել է բավականաչափ հանգամանորեն:
⁸³ Տե՛ս N. Khanykoi, նշվ. աշխ., էջ 139—140, ծան.:
⁸⁴ 1215 թ. շինարարական արձանագրությունը տե՛ս «Բիվան», I, էջ 61—62;
⁸⁵ H. Mapp, *Ann.*, стр. 85.

նրանք, այդ ավանդությունները, պահպանվել են Գրիգոր Լուսավորչի «Վարքի» քաղկեդոնական պատմումում՝ արարքերն լեզվով...»⁸⁶: Ն. Մասնի նկարագրած վրացերեն մակագրություններ ունեցող որմնանկարների նշանակալի մասը այժմ հրատարակված է⁸⁷, իսկ մակագրությունների հիմնական արժեքը, տեսարանները կոչվելուց բացի, եկեղեցու քաղկեդոնական լինելը մատնացուցելու մեջ է, որ առանց այդ էլ հասկանալի էր: Աղբյուրագրատական առումով այդ մակագրությունները հետաքրքրություն չեն ներկայացնում, ուստի դրանք, ինչպես և Պղնձահանքում եղածները, սույն աշխատության մեջ զանց են անվում⁸⁸: Այնուամենայնիվ, եկեղեցու արևմտյան շքամուտքի պսակին աղեղնաձև ու ներկագիր կա հունարեն և վրացերեն արձանագրություն, որ հրապարակված է Մ. Բրտսնի ու Ն. Սարգիսյանի աշխատություններում⁸⁹ և արժե այստեղ վերարտագրել:

Κόρη, ἡρώδεια εὐσπετίαν οὐκὸν σου καὶ τόπον σαχρότατος δόξης σου.
Թարգմանություն. Տե՛ր, սիրեցի գվայելուծիւն տան Բոյ, և գտելի յարկի փառաց Բոյ (Սաղմ., ԻԵ, 8):


ესე არს ჰმე უ(ფლესი)ადა მართალნი შეველენ[ან] ამას⁹⁰.
Ա X(10)
Թարգմանություն. Այս դուռն տեսուն է, և արդար մտանեն ընդ սա (Սաղմ., ՃԺէ, 20):

Ակազ. ն. Մասնի հիշյալ ծոցատեղում (էջ 36Դ—38Դ) պահպանվել է Անիի ս. Մինաս եկեղեցու համառոտ նկարագրությունը: Հատկապես արժեքավոր է ներբուստ մասամբ սկզբի տակ մնացած 1013 թ. հայերեն արձանագրության երևացող մասի վերձանությունը⁹¹: Եկեղեցին, ինչպես երևում է,

⁸⁶ Անդ:
⁸⁷ Տե՛ս H. Mapp, նշվ. աշխ., նկ. 188—190, ավելի լիարժեք՝ տե՛ս Բելյուրի «Համագրային» միության հրատարակած «Monuments d'architecture Arménienne», Beyrouth, 1972 նկ. 69—78:
⁸⁸ Տիգրան Հոնենցի եկեղեցու որմնանկարների վրացերեն մակագրությունների հավաքական հրատարակություն տե՛ս Д. П. Гордеев, Отчет о поездке в Ахалцихский уезд в 1917 году (росписи в Чуде, Сапаре и Зарзме), «Известия Кавказского историко-археологического института в Тифлисе», т. I, Пгд., 1923, стр. 5—11.
⁸⁹ Տե՛ս M. Brosset, Les ruines d'Ani, I, p. 14; Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 128:
⁹⁰ Ն. Սարգիսյանի մոտ եղած տարբերակներ՝ արև. + ՊԵԵ. Սաղմուրը քաղված Գևորգի Մուրաբարիցու իմրագրությունից (տե՛ս ն. «Մեթաֆիզիկական ժողովուրդի զգայությունը», 1960թ, թ. 1, 326):

⁹¹ էջ 37Դ—Վ: Այս արձանագրությունը չի մտել սկազ. 2. Օրբելու կազմած «Բիվանի» մեջ: Ն. Մասնի և 2. Օրբելու հրատարակած հաշվետվություններում, հնությունների ցուցակներում ու քաղաքի պլաններում ս. Մինաս եկեղեցի չկարողացանք գտնել: Գուցե ս. Մինաս է կոչվել ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցուն կից որևէ կատուց (այդպես ենթադրելու միակ կովանն (?)) այն է, որ այս երկու եկեղեցիների մասին Ն. Մասնը ծոցատեղի նույն էրում է խոսում):

Հետագայում անցել է քաղկեդոնականների ձեռքը, զարգարվել որմնակար- ներով: Ահա այդ որմնակարներից մեկում պատկերված է Գանիկ մարգարեն (ալդրիս է ծանոթագրում Ն. Մառը), որի ձեռքին փաթաթ (СВІТОК) կա վրացերեն արձանագրությամբ (էջ 38Դ).



Ա. XI (11)

Քարգամնություն. Մարգարեություն Տեկիկի. հարցումն լինի՝ հաջող օրվանից ... մինչև ...

Ի վերջո, թվարկելով 1907 թ. պեղումներից հայտնաբերված իրերն ու առարկաները, իսկ ապա և արձանագրությունները, Ն. Մառը բերում է ձեփի վրա գրված վրացական երկու արձանագրական պատառիկ (մեկը եղև է և եղում, մյուսը՝ թանգարանում).

«դ) Քանգարանում. ձեփի կտոր՝ վրացերեն երկտող արձանագրության բեկորով.

ՁՄ
ՁՅՐ

Ա. XII (12)

К) Տեղում. վրացերեն տառերով մակագրված է. յիցերո⁹²

Ա. XIII(13)

Հակված չենք կարծելու, թե՛ վիպակոչված արձանագրություններով սպասվում են Անիում գոյություն ունեցած վրացերեն լիմագիր ու զեղագիր հիշատակարանները, ինչպես որ Հ. Օրբելու հրատարակած հայերեն արձա- նագրությունների Դիվանը ամփոփում է միայն այն, ինչ պահպանվել էր մինչև դարիս երկրորդ տասնամյակը, մինչդեռ տասնյակ չպեղված հուշար- ձանների պատերին սպասելի էին շատ ուրիշ լիմագրեր ևս: Այնուամենայնիվ, եթե հայերենով պահպանված արձանագրությունների գումարը հարաբերակ- ցենք այլ լեզուներով եղածներին, որոնց մեջ առավել ստվարաթիվը վրացե- րեններն են, ապա իրավունք կունենանք եզրակացնելու, թե քաղաքի բնակչության էթնիկական կազմը 12—13-րդ դարերում էական փոփոխություն

⁹² Н. Март, Реестер предметов древности из VI-й (1907) археологической компани в Ани, «Аниийская серия», № 2, СПб., 1908, стр. 43.

չէր կրել, թեև առավել նշանակալի էին դարձել քաղաքական ու զավանական կողմնորոշումով պայմանավորված «օտարումները»: Թրեքս դա գերագան- ցապես վերաբերում է քաղաքային բնակչության այսպես կոչված վերնախա- վին ու հոգևորականությանը, որի ապահովությունը ևս սկսում էր խարխվել:

13-րդ դարում (?) կազմված «շրտեցա միտնոս» վավերագրում («Օրհնություն մեռուի») սահմանվում է ներկայացուցիչների զբաղեցնելը կարգը⁹³: Այստեղ 25-րդ տեղը հատկացված է վաղարշակի որի, 27-րդը՝ Կարսի եպիսկոպոսներին (բառացի՝ հայրապետներին), բայց չի հիշատակված Անիի ներկայացուցիչը: Բնագրում ասվում է, թե «Մեծ Հայքի միտրապոլիտը» կանգնելու է «ի վերայ նիթոց» և որ վրաց կաթողիկոսից ու ճղոնգիզից հետո «մտնելու է Մեծ Հայքի միտրապոլիտն ու նստելու կաթողիկոսից ներքև», գրավելով երրորդ տեղը: Ինչպես երևում է, «Մեծ Հայքի միտրապո- լիտ» ասելով հենց Անիի քաղկեդոնականների առաջնորդին նկատի ունի, որով կարելի է վիճված համարել նրա գերագահությունը Հայաստանի երկարնակ մյուս երկու ներկայացուցիչների համեմատությամբ: Անիի քաղաքական դերի թուլացումից հետո էլ տեղիս հոգևոր առաջնորդները շարունակում էին «Մեծ Հայքի» ներկայացուցիչներ հորջորջվել, հարկավ ոչ այնքան ավանդույ- թի, որքան քաղաքի տնտեսական ու մշակութային նշանակության թելադ- րանքով:

Որ Անիի քաղկեդոնական վերադիտողին նշանակալի տեղ էր հատկաց- վում վրաց արքունիքում ու երկրի քաղաքական-հոգևոր գործերում, ապա- ցուցվում է Ռուսուղան թագուհու՝ Հուսի Օնորիոս 3-րդ պապին հասցեագրված նամակով: Նզրո՛ր՝ Լաշա-Գևորգիի մահը տեղեկացնելով ու «թաթարների» պատճառած ավերածությունը ներկայացնելուց հետո, թագուհին պատրաստա- կամություն է հայտնում «գորապետ Իվանի ողջ գործով» մասնակցելու «սուրբ վայրերի արատագրությանը», ապա եղբայրական նամակը այսպես. «Սույն նամակը բերող մեր սիրելի Դավթին՝ Անիի եպիսկոպոսին, ամեն ինչում այնպես վստահե՛ք, ինչպես մեր բերանից լսելիս լինե՛ք»⁹⁴:

Նույն լիազորություններն ու վստահությունը, գրեթե բառացիորեն, կրկնված են և Իվանե Երկաճաբազուկի (Մխարրթեղի) հղած նամակում (գրված նախորդի հետ միաժամանակ), ուր նա՝ «հնազանդ (խոնարհ)՝ մարդը, ողջ Վրաստանի և Հայաստանի զորապետը» (Ioannes vir obediens serviens comestabulus totius Brataie sive Armeniae) գրում է. «խնդրում ենք սույն նամակաբերին՝ սուրբ հայր և մեր եպիսկոպոս Դավթին, ամեն ինչում, ինչ էլ մեր կողմից զեկուցի (ասի) ձեզ, հավատարա այնպես, ինչպես մեզ»⁹⁵:

⁹³ «ქართული სამართლის ძეგლები», II, სვერო სავანონმდებლო ძეგლები (X—XIX სს). ტექსტები გამოსცა, შენიშვნები დაუბოთო პროფ. ი. დოლიძემ, თბ., 1965, გვ. 47—49.

⁹⁴ „Latori praesentium dilecto nostro David episcopo de Hanli credas tanquam ab ore nostro audires...“ (տե՛ս մ. Թամարա՛ճցու, Եժտորիա Կատոլոգոսիս Գորտեղուա Մորոն XIII Սալլեղեղան յղերց ի՛՛ Սալլեղեղեղ, Եղ. 1902, გვ. 564, վրաց. թարգմ. էջ 8):

⁹⁵ „Latori praesentium David sancto patri et episcopo credatis tanquam nobis in iis quae ex parte nostra sanctitati vestrae duxerit proponenda“ (նշվ. աղև., էջ 565, թարգմ. նմա. էջ 9):

Հարկավ, 1223 թվականին պապի մոտ մեկնող անեցի եպիսկոպոսը լիազորված էր վրաց թագավորության անունից համագործակցությանը վերաբերող մանրամասնություններ քննարկելու կամ, ինչպես մասնագիտական գրականության մեջ ընդունված է ասել, ներկայացնելու Վրաստանի շահերը: Ինչ խոսք, արտաքին հարաբերություններում նման կշիռ ունեցող եպիսկոպոսը առավել գործուն մասնակցություն պիտի ունենար երկրի ներքին կյանքում, մանավանդ որ՝ Անին շարունակում էր իր վրա բեռնել թագավորության ներքին ու արտաքին քաղաքականության ուշադրությունը:

Այսպիսով, Անիի վրացերեն արձանագրությունները պայմանավորված են ոչ միայն նրանցում պատմվող դեպքերով, այլ նաև՝ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցող կարևոր անցուղարձեկներով:

Զ Ա Ն Գ Լ Ի

Չանգլիի վրացերեն արձանագրության մասին առաջին տեղեկանքը տպված է Ղ. Ալիշանի մոտ. «Յարևմտից հիւսիսոյ Ղարաւլանից և յահեկէ նրասխայ կայ փոքրիկ լճակն Չանգլի առ համանուն գիւղի բարձու ի լերանցամէջս, յորում եկեղեցի հոյակապ և գմբեթաւոր ի սեպոյն քարանց, 62¹ երկայն, 44¹ լայն, վրացի արձանագրութեամբք, որք թուին ի սկզբան պայագատութեան Բագրատունեաց դռնմնալ: Ի լճակէն, որոյ կիսածամաւ է շրջապատ և խոր յոյժ, ելանէ վտակն Կապոյտ...»¹: Գիտնականը միաժամանակ անհրաժեշտ է նկատել վկայակոչել իր սկզբնաղբերը՝ Ն. Սարգիսյանի նյութերը. «...ի ձեռին ունելով զպատուականագոյնն և զչեւ ես հրատարակեալ վաստակ մերոյս արգոյ և հոգեկից եղբոր Շ. Ներսիսի վարդապետի Սարգիսեան, բազմամեայ ուղեորի ի մասն Փոքուն և Մեծաց Հայոց, և հաւատարմագոյն ընդօրինակողի հայ արձանաց տեղեացն յորս շրջեցաւ...»²: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Ն. Սարգիսյանը Չանգլի է այցելել իր ճանապարհորդության սկզբնական շրջանում, քանի որ Ղ. Ալիշանի վերոբերյալ խոսքերը գրված են 1855 թվականին³:

Քանի զեռ անհայտ էր վրացերեն այդ արձանագրությունների բովանդակությունը, այսինքն՝ քանի զեռ Մ. Բրոսեն չէր վերձանել այն բոտ Ն. Սարգիսյանի պատճենումներին, Ղ. Ալիշանը չէր կարող նրանց մասին որևէ մասնագիտական խոսք ասել և, ներկա դեպքում, Բագրատունյաց պայագատության շրջանի վիճազրում համարելը ընդհանուր բնույթի կռահում է: Ն. Սարգիսյանը, ինչպես մյուս վրացերեն արձանագրությունները, Չանգլիում եղածը ևս հրապարակել է ահագ. Մ. Բրոսեի վերձանությունը ու թարգմանությունը, հաղորդելով և վերջինիս երկրաչափությունը զլիսավոր արձանագրության վերձանության ճշգրտության վերաբերյալ⁴: Ն. Սարգիսյանն իր հերթին

¹ Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 35—36:

² Ղ. Ալիշան, Նշվ. աշխ., էջ 4, հմմտ. նույնի՝ «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 48 և 545:

³ Ծիշտ համարիցինք տեղանունը արեւելահայ արտասանությամբ գրել Չանգլի:

⁴ Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 218—219:

փորձել է լուսարանել վրացերեն արձանագրությունների առկայության պատճառը: «Վրացի արձանագրիր եկեղեցուց, զորոց տեսցի ստորև, կարծիս տան ինձ, թէ ըստ հին աշխարհագրութեան ի սահմանին Կարուց անկանէր գիւղս, և յորժամ անց բաղանը ան զս Վիրս՝ յայնժամ շինեցաւ և եկեղեցիս այս. ոչ սակաւ պատճառք են և մեծին Երասխայ ընդ մէջ անցանելով, որ բաժանէ յիրերաց գտահմանս Կաղզուանայ և Կարուց» (էջ 218—219):

Մ. Բրոսեն Զանգլիի մասին որևէ լրացուցիչ տեղեկություն չունի. նա թարգմանաբար առնուում է Ղ. Ալիշանի մեզ ծանոթ տրոկըրը, իսկ ապա վերծանում արձանագրությունները, որոնց մասին ստորև կ'հասվի⁵:

Տեղիս արձանագրություններից մեկի պատճենը ժամանակին եղել է Գ. Տեր-Մկրտչյանի ձեռքին, որ նամակով ուղարկել է Ն. Մառին⁶: Բավական անհաջող պատճենոված լինելու հետևանքով, դատելով մակագրություններից, ն. Մառը փորձել է նույնիսկ «արթայուն» բառ կարգավ, բայց այդպես էլ անավարտ է մնացել:

Անցյալ դարի վերջերին Ստ. Մալխասյանցը եղել է Զանգլիում, ընդօրինակել գիրավոր արձանագրության երկրորդ կեսը (ժամանակին այս մասը դիտվել է իբրև առանձին միավոր) և վերծանության տրամադրել նորից ն. Մառին: Վերջինս այդ ընդօրինակությունը տվել է վրացագետ Մ. Զանաշվիլուն, որը և հրատարակել է խիստ պատահիկային ու անստույգ ընթերցմամբ⁷: Նույն ընդօրինակությունը ն. Մառը տրամադրել է և Ե. Թաղաշվիլուն՝ 1907 թվականի ուղեորությունից շատ առաջ. «Вторую часть надписи, снятую от руки Стефаном Малхасянцем, передал мне Н. Марр для разбора задолго до моей поездки в Чаггли, но по этому снимку немно- го можно было исправить в чтении Броссе»⁸:

1907 թվականի ամռանը Զանգլի է այցելել վրացագետ Ե. Թաղաշվիլին: Փորձված հնագետը տեղում վերծանել է արձանագրությունը, տվել վանքի (ճիշտ կլինե՞ր տաճարի) մանրամասն ճարտարապետական նկարագրությունը: Սակայն բավական երկար ժամանակ Ե. Թաղաշվիլու ուսումնասիրության

⁵ Տե՛ս M. Brosset, Inscriptions géorgiennes et auters, recueillies par le P. Nersès Sargislian... (Mémoires de l'Académie Impériale des Sciences de St.-Petersbourg. VII^e série, tome VIII, №10, p. 22—24).

⁶ ՍՄՄ ՊՍ արխիվի լեկտիոնայան բաժանմունք (ЛЮ Арх. АН СССР), ֆոնդ 8000, В—1456, Բ. 61—63: Նամակի հրատ. տե՛ս Պ. Հակոբյան, Գալուստ Տեր-Մկրտչյանի նամակները Նիկողայոս Մառին (տե՛ս «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 212): Գ. Տեր-Մկրտչյանի թղթներից մեջ պահպանվել է մեզ հետաքրքրող արձանագրության երկու պատճենում (Մատենադարան, Գ. Տեր-Մկրտչյանի ֆոնդ, թղթ. 18, վավ. 43), երկուսն էլ հետո ճշգրտ լինելուց: Մեկի ընդօրինակությունը կատարված է 1899 թ. հունիսի 4-ին:

⁷ Յ. Յանսշվիլի, յովեց Նախնայա յալապտեթելոս Մեխաթե, յոլեոնոս, 1899, 12 օգոստոս (№122), 33: 4.

⁸ Е. Такайшвили, Храм в Чаггли и его грузинские надписи (машинопись), стр. 9. Թե՛րևս, խոսքը Գ. Տեր-Մկրտչյանի միջոցով ուղարկված պատճենի մասին է: (?)

արդյունքները անտիպ էին: Նրանք լույս տեսան Փարիզում՝ 1938 թվականին⁹: Հեղինակի ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ այդ հրատարակումից շատ առաջ (1922 թ.), ի թիվս այլ հոդվածների, նա Ն. Մառին է ուղարկել «Храм в Чаггли и его грузинские надписи» վերատարածման մի հոդված՝ սուկից լուսանկարներով¹⁰: Հոդվածն ու արձանագրության լուսանկարը գտնվեցին ն. Մառի արխիվում¹¹, որը և հնարավորություն տվեց արձանագրության վերծանությունն ստուգել ըստ ամենայնի¹²: Ավելորդ չէր լինի այստեղ վկայակոչել Ե. Թաղաշվիլու նկարագրության մի մասը՝ Զանգլիի շրջապատին ծանոթանալու համար: Նա գրում է. «Цель нашей поездки в Чаггли состояла в том, чтобы ближе познакомиться с этим памятником старины, сделать обмеры, фотографические снимки и проверить надписи, разоб- ранные Броссе... Вид на большое армянское селение Чаггли и в особенности на небольшое продолговатое озеро с чистой прозрачной водой к западу от селения был великолепен, но большой храм с высоким куполом, расположенный посреди деревни на невысоком круглом холме, нам показался издали в виде высокой черной и мрачной башни. Около барабана и в боковых частях храма были нагромождены камни. Оче- видно храм был превращен в турецкое время в оборонительный пункт, как это мною было замечено в Бане, Урте и Цкарос-таве той же Карсской области. С приближением к селению, когда яснее вырисовывались фронтоны храма и глаз привык к черному цвету, вид стал более привле- кательным. Спуск был не особенно крутой»¹³:

Ե. Թաղաշվիլին ավելի մանրամասնությամբ ու իրեն հատուկ հմուտ- ությամբ նկարագրում է տաճարի ճարտարապետական կերպն ու որոշում նրա տեղը համայնման կառույցների շարքում, մանավանդ Տալբի միջավայրից¹⁴: Զանգլիում, ինչպես Ե. Թաղաշվիլու աշխատանքներն ու լուսանկար- ներն են հավաստում, վրացերեն երեք արձանագրություն կա.

1. Տաճարի արևմտյան մուտք: Արձանագրությունը բաղկացած է երկու մասից՝ առաջին վեց տողը բարավորի վրա է, իսկ շարունակությունը (5 տող)՝ նախքան 12 քարերի վրա, իսկ շարունակությունը (5 տող)՝ նախքան 4 քարերի վրա, իսկ շարունակությունը (5 տող)՝ նախքան 4 քարերի վրա, իսկ շարունակությունը (5 տող)՝ նախքան 4 քարերի վրա:

⁹ Գ. Յանսշվիլի, Եվրոպական քննություններ Կովկասում և Կովկասի մերձակա շրջաններում 1907 թվական, 3-րդ հատոր, 1938.

¹⁰ Գ. Յանսշվիլի, Նվլ. աշխ., էջ 79, ծան.:

¹¹ Տե՛ս ЛЮ Арх. АН СССР, ֆ. 800, օպ. 6(Е), №№ 721—727: Ե. Թաղաշվիլու սույն հոդվածները մենք ուղղորդված ենք պատրաստել 1966 թվականից (նմտ. П. Мура- дя, Комментарий Я. Смирнова к поэме Шавтели, «Литературное наследство» 1967, №10, էջ 105):

¹² Ե. Թաղաշվիլու այցելության տարիներին Զանգլին «հայաց խոշոր գյուղ» է եղել, որի բնակիչներն աստանդական էղան 1915 թվականի եղանի ժամանակ:

¹³ Е. Такайшвили, Храм в Чаггли..., стр. 3—4 (իջամասերը ըստ մեքենա- գրված տեքստի):

¹⁴ Մասնագիտական այդ խնդրը ներկա դեպքում մեզ չի հրապրացնում, ուստի և չենք անդրադարձնում տաճարի ճարտարապետական դրվագները այլ միջավայրում որոնելուն:

Malakosia (a bâti cette église)—Մալաֆոխայ՝ [շինողի] եկեղեցու²⁴։ Որքան էլ այս վերձանությունը պատշաճոր արձանագրության ենթադրվող բովանդակությանը, այնուամենայնիվ՝ այն բացառվում է, որովհետև անխաթար պահված փորագրությունը նման սրբագրում չի հանդուրժում։ Տողավերջը յլո հայավումը ցլլլլլլլլլ չի կարող կարգացվել, իսկ այդ դեպքում գծարանում է և ՌՆ -ի սովորական ճոճեղձան վերձանությունը։ Ե. Քաղաղալվիլին իրավասյորեն նկատում է, որ «в последней группе из трех букв ҵло титло имеется на первой, поэтому в группе можно подразумевать или каталогизм — каталогизм или калатозм, скорее мн. число калатозм — калатозни, т. е. каменщики. Правда, это слово в надписях большею частью попадает в форме ҵалатозм, но мы имеем пример передачи слова в такой же форме ҵалатозм в надписи Убисской церкви» (стр. 17)։

Կարծում ենք, կատալոգիզմ-ի վերձանությունը իրավամբ է մերժվում, որովհետև այդ դեպքում նախադասությունը կխափարտ է մնում, եթե շատերն՝ անհեթեթություն է ստացվում՝ «Քրիստոս ողորմի՛ր Մալաֆոխայ, որը կարողիկու»։ Ոչ սակավ կարևոր է և այդ անունով (Մալաբոխիա—Մաղաքիա) կաթողիկոս շունենալը ո՛չ վրաստանում և ո՛չ էլ Հայաստանում։ Դեռ ավելին՝ կաթողիկոս անունը չէր հիշատակվի բիլի ոչ առանձնապես նկատելի տեղում, երբ ողորկ պատերը պեթեթ առանց արձանագրության են։ Ն. Քաղաղալվիլին ճիշտ է գիտել, որ մեզ հետաքրքրող արձանագրության տեղագրությունը շինարար վարպետ կամ վարպետներ է ենթադրում, ուստի առավել հավանական ենք համարում կալոգիզմ կարգավ²⁵։ Ինչ վերաբերում է Յոձ հայավումին, այս և Քաղաղալվիլին նախընտրում է Յցոձաձ անձնանուն կարգավ։ Մենք ոչինչ չենք կարող ավելացնել այս ենթադրության վրա, ուստի առաջիմ արձանագրությանն վերձանությունը մնում է պայմանական՝ «Քրիստոս, ողորմի՛ր Մալաֆո, Զվիաղա, Ռուբեն վարպետներին»։

Ն. Քաղաղալվիլին տաճարում երրորդ արձանագրությունը չի գտել, թեև ձեռքին ունեցել է Մ. Բրուսի և Ն. Սարգիսյանի հրատարակությունը։ Գուցե Ն. Սարգիսյանի և Ն. Քաղաղալվիլու աչքելությունների միջև ընկած հիսուն տարիների ընթացքում տաճարի ներսում կատարված որևէ փոփոխության պատճառով այն կամ տեղափոխվել է, կամ էլ առհասարակ վերացել, մանավանդ որ գրված է եղել «առ աստիճանալ բեմին»²⁶։ Նույնիսկ կարելի է ասել, թե որոնելին արձանագրություն չի եղել, այլ երկու բան՝

²⁴ M. Brosset, Նշվ. աշխ., էջ 24, հմտ. Ն. Սարգիսյան, Նշվ. աշխ., էջ 220, հմտ. Ղ. Ալիշան, Այբարատ, էջ 48։

²⁵ Այս դեպքում անձնանուն պետք է փնտրել և ՌՆ հայավումն մեջ, բայց ի՞նչ նախընտրել, հայտնի չէ՝ Ռուբեն, Ռոմի, Ռոստոմ, Ռավա (հմտ. E. Такайшвили, Նշվ. աշխ.)։

²⁶ Ն. Սարգիսյան, Նշվ. աշխ., էջ 220։

յ(հոստ)ց Յ(ցոյցալ)ց։

Չ III (16)

Քարգմանություն. Քրիստոս, ողորմի՛ր։

Ինչպես ասում ենք, ասկա երեք արձանագրություններից ոչ մեկը հնարավորություն չի տալիս որոշելու տաճարի շինության ժամանակը։ Անկասկած է միայն, որ բիլի վրա եղած ժամանակակից պետք է լինի բուն շինարարությանը։ Վարպետները սովորաբար կառույցի ընթացքում կամ ավարտից հետո, ոչ շատ նշանավոր տեղում, թողնում էին իրենց նշանները, իսկ երբեմն էլ՝ համառոտ արձանագրություն։ Քն հնագրական ինչ հարաբերություն կա հիշյալ արձանագրություններից երրորդի և առաջին երկուսի միջև՝ չգիտենք, որովհետև չկա այդ երրորդի լուսանկարը կամ պատճենը։ Մնում է ըննության անել առաջին երկուսը։ Համեմատությունից պարզ է դառնում, որ այս երկու արձանագրությունները նույն ձևով չեն վիճարկված, ո՛չ էլ միաժամանակ։ Քրիլի վրա եղածը, ինչպես արդեն նշել ենք, ունի խոր վիճարկում, տառաձևերի առավել ճշգրիտ արտացոլում և կանոնավորություն, բան բարավորինը։ Միաժամանակ ակներև է, որ վարպետների խնդրած «ողորմի՛ր»-ն ժամանակակից է տաճարի շինությանը, բայց ե՛րբ է գրված այն՝ անհայտ է, ինչպես որ տակավին անհայտ է եղե՞նամոր (կենամոր-ի) տաճարի կառուցման ժամանակը, նույնիսկ դարը²⁷։ Տաճարի հիմնական արձանագրության վերձանությունը այն շինարարական կամ շինությանը ժամանակակից համարելու կովաններ չի տալիս։ Ն. Քաղաղալվիլին այսպես է պատասխանում իր հարցադրմանը. «Но как смотреть на первую надпись? Современна ли она постройке храма или появилась позже? Содержание надписи не дает основания для решения этого вопроса. Игнатий, хотя не упоминает, что он строил храм, но тем не менее он мог быть строителем Чангли, и когда нехватало средств на постройку, он взял 450 драканов у Феодора, взамен чего посвятил ему эту большую надпись на самом видном и лучшем фасаде храма с определенным хлеба для его молитвы и вечное время. С другой стороны, Игнатий мог быть одним из поздних настоятелей монастыря, который получил солидную сумму для монастырских нужд с обязательством учинить такую надпись для молитвы Феодора. Таким образом, на основании надписи эпоху основания храма нельзя определить»²⁸։

Կիովին համաձայնելով Ն. Քաղաղալվիլու պատասխանի երկրորդ մասին, անհրաժեշտ ենք համարում գիտել, որ Իգնատիոսը չէր կարող, ըստ արձանագրության տեքստի, տաճարիս կառուցողը լինել։ Դա կարելի է նույնիսկ

²⁷ Երկրորդ արձանագրության մասին խոսելիս մենք նկատի ունենք և այն, որ տաճարի վերակառուցված կամ նորոգված լինելու մասին որևէ տեղեկություն չկա և, պրոֆ. Ն. Քաղաղալվիլու հավաստմամբ, նման վերակառուցման հետքեր չեն երևում (տե՛ս E. Такайшвили, Նշվ. աշխ., էջ 18)։

²⁸ E. Такайшвили, Նշվ. աշխ., էջ 19։

բացառված համարել: Հայտնի է, որ շինարարական արձանագրություն մեջ, իբրև օրենք, նշվում է, թե այսինչս կառուցեցի, մանավանդ, երբ խոսքը եկեղեցու շինարարությանն է վերաբերում, հիշատակում են իրենց հովանավորին՝ թագավորին, կաթողիկոսին, առաջնորդին կամ մի այլ անձնավորության: Դժվար է պատկերացնել, որ Իգնատիոսը (միաբանության առաջնորդը կամ վանահայրը) 450 զահեկան ստանար ի նպաստ շինարարության և այդ մասին որևէ խոսք չտար, երբ նվիրարեկողը այդ իբրև պայման պիտի առաջարկեր: Ոչ մի նկատառումով չէր կարող արձանագրության մեջ չարասցուվել շինարարության փաստը, եթե այն տեղի ունենար արձանագրության վիճակում հետ նույն շրջանում²⁹: Այդ պատճառով էլ ավելի հավանական ենք համարում Ե. Թաղաչվիլու երկրորդ ենթագրությունը՝ Իգնատիոսը ուշ շրջանի վանահայր է, որ վանքի կարիքները հողալու համար բավական խաշոր դումար է ստացել Թեոդորոսից և այդ մասին արձանագրություն թողել: Ուրեմն՝ 1362 թվականը չի վերաբերում տաճարի կառուցմանը, այլև՝ նվիրատվությանը: Մնում է, որ տաճարի շինարարության ժամանակը որոշվի ըստ ճարտարապետական տվյալների³⁰:

Վերջին տարիներս (1966 թ.) Չանգլի են այցելել ու տաճարիս ճարտարապետական նկարագրի ուսումնասիրությանը զբաղվել Ժ.—Ս. Թիերինները³¹: Նրանք դիտել են, որ Չանգլիի տաճարը իր կերտվածքի որոշ մանրամասնություններով մերձենում է Տայք-կղարջքյան գյուրցի հուշարձանների (օրինակ՝ արմավազարղը), ընդհանրություններ ունի ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի որոշ հուշարձանների հետ: Հարավային և հյուսիսային ճակատներն ունեն նկատելի ոճական խստություն, որ բնորոշ էլ Տայք-կղարջքյան գյուրցին, ուշադրավ է և որմնակարների բացակայու-

²⁹ Մենք մասնավոր ուշադրությամբ նայեցինք հայկական ու վրացական շատ հուշարձանների շինարարական արձանագրություններ և նման երևույթ չկարողացանք արձանագրել:

³⁰ Ե. Թաղաչվիլին գիտում է. «Обращаясь к другим признакам, мы должны заметить, что мотив украшений храма, его тяги, профили, аркады, плетения и резьба с первого взгляда напоминают лучше грузинно-армянские храмы X—XII вв. Вначале мне так и казалось, что тут мы имеем постройку XI—XII веков, но ближе познакомившись со всеми деталями приходится признать, что все это не совсем удачное подражание хорошим образцам классической эпохи строительства на Кавказе» (էջ 19): Գիտնականը մասնավորապես նկատի ունի Իշխանի, Տրեթի, Նիկործմիդայի, Սավանի և վրացական այլ շինությունների հետ ունեցած որոշ ընդհանրությունը և այդ հիմամբ էլ եզրակացնում է, որ եթե Չանգլիի տաճարը 14-րդ դարի երկրորդ կեսին չի կառուցվել, ապա, համեմատյալ գեղյո, 13-րդ դարից հին չէ: Թե որքանով է այս եզրակացությունը իրավացի, մեզ համար զժվար է ստել, որովհետև դա մասնագիտական այլ խնդիր է՝ կարող հյուսիսն ուսումնասիրության: Պ. Բնդորդյան, հայտնի չէ ինչ կազմներից եղևելով, կենսորի (եղևամոր) վանքը կառուցված է համարում XIV դարում (տե՛ս նրա՝ * 30 0 6 3 0 30 6 7 2 7, տժ., 1954, 33. 542), իսկ հայագետ Գ. Հակոբյանը՝ Հովհան Մանգակունու նախաձեռնությամբ շինված (տե՛ս նրա՝ «Ներքին Բասնի ազգադրությունը և բանահյուսությունը», Երևան, 1974, էջ 29): Երկուսն էլ հավասարապես թյուր են:

³¹ J.-M. Tiery, A propos de quelques monuments chrétiens du vilayet de Kars (Turque), REArm., t. III, Paris, 1966, p. 73—90. Չանգլիի մասին՝ էջ 79—90.

թյունը (համտ. Խժկոնք, Անի, Սանահին, Կեչառիս, Բջնի): Որոշ զարդանախշեր զուգահեռություն են գտնում նորավանքի և Աղթամարի հուշարձաններում: Թիերինների կարծիքով՝ Չանգլիի տաճարը կառուցված պետք է լինի 10-րդ դարում և վերանորոգված՝ 1032 թվականին: Նրանց եզրակացմամբ՝ հայաբնակ այս միջավայրում հավանաբար վրացական համայնք է եղել, որը սերտ կապ է ունեցել Իշխանի թեմի հետ, թեևս հանդիսացել է այս տաճարի կառուցողը: Հողվածի վերջում հեղինակներն ակնարկում են և հայ բաղկեղանականության գոյության փաստը, ելնելով Ե. Թաղաչվիլու տեղին արված վերապահությունից:

Քանի որ շինարար վարպետների կարճատև հիշատակարանը վրացերեն է, կարելի է վստահանալ, որ այն բաղկեղանակա հաստատություն է եղել, թեև միայն արձանագրության լեզուն բավարար կոչվան չէ: Բայց Չանգլիի տաճարի բաղկեղանակա կենտրոն լինելը ավելի զեպում կասկածից դուրս է, քանի որ կան այդ հաստատող պատմական մի շարք պարագաներ: 10-րդ դարի վերջերին Դավիթ Կյուրոպաղատը (Մեծ) վրացիներից ու հայերից բաղկացած իր զորքով մի քանի անգամ առաջանում է գեղի հարավ և հարավարևմուտք: Այսպես՝ «Բ մեռանել Բատին կիրոպաղատն Հայոց (resp. Տայոց) Դավիթ պաշարեալ զՄանավկերտ քաղաք և սրով և սովով նեղեալ առնու զնա, յորմէ հանեալ արձակեաց զտաճկաստանեայն. և ինքն ընու դրադարն հայ և վրացի բնակչօք ընդ իրով իշխանութեամբ»³², իսկ 997 և 998 թվականներին նա արշավում է Խլաթ³³, հավանաբար, այստեղ ևս ոչ քիչ վրացիներ ու հայեր բնակեցնելով: Անհավանական չէ ենթադրել, որ Կյուրոպաղատի զորքում ու վերաբնակեցրած մարդկանց թվում գտնվող հայերը տայցիներ պետք է լինեին և հիմնականում բաղկեղանակա: Ասողիկը պատմում է, որ Խլաթ քաղաքը շրջապատելիս վրաց (= վրաց և հայոց) զորքը իջևանում է հայոց եպիսկոպոստորանի ս. Խաչ և ս. Գամաղիէլ սրբարաններում, և տաճիկների այն հանդիմանությունը, թե «զսրբութիւն քրիստոնէից այգպէ՛ս առնէք և դուք քրիստոնեայրը», Կյուրոպաղատի զորականները պատասխանում են. «... մեկ զհայ եկեղեցին և զձեռ մզկիթն միապէս ընդունիմք»³⁴: Դավանաբանական սուր վեճերի պարագայում նման ալտահայտությունը չափազանցված չէ ներկայանում: Բայց խոսքը վերաբերում է ոչ թե բոլոր հայերի զավանած եկեղեցուն, այլև՝ պաշտոնական միաբնակ զավանությունը, հետևաբար, պատասխանող վրացիները ամենից առաջ բաղկեղանակա են՝ անկախ բուն պատկանելությունից: Ասողիկի մոտ փաստորեն արդեն կա «հայ» և «վրացի» հասկացությունների զավանաբանական ընկալում, մի բան, որ 11-րդ դարի կեսերից սկսած առավել ընդգծված պետք է դառնար: Ի հակադրություն Մանավկերտը ետ վերադարձնելու պահանջին, երբ «պարսիկը

³² «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 266:

³³ Ասողիկ, էջ 268:

³⁴ Անդ:

և տաճիկը» եկել հասել էին Մաղկոտն (Մաղկոտոն) գավառի Կոստանք զուլը՝ բռնություններ տիրանալու Մանազկերտին, «...կիրառված Ռաիթ և արքայն Հայոց (ձևապատճառով գրչական վրիպմամբ եղել է Տայոց—Պ, Մ.) Գագիկ և Աբաս ընդ նմա, և Բագարատ թագաւոր Վրաց՝ դան ընդդէմ նոցա ի գաւառն Բագր՝անդ, բանակ մեծ բուրեղալ ի Վաղարշակերտ քաղաքի»³⁵։ Այսպիսով, պատմական Հայաստանի Բագրևանդ, Կարս և նրանցից հյուսիս-արևմուտք գտնվող մի երկու գավառներում աստիճանաբար կարող էր վրացական որոշ բնակչություն լինել, մանավանդ որ կա Ասողիկի ուղղակի վիպությունը Մանազկերտում (արդեն Ապահունքի սահմաններում) հայերի և վրացիների վերաբերման մասին։ Թերևս վրացագրի որոշ բնակչություն կար նաև Վաղարշակերտում։ Այդ առումով մասնագիտական բնութայն է արժանի Արիստակես Լաստիվերցու հաղորդումը Վաղարշակերտի վրաց եպիսկոպոսի մասին։ Այստեղ կարդում ենք. «Ե շորքհարիւր Եօթանասուն թուականին՝ (= 1021 թ.) գարձեալ խաղալ ինքնակալ թագաւորն [Վասիլ] ժանր զօրու և գայ յարեալ։ Եւ եկեալ իջեանս անէ յընդարձակ դաշտն Կարնոյ, և առաքէ զեսպանս առ Գէորգի վրաց իշխեցօղն՝ գալ ինքեան ի հնագանդութիւն։ Քանզի և եպիսկոպոս ոմն վրացի սպգաս, որ նստէր ի քաղաքն Վաղարշակերտ, երթեալ թագաւորին ընդառաջ, վստահութիւն տայր բանից, թէ՛ Յորժամ յնկեղեց կամ ի Կարին ելանես՝ քեզ ընդառաջ գայ։ Եւ նա՛ նորա բանիցն հաւատացեալ, և յայն սպաստան՝ մնայլ նորա զայտեսանն օթեանէ յօթեանս փոխելով։ Այլ նա ոչ անուր յանձն գալ ի կոչ թագաւորին քան զի բազումք ի նորայոցն ահարկանէին նմա, թէ՛ ի տեսանելի զքեզ՝ կամ մեռանիս, կամ արգելական անէ, և ոչ ժամանես ի բո պատին»³⁶։ Մի բանի էջից հետո՝ «Այլ թագաւորն զաւուրսն զորս եկաց ի Սալորայ, բանդի երիս բերդս իրեանց զաստակերտօքն ինդրէր ի Գէորգէ զոր Գուրգենայ տարեալ էր ի բաժնէն Կիրաւադատին անիրաւաբար, առաքէր առ նմա զեսպանս, և քաղցրական բանիւք զրէր առ նա, թէ՛ Զոր բո չէ հայրենի ժառանգութիւն՝ թող և կաց խաղաղութեամբ ի բո բաժնիդ, և մի խափան անէր իմ ճանապարհին որ ի Պարսիկս։ Այլ նա ոչ անու յանձն. յետոյ առաքէ զՋարարիս՝ զոր յառաջ սակաւ մի յիշեցար, վեպիսկոպոսն Վաղարշակերտոյ. որոյ երթեալ և հաւանական բանիւք պատրեալ զԳէորգի, որում յանձն անու, և զրէ առ թագաւորն տալ զոր ինդրէրն. որոյ անալ զգիրն դարձաւ ուրախութեամբ։ Եւ եկեալ օրագնաց մի ճանապարհ, ի յիջեանսն՝ յոր օթեանս անելոց էր, փութանակի հասին զկնի նորա սուրհանդակք ի ինդիր զրոյն, բանդի վզացցաւ անմիտն. և առեալ դարձան անդրէն։ Իսկ նա երթեալ հանդիպի թագաւորին, և պատմէ զեղեւանս. ապա հարցանէ թագաւորն վասն զօրացն և վասն կազմ լինելոյ նոցա ի պատերազմական հանդէսս։ Պատասխանի տուեալ Ջարարիայն ասէ, թէ բազում զօրս ունի որպէս ոչ այլ

³⁵ Ասողիկ, էջ 266—267։
³⁶ «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցու», աշխատասիրութեամբ Կ. Մ. Յուրաշ-յանի, Երևան, 1963, էջ 28։

որ, և հօրս զօրութեամբ և պատրաստ առ ի պատերազմել։ Զոր լուեալ թագաւորին, ի բարկութիւն շարժեալ ասէ, թէ՛ Եւ դու յապտամբիցն նա եկեալ, ահարկանես ինձ, և հրամայէ խաղաղուցանել զնա ի Կոստանդնուպօլիս, ասելով՝ Երթ դադարեա անդ, մինչև ես փախստական ի քեզ եկից։ Եւ հրամայէ տարողացն հատանել զընդու նորա։ Որոյ երթեալ ոչ ևս դարձաւ ի տեղի իր, այլ մնաց ի նոյն մինչև ցօր մահուան իրոյ»³⁷։ Ներկա դեպքում մեզ հետաքրքրողը Ջարարիայի ձևապատճառով չէ (պատմիչը սխալվում է նրա կյանքի ավարտը ներկայացնելիս), այլ որ Վաղարշակերտում վրաց եպիսկոպոսություն է եղել։ Հաղորդման ճշմարտացի լինելը հաստատվում է «Քարթլիս ցիտիքերայի» մի տեղեկությամբ ևս, որ թեև չի հիշատակվում Ջարարիայի անունը, բայց վիպվում է երկուսությունը³⁸։ Ավելին, վրացական մի այլ փաստաթղթում, որ թվարկվում են «Սամյեխ-սաաթարագոյի քահանայապետներն ու հովիտակները», կարդում ենք.

Վաղարշակերտի եպիսկոպոսի հոտն է Կաղզևանից վերև, Վաղարշակերտից այս կողմ հնուսան ու Փևարոյի-նից այս կողմ [ընկած տարածությունը]... Այս եպիսկոպոսների ձևապատճառով ու գերագահը Քարթլիի կաթողիկոսն է։ Ամենը նրա ձեռքն է։

Յալաւաքերտցի Սամյեխ Կաղզեանցի Նեյոտի, Յալաւաքերտցի Սամյեխ Նեյոտի...
 Եւ յեպիսկոպոսութեան մալթրոտեցեցելու և շտրոտի յարտոտի յատուկութեան։
 Եւ յեպիսկոպոսութեան մալթրոտեցեցելու և շտրոտի յարտոտի յատուկութեան։³⁹

Այսպես, ուրեմն, մեզ հետաքրքրող Չանգիլի մերձավոր շրջաններում հաստատապես եղել են քաղկեդոնական հայեր, զուցի մասամբ նաև վրացագրի բնակչություն։ Նշանակում է՝ Լաստիվերցու և վրացական այս աղբյուրի «վրաց եպիսկոպոսություն» արտահայտությունը պետք է հասկանալ նաև քաղկեդոնական հայոց եպիսկոպոսություն, որ Վրաստանի կրթական շրջաններին մերձակա միջավայրում ընդունված էր այլևս վրացական կոչել՝ վրացադավանություն հասկանալով⁴⁰։ Որ այդ եպիսկոպոսությունն⁴¹ իրոք մերձավոր անջություն է ունեցել վրացական կրթական կենտրոնների հետ՝

³⁷ Արիստակես Լաստիվերցու, էջ 36։
³⁸ Տե՛ս Յ. Ս., I, 285, 288.
³⁹ Տե՛ս Դմ. Բակրաձե, Археологическое путешествие по Гурнии и Адчаре, էջ 81—82, Հմտ. թղթ. ՍՄ. թղթեր, III, 245—246.
⁴⁰ Թե երբևից էր սկսվել քաղկեդոնական հայոց կոտակումը Վաղարշակերտում և մերձակա գավառում՝ դժվար է ասել։ Թերևս կարելի է ենթադրել, որ Մավրիկ կայսեր նշանավոր հրամանից հետո («Քարթլի զօրովն Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի և միաւորել հաղորդութեամբ ընդ զսար իրոյն»), երբ Հայաստանում նույնիսկ հակաթոռ կաթողիկոսություն հիմնվեց, Վաղարշակերտի և շրջակա արևմտյան մի բանի այլ գավառների բնակչությունը համեմատաբար ավելի հանդուրժող գտնվեց։
⁴¹ Եպիսկոպոսության ստույգ սահմանները, ըստ հիշյալ վրացական աղբյուրի, չեն հշտարվում, ինչպես երևում է՝ ընդգրկել կարող է ճշգրտման։ Բագրևանդի և Արշարունյաց եպիսկոպոսությունների վաղ շրջանի վիճակի մասին տե՛ս Ն. ԱժՈՈՒ, Армения в эпоху Юстиниана, Е., 1971, էջ 330—331։

սպացուցվում է Զարարիա Վաղարշակերացու օրինակով: Կատարվեցուց տեղեկացանք, որ հունաց կայսրը նրան ուղարկում է Կոստանդնուպոլիս, «և հրամայե տարողացն հատանել զլեզու նորա», բայց ինչ-ինչ պարագաներում եպիսկոպոսը անվնաս է մնում և ապաստան գտնում Աթոսի վրաց մայրավանքում⁴²: Այդ մասին հիշատակություններ են պահպանվել երկու արժեքավոր ձեռագրերում (A—648, S—143): Այստեղ կարգում ենք. շքեղ Լմբերտո, Կյալոմոնոտ մոյսկեցեց Նսսլեցեցեց Յեցնա Յաթարոս ՅալաՅեքտեցլո, օմոն, օյսցե . — «Տէր ստոսած, ողորմածութեամբ հիշիր ի բո արքայութեան Զարարիա Վաղարշակերացուն, ամեն, եղիցի»⁴³: Կամ «Քրիստոս, փառավորիր ի արքայութեան բո սրբոց հետ Զարարիա Վաղարշակերացուն»⁴⁴, Գուցե կարելի կլինի մտածել, թե գրողը կամ ստացողը ինքը Զարարիան չէ, բայց ձեռագրում կա և հունարեն մի շափածո հիշատակություն, որ այլևս կասկած չի թողնում (S—143 ձեռագրի հիշատակումներում նա երիցս կոչված է մամլ-մտացոր, որ պիտի հասկանալ իբրև վանահայր և ոչ հայրապետ):

Βιβλιογραφησας¹ τῆδε τὰς καθ' ἡμέραν
 Μνήμας ἑστῶτος τοῦ χρόνου παντός βλέπων
 Τοῦ ἡαγράφου θαύμαζε τῆν εὐτεχνίαν
 Καί γάρ νοητός ὡς πῶλος τὸ βιβλίον
 Χριστὸν νοητὸν ἦσαν μέσον φέρει
 Καί πανσέληνον τῆν τεκοῦσαν παράθεον
 Ὁς ἀστέρων κύκλω φρουκτοροῦμενος²
 Πάντων δικαίων τῶν ἀπ' αἰῶνος χρόνος
 Τοῦς εὐαγγελιστῆσαντας αὐτῶ γνησίως
 Πίστις δὲ ταῦτα καὶ πονεῖ καὶ προσφέρει
 Καὶ πάντ' ἴδται καὶ νεοσφίρι³ καὶ γράφει⁴
 Ζαχαρίου καλογέροντος τοῦ Ἰβήρου⁵ ὃ μέγιστος ἔρωας⁴⁵.

Ձեռագրում⁴

- 1 Βιβλιογραφησας 2 φρουκτοροῦμενος
- 3 νεοσφίρι 4 γράφει 5 Ἰβήρου

Առաջին կարևոր եզրակացությունն այն է, որ Վաղարշակերտի եպիսկոպոսը հարորդակից է եղել վրաց մշակույթին, որը և պայմանավորել է

⁴² Տե՛ս Н. Кондаков и Дм. Бакрадзе, Описание памятников древности в некоторых храмах и монастырях Грузии, СПб., 1890, էջ 166, 170:

⁴³ К. С. Кекелидзе, Иерусалимский канонарь VII века (гурзинская версия), Тифл., 1912, стр. 297, հմտ. խորհուրդ եղևնաճյուղի օրենքներում, S, Ե. I, տ. 1, 1960, թ. 152—153:

⁴⁴ A—648, էջ 117: Ձեռագիրը երբևէ եղել է նաև հայկական միջավայրում, որի ապացույցն է սուրբ հայերեն իբրև կատարել և ոմն «Մխիթար Շաղբիշվիլու» հիշատակագրությունը, որը ձեռագիրն գնել է թաթարներից Շամարիում (14—15-րդ դարերի գրություններ, էջ 142):

⁴⁵ Տե՛ս Н. Кондаков и Дм. Бакрадзе, նշվ. աղբ., էջ 166: Հունարենը ընդունում ենք բնա սկզբ. Մ. Ղառուբեջիվիլու վերծանություն, նրա իսկ ուղղումներով (տե՛ս Ե. Կաթանճիանյան, Նոցի խորհուրդի օրենքները, «Միջին դարերի հայաստան», II, տ. 1, 1951, թ. 467—468):

նրա ապաստանումը Իվերոնի մայրավանքում: Նե՛րկա դեպքում Զարարիայի վրացի հորը ընկելը երաշխիք չէ նրա ազգային ստույգ պատկանելության, թեև ոչինչ դարձանալի չէր լինի, եթե քաղկեդոնական թեմի առաջնորդը իր քվեով վրացի լիներ:

Թե դեպքերի այս շրջապատույթի մեջ Չանգլի բնակավայրը ինչ մասնակցություն է ունեցել, հայտնի չէ: Բայց վերջապահապես զգույս է ապացուցելու, որ Վաղարշակերտից ոչ շատ հեռու գտնվող այդ վայրը իր քվեով էր ներառվել հայ քաղկեդոնականների շրջանակը, և տաճարի ու արձանագրությունների գոյությունը ամենևին պատահական չէ:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում բնութային անուն և հետևյալը. շուրջ հարյուր տարվա (963—1064) Կարսի հայոց թագավորությունից հետո, այդ գավառը ի վերջոս բնկավ բյուզանդացիների ձեռքը: 1064 թվականի սելջուկյան ներխուժումից հետո Կարսի Բագրատունիները (Գագիկ, 1029—1064) այլևս անկարող էին շարունակել դիմադրությունը, և Գագիկին մնում էր քնտրություն կատարել սելջուկների ու բյուզանդացիների միջև: Բնակահարար, վերջինս նախընտրեց Բյուզանդիան և Կոստանդինուպոլիս 10-րդից (1059—1067) հանձնեց իր տիրույթը, փոխարենը ստանալով նոր տիրույթներ Փոքր Հայքում⁴⁶: Կայսրը տեղիս կառավարիչ նշանակեց նշանավոր Գրիգոր Բակուրյանին: Վրացական աղբյուրի վկայությամբ, վերջինս այդ տիրույթը նվիրեց վրաց Գրիգորի 2-րդ թագավորին⁴⁷, որով վրաց ազդեցությունը պետք է առավել նշանակալի գտնար, իսկ մեղ հետաքրքրող Չանգլի բնակավայրը, հավանաբար, Կարուց Կարմիր-փորակ գավառի մեջ էր մտնում: Ուրեմն՝ 11-րդ դարի կեսերից սկսած քաղկեդոնականության աշխուժացման համար նպաստավոր վիճակ է ստեղծվում: Պատմական այդ միջավայրում տեղիս հայ-քաղկեդոնականները բնականորեն պիտի խմբվեին վրաց հետ նույն եկեղեցու և կրթական նույն կենտրոնի շուրջը: Եթե մեր սույն մեկնաբանությունը իրական է, ապա «վրացական տաճարի» կառուցումը լիովին պատճառաբանված կարելի է համարել: Ե. Թաղալվիլին դիտել է, թե հավանաբար այստեղ Չանգլիում եղել է Վաղարշակերտի վրաց եպիսկոպոսության առաջնորդարանը (ժամանակին նույնը ենթադրել է և Գ. Բաբրամյան): Կարծում ենք, այս ենթադրությունը հավանական է, մանավանդ որ Վաղարշակերտի հնությունների թվում առաջնորդարանին պատշաճ քաղկեդոնական որևէ պաշտամունքային կառույց չի հիշատակված կամ պահված: Համենայն դեպս, Չանգլիի խոշոր ու բարեկառույց տաճարը հազիվ թե զուտ ծխական նպատակ ունենար: Հայոց եկեղեցու պատմության մեջ (ինչպես նաև վրաց) եզակի չեն այնպիսի դեպքերը, երբ տվյալ թեմը կոչվում է ավանդական անունով, իսկ նրա առաջնորդարանը գտնվում կամ տեղափոխվում է այլ տեղ⁴⁸:

⁴⁶ Մանրամասն տե՛ս С. Т. Еремян, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Հրաբեր հաս. դիտ.», 1971, № 3, էջ 4—15:

⁴⁷ Յ. Օ., 1, 318.

⁴⁸ Հիշենք Ազվանից կաթողիկոսության անվանական գոյության փաստը, Հաղբատի թեմը,

Հնարավոր է, որ Չանգլիի տաճարն էլ երբեք Հայաստանում գոյություն ունեցող վրացական երեք եպիսկոպոսություններից մեկի առաջնորդարանն է եղել: Ներկա դեպքում առավել ճշգրտելիս այն է, թե ո՞ր եպիսկոպոսության, որովհետև մեր առիշտ վրացական աղբյուրներում կա նաև Կարսի թեմ:

Կաթողիկոսական ժամանակահատվածում Վրաստանի հետ ունեցած առնչությունը կապված է Վրաստանի հետ ունեցած առնչությունների հետ: Կաթողիկոսական ժամանակահատվածում Վրաստանի հետ ունեցած առնչությունը կապված է Վրաստանի հետ ունեցած առնչությունների հետ:

Կարսի [եպիսկոպոսի] թեմ՝ ողջ Կարսն ու Կոդի և Օղթիսի սահմանից այս կողմ՝ Գղչևանն ու Կաղզվանը:

Չանգլիին իր դիրքով կարող էր այս թեմի մեջ մտնել, այդ պարագայում անդիս 14-րդ դարի վրացերեն արձանագրությունն ավելի պատճառաբանված կլիներ՝ Վրաստանի հետ ունեցած առնչությունից և մշակութային մերձության առումով:

Այժմ տեսնենք, թե ինչ հնություններ կան Չանգլիում՝ տաճարի կառուցման և հետագա շրջանում: 1922 թվականին Ն. Մառի ուղարկած հոդվածում Ե. Թաղաչվիլիի գրում է. «Кругом церкви, кладовые с крестами и другими надгробными камнями. Более старое кладбище находится в 200 саж. к юго-востоку от храма, на горе, где видны и остатки деревни. Здесь на одном надгробном камне с изображением креста заметна армянская надпись. К северо-востоку в 80 саж. от храма — большой источник ключевой воды, бьющий прямо из подножья возвышенности. У начала источника нагромождены большие камни от надгробных плит. На одной плите армянская надпись в 6 строк. Надпись была снята нами фотографически и вместе с другими армянскими надписями из упраздненной армянской церкви в Фанаскертте была послана для разбора Н. Марру, который теперь, надеюсь, присоединит свой разбор к этой статье»⁵⁰.

Ակադ. Ն. Մառի արխիվում մեզ չհաջողվեց գտնել հիշատակված լուսանկարները: Տարիներ անց (1954 թ.) պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը վերծանեց ու հրատարակեց Չանգլի հայերեն արձանագրությունները՝ ձեռքի տակ ունենալով նրանց լուսանկարային պատճենը և Ե. Թաղաչվիլու 1938 թվա-

որի առաջնորդարանը որոշ շրջանում գտնվում էր Թիֆլիսում, կամ Կարնո թեմը, որի առաջնորդարանը նույնպես գտնվում էր Մուտսրիկա ս. Լուսավորչի վանքում: Հմտ. Չ. Ոսկեան, Կարնո և Կարնոյ վանքերը (երկու գաղափարություն), Վրաստան, 1950, էջ 37:

⁴⁹ Տե՛ս Դմ. Բակրաձե, նշվ. աշխ., էջ 81—82, 13-րդ դարի առաջին կեսի գործիչ Մարտ Մինդելիցի վրացական Ա—85 ձեռագրում (XIII, XVI դդ.) երկրից կոչված է Վրաստանի Երևանի Եպիսկոպոսի «հարսի կաթողիկոս» (տե՛ս «Վրաստանի Եպիսկոպոսի ձեռագրում», Ա—I, (1974), թ. 288, 290): Թաղաչվիլու պարզ չէ՝ Վրաստանում կա՞րա պիտի հասկանալ, թե՞ արքունիքի (իսկ՝ դրան կաթողիկոս), բայց որ առաջին դեպքում Վրաստանը կաթողիկոսական էր սպասելի (հմտ. Ե. Թաղաչվիլու, Վրաստան, 1950, թ. 329):

⁵⁰ Ե. Թաղաչվիլու, նշվ. աշխ., էջ 8:

կանին Փարիզում հրատարակած նմանահանությունը⁵¹: Ի դեպ, Չանգլիում անցյալ դարի վերջերին եղել է նաև հայագետ Գ. Խաչաթյանը, որը և ընդօրինակել է այնտեղ գտնվող արձանագրություններից մեկը և տրամադրել Ղ. Ալիշանին⁵² (վերջինիս հրատարակությունը ևս կարող է սրբագրության): 1878 թվականին Չանգլի է այցելել Կյուրեղ վ. Սրապյանը⁵³: Նրա տեղեկությամբ, 28 տուն բնակիչ ունեցող այդ գյուղի եկեղեցին Աստվածածին անունն է կրում, «բայց երբեմն կիմ անապատի միաբան Գաղար Բամպուղ մականվանյալ բազմահմուտ վարդապետ այս գյուղ այցելած ատեն սուրբ Հովաննէս անուն Եղիշէ նմա և գյուղն ալ՝ հին Ագանա քաղաք»⁵⁴: Գոթախտարար, տողերիս հեղինակին հայտնի չէ, թե Գաղար վարդապետը ինչ աղբյուր է ունեցել ձեռքին: Հավանաբար լրացուցիչ պրպտումները կպարզեն այդ ու որոշ այլ հարցեր: Կ. Սրապյանը նկատել է վրացերեն արձանագրությունների գոյությունը, միաժամանակ հաղորդելով չափազանց ուշադրավ մի տեղեկություն, թե «եկեղեցիս սեղանի վիմաքարի վրա անկված խաչքարի վրա կգտնվի 418 թվական»⁵⁵: Եթե վերծանությունը ստույգ լինի, ուրեմն խաչքարը 969 թվականի է: Չենք կարծում, թե այն կարող է կոմպանիստական եկեղեցու կառուցումը 10-րդ դար տեղափոխելուն, քանի որ այժմյան կանգուն կառույցի համար դա շատ վաղ է: Հաճախ հին խաչքարերը ազուցվում էին նորակառույց շինությունների պատերի մեջ, այս դեպքում վիմաքարի վրա է դրված: Այնուամենայնիվ, հիշյալ խաչքարը կարևոր վկայություն է, թե բնակչությունը հայագետի է եղել: Կ. Սրապյանի մոտ կան և այլ տեղեկություններ, որ անհրաժեշտ են համարում այստեղ բերել. «Գյուղիս հարավակողմ Բերթուն անուն բերդի մը ավերակներ կգտնվին, որուն ստորոտը կա ավերակ եկեղեցիս մը մնացորդներ և դերեղմանոց: Գյուղիս արևելակողմ մի ժամու ճանապարհի չափ հեռու ժայի մը մեջ եկեղեցի մը և քանի մը խուցեր

⁵¹ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Некоторые памятники армянской эпитафии на территории Турции (по материалам археологической экспедиции Е. С. Такайшвили 1907 г.), «Эпитафия Востока», IX, 1954, էջ 78—82.

⁵² Յաղար, վերծանությունները լույս են տեսել առանց հեղինակային սրբագրության, այդ պատճառով էլ նրանցում կարելիք ավելի շատ են վրիպում-աղավաղումները, ուստի մեր վկայակոչումները սրբազրել ենք ըստ նրա իսկ վերահրատարակած նմանահանության:

⁵³ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 545:

⁵⁴ Նրա «Ճանապարհորդությունը» համառոտաբար տպված է «Արարատ» հանդեսում (1879 հուլիս—սեպտ.): Վերջերս Մատենադարանի աշխատակից Ավ. Աղամյանը հրատարակեց մարդոջական բնագիրը, որից է օգտվում ենք այստեղ (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվներ», 1970, № 2, էջ 89—124):

⁵⁵ Նշվ. աշխ., էջ 97: 1896 թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով Չանգլին ունեցել է 47 ծով, 527 բնակիչով, բոլորն էլ «հայ-լուսավորչական (տե՛ս Ս. Խելմիցկի, Карсская область, военно-статистический и географический обзор, Тифл., 1897, էջ 18): Մենք չգիտենք՝ ինչ է իրենից ներկայացնում և որտե՞ղ է գտնվում այն «Չափաբերական մատյանը», որի համաձայն, ըստ Գ. Հակոբյանի տվյալների (նշվ. աշխ., էջ 29), Չանգլին 1915—1916 թվականներին ունեցել է 127 անտեսություն, որից 10-ը վերաբանակիչ:

⁵⁶ Անդ:

փորված կան, որ կասվի «Աղմաղարա»: ...Ասոր բոլորդիք գյուղի ավերակներ կան... Գյուղիս կես ժամ հեռավորությամբ, արևմտյան հարավակողմ, «Կուտ-րած» անուն եկեղեցվոյն ավերակներ և գերեզմաններ կգտնվին... Գյուղիս հարավակողմ 1/4 ժամ հեռավորությամբ, Երասխ գետի եզրեր Շամի անուն բրգարնակ գյուղի մեջ եկեղեցիի մը ավերակ և գերեզմանոց կա, որուն խաչքարեր... Գյուղիս արևելակողմ մի ժամ հեռավորությամբ Քարծոր անուն բրգարնակ գյուղի մեջ ավերակ եկեղեցվո մը մնացորդներ կան... այստեղ ևս փոքրիկ պալատի մը նշաններ կան: Գյուղիս արևելակողմ, 1/4 ժամ հեռավորությամբ կգտնվի Գարագալե անվանյալ բերդաքաղաք, որուն միջնաբերդի պարիսպներ դեռ կանգուն կմնան, այստեղ երբեմն 1000 տան շափ բնակչություն եղած կկարծվի, իսկ այժմ 30 տնակ բրգարնակ գյուղ մի է, և այս գեղի մեջ կգտնվի հայկական եկեղեցվո մի պարիսպներ... Գյուղիս արևելյան հյուսիսակողմ, մեկ ժամ հեռավորությամբ, Գարագալե անուն բրգարնակ գյուղի մեջ կա ավերակ եկեղեցի մը և գերեզմանոց, այստեղ կգտնվի բերդի մի պարիսպներ ևս և նորա բոլորդիք շինությունց ավերակներ...»⁵⁶: Ավելորդ է ասել, որ հիշատակված բնակավայրերի, եկեղեցիների, գերեզմանոցների և ամրությունների ավերակների գոյությունը պերճախոս ապացույց է երբևէ Չանդլիի ու շրջակայքի խիտ բնակվածությունը: Կ. Սրապյանի վկայած 969 թ. խաչքարի գոյությունը պատահական է: Չանդլիում եղել են (և կա՞ն) հայերեն ուրիշ արձանագրություններ ևս: Նրանցից մեկը վիմագրված է 994 թվականին և կարդացվում է այսպես. «Ենթ թուա[կ]անություն ևս Սիմէտն [ե Միր]տիչ [կանգնեցաք զ] նշանս ի բարեխաւսութիւն Գագկ[այ] թ[ագաւորին] և հայոց թագուհոյ, ևս ինձ, իմ ծնողաց և ամենայն հավատացելոց ի Քրիստոսի»⁵⁷: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է Գագիկ 1-ին թագավորին (989—1020): Զարմանալի չէ, որ արձանագրության մեջ խոսվում է Անիի Բագրատունի Գագիկի մասին. դա չի նշանակում, թե անուղղակիորեն այստեղ ժխտվում է Կարսի թագավորության գոյությունը. 994 թվականին Կարսի թագավորը Մուշեղ Բագրատունու (964—984) որդի Աբասն էր (984—1029), որը թագավոր էր կարգվել Սմբատ Տիեզերակալի համաձայնությամբ ու ազգապետությամբ: Ե՛վ Աբասը, և՛ նրա հայրը իրականում ճանաչում էին Շիրակի Բագրատունաց գերագահությունը, իբրև ողջ Հայաստանի թագավորի, այդ պատճառով էլ արձանագրության մեջ խոսվում է համայն հայոց գերագահ թագավորի մասին:

⁵⁶ Անդ, էջ 97—98:
⁵⁷ Տե՛ս Մ. Меликсет-Бек, նշվ. աշխ., էջ 81: Ղ. Ալիջանի մոտ այսպես է վերծանված. «ՁԵԳ. ևս Սիմէտոն կանգնեցի զնշանս [ի] բարեխաւսութիւն Գագկայ... իշ... անութեան ևս հայոց թագուոյն, ինձ, իմ ծնողաց և ամենայն հաւատացելոց ի Քրիստոս» («Այրարատ», էջ 545): Սա, ակնհեր, վրիթյալ վերծանություն է՝ լուսանկարի բացակայության պատճառով: Ավելի սխալաշատ է Կ. Սրապյանի վերծանությունը. «ՁԵԳ. ևս Սիմէտն, Կ. ՆԳ... իշ նշանս բարեխ... իթ Գագկայ... իշամութին ևս հայոց թագուոյն ինձ իմ ծնողաց և ամենայն հաւատացելոց ի Քս» (նշվ. աշխ., էջ 98):

Երկրորդ արձանագրությունն ուշ շրջանի է՝ 1282 թ. «Թվիս ԶԱ, կա[ն]կ[ն]եցա ի բարեխաւսութիւն սուրբ նշանս Սառին, ամէն»⁵⁸:

Արձանագրություններից մեկը գտնվում է տաճարից ոչ հեռու ընկած հին գերեզմանատանը, մյուսը՝ աղբյուրի մոտ: Նրանց բովանդակությունից ու հայերեն զրված լինելու փաստից հետևում է, որ գյուղս հայաբնակ է եղել ի սկզբանէ, նաև՝ վրացերեն արձանագրությունների վիմագրման ու հետագա շրջանում: Հետևաբար, Չանդլիի տաճարն ու նրա արձանագրությունները գոյացել են հայոց միջավայրում: Ամենին էլ պարտագիր չէ, որ տեղիս միաբանությունը վրացախոս լիներ, թեև երկու արձանագրություններն էլ վրացերեն են: Վրացերենը, ինչպես արդեն նշել ենք, հայ քաղկեզոնականության միջավայրում (մանավանդ հոգևորական որոշ շրջաններում) նույնքան հասկանալի ու մայրենի էր, որքան բուն հայերենը: Վրաց հոգևոր կենտրոնների հետ ունեցած պաշտոնական ու զավանաբանական առնչությունները խթանաբարձր պետք է զործածության մեջ պահեին լեզուն՝ վրացերենը: Գուցե տաճարիս արձանագրությունը նույնիսկ հասկանալի չլիներ ազգաբնակչությանը, բայց միաբանության համար որոշիչը այդ չէր, այլ՝ պաշտոնականը: Կարելի է շկասկածել, որ եթև մեր ձևերին լիներ տաճարիս «Սառին»-ը, ապա նրանում ևս հայազգի հոգևորականները իրենց «վրացի» պիտի կոչեին, վրացադավան հասկանալով⁵⁹:



Վերևում արդեն խոսք եղավ Կարսի մասին: Այժմ պիտի ավելացնենք, որ վրացերեն արձանագրությունների գոյությունը օտար չէ նաև այդ քաղաքի ու նրա մերձակայքի համար: Ն. Սարգիսյանը ժամանակին Կարսի ամրոցի աշտարակներից մեկի վրա տեսել ու ընդօրինակել է «խառն ի վրացերենէ» (այսինքն՝ հայերեն և վրացերեն) մի արձանագրություն.

Ձյ յճճճճճ ճճճճճճ ճճ... | յճճճ յճ<ճճճճ>... Ձյճճճճճճ | Մյճճճճճ...⁶⁰.

1875 թ., «Կովկասի քրիստոնեական հին հուշարձանների» մասին խոսելիս, Գ. Բաբրաձեն Կարսի վրացերեն արձանագրությունը հիշատակում է փաստորեն Ն. Սարգիսյանի վերծանությունից քաղելով⁶¹: Բայց տարիներ անց (1881 թ.), նա եղել է տեղում և ընդօրինակել: Ե. Քաղաշվիլու տեղեկու-

⁵⁸ Л. Меликсет-Бек, նշվ. աշխ., էջ 80, Կ. Սրապյանի վերծանությամբ՝ «Թվին ԶԱ կանգնեցա ի բարեխաւսութիւն սուրբ նշանս... ամէն» (անդ):
⁵⁹ Ի դեպ պատահական չէ, որ վրացերեն «გალობლობა» բառը վիմագրող վարպետը տուրք է տվել իր տեղական արտասանությանը և սպասելի ձ -ի փոխարեն յ փոխադրել: Ճիշտ նույն արտասանության կնիքն առկա է և մեր վկայադրած հայերեն արձանագրության մեջ՝ «Կանկնեցա», եթև մի կողմ թողնենք բարբառայնության մյուս հետքերը:
⁶⁰ Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 103: Հայերեն մասից պահպանվել է՝ «Կաուրեցալ բընեւս ձ[եռամբ...]:»
⁶¹ Д. Баградзе, Кавказ в древних памятниках христианства, «Записки Общества любителей кавказской археологии», кн. 1, Тифл., 1875, стр. 79.

Յյամբ «Կարսի բերդի՝ վրացական տիրապետության շրջանի հնագույն մուսթերը, որոնց վրա գտնվելիս են եղել վրացերեն խոսցուրի արձանագրությունները, 1902 թ. ամսանք, իմ այցելության ժամանակ, կատարելապես քանդված էին պինդորական վարչության կողմից, ընդ որում՝ բուն արձանագրությունները կորել էին: Սահայն, բարեբախտաբար, դրանք 1881 թ. ձեռքով ընդօրինակվել են Գ. Զ. Բաբրաձեի (տե՛ս նրա օրագիրը, էջ 133), իսկ ապա՝ հարկային տեսուչ Դավ. Վաս. Քուլթաթկյանի կողմից, որը և ինձ հանձնեց իր ընդօրինակությունը (СНИМОК)»⁶²: Ն. Քաղազվիլու վկայակոչած տեքստը նշանակալիորեն լրացնում է Ն. Սարգիսյանի վերծանությունը. նախ՝ այն օժտվում է բրոնխիտով՝ ձևա 35%, որ համապատասխանում է 1237 թվականին և ապա՝ պահպանվել է Ռուսուգան թագուհու անվան հիշատակությունը՝ ճեղք, իսկ Ն. Սարգիսյանի ճեղք... սցամո-ի փոխարեն Բաբրաձեի և Քուլթաթկյանի ընդօրինակությունները տալիս են ճաշամ (իմա՝ սմոլաման ճաշ-ճաշամ), որը ևս գերծ չէ աղավաղումից: Վերականգնելուն մասամբ նույնատիպ է «ի վերայ աշտարակաց ներքին պարսպին» պահպանված հայերեն արձանագրություններից մեկը, գրված ՈԶԵ (1236) թվին: Այստեղ «բրջները» կատուցված են «ամիր մուշխ Արե[ն]մայ» հրամանով, «[աբայ]ից աբային ինքնակալ Լոռ[սուղան]» թագուհու օրը, «որ այս ամին [եղև ԺԳ տարի թա]գատուրեան իւր»⁶²: Հարկավ, մեկ տարի հետո գրված վրացերեն արձանագրության ամիրա-ն նույն մուշխը Աբրեհամը պիտի լիներ, որով կովան ունենք մտածելու, թե վերծանողներից մեկը «մրգովանի» 2-ն Գ է կարդացել (Ն. Սարգիսյան), մյուս երկուսը՝ Զ (Բաբրաձե, Քուլթաթկյան): Գրչական նման շփոթ միանգամայն հնարավոր է, փանավանդ փոքր-ինչ հղման հարված լինելու զեպրում: ... ճաշամ ունենալուց հետո [աձ]ճաշամ վերականգնելը դժվար չէ, բայց անզիջվածային է մնում ճաշ տառակապակցության մեջ անվան աձ (թև ոձ) սկզբնատարերը աղավաղված տեսնելու հնարավորությունը: Ըստ հայերեն տեքստի՝ վերականգնելու հավանականությունը մեծանում է և նրանով, որ այդ երկու արձանագրությունները վիճաբանված են նույնական բովանդակությամբ. վրացերենում ևս եղել է ֆղեսա մեղ[տծիսա օց-սա] («Նրա թագավորության ժե տարին»)»⁶³: Այս ամենը ի մի բերելով, արձանագրությունը պիտի կարդալ.

Յ(րոնի)յ(ոն)սա 35%.
 մե քարիսա սմոլաման սճրաձամ (?)
 սղց(ա)մեղց [Ելուրչի (Ելլե?) ցեց] մեղտծասա
 ճ(տ)լ(տ)լան [լըղտղոլիսասա],
 ֆղեսա մեղ[տծիսա միսիսա օց-սա].

Կ I (17)

⁶² Տե՛ս «Материалы по археологии Кавказа, собранные экспедициями имп. Моск. арх. общества...», вып. XII, М., 1909, стр. X—XI.
^{62a} Համա. Արպ. Կարս քաղաք, Մ., 1893, էջ 26.
⁶³ Համա. Ն. օնգորոջցա, ցուրդի մերհլլե, ցց. 541.

Քարգամանություն. Քրոնիկոնի 457-ին (= 1237): Նս՝ Կարսի ամիրա Աբրահամ (?), շինեցի այս բուրջը (մուսթեր)՝ Ռուսուգան թագուհու քաղավորության օրոք, նրա քաղավորության տասնհինգերորդ տարին:

Կարսի միջնաբերդի պարիսպ է ազուցված եղել և երկրորդ վրացերեն արձանագրությունը, որի մասին Ն. Սարգիսյանը տեղեկություն չունի: Ըստ Ն. Քաղազվիլու տրամադրության տակ եղած աղբյուրների այն կարդացվել է.

Յ. սղց[ա]... սղց(ա)ճտ[ա] մ[ց]ցիսա ֆլլալոծոծ...ս
 [. . .]ց հց[. . .] օղց(ա)ցեսա.⁶⁴

Կ II (18)

Քարգամանություն. Փառավորի... ափխագաց քաղավորի ողորմությանը Հովհաննիս:

«Ափխագաց թագավոր» արտահայտության առկայությունը, ինչպես նաև պարսպի վրա եղած հայերեն հինգ և վրացերեն մեկ (նախօրդ) արձանագրությունների՝ Ռուսուգանի օրոք վիճաբանված լինելու փաստը հուշում են, որ այստեղ հիշատակված պիտի լիներ Ռուսուգանի որդի Դավիթը, որին «ափխագները, սվանները, Դաղիան-Բեղիանը, Ռահայի էրիսթալն ու ողջ կիթա-այնկողմացիք շրջապատեցին մեծ սիրով» և «ափխագների թագավոր դարձրին»⁶⁵: Ուրեմն՝ արձանագրությունը գրված պիտի լինի 13-րդ դարի 50-ական թվականներին:

Հայ-վրացերեն երկլեզվյան մի արձանագրություն էլ գտնվելիս է եղել Կարսից ոչ հեռու (հարավ-արևելք) ընկած Կարմիր-վանքում: Արևելյան ճամփորդությունից վերադառնալիս 1820 թ. հունիսի 20-ին, Գ. Ավալիշվիլին եղել է «Կիզիլ Քիլիսայում» (Կարմիր եկեղեցի) և արձանագրել վիճաբանությունը: Ահա այդ վկայությունը.

Կիզիլքիլիսա—Կարմիր կամ գեղեցիկ եկեղեցի: Սա գտնվում է կատարյալ ծաղկունքի մեջ՝ իր նոր-կանգունության մեջ, ճանապարհի ճախ կողմում, բարձր-կանաչապատ [անտառա]-լուրի բարձունքի վրա: Մուտքի դիմաց վրացական երկաթագիր ու նաև հայերեն արձանագրության քար

⁶⁴ Տե՛ս E. Такайшвили, *անդ. Բաբրաձեի ընդօրինակությունը չի ունեցել* սղց[ա] բառը, իսկ Քուլթաթկյանի մոտ օղց(ա)ցեսա-ի փոխարեն եղել է հոցեսա, Ի. Զավախիշվիլու հիտոգրությունը տե՛ս X. B., I, вып. I, էջ 100:

⁶⁵ «Վրաց ժամանակագրություն», Երևան, էջ 103:

և սոմեթրոտա: Գարնա քլելտա միեր ըրտա չլուցիս ցանմաքրեղեցիս և մաս տան քլելտա ցանցա շլլեուիլ-սանթրտատա արիան քլլուրոնի ցլլ ցալլլլըլլըլլ և ար Մլլսալլոլլ քլարկոտեղալլ մատա. ռլլլլլան արձրլլմ-լարկլլլլունի սոմլլլլնի, մլլլոննի քլլինա-լարտա միեր տլլստա, տամար մլլլլլլլլլան արլլլլլլլլլլլլ ամ ցլլլլլլլլլլլլ⁶⁶.

կա, սակայն ժամանակի ամենավեր ձևերով և միաժամանակ՝ նաև շարասպասավորաց ձևերով, այս գրքերը կզժվել են, և անկարելի է նրանց ընթերցումը: Իրենց նախնիներից տեղեկացած էրզրում-կարսեցի հայերը այս եկեղեցին Քամար թագուհու կողմից կառուցած են ասում:

Նկեղեցու կանգուն վիճակն ու տեղացի հայերի կողմից շինարարությունը Քամար թագուհու անվան հետ կապելը վստահություն են ներշնչում, թե կառույցն ու արձանագրությունը կարող էին իրոք նրա թագավորության տարիների (1184—1207/10 թթ.) գործը լինել:

Գ. Բարրաձի տեղեկությամբ, իրեն հայտնի են Կարսի շրջանի անտառներում ընկած կառուցարկորներ վրացերեն արձանագրությունների պատասխիններով⁶⁷: Թե իրականում ինչ պատահիկների մասին է խոսքը, հայտնի չէ:

⁶⁶ Գ. Բաղլիջի, մեջնարտառ, ցամ. լլ. մլլլլլլլլլլլ, տծ., 1957, ցլլ. 336. Լ. Մեկլլլլլլլլլլ-Բեկը մի քանի քաղով վերապատմել է այս հատվածի բովանդակությունը (տե՛ս նրա՝ «Վրաց պղլլլլլլլլլլ...», հ. Գ, Երևան, 1955, էլ 218):

⁶⁷ Տե՛ս ցանկը, Նախարարության օրագրի , ցլլ: 1883, ցլլ. 150.

Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ

Զվարթնոցի շինարարության պատմությունը հիշատակող սկզբնաղբյուրներում նկատվում է, որ այն գտնվում է «մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին»¹, կամ ուղղակի՝ «...աշխարհն հայոց, յԱլախատեան գաւառն ի Վաղարշապատ քաղաք...»², իսկ եթե քիչ էլ մասնավորեցնենք՝ «ի Վաղարշապատու առապարին»³: Այս տեղեկություններից ելնելով, սխալ գործած չենք լինի, եթե Զվարթնոցի հետ կապված հարցեր արծարծելիս այն դետեղներ «Վաղարշապատ» խորագրի տակ, մասնավորապես որ նրա տեղագրությունը բուն Վաղարշապատի եկեղեցիների ճարտարապետական ոլորտից դուրս չէ⁴:

Դարասկզբին ձևնարկված պեղումների շնորհիվ Զվարթնոցում հայտնաբերվեցին մի քանի շինարարական կամ միաբանական արձանագրություններ, զրված այլևայլ լեզուներով: Այդ արձանագրությունների զծապատեկներին հրատարակման և վերծանության անդրանիկ փորձը կատարեց Մ. Լավրով: Մովսեսյանը: 1903 թ. լույս տեսավ նրա «Раскопки развалин церкви св. Григория близ Эчмиадзина» աշխատությունը⁵, որը չորս տարի անց, որոշ լրացումներով, թարգմանվեց հայերենի⁶: Երկու հրատարակություններն էլ օժտված են համապատասխան տախտակներով, ուր և հրապարակված են մեկ հետաքրքրող արձանագրությունները: Անդրադառնալով նրանցից մի քանիսի պտնված տեղին, Մ. Մովսեսյանը գրում է, որ բացի շինարարությանը

¹ «Սերլուսի եպիսկոպոսի Պատմութիւն, ի ձեռն Ստ. Մախատեոնոց», Երևան, 1939, էլ 120:
² Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղտանից աշխարհի, Մոսկվա, 1860, էլ 187:
³ Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էլ 89:
⁴ Վաստակաշատ Ք. Քորամանյանը գտնում է, որ հին Վաղարշապատը «ծածկված է Զվարթնոցը շրջապատող մեծ ու փոքր բլուրների ներքև», տե՛ս նրա՝ «Հայկական ճարտարապետություն», Բ, Երևան, 1948, էլ 85: Վաղարշապատի սահմանների մասին ավելի հանդամանորեն խոսում է հայագետ Ք. Ավդալբեկյանը (տե՛ս նրա՝ «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էլ 148—155):
⁵ Տե՛ս ԱԿՄ, ԵՄՍ. VIII, 1903:
⁶ ՄԼԵՍՊ Վարդ. [Մովսեսյան], էլմիաժին և հայոց հնագույն եկեղեցիներ, «Աղղհանդես», գիրք 15, Քիֆլիս, 1907, գիրք 16, էլ 130—204:

ժամանակակից հինգ հայերեն և հունարեն արձանագրություններից, երևան են եկել և ուրիշները. «Մտրա գրվել են եկեղեցին ավերվելուց հետո, ամեն ազգի պատահական այցելուներից, որոնք ներկայիս սովորությունը պատերի ծեփերը ծածկել են իրենց անհայտ անուններով: Այդ տեսակ ծեփերով քարեր հաշիվ վարդապետը հավաքել է և պահում է արևմտյան կամարի բեկորի տակ. մի քանի գրություններ հարավային կանգուն սյան վրա են. ա) գրտի հարավային սյան վրա եղածները անձրևի ազդեցությունից մաշվում են, կոտրվում և շուտով անհետ կլինեն: Գոցա լուսանկարները պահված են... բ) երբ քառորդ սյան բեկորների վրա. 1. «Նս Շուշա» (նկար XII, 9), 2. «ՃՄՆ ես...» (նկար XII, 9), 3. Վրացերեն գրություն, բավական անոռչ. պոռփ. Մառ կարդում է «Նս Բրխտոնյա եմ» դարձվածը (նկար XII, 9)»: Ինչպես նշեցինք, երկու հրատարակություններն էլ օժտված են արձանագրությունների գծանկարներով, որոնց մասին ուսերեն հանդեսի խմբագրությունը ծանոթագրել է. «11—13-րդ տախտակներում ներկայացված արձանագրությունների պատկերները պատճենված են լուսանկարներից՝ հնարավոր ճշտությամբ»⁷: Ամենևին կասկածի չենթարկելով պատճենման ստուգությունը, հարկադրված ենք խոստովանել, որ վրացերեն արձանագրության որչառ տառաձևեր առհասարակ անճանաչելի են, ուստի Ն. Մառի վերծանած «Նս բրխտոնյա եմ» (ձց յՐՕՆ ԾՕՏՁ ցՅՕՐ) արտահայտությունը խիստ պայմանական է: Արձանագրությունը վեց տող է, գրված «նուսխուրի» գրչության մի այնպիսի տարբերակով, որ երբեմն զժվար է լինում տառապատկերը ճանաչելու համար զուգահեռ գտնել: Ն. Մառը, հավանաբար, Ձց յՐՕՆ ԾՕՏՁ ցՅՕՐ է կարդացել երրորդ տողի երկրորդ կեսը: Հնագրական ուսումնասիրությունից պարզվում է, սակայն, որ նման ընթերցման իրական հիմք չկա: Երրորդ տողի 5—6-րդ տառանիշները թևերն ավելի ճիշտ կլինի ժց կարդալ, մանավանդ որ նրանից առաջ պահպանվել է սեռական կամ տրական հոլովով արված անվան վերջավորությունը— օջևժ ժց . Կարելի է անգամ կասկածել, թե իրո՞ք վերջին գիրը միայն ց է, քանի որ այն երկու տառապատկերի տեսք ունի: Թշուր պիտի համարել և հաջորդ տառաշարի յ(ՐՕՆ ԾՕՏՁ) կարդալը. արձանագրության սկզբում ունենք խիստ ճանաչելի ձևով գրված յ, որ ամենևին նման չէ այստեղ նեթագրվողին. իբրև ց է ընկալվել մի տառապատկեր, որ ավելի շուտ հաջորդ տողին պատկանող նիշ պիտի լինի: Կասկածելի է նաև հաջորդ տառի ց ընկալումը: Վերջին (6-րդ) տողում ունենք որոշակի ց (ՁՅՅ տառակապակցության մեջ), որ բոլորովին այլ է, թեև ավելի մոտ ց կամ ծ կարդալուն: Մի խոսքով, Ն. Մառի առաջարկած բառերի ընթերցումը խիստ պայմանական է եղել և հնագրական ըննությամբ չի հաստատվում:

Արձանագրության առկա գծապատկերի միջոցով (Ա. Կ. IV, 1) հնարավոր է ստույգ վերծանություն առաջարկել միայն առաջին տողի համար. ավանդական յ-ից հետո այստեղ կարդում ենք Նձեցլժոտ[ձ] լտոտ[ձաթտ] (Վ, I (19),

⁷ «Ազգ. հանդես», գիրք 16, էջ 162, հմտ. «Раскопки развалин...», էջ 28—29:

⁸ «Раскопки развалин...», стр. 28, прим. 2.

որ նշանակում է՝ «Հանուն աստուծո»: Կարելի էր մոտավոր իմաստավորմամբ կարգալ հաջորդ տողերից մի քանի բառ ևս, բայց մենք ձեռնպահ ենք մնում, հուսալով, թե երբեք կհաջողվի լուսանկարը գտնել և ըստ այնմ վերծանել⁹: Վերջին տողում, օրինակ, կարելի է կարգալ ՁՅՅՕՆՍ Ի(Պ)ՅԵ, բայց դրանով վիճակը չի փոխվում: Դատելով արձանագրության տեղից ու համանման այլ գրությունների առկայությունից, կարելի է վստահ սանել, որ այն ևս բովանդակությամբ միաբանական է¹⁰: Ինչ վերաբերում է թվագրությանը, այսպատառ ենք գալիս առեղծվածային բնույթի որոշ հարցեր. վրացերեն արձանագրության ներքևում կա հայերեն երկու մակագրություն՝ «Նս Շուշա» և «ՃՄՆ ես», գրված նույն գրչությամբ: Արդ, առաջին երկբառը գրելիս վրացերենն արդեն եղել է, ուստի անկարելի է եղել «Շուշա» անունից հետո միտքը շարունակել կամ նույնիսկ ավելին՝ վերջի ս-ն ա պիտի լինի (իմա՝ Շուշան), բայց տեղ չլինելու պատճառով երրորդ տեղերը միացել է վրացերեն արձանագրության վերջին տողի առաջին տառանիշին: Այս ամենը գրությունների տեղագրությանը նկարագրելու համար չենք բերում, այլ՝ որ ՃՄՆ թվականը գրելիս վրացերենն արդեն առկա է եղել: Բայց ինչպե՞ս հաշվարկին (551+155=706 թ., տարին, գումարելով մե՞ծ, թե՞ փոքր թվական հաշվարկին (551+150=701 թ., թե՞ Սամել մալ յմակ լծառայ սրբոյ Գրիգորի ՃՄՅ)¹¹ (551+150=701 թ., թե՞ 1084+155=1239 թ.): Թվական ունի հայերեն մեկ այլ մակագրություն՝ «Նս Սամել մալ յմակ լծառայ սրբոյ Գրիգորի ՃՄՅ»¹² (551+150=701 թ., թե՞ 1084+155=1234 թ.): Սակայն տեղում պահպանված արարերեն արձանագրություններից մեկը կարծես ցրում է կասկածը. հիշատակարող Մուհամեդը իր այցելության տարին վկայել է հիշբի 259 թվականով (=872/73)¹³: Ուրեմն, հիմք կա ենթադրելու, որ այլապես մակագրությունները կարող էին երևալ այն շրջանում, երբ Զվարթնոցը դեռ կանգուն էր (խորտակումը ենթադրվում է Հովհ. Գրասխանակերացուց հետո, բայց մինչև Ասողիկը):

Հայերեն արձանագրությունների մի մասը 8—9-րդ դարերին վերագրելու հնագրական մեծ զժվարություններ չկան, մանավանդ 2. Տաշյանի հետազոտության արդյունքները նկատի առնելով¹⁴: Բայց առ այսօր որևէ կովան չունենք 8-րդ դարում «նուսխուրի» գրչության գոյության վերաբերյալ (եղած հնագույն նմուշները 10-րդ դարից այն կողմ չեն անցնում), ուստի շարգաված հանդգնություն կլինեն Զվարթնոցի վրացերեն արձանագրությունը

⁹ Տեղում կատարած որոնումները ցույց տվեցին, որ Մ. Մովսեսյանի մտահոգությունը արդարացի է եղել. «անձրևի ազդեցությունից մաշվել» և «անհետ են եղել» հայերեն ու այլ լեզուներով գրված շատ մակագրություններ, դրանց թվում և մեղ հետաքրքրող վրացերենը:

¹⁰ Համարելով մակագրություններ կան և Ռուսիի տաճարի հյուսիսային դավթի պատերին (տե՛ս Գ. Ն. Чубинашвили, Вопросы истории искусства, т. I, Тб., 1970, էջ 198):

¹¹ Հմտ. «Раскопки развалин...», էջ 29, նաև՝ Ս. Մ. Мурадян, Хронология систем летоисчисления по армянским источникам («Армянская эра»). «Вестник общ. наук», 1976, № 1, стр. 60. Թվականների իսկությունը խիստ կասկածելի է:

¹² Թվականի վերծանությունը պատկանում է ակադ. Վ. Բարսուղին (տե՛ս «Раскопки развалин...», էջ 30):

¹³ Տաշյան, Ակհարի մի հայ հնագրության վրայ, Վիեննա, 1898:

7-րդ կամ 8-րդ դարի հուշակի, մանավանդ, երբ նրա վերծանության խնդիրը գեո ամբողջությամբ լուծված չէ¹⁴:

Զվարթնոցում պահպանված ալլախեղու մակագրություններն ուսումնասիրելիս Մ. Մովսեսյանին ծանոթ բարի ձեփի վրա, թեք կտրվածք ունեցող նեղ կողին, նկատվեց վրացերեն երկրորդ հիշատակագրությունը: Պահպանված նիշերը իմաստավոր ամբողջական ընթերցում չեն տալիս, որոշ է միայն օ(ց)ն Յ Յ(օն) Յ (Վ, II (20) արտահայտության առկայությունը (Աղ. IV, 2): Վրացերեն երկու հիշատակագրությունների գոյությունը փաստը ինքնին ուշագրավ է: Զվարթնոցը, ինչպես երևում է, հայ ու ալլախեղի (հույն, ասորի, վրացի և այլն) քաղկեդոնականների շրջանում պակաս ջերմեռանդություններ չի քննարկել, բան բուն հայ միարձակների միջավայրում: Անհնար բան է, որ իրոք այստեղ տեղափոխված լինեին Գրիգոր Լուսավորչի նշխարները, և շրջապատի «լուսավորչականները» մոռացության ապին այդ սրբաբանը, նրա հետ կապված ավանդություններն ու զրույցները չպահպանեին: Դարասկզբի պեղումներին մասնակցած հայագետների վկայությամբ՝ «բուն ժողովուրդը, որ ընդհանրապես հարգում է եկեղեցիների ավերակները որպես նախնական սրբավայրեր և ուխտատեղիք, հակառակ այդ ընդհանրացած սովորության, անտարբեր է եղել միշտ զեպի Խանգաղած եկեղեցին (իմա՝ Զվարթնոցը—Պ. Մ.) և ոչ մի բարեպաշտական ձգտումն չէ տածել զեպի այն: Այնտեղ չէ վառվում մոմ ու ճրագ, չէր ծխում խոնկ ու կնդրուկ, ոչ էլ թողնում են քարերի ձեռպերում կամ մացառների վրա հանդերձից ծվեններ, որոնցով ընդհանրապես զարդարված են լինում լուսաբարձն ու ավերակ եկեղեցիների մոտ եղած մատուռները»¹⁵: Հազիվ թե նման իրողությունը պատահական լինի, ինչպես որ պատահական չէ նաև ալլախեղու արձանագրության մակագրությունների մեծ քանակության առկայությունն այստեղ: Տեղացիների «սաննությունը» բացատրելի է քաղկեդոնականների «չերմություններ» զեպի այդ հուշարձան-սրբաբանը¹⁶: Այլ առիթով ասել ենք, թե հայ-վրացական եկեղեցական բաժանումից հետո ուխտագնացության երթեվեկը սահմանափակվեց, բայց միաժամանակ այն սերտացավ դավանակից-

¹⁴ Անկիպելի էր, որ կառույցի ճարտարապետական վերլուծությամբ գրազվող մասնագետները կարողանային ճշգրիտ ասել, թե արձանագրություն ունեցող սյունաբեկորը շենքի ո՞ր մասում է եղել, կտրված է եղել, թե՛ կանգուն, երբ արձանագրվել է, պեղումների ժամանակ որտեղից է հայտնաբերվել, ի՞նչ հաստության հողաշերտի տակից և այլն: Սրանք մանրուքներ չեն, առավել ևս, երբ ձեռքի տակ լուսանկար խլի շուններ՝ հնագրական վերլուծությամբ ճշգրիտ ժամանակագրական սահմանները որոշելու համար: Ափսոսանքով պիտի նշենք, որ Մտ. Մնացականյանի նորերս լույս տեսած գրքում («Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները», Երևան, 1971) «ավազի վրա և խիստ անկանոն» (էջ 11) արձանագրությունները վերոնշյալ առումով բնութիան չեն նկատվում:

¹⁵ Հուսիկ եպս., Վաղարշապատի Առաջարի կամ Զվարթնոց եկեղեցին («Արարատ», 1903, էջ 874), հմտ. Մեսրոպ վ. Մովսեսյան, նշվ. աշխ. («Ազգ. հանդես», 1907, դեբր 15, էջ 94):

¹⁶ Մենք լիովին բաժանում ենք ակադ. Ն. Մատի կարծիքը Զվարթնոցի քաղկեդոնական կառույց լինելու վերաբերյալ, միաժամանակ ելակետ ունենալով այն, որ 7-րդ դարի հայ

ների շրջանում¹⁷: Ինչպես որ Վրաստանի քաղկեդոնական սրբաբանները հարազատ ու ընտանի էին հայ երկաթնակներին, այնպես էլ վրացիներն՝ համար ընտանի էին Հայաստանում և հայոց կառուցած քաղկեդոնական կենտրոն-աղոթարանները: Այս առումով ուշագրավ է Ավանի եկեղեցու արձանագրություններում պահպանված որակումը. Իվանե Երկայնաբազուկը (1219 թ.), Դավիթ «թագաւոր վրաց և հայոց»-ը (1285 թ.) և Խուլթուրուլա աթաբեկը (1287 թ.) արտոնություններ են շնորհում ավանցիներին՝ «վասն միամտութեան սոցա»¹⁸, որ այսօրվա տերմինով «համամտություն», «զավանակցություն» է նշանակում: Թերևս այսպիսի «միամտություն» թելադրանքով էլ պետք է բացատրել վրացերեն, հունարեն, ասորերեն և արաբերեն արձանագրությունների կուտակումը Զվարթնոցում, եթե, իհարկե, նրանց սպասելի վերծանությամբ անակնկալ փաստեր չբացահայտվեն:

Վաղարշապատի երրորդ վրացերեն արձանագրությունը էնպեթթի Աննայի համառոտ տապանադիրն է: Նրա գոյությունը նկատել էր պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը 1924 թ. արշավախմբային այցելության ժամանակ և հրատարակել 1930 թ.¹⁹: Երկրորդ անգամ դիտնականն այդ արձանագրությունն անդրադարձել է 1958 թ., հայ-վրացական բանահյուսության կապերի ուսումնասիրության առիթով²⁰: Այն եղել է «Հոսիսիմեի վանքի արևելյան պարսպից դուրս գտնվող գերեզմանատանը, երկու լեզվով. մեկն ընդարձակ և շափածո՝ հայերեն, և մյուսն համառոտ և արձակ՝ վրացերեն: Տապանաբարը... ինչպես նորերս ստույգեցինք, իր տեղում այլևս չի գտնվում»²¹: Հիշյալ տապանաբարը գտնելու մեր ջանքերը ևս սպարողուն անցան, ուստի այստեղ երկլեզվյան տապանադիրը վկայակոչում ենք ըստ Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակության (վերծանության շուրջ որևէ կասկած չունենք):

Այս է տապան դամբարանի Աննա անուն կնոջ բարի,
Կողակցի Դարթեան Բէրոյի եւ մայր Երկուց հարազատի,
Նայսկնոյն Դաւիթ վարդապետի, հաւ՛ կրասերազոյն Բարսեղի:
Էր սա երկուս Վրաստանցի, բնիկ տեղեա՛ւ՝ Էնեպէթթի,
Խնդլ է ի ձէնջ, եղբա՛ր բա՛րի, ո՛րք հանդիպի՛ր՝ ապ ողորմի.
Ու վախճանի ի ՌՄԼԳ քուռջ սեպ[տեմբերի] ԻԲ.

քաղկեդոնականները նույնքան նախնաձայնակիր էին ակզային մշակույթի հարստացմանը, որքան նրանց հալածող և պաշտոնականություն վաչկող միարձակները: Ն. Մատի գրություններում սև՛ նրա՝ «О раскопках и работах в Ани летом 1906» (TP, X, 1907):

Զվարթնոցին վերաբերող գրականության տեսությունը տե՛ս Ստ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 10—25:

¹⁷ П. М. Мурадян, Армянская надпись храма Джвари, «Երբեր», 1968, № 2, էջ 78—79:

¹⁸ Լ. Ղաֆաղադյան, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 17—21:

¹⁹ ՏԵ՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, ՍԻ էջ հայ-վրացական ֆոլկլորային կապերի պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 7, էջ 59—60:

²⁰ ՏԵ՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 59:

²¹ Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 59:

Վրացերենն այս է.

+ ეს საფლავი ენაველი ბეროას მეუღლე ანასია. შენდობა ბძანეთ.

Վ. III (21)

Թարգմանություն. Այս տապանը էնագեքցի Բերոյի ամուսին Աննայինն է, ողորմի ասեմ²²:

Որևէ մեկնարանություն տալուց առաջ հարկավոր է նկատել, որ հայերեն չափածո տապանագիրն ունի ներքին հանգավորում և այն կարելի է տողատել և այսպես.

Այս է տապան դամբարանի
Աննա անուն կնոջ բարի,
Կողակցի Դարեան Բերոյի
նս մայր երկուց հարագատի,
Նախկնտյն Դաւիթ վարդապետի,
Նակ՝ կրտսերագոյն Բարսեղի:
Էր սա երկրա Վրաստանցի,
Բնիկ տեղեալ՝ էնագէքցի:
Խնդրէ ի ձեռք, եղբարք բարի,
Որք հանդիպիք՝ տալ ողորմի.
Որ վախճանի ի ՌՄԿ բուռց սեպ[տեմբերի] իմ:

Լ. Մելիքսեթ-Բեկը նկատել է, որ Աննան Դավիթ էնագեքցու մայրն է. արդեն տապանագրում էլ ասված է՝ «նախկնտյն Դաւիթ վարդապետի»: Վերջինս «գործութեամբ խանին երևանայ և ահաջուցեալ զմիաբանսն ալպագի գինուորոք» ի 28 ապրիլի 1801 ամի օծաւ կաթողիկոս յսպիսկոպոսաց անտի Աթոռոյն²³: Ինչպես երևում է, Դավիթի վարդապետության շրջանում մայրը տեղափոխվել է Էջմիածին, որդու մոտ, և այստեղ էլ մահացել է 1784 թվականին: Տապանագրի վրացերեն «ամփոփման» պատճառը նրա էնագեքցի լինելն ու վիրահայուց և վրաց շրջանում տոհմի ունեցած ճանաչումն է: Թե ով էր Աննայի ամուսին «Դաւիթեան Բերոն» կամ նրա կրտսեր որդի Բարսեղը, մեր խնդրի հետ առնչություն չունի, ուստի և քննության հարց չենք դարձնում: Վաղարշապատում կա և չորրորդ վրացերեն արձանագրությունը. այն գտնվում է Գալանե վանքի բակում, գրված «ղեղնագույն եղնջաքարի» վրա: Նախորդի պես երկվեզվյան տապանագիր է, հայերենը՝ երկսյուն, զլխատառ, վրացերենը՝ «մխեղրուլի» գրչությունը, հայերենի տակ և իբրև շարունակական

²² Անձնանվան վրացերեն ուղիղ ձևը եղել է Դերոա. — Բերոա, ուստի և՛ Դերոաս. Բայց մենք ևս նախընտրեցինք հայերենում ավանդված Բերո-ն:
²³ «Դիտան հայոց պատմութեան», գիրք Ա.-Բ. խմբագրեց Գիտ բահ. Աղանենց, Քիֆլիս, 1893, էջ 93. Հմտ. Մաղախա աբեղյա. Օրմանեան, Ազգայնատու, հ. Բ, գիրք Գ, Պեյրուֆ, 1960, էջ 3289: Դավիթ կոնդակներն ու թղթերը հրատարակված են «Դիվանի» 2 և է գրքերում:

աւերատ: Տապանագրի անգրանիկ վերծանությունն ու հրատարակումը կատարել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը²⁴: Հայերենում կան կապույտության մի քանի դեպքեր, իսկ վրացերենը փորագրված է ուրրուն ու գեղազիր տանրով: Երկուսն էլ չափածո են, հրատարակչի բնութագրումով՝ տապանագիրը «միաժամանակ բավականին հետաքրքիր նմուշ է հայ-վրացական ֆոլկլորային ստեղծագործության»²⁵: Ստորև բերում ենք այդ չափական բնագրերը՝ սուղատմամբ.

Ի սմին տապանի /հանգուցեալ// դնի
Մարմին մա/հոսեալի այն// թինաքինի,
Որ /էր կողակցից// պարուն Գրիգորի՝
Ի Յալքիբէշ/եան ազգէ անուանի.
Նակ էր գո //խանջ Աղաթ/ բէկի,
և մայր //արբասէր Գեօգ/ալ խանումի:
Ը//նքերցոյ յ/իշման արա// արժանի,
Ձի լի/ցի բնակոյ յս//րկնից կայանի/
Ի 1822 օգոստոսի 6²⁶:

Վրացերենն ըստ տապանագրի վրա եղած տողերի.

- 1 խ. աղցեսրտւղց ց(զաց)լ զ մոսղու, Ե(ո)րցի մոզւղց, արա տղ սղու. ար մցլլանա մ(ց)նի, Ե(ոլո)լ²⁷ ասղու;
- 2 մց յոցաց ց(ր)ց տ(ա)տ(ց)լ Ե(ա)Ե(ղ)լ, Ե(ա)նց(ղ)լ, Ե(ա)նց(ղ)լ միլլիս տի-նատն, Ե(ո)լլալ յոցոցոց ք լլ(ա)մլն.
- 3 յոլլոց տ(ր) յ(ց)տոցոցոց, ար(ց)տոց ց(ո)մնո և Ե(ո)ցալցո. մլլոն և յ(ա)ցից յ(ց)տոլլոցոց:
- 4 տլ(ղ)լլց Ս(ց)լլ(ղ)լ(ց)լ և ց(ր)ց տ(ա)մն: ց(ր)ց յ(ո)լլ(ա) յ(ո)լլ(ա)ն.
- 5 ալլ(ց)լլց ալլցիցոց ց-ս լլ(ա) յ(ր)լլցի Կցլլ-ս

Վ. IV (22)
Տողատված. Աղ. IV, 3

խ. աղցեսրտւղց ց(զաց)լ-մոսղու, Ե(ո)րցի մոզւղց, արա տղ սղու. ար մցլլանա մցնի, Ե(ո)լլալ ասղու

²⁴ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 60—67:
²⁵ Անգ. Լ. Մելիքսեթ-Բեկի վերծանության մեջ կան նկատելի անձուրություններ, ինչպես, օրինակ՝ յոլլոցոց փխ. մոլլոլլց: միան փխ. ժցն: յոլլոցոց փխ. յոլլոցոց և այլն:
²⁶ Նույնահանգության սկզբունքից ելնելով կարելի էր կարգալ՝ Ի 1822 6 օգոստոսի: Հայերեն տապանագրի մեր ընթերցման միակ տարբերությունն այն է, որ «գործանջ»-ի փոխարեն «գործանջ» ենք կարդում և «գին» ու «արբասէր» բառերի մեջ ը գաղտնավանք չենք բացում:
²⁷ Լ. Մելիքսեթ-Բեկը անհրաժեշտ է նկատել կարգալ լլլ(ո)լլոլլ. Կարծում ենք, որ բանաձևային այդ արտահայտության մեջ սրբագրություն անելու հարկ չկա:

թվականներին ապրել է Քավրիզում³⁴: ներկայացնելով Աղալո-բեկի (հետագայում՝ Աղալար-բեկի) կին Գյուզալ խանումին, Գ. Շերմազանյանը գրում է. «Արդարև Աղալար-բեկի կինը մեծ օժանդակ եղավ յուր ամուսնու վարկն ու հարգը բարձրացնելու մասին, նամանավանց որ՝ Գոզալ-խանումը խելացի, ճարտարախոս և երևելի տանտիկին էր, վասնորո՞ւ Աբբաս-միրզան Նրամաչեց նրան արձակ-համարձակ էլեմուտ առնել յուր կանանցը, ուր և տիկինները կընդունեին շատ պատվով և հարգանքով...»³⁵: Ահա այս «Աղալո-բեկն» ու «սրբատէր Գեօզալ խանումն» են հիշատակված մահտեսի Թինաթինի տապանագրում՝ իբրև փեսա և դուստր: Աղալո-բեկի զոքանչի՝ էջմիածնում գտնվելն ու թաղվելը զարմանալի չի դառնա, եթև հիշենք Գ. Շերմազանյանի տեղեկությունը, թև 1812 թ. «աթոռային գործերի համար» Քավրիզ ժամանած ներսես Աշարակեցին իջևանում է Աղալո-բեկի տանը և «ալնուհետև, երբ էջմիածինը մեկ գործ ունենար տերության հետ (իմա՝ պարսից—Պ. Մ.), կղիմեր Աղալո-բեկին, որ և կհայտնեը Աբբաս-միրզային և նրանից հրամանագիր կատներ՝ կղրկեր ուր որ հարկն էր: Երկրացի հայերն էլ նրան՝ Աղալո-բեկին, կհնազանդեին, ինչպես ազգապետի, և երբ որևիցէ բողոք ունենային, կղիմեին նրան, և նա կպաշտպաներ նրանց թև Աբբաս-միրզային հայտնելով և թև որևիցէ նահանգապետի գրելով»³⁶: Այս պարագաներում գժվար չէ նկատել, թև Աբբաս-միրզայի խնդրանքով էջմիածնի Եփրեմ կաթողիկոսը (1809--1830) կարող էր Թիֆլիսից Քավրիզ վերաբնակելու թուլտվություն ստանալ թև՝ Աղալո-բեկի կնոջ՝ Գյուզալ-խանումի³⁷, թև՝ նրա մոր՝ մահտեսի Թինաթինի համար: Վերջինս, պիտի ենթադրել, մահացել է մեկնումի ճանապարհին՝ էջմիածնում, ուր և թաղվել է: Աղալո-բեկի գործակցությունը պարտավորված էջմիածնի միաբանները իրենց հարգանքի տուրքը մատուցել են Թինաթինին՝ Գայանե վանքի հյուսիս-արևելյան անկյան մոտ թաղելով ու երկրեղվյան տապանագրով օժտելով³⁸:

* * *

Հայերենին առնթր վրացերեն երկու տապանագիր ժամանակին եղել է Երևանի Կոնդ թաղամասի «Կոնդենի գերեզմանոցում»: Պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը 1934 թ., ի թիվս այլ արձանագրությունների, ընդօրինակել է և այս երկուսը, սակայն, գրերը մաշված լինելու պատճառով, վերջին տողերը մնացել են առանց վերձանություն³⁹: Քանի որ վրացերենը հայերեն տապա-

³⁴ Գալուստ Ներմազանևան, երևելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 311—323:
³⁵ Գ. Շերմազանյան, նշվ. աշխ., էջ 315, հմտ. և. Մելիքեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 65:
³⁶ Նույն տեղում, էջ 314:
³⁷ Նույն տեղում, էջ 315:
³⁸ Օնդաբանական համապատասխան տախտակը տե՛ս և. Մելիքեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 67:
³⁹ Տե՛ս Կարո Ղաֆաղարյան, Երևան (միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները), Ե., 1975, էջ 47, 185, 188:

նագրի թարգմանություն է ներկայացրել, կարելի է հեշտովյամբ կուահել վերականգնելիբրը:

1. «Կոնդի գերեզմանոց, Կոնդենի մատուռի ամ մուտքի մոտ, պատի տակ».

- 1 Այս է տապան Թիվիզ-
- 2 էջի Անդէնէնց
- 3 Անշափին, որ է որդի
- 4 նորիմանի: Թվ: ՌՃԿԿ (=1714 թ.)

- 5 Ե. ցեց Նազլ[աց]ի Նահոմ-
- 6 Ն[ա] Նջոլի օնհագ<օ>
- 7 [Շտեղլոցոնս օրն.
- 8 Մլոլս հլոլ-նա].

Ե I (23)

Թարգմանությունն այստեղ ավելորդ է, որովհետև վրացերենն ինքնին թարգմանություն է հայերենից, մասամբ համառոտված (չկա կամ չի եղել Անդէնէնց— օնլլցնօտ տոհմանունը):

2. «Կոնդի գերեզմանոց, ...տապանաքարի հարթ երեսին».

- 1 Այս է տապան Թիվիզ-
- 2 էջի իէլիէնց Սա-
- 3 րգիսին, որ է որդի Ռն-
- 4 անին: Թվ. ՌՃԿԿ (=1715 թ.)

- 5 ցեց Նազլ[աց]ի Մոթօ-
- 6 լաթլոց Նեհոյ[ա]ն Մլոլի
- 7 ռօ(օ)նն [ժոն] Նարթիսնս.
- 8 [Մլոլս հլոլ-նա].⁴⁰

Ե II (24)

Հայերեն մասի համեմատությամբ վրացերենում կա երկու ուշագրավ ինքնատիպություն. Թիվիզլցի-ի փոխարեն այստեղ գտնում ենք մոխալաֆն (բաղաբացի), իսկ իէլիէնց տոհմանունը փոխանցված է ինչիկասաշվիլի (սպասելի էր՝ Նեյթյօնօ— ինչկանթ): Այս եղակի օրինակն իսկ մատնացուցում է, որ 17—18-րդ դարերի վիրահայոց պատմությանը վերաբերող վավերագրերը թարգմանելիս կամ մեկնարանելիս անհրաժեշտ է պահանջվիլիզ զգուշություն ցուցաբերել՝ տոհմանունը, հայրանունն ու ազգանունը միմյանցից հստակ պանաղանելու համար:

⁴⁰ Երկու արձանագրության ձևագիր ընդօրինակությունը տե՛ս նշվ. աշխ., էջ 164 և 185:

Կ Ո Շ

Կոշի եկեղեցու պատին եղած վրացերեն արձանագրության թեև լարան-րով է պայմանավորված Մ. Բրոսեի մոտ կառույցս «Գյուրջիբիլիսա» կոչելու պարագան¹: 1893 թ. Հայաստան այցելած Ն. Մառը նկատում է այդ արձանագրության գոյությունը, բայց հանդամանքների բերումով ստիպված է լինում նրա ընդօրինակությունն ու ուսումնասիրությունը հետաձգել: Տասնամյակներ անց նա գրում է. «Վրաց աղբյուրության տակ աճած ուշ հայկական քաղկեդոնականության նկատմամբ գոյացած հետաքրքրության կապակցությամբ անհրաժեշտ էր ընդօրինակել էջմիածնից 18 կմ հեռավորության վրա գտնվող Կոշի հալոց եկեղեցու վրացական արձանագրությունը, որ ես նկատել էի տակավին 1893 թվականին, բայց չէի ընդօրինակել հիվանդության պատճառով: Շտապելով Սվանեթ, [1913 թ. պեղումների ընթացքում] ես անձամբ չէի կարող այդպիսի ուղեորություն ձեռնարկել [դեպի Կոշ], նրա կատարումը հանձնարարեցի Հ. Ա. Օրբելուն՝ Ա. Վրուչի և ուսանող Գ. Զիտալայի հետ միասին: Չափազանց հետաքրքիր են այդ ուղեորության արդյունքները. միայն լուսանկարահանումները հասնում են 85-ի»²: Հ. Օրբելու թողած ձեռագիր ժառանգությանը ծանոթ մասնագետները տեղյակ են, որ հանգուցյալ գիտնականը վերծանել է Կոշում գտնվող բոլոր արձանագրությունները և մտադիր է եղել ապագայում հրատարակության պատրաստել³: 1913 թ.

¹ Տե՛ս «Mélanges Asiatiques», t. V, p. 118. Կոշի հնությունները նկարագրող Հ. Շահաթուրյանը նման անուն չի հիշում, ինչպես որ ծանոթ չէ և արձանագրության գոյությանը (տե՛ս նրա՝ «Ստորագրություն կաթողիկէ էջմիածնի և հինգ դատարան Արարատայ», հ. 2, էջմիածն, 1842, էջ 62—65): Կոշի մասին խոսելիս Ղ. Ալիշանի հիմնական աղբյուրը Հ. Շահաթուրյանի աշխատությունն է (տե՛ս նրա՝ «Ալրարատ», Վենետիկ, էջ 145—146): Գարսեղբերի այս գլուղում եղել և վրացերեն արձանագրության առկայությունը հիշատակել է Ք. Վերմիշերը (տե՛ս նրա՝ «Материалы для истории грузино-армянских отношений» СПб., 1904, էջ 73):

² Н. Я. Марр, Ани, стр. 123. Լուսանկարների թվի մեջ միջոցում կա. այդ ուղեորության ժամանակ, բոտ Օրբելու նամակի, «сняли в общем 57 фотографии» (տե՛ս «Հայագիտ. հետազոտ.», Ա., 300):

³ Արձանագրությունները ընդօրինակված են մատիտով և նրանց հրատարակության պատրաստիլը այժմ տեղում վերծանելուց պակաս ջանք չի պահանջում:

օգոստոսի 4-ին Ն. Մառին հասցեագրած նամակում Հ. Օրբելին ընդօրինակում է Կոշի վրացերեն արձանագրությունը և հաղորդում, որ երկրորդ արձանագրություն ևս կա՝ Այժմ, Խհարիկ, իմաստ չունի անդրադառնալ Հ. Օրբելու վերծանության լավ ու վատ կողմերին, բանի որ այն նախնական աշխատանք է: Նա ինքնուրույն միավոր է դիտել արձանագրության առանձնակի փորձարկված մի հատվածը: Գիտնականի արխիվում գտնվեց և այդ վերծանության տղարանային շարվածքի սրբազրական օրինակը, որը էական տարբերություն չունի նամակում եղած տեքստից և հետո է հեղինակին վայել վերծանություն կոչվելուց⁴:

Կոշի վրացերեն արձանագրության վերծանությունն ու հրատարակումը վիճակված էր իրականացնել ակադ. Ա. Շանիձեին: 1924 թ. մայիսին Խբիլիսի պետական համալսարանի նախաձեռնած զիտարշավի կազմում⁵ նա լինում է Կոշում, ընդօրինակում այն և տասնամյակներ անց, անհրաժեշտ ներածականով ու ծանոթագրություններով, հրատարակում ՎՍՍՀ ԳԱ ձեռագրերի ինստիտուտի «Տեղեկագրում»⁶: Հենց սկզբից ասեմք, որ Հայաստանի տարածքում պահպանված վրացերեն արձանագրություններից ամենահաջող ու ամփոփ հրատարակության արժանացածը Կոշինն է: Խոսքը ոչ միայն լուսանկարի ու զրչանկարի առկայությանն է վերաբերում, այլև բնագրի հնագրական նկարագրությանը, տեքստում գործածված տերմինների քննությունը և պատմա-բանասիրական օժանդակ նյութի վկայակոչմանը:

Վրացերեն արձանագրությունը վիճարկված է դուրդավերևի միանավ աղոթատան-եկեղեցու հարավային պատին, արևելյան վերին անկյունում, քիվին հարող երկու շարքի վրա⁷: Այս եկեղեցու շրջապատում է եղել Կոշի հանգստարանը, իսկ բուն գյուղատեղին ընկած է նրանից հարավ-արևելք:

Մեզ հետաքրքրող արձանագրությունը լավ է պահպանվել, ամբողջական է ու հստակ: Վնասված է երկրորդ շարքի մի երկու տառանիշ, որոնք հեշտ վերականգնելի են⁸: Ինչպես ճիշտ նկատել է Ա. Շանիձեն, արձանագրության

⁴ Այդ նամակը, ինչպես և Ն. Մառի ու Հ. Օրբելու ողջ գրադրությունը մենք հրատարակել ենք՝ «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, էջ 232—306:

⁵ Օրբելին զգացել է այդ, ուստի և ձեռնպահ է մնացել հրատարակումից:

⁶ Այն է՝ Գ. Չուրինաշվիլի (նախագահ), Ա. Շանիձե, Լ. Մելիքեթ-Բեկ և ճարտարապետ Ն. Սեբրով:

⁷ А. Г. Шанидзе, Грузинская надпись XIII века в сел. Кош, «Исторический сборник», I, 1959, стр. 7—19.

⁸ Ա. Շանիձեի հողվածում մրիպմամբ գրված է «եկեղեցու հյուսիսային պատի վրա» (նշվ. աշխ., էջ 7):

⁹ Կոշում տեղի ունեցած հայ-թուրքական, իսկ հետագայում՝ քաղաքացիական կոիվենտի ժամանակ այս ու մյուս եկեղեցիները պատսպարան են ծառայել, ուստի նրանց պատերին հրաձգությունից զոչացած վնասվածքներ կան: Վրացերեն արձանագրության երկու տառանիշի կորուստը ևս փամփոշյալից առաջացած փոսիկով է պայմանավորված: Սույն եղևությունների մասին տողերիս հեղինակին պատմեց ս. Գեորգ եկեղեցու պահպանությունն ինքնակամ ստանձնեցած 86-ամյա մի կոշեցի, որը այդ ամենին ակնատես է եղել:

ա) Կոշի արձանագրության մեջ ՆձՅՆՅՅԵԼՕ է. և ոչ ՅՄՕՆԵՆՕ. Որևէ հրաշխիք չկա, որ այդ տերմինը անպայման գուրաճ հասկանանք է ոչ՝ առոճ, մանավանդ որ օրավար չափի միավորի հիմքում արորավարն է ընկած, գոնե վաղ շրջանի համար¹⁸:

բ) Արձանագրությունը գրված է Արագածոտնի Կոշ գյուղում, այն էլ, ինչպես Ա. Շանիձեն է նկատում, թերևս վրացերենին ոչ շատ հմուտ հայի կողմից¹⁹ (այդ վկայվում է առկա ոճական անհարթություններից), ուստի տերմինի իրական նշանակությունը ճշտելիս ելակետ պետք է ունենալ տեղում գործածական նորմը, որով անհավանական է դառնում գուրաճ և այստեղից՝ մեկ օրվա գուրաճավար մեկնաբանությունը: Արագածոտնում չափական միավորը օրավարն էր, արորով հաշված:

գ) Ա. Շանիձեն գրում է, որ եթե ՆձՅՆՅՅԵԼՕ տերմինը հասկանաճք իբրև հողի չափի միավոր և հավասարեցնենք նրան փոխարինած ՅՄՕՆԵՆՕ և ԸԸՕՆԵՁ տերմիններին, ապա նրա տարածքը Կոշի պայմաններում կլինե՞ր, հավանաբար, շուրջ 0,7 հեկտար²⁰: Արդյոք հնարավո՞ր բան է, որ Իվանեն ու նրա կիներ կոշեցիներին ազատելն երկու ծանր հարկից՝ շարխաթից ու ցորենի վալաթից, դիմացը ստանալով ընդամենը 0,7 հեկտար հող, երբ վերջինիս բերած եկամուտը Կոշի պայմաններում պարզապես չնչին էր լինելու²¹: Այդ մասին նույնիսկ դժվար պիտի լինե՞ր հատուկ արձանագրություն թողնել:

դ) Արձանագրի հեղինակները մասնավոր կարգով շեշտում են, որ այդ «մեկ սախնվելը» մշտապես իրենց համար է լինելու: Հազիվ թե Զաբարյանները առիթ ունենալին մեկ-երկու տասնամյակ առաջ իրենց ազատագրած գյուղում կամ զավառում 0,7 կամ նույնիսկ 1 հեկտար հողի համար հարկաչին նման պիտու՞նեք անել: Այդ հողը առանց պի՞ման էլ որպես իրենց սեփականություն էր ճանաչվում. եթե խոսքը հողաչին միավորին վերաբերե՞ր, ապա մշտապես իրենց համար լինելը չէր շեշտվի, քանի որ այդ ինքնին հասկանալի է:

ե) Մեկ օրավար հողի մշակումը մեկ գյուղի համար ընդամենը ժամերի աշխատանք է, ուստի նման մեկնաբանության պարագայում անհասկանալի է մնում «ձեր եղով ու իր սարվածքով (սարքով)» արտահայտության անհրաժեշտությունը: Շատ բնական է, որ գյուղացիներն իրենց լծկանով ու գործիքներով էին այդ անելու: Նշանակում է, արձանագրությունը ավելի մեծ աշխատանք պետք է նկատի ունենար՝ այդ պարագան մասնավորապես շեշտելու համար:

զ) Եթե ՆձՅՆՅՅԵԼՕ տերմինի տակ օրավար հող հասկացվե՞ր, ապա գյուղացիներին պատկանող լծկանի ու սարքի հետ միաժամանակ պիտի

¹⁸ Հմտ. Ռ. Հ. Վարդանյան, Ցրավարը որպես հողի մակերեսի չափի միավոր, ՊԲԶ, 1962, № 2, էջ 195:

¹⁹ Տե՛ս Ա. Շանիձե, նշվ. աշխ., էջ 9:

²⁰ Նույն աղբյուր, էջ 16:

²¹ Ցրավարի չափերի ճնշությունը ըստ ազգագրական նյութերի տե՛ս Խ. Вермишев, Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказ-

նշվե՞ր և գուրաճը կամ առոճը, որովհետև լծկանի սարքի մեջ մտնում են լուծը, սամին, փոկը և ալնը, բայց ոչ ամենահիմնականը՝ արրը կամ գոթանը: Ա. Շանիձեն օրինակներ է բերում խեսուրական բառարանից, Գուրխայի երկրագործական տերմիններից և հավաստում « ՅճՐՕՆ օճՐՕԼՕ » (եղան սարք) արտահայտության գոյությունը՝ գուրաճ իմաստով: Բայց պիտելու է, որ խեսուրական կամ գուրխական տվյալները դժվար է համաձայնեցնել կամ նույնացնել Կոշում եղածի հետ և ապա՝ արձանագրության յօսուտա շտրճլուտա -ն վերաբերում է ՆձՅՆՅՅԵԼՕ -ին և ոչ թե ՅճՐՕ -ին:

Ահա այս պատճառարանություններով է, որ արձանագրության ՆձՅՆՅՅԵԼՕ -ն մենք հասկանում ու թարգմանում ենք առոճ և ո՛չ օրավար կամ գուրաճավար²²: Դրանով իսկ բոլորովին փոխվում են կոշեցիների սահմանած պարտույթի բովանդակությունն ու չափը: Նրանք պարտավոր են եղել ոչ թե մեկ օրավար հող իրենց եղով ու սարվելով միշտ պատռոնի համար մշակել, այլ մեկ առոճ իրենց եղով ու սարվով մշտապես գործել է պատռոնների համար: Ինչ խոսք, մշտապես գործող այդ մեկ արրը (մեկ մաճը) անհամեմատ ավելի շատ հող կմշակե՞ր, եկամուտ կտա՞ր, քան որևէ չափի օրավար հողն է:

Արգարության դեմ չմեղանշելու համար պիտի ասել նաև, որ Ա. Շանիձեն վերադասությունը է առաջարկել ՆձՅՆՅՅԵԼՕ -ն օրավար հասկանալ, իսկ հողվածի վերջում անհրաժեշտ է նկատել անգրագանալ, թե հիշյալ արտահայտությունը կարելի է մեկնաբանել և այլ կերպ, թարգմանելով՝ а вы установили, чтобы один плуг с вашими быками и его (пруга) принадлежностями был для нас²³:

Վերևում փորձեցիք ապացուցել, որ իրականը հենց այսպիսի ընկալումն ու թարգմանությունը պիտի լինի, միայն մեկ անհրաժեշտ սրբագրությամբ՝ плуг-и (գութան) փոխարեն բառ տերմինը գործածելով (վերջինս կարող է և՛ առոճ նշանակել, և՛ գուրաճ կամ վեցկի):

Կոշի վրացիներն արձանագրությունը, ինչպես որոշ այլ նման հուշարձան-հիշատակարաններ, թվական չունի, ուստի նրանում հաղորդված տեղեկությունները զնահատելու համար հարկադրված ենք գրության ժամանակը ճշտել ըստ օժանդակ աղբյուրների: Ակադ. Ա. Շանիձեն հիմնականում այդ արել է՝ վիժագրման ժամանակը սահմանելով 1214 թվականից հետո (Զաբարխայի մահը)²⁴, բայց մինչև 1219 թ. (Իվանեի աթաբեկ լինելու

ского края, Тифл., 1887, т. IV, ч. I, էջ 234—236, հմտ. Ռ. Հ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 191—196:

²² Թարգմանության մեջ գուրաճ (գրաբ. գուրալ) տերմինից խոսափում ենք այն պատճառով, որ բառս միջնադարյան աղբյուրներում հազվադեպ գործածություն ունի (տե՛ս ՆՁԲ, II, 1049), ինքն էլ արորի մի տարատեսակն է:

²³ Նշվ. աշխ., էջ 17:

²⁴ Վարդանը Զաբարխայի մահը հիշում է հուլից 661 (1212) թվականի տակ (տե՛ս նրա՝ «Հաւարումն պատմութեան», Վենետիկ, 1862, էջ 140), իսկ ըստ Ստեփանոս Եպիսկոպոսի (Ցորեկյան) այն տեղի է ունեցել 1213 թ. (տե՛ս Վ. Հակոբյան, Մար ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 38, հմտ. էջ 55, ծան. 22):

Արագածոտնը ազատագրելու համար: Զաքարիա և Իվանե եղբայրները այստեղ հայերեն բազմաթիվ հիշատակարաններ են վիժարել: Նրանք Արագածոտնին առաջին անգամ տիրացել են 1191 թվականին, որի վիճակը թույլը այդ թվականին Փարպիում Զաքարիայի թողած արձանագրությունն է³⁶: Ա. Շահինյանի արգարացի կոստանոմբ, Զաքարիայի արգարացի կոստանոմբը այդ ընթացքում չեն կարողանում գրավել Անրեղը, ուստի ետ են բաշխում³⁷: Այդ ամբողջական նվաճումը տեղի է ունեցել հինգ տարի անց՝ 1196 թ³⁸: Ճիշտ է, Ա. Շահինյանը փորձեց վերանայել այս թվականը, հիմք ունենալով Կոշում Պետրոս Ականատեսի կանգնեցրած կոթողի արձանագրության ավյալները (1195 թ.)³⁹, բայց դա պարզապես սխալ հաշվարկման արդյունք է: Պետրոսը «հոր սկիզբ» ազատարարներին տեսել է ՈՒԿ (1175) թվականին, իսկ «եւ մին այդ լուսարթին խաւարեցաւ արն[գահն]», որ նշանակում է հաջորդ տարին՝ 1176: Եվ իրոք էլ այդ տարին խավարում է եղել⁴⁰, լրիվ խավարում (1176 թ. ապրիլի 11-ին), որի մասին խոսում է Դ. Քորայրեցին⁴¹: Պետրոս Ականատեսը այնուհետև հշտում է, թե «ղրղեցաւ երկիր, եւ յետ Ի (20) ամի տեսի Զաքարէ եւ [Իւանէ]», երբ «սրբեցաւ երկիրս մեր եւ պաշտոնացան եկեղեցիք Հայաստանեայց»: 1176 թվականից անցել է 20 տարի (=1196) և Զաքարյանները ազատագրել են երկիրը՝ Արագածոտնը⁴²: Թերևս այս անգամ էլ, պարզապես թեթևաբանությամբ, նրանք երկար չեն մնացել զավառում, և Արագածոտնը նորից անցել է «աղախնայծին որդոյն հաքարու»⁴³, վերջնականապես ազատվելով միայն 1199—1200 թվականներին, ինչպես հավաստում է Անրեղի մատուցյնրում կանգնեցված խաչքարի արձանագրությունը⁴⁴: Իհարկե, Զաքարիան կամ Իվանեն նշանակալիորեն պիտի թեթևացնեին տեղիս բնակչությունից գանձվող հարկերը, բայց ոչ վերացնեին: Վերջին կարգի արտոնագրեր նրանք կարող էին տալ եկեղեցականներին, ինչպես որ դեռ 1191 թ. Զաքարիան «էր ազատ արարել զՓարպո իրիցանիս յամենայն հարկէ»⁴⁵:

Արագածոտնը ազատագրելուց հետո Երկայնաբազուկ եղբայրները հարկերից ազատել ու նոր կալվածներ էին նվիրել և Կոշավանքին, առ այդ թողնելով այսպիսի մի արձանագրություն. «Ես՝ ամիրսպասաւարս Զաքարիա

³⁶ Նոր հրատ. տե՛ս Ա. Ն. Շահինյան, նշվ. աշխ., էջ 200—201:
³⁷ Տե՛ս անդ:
³⁸ Վարդան, նշվ. աշխ., էջ 138, «Մանր ժամանակագրություններ», II, 136:
³⁹ Ա. Ն. Շահինյան, նշվ. աշխ., էջ 201—202:
⁴⁰ Տե՛ս Չ. Ս. Բաղդյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 494:
⁴¹ Տե՛ս Վ. Հակոբյան, Դավիթ Քորայրեցու հիշատակարանը («Տեղեկագիր», 1952, № 8, էջ 115 և 119):
⁴² Ուրեմն, արձանագրության թվականը պիտի վերականգնել ոչ թե ՈՒԿ, այլ՝ ՈՒԵ:
⁴³ Ուշագրավ է Ա. Շահինյանի այն ենթադրությունը, թե Արագածոտնը պատկանել է Անիի Շեղագյալաններին (նշվ. աշխ., էջ 202):
⁴⁴ Նոր հրատ. տե՛ս Ա. Ն. Շահինյան, նշվ. աշխ., էջ 199—200, մատենագիտությունը՝ անդ, ծան. 12:
⁴⁵ Անդ:

և Իւանէ կամուր և ողորմութեամբն Քրիստոսի առաք զերկիրս Հայոց ու տուեցանք հայրենի աշխարհս մեր: Յայս ժամանակիս տեսա՛ զվարդապետս Պետրոս՝ սպասաւոր սրբոցս նշմարիս եւ... և աղարարաւ, և տուա՛մ ի սուրբ ուխտս զտեղեկո՛ւր՝ որ իւր ջրով և նանդովն և լեւամբ և դաշտով, և... վերստին դարձուցա՛մ ի սուրբ եկեղեցիս և աղբիւրն Ասանա: Եւ զինչ հայրենիք կա ի գաւառիս՝ ազատ յամենայն յարկէ և [հաստատեցա՛մ] հայրենիք սմա և ողորմութեամբս, որ առ յալիսեան: Եւ վարդապետս միտրանքս հաստատեցին... ինձ և ի յիջումն հոգոյն սրբոցս զառապ խորանն ինձ Զաքարիայի և այլն՝ հասարակաց պատարագել զՔրիստոս:» Հարկեցի թեթևացումը տեղի էր ունենում աստիճանաբար, երբեմն այս կամ այն հարկատեսակը վերացնելու (իմա՛ թողնելու), երբեմն էլ այլ հարկով փոխարինելու ձևով: Կոշի վրացիներն արձանագրության մեջ առկա են հիշյալ երկու եղանակներն էլ: Իվանեն կոշեցիներին թողել-ազատել է Վերին հանդամասի շարխաթից, իսկ Վարի հանդամասի անշուքից սահմանելով մեկ արոր մշտապես իրենց է ազատել, այդ երկուսի դիմաց սահմանելով մեկ արոր մշտապես իրենց համար գործելու պարտույթ: Թեև վերջինիս ստույգ նյութականացված արժեքը մեզ հայտնի չէ, բայց, անշուշտ, նշանակալիորեն պակաս պիտի լիներ, քան Վերին սահմանի շարխաթն ու Վարինի՝ ցորենի զալանն էին միասին վերցրած⁴⁶: Ն. Մատի, Հ. Մանանդյանի, Ս. Եղիազարյանի, Ս. Հակոբյանի և այլոց ուսումնասիրությունների շնորհիվ շարխաթ հարկատեսակի հետ կապված կարևոր շատ հարցեր լուծված են⁴⁷. այն հողից, հացից ու հացաբույսից, այգիներից, անասուններից, բամբակից, յուղից ու ձկնից ավատատիրոջը արդյունքով կամ դրամով տրվող հարկ էր, արդյունքի 1/10-ի չափով (գոնե 13-րդ դարում է, թե «թողար զՄբենոյ սասնակն հացին, որ է շարխաթն»)՝ Պիտի ենթադրել, որ Իվանեն ու Խոշան կոշեցիներին ազատել են «Վերին հանդասահմանի» հողային շարխաթից, այսպես նրանք կամանավորեցնեին, թե խոսքը հողից ստացվող որ արդյունքի մասին է, ինչպես այդ արել են «Վարի հանդասահմանի» անշուքից: Բայց այս զեպքում արդեն նրանք այլ հարկանուն են տալիս՝ զալալ, որի հետ կապված որոշ հարցեր դեռ պարզված չեն: Նախ դիտենք, որ վրացիներն արձանագրության ընթացքում որևէ կասկած չի հարուցում: Թեև Վ-ն գոչացած փոստրակից մնասվել է, բայց պահպանվել է նրա վերին հատկանշական կիսաղեղը, և Ա. Շահինյանի վերականգնումը միանգամայն ճիշտ է: Ինչ վերաբերում է բառավերջի կիսաձայն ջ-ին (հյ. յ), ապա թերևս զործ ունենք ոչ այնքան վրացիներն օ—ջ հնչյունափոխության, որքան հայերենում

⁴⁶ Այդ պարզորոշ բխում է արձանագրության շարադրանքից, որ ավելի շատ խոսվում է րողնելու մասին, քան սահմանելու:
⁴⁷ Գրականությունն ու բնությունը տե՛ս Ս. Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Երևան, 1957, էջ 402—409:
⁴⁸ И. Орбели, Надписи Мрена, «Հայագիտ. հետազոտ.», Ա, էջ 39:

բառավերջի բաց վանկի ա-ից հետո յ կիսաձայն գրելու ընդհանրական ավանդույթի հետ⁴⁹: Այս տերմինը ես, 11-րդ դարից սկսած, անծանոթ չէ Հայաստանի վիճազիր արձանագրություններին: Պրոֆ. Ս. Հակոբյանը մասնատուցում է բառի արձանագրական վեց վիճակային⁵⁰: Նրանցից մեկը Արու Սևիթի՝ Անիի մզկիթի պատին թողած պարսկերեն արձանագրության Ղ. Ալիշանի թարգմանությունն է⁵¹, որը, ինչպես Անիի արձանագրությունների մասին խոսելիս նշեցինք, ամենին ստույգ չէ: Պարսկերեն բնագրում ասված է՝ «از هیج افرادی بملت قنات و نمازی و طرح و غیره چیزی نخواستند»⁵²: « ոչ մի արարածից դալանի, նեմարի, թարհի ու այլ պատրվակով ոչինչ չուզեն»: Ուրեմն խոսքը դալան հարկի մասին է և ոչ՝ խալա-խալե⁵³: Սրբագրելի է նաև Սահմադիրն՝ 1273 թ. Մրենում վիճազրված արձանագրության խալալը. «Վիճական տարեգրում», որից օգտվել է Ս. Հակոբյանը, առկա է «ի խալալ և չերրորդ հարկէ»⁵⁴: Ակադ. Հ. Թրբելու հիշյալ վերձանություն մեջ ունենք. «ի նալալ և յաւելուդ հարկէ»⁵⁴:

Բարեբախտաբար, Մրենի արձանագրությունների տախտակներից մեկում պահպանվել է այս նշանակալի հիշատակարանը, որի ուսումնասիրությունից պարզվում է, որ սրբագրելի են առկա բոլոր վերձանությունները. այնտեղ վիճազրված է «...այգիբն Մրենո և Աւշականո ի խալալ և յրդ հարկէ...»⁵⁵: Խալե տերմինի ճշտումից հետո նկատենք նաև, որ յրգ կրճատություն բացումը իբրև յաւելուդ չի պատճառարանվում: Ն. Սարգիսյանը զգուշության թևադրանքով այն չի բացել (թողել է՝ յրգ), Ղ. Ալիշանը կարդացել է յերուդ, որ ավելի ընդունելի է, քան Հ. Թրբելու առաջարկած յաւելուդ-ը⁵⁶: Մի խոսքով, խալե տերմինը հայերենում վկայված է

⁴⁹ Երբեմն նույնիսկ հրամայականով գրված կարգա-ն գրվում է կարգայ: Օրինակների վկայակոչությունը տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիճական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, հնչյունափոխ. տախտակ:

⁵⁰ Ս. Ս. Հակոբյան, Եզվ. աշխ., էջ 419—421: Վրացական աղբյուրներում ԼՁԼՁ տերմինի անդրանիկ գործածության հանդիպում ենք 893—918 թվականների միջոցին գրված «Շիրմզվիմի հարկագրում» (տե՛ս «ქართველი სამართლის ძეგლები», II, տձ., 1966, 33. 4).

⁵¹ «Շիրակ», էջ 56:

⁵² Ա. Շանիձևի հոդվածում հակառակ է տեղի ունեցել. Թալինի 1267 թ. (resp. 1307) արձանագրության բնագիրը վկայակոչելիս («...թողի զիմ հայրենիք զեղխ»՝ զՔանայ գինոյ խալե վաս...») հայերենի որոշյալ առման նա ընդունել է իբրև արմատական, ուստի թարգմանել-տառադարձել է калан—ყოლი — قنات (Եզվ. աշխ., էջ 13), մինչդեռ գա խալալ-խալե հարկն է:

⁵³ «Վիճական տարեգիր», էջ 116, նույնն է՝ Ն. Սարգիսյան, Տեղագրությունը..., էջ 198, Ղ. Ալիշան, Շիրակ, 139:

⁵⁴ «Надписи Мрена», стр. 39.

⁵⁵ Խալալ ընթերցումը խալալ է սրբագրել դեռ Թադ. Ավգաբրեգյանը (տե՛ս նրա՝ «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 394, ծան. 122): Հմմտ. «Հայագիտ. հետազոտ.», Ա, էջ 39):

⁵⁶ Թադ. Ավգաբրեգյանը առաջարկել է սրբագրել (իր խոսքերով՝ թերևս պետք է կարգալ) «Կ նարկի», որ ձևերի տակ լուսանկար շունենալու պատճառով առաջացած թյուրմացություն է (Եզվ. աշխ., էջ 395, ծան.):

Անիում (Արլլարիբի եկեղեցի, 1036 թ.)⁵⁷, Թալինում (1307 թ.)⁵⁸, Մրենում (Սահմադիրնի 1273 և 1288 թվականների արձանագրությունները)⁵⁹, շորս անգամ⁶⁰: Սահմադիրնի վիճազրբում խալե վերաբերում է այգիներին («այգիբն Մրենո և Աւշականո ի խալալե...») կամ այլ ևս՝ ստացած գինուն («...թողար զեղխն գին և խաղողի խալե»), ինչպես որ Աղբյուրայինը Թալինում («...թողի ...զՔանայ գինոյ խալե...»): Այստեղից Ս. Հակոբյանը իրավացիորեն եզրակացնում է, թե «խալե այգիներից, պտղատու ծառերից, ողելից խմիչքներից զանձվող հարկն է»⁶¹: Նա միաժամանակ նկատում է, որ քննությունից դուրս է մնում Անիի արձանագրության տեղեկությունը, ուր ասված է. «...կամ եղև ինձ՝ տեառն Պետրոսի հայոց կաթողիկոսի տալ զայգին Աշնի... Արդ, ստար (զայգիս—Պ. Մ.) որմով և ծառով՝ պողարերով և անպողար, և խոտագետնով և Գ ար ջուր՝ ազատ ի խալալ և ի զեղչէ յամենայն հասուց...»⁶²: Փաստորեն այստեղ էլ խալե (հիշար՝ խալա-ն) այգուն է վերաբերում և ոչ երբեք ջրին, ինչպես, հավանաբար, թվացել է հեղինակին: Հիշյալ քննարկումից պարզ է արդեն, որ Կոշի վրացերեն արձանագրությունը զալա-ն բուրբուղին այլ բովանդակություն է վկայում: Նրանում պարզիպարզո ասված է՝ «...վարի [հանգա]սահմանի միայն ցոբն զալայից է ազատված կոշեցի մարդը»: Խնդրի արժարծումը շատ կհեշտանար, եթև ենթադրենք, թե խալա-ն ու զալանը (խալանը) նույն հարկն են, ինչպես կարծել է Թադ. Ավգաբրեգյանը, խալա բառը խալանի (նույն՝ զալան) ազատված ձև համարելով⁶³: Հ. Աճառյանը ընդունել է այս ստուգաբանական նույնացումը⁶⁴, Ստ. Մալխասյանը՝ հարցականով⁶⁵: Իրականում նման ստուգաբանական նույնություն չկա. խալա-ն (վրց ԼՁԼՁ)

⁵⁷ «Գիվան», I, 48:

⁵⁸ «Վիճական տարեգիր», էջ 110—111:

⁵⁹ Н. Орбели, Եզվ. աշխ., էջ 38—39:

⁶⁰ Մենք համոզված չենք, թե Ս. Հակոբյանի վկայությունը (Եզվ. աշխ., էջ 420) նորավանդի 1296 թ. արձանագրության («...ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ի դիսան, ի խալալե և յամեն շորէ...» (տե՛ս, Գիվան, III, 216) ի խալալե-ն խալե պիտի հասկանալ (արար. Ժճ) և ոչ զալան (պարսկ. قنات):

⁶¹ Եզվ. աշխ., էջ 420:

⁶² «Գիվան», I, 48:

⁶³ Տե՛ս Եզվ. աշխ., էջ 395:

⁶⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Գ, Երևան, 1930, էջ 317—318:

⁶⁵ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայ. բաց. բառարան, II, 228: Այս երկու հեղինակների մտախալայի առկայությունը վրիպել է Ա. Շանիձևի ուշադրությունից, ուստի կարծել է, թե բառը հայերեն բացարաններում գրանցված չէ (Եզվ. աշխ., էջ 13, ծան. 11): Խալալ-խալե-ն դիմորոշ հոդով հնչյունափոխությունը Թադ. Ավգաբրեգյանը սրամտորեն համեմատում է ծառ-ծառն, փեսա-փեսն փոփոխությունների հետ (Եզվ. աշխ., էջ 395, ծան. 123): Կան և միջնադարյան վկայված օրինակներ (տե՛ս Ս. Ավագյան, Եզվ. աշխ.): ԼՁԼՁ—Կ ԼՁԼՁ նույնացման փորձ կատարել է դեռ Ն. Չորիեաշվիլին՝ անցյալ դարի կեսերին (տե՛ս նրա՝ «ქართველი ლექსიკონი რუს. თარგმანით», տձ., 1961, 33. 408).

որի միաբաններից էր Զարբայանների գալուստը երազող և որմնափակ խաչքարի արձանագրությամբ այն ավետող Պետրոս Ականատես վարդապետը: 1172 թվականին այստեղ է գրվել Եղիշեի Պատմության, այժմ բանասիրությանը բաշ Հայանի, ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. № 1890), Գավիթ գրչի ձեռքով, որ հիշատակագրել է. «գրեցի զսա ի վանս Կոշա, ընդ հովանեա սրբոյ Ստեփաննոսի, ի մէջ սիրելի եղբայրութեանց»⁷⁴: Ի վանեն զանց շէր առնի այդ հեղինակավոր «եղբայրության» (իմա՛ միաբանության) գոյությունը, մանավանդ որ իր կառուցած եկեղեցուց մի քանի մետր ներքև, այժմյան ս. Գեորգ եկեղեցու տեղում, նշանավոր սրբարան կար՝ ս. Գեորգի, թև Գեորգ Մարգարտունու (այժմ այդպես է մեկնարանվում) նշխարների մատնացուցումով: Այս ամենը, ինչ խոսք, նկատի պիտի ունենար Իվանեն՝ նոր ազոթարան կառուցելիս:

Զարբայան տան շտապիղիները հարյուրամյակից ավելի տիրեցին Կոշին ու գավառին՝ սատարելով տեղիս գրիչների մշակութային գործունեությունը: 1333 թ. «ի սուրբ ուխտս Կոշայ» գրված ճաշոցի գրիչ Հակոբը արեշատություն է մաղթում Արագածոտնի վահրամ իշխանին՝ «որդոյ Մեծին Իւանէի» (իմա՛ Իվանե Բ), «զոր և տէր Յիսուս պահեսցէ զսա խաղաղական կենօք և երկար ժամանակօք՝ ամենայն հեծելագօրօքն իւրովք, փառաց ի փառս բարձրանալով, և զարացուցէ զսուր նորս ի վերայ քչնամեաց իւրոց»⁷⁵:

⁷⁴ Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1950, էջ 412:

⁷⁵ Գ. Հովսեփյան, Խաղաղական կամ Պոռշյանք Հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 21, ծան.:

Ք Ե Ժ Ա Ռ Ո Ւ Յ Ք

Փամանակակից Մեղրածոր գյուղից ոչ հեռու (հնագույն անունը՝ Թեմառույլ, որ օտարագրիչների կողմից աղավաղվել ու դարձել է Թալառույլ), բարձունքի վրա կա մի եկեղեցի, որը մերթ կոչվել է Գյուրջիբիլիսա (վրաց եկեղեցի), Ռեաամալի եկեղեցի, երբեմն էլ Թուլս մանուկ կամ նույնիսկ՝ Պղնձահանք: Նրա անդրանիկ նկարագրությունը կատարել է Հ. Շահխաթունյանցը. «Հեռի յեկեղեցեացն Կեշառուաց ընդ արևմտեան հիւսիս աւելի քան զմի ժամ՝ հանդէպ Թալառուլս գեղջ, ի հարաւակողմն գետակին՝ ի հիւսիսային լանջի անդ անտառախիտ առապարին ի տափարակ դիրս է եկեղեցի բարձրակամար և անսին օրոյցաձև, կառուցեալ միջակ մեծութեամբ, ուր հետախոյզ եղեալ մեր՝ շտաբ զարժանաւոր գրուած ինչ հայացի, այլ ի բարձրութեան անդ եկեղեցուցն արտաբուստ յատրե քան զբուխն տանեաց տեսանէր միակարգ գրուած շրջապատեալ զեկեղեցեան վրացի տառիք. ունէ՞ր տաճարն շուրջ զիւրե զաւերակս քառակուսի պարսպի և առ նովա սենեկաց թողեալ ի մացառուսս և ի թուփս, ուստի և եղեալ է յառաջագոյն մենաստան՝ թերևս յիշխանութեան վրաց ի ժամանակս Զարբաիա մեծանուն սպասալարի հայազգույ: Աստի ի վեր անդր ի ձորամիջի, ուր փոքր ինչ հեռի յարևմուտս, է Պղնձահանքն, որ այժմ կա անգործ, և առ նովա աւերակք շինուածոց՝ թերևս գործատրաց նորին»¹: Սույն տեղեկանքը տասնամյակներ անց կրկնված ենք գտնում Ղ. Ալիշանի «Այրարատում», որոշ լրացումներով²: Կարևոր է դիտել, որ Ղ. Ալիշանը հրապարակել է «Կիրճի գիրխէի» հատակագիծն ու հարավային ճակատի շափագրությունը³: Այս վերջինից կարելի է հավաստիանալ, որ 90-ական թվականներին, երբ հուշարձանը շափագրվում

¹ Յովհաննէս Եզս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ, հ. 2, էջմիածին, 1842, էջ 200—201:

² Վենետիկ, 1890, էջ 258—259: Այսպես, Հ. Շահխաթունյանցի տեղեկությամբ Թալառուլս գյուղը ունեցել է 44 տուն (նշվ. աշխ., էջ 203), իսկ Ղ. Ալիշանի մոտ՝ շուրջ 50 (նշվ. աշխ., էջ 279):

³ Նշվ. աշխ., էջ 278—279:

էր, հարավային պատի արձանագրությունը կրող երկու շարքերից միայն մեկ քար է ընկած եղել (տառչին շարքի 6-րդ քարը):

Եկեղեցու հաջորդ և ավելի հանդամանալից նկարագրությունը պատկանում է Ե. Կալայանին: Նա փորը-ինչ մանրամասնել է Եկեղեցու ներքին ու արտա-բին տեսքի նկարագրությունը և կատարել րոշ լրացումներ. նախորդ հեղի-նակների մոտ խոսք չկա արևելյան հակատի մասին, մինչդեռ Ե. Կալայանը դիտել է, որ «Արևելյան հակատին կա մի երկար և նեղ պատուհան, որի վերև երկու բարձրաբանդակ աղավնի, կողքերին մի-մի ոտղաս: Փոքր-ինչ ներքև՝ վրաց խուցուրի տառերով մի եղծված արձանագրություն» և ապա՝ «Տաճարի մեջ կան մի քանի գերեզմանաբարեր, որոնցից երկուսի վրա կան խուցուրի տառերով տապանագիրներ»⁴:

Անցյալ դարի վերջերին կամ 20-րդ դարի սկզբներին Թեժաուլը է այցելել և վերծանության փորձ արել հին վրացերենին ու գրչությանը ոչ լավա-ծանոթ ինչ-որ մեկը (նրա «վերծանությունը» պահպանվել է ՎՍՄՀ Գ.Ա. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի Տ-3863 ձեռագրում): Այդ փորձը, սակայն, այսօր որևէ նպաստ չի բերում՝ դեթ ընկած քարերի վրա լինելիք վերականգնելիս: Ենթադրելի է, թե ձեռագրում պահպանվածը անշուշտ ունենա Մ. Սմբատյանիցի տեղում 1895 թ. կատարած ընդարևակության հետ, որ նա փորձում էր կարգավ Սվետիցիսովիլի սպասավորների օգնությամբ⁵:

1920-ական թվականներից Թեժաուլի վրացերեն արձանագրություն-ներն ու Եկեղեցու հետ կապված հարցերը սկսում են զբաղեցնել հանդուցյալ պրոֆ. Լ. Մեխիսթ-Բեկին: Տակավին 1925 թ. (14/12) նա «Պղնձահանք վանքի տեղագրության հարցի շուրջ» թեմայով զեկուցում է կարդացել Կովկասի պատմության և հնագիտության ինստիտուտում, իսկ մի քանի տարի անց ծանոթություն հրատարակել, ըստ որի «այս վանքի մասին մասնավոր հոգվածներ են պատրաստվում պրոֆ. Ա. Շանիձեի և մեր կողմից»⁶: 1936 թվականին տպագրվեցին նրա նախնական կոհանումներն ու դրույթները այս Եկեղեցու վերաբերյալ: Պղնձահանքի մասին պատմիչների հաղորդած տեղեկությունները վկայակոչելուց հետո, որոնց նշանակալի մասը նա վերագրում է «Բջնիի Պղնձահանքին» (իմա՝ Թեժաուլքին), Լ. Մեխիսթ-Բեկը գրում է. «Բջնիի Պղնձահանքի վրացերեն արձանագրությունների այն լուսանկարները, որ մեր տրամադրության տակ են, տալիս են մեզ որոշ հիմք արտահայտվելու, որ այն ոչ միայն քաղկեդոնիկ վանք է եղել, այլև, իրոք,

⁴ Ե. Կալայան, Նոր-Քաղկեդոնի գառն («Ազգ. հանդես», գիրք 24, 1913, № 1, էջ 60): Ցավոք, այցելության ժամանակ, Ե. Կալայանի իսկ խոսքով, «աստիկ սշուշը թույլ չույնջ լավ լուսանկարելու»:
⁵ Ջեռագրի նկարագրությունը տե՛ս «Քարտեզը եղևնաճորտա ղեկնաբանության», Տ—Մ, տծ., 1967, թ. 285. Հմմտ. Մ. Սմբատյանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գառնի..., Վաղ., 1895, էջ 366—369:
⁶ Լեւոն Մեղվեցի-ձեցի, «Խրոնիկոս մեարդեա Լոմեցեա մոմկարհի» և մասի ջեռնա, Լոմեց-Քարտեզը և Խրոնիկոս Լոմեցեան Լոմեցեան և Վաղ. 1928, թ. 58—59, Պջ. 5:
⁷ Լ. Մեխիսթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բ, Երևան, 1936, էջ 64—69:

Ջաբարիայի և Ավագի շրջանի կառուցվածք»⁸: Ապա Ղ. Ալիշանի, Ե. Կալայանի և այլոց նկարագրությունները բերելուց հետո, նա այսպես է ամփոփում իր ծանոթագրությունը. «Բայց և այնպես, այս մանրամասն նկարագրությունն էլ, բոլոր վերևում ասածի հետ, միանգամայն բավական է, որպեսզի թալարուխի (ըստ Ալիշանի՝ Ռնտամալի) եկեղեցին մենք քաղկեդոնիկ Պղնձահանքի վանքի հուշարձան բնորոշենք, որը հնարավորություն է տալիս Մխարրի վանքի հուշարձանի (Իվանի) և նրա որդի Ավագի անվան հետ կապել ինչպես Ջորաղեթի Պղնձահանքին, այսինքն այժմյան Ախտալան, նույնպես և Բջնիի Պղնձահանքին, այսինքն այժմյան Քալաբուրի (Ռնտամալի) եկեղե-ցիները: Հարցը միմիայն այն է, թե երկուսից ո՞րն է իսկական Հովհաննի (Իվանի) և Ավագի գերեզմանների տեղը: Թալարուխի վրացերեն արձանա-գրությունները դեռևս կարոտ են ստուգման, որ մենք մտադիր ենք անհավաղ գրությունները կառուցել, ապա և արձանագրությունները հրատարակել մեր աշխատո-թյան մեջ՝ «Վրացերեն արձանագրությունները Հայաստանում»⁹:

Դիտելու է, որ այս տողերը գրելիս Լ. Մեխիսթ-Բեկը դեռ չէր վերծանել Թեժաուլքի արձանագրությունը, այսպես նրա բովանդակության իմացու-թյունը հստակություն կմտցներ վկայակոչված դրույթների մեջ, գոնե չէր ասի, թե «Ջաբարիայի ու Ավագի շրջանի կառուցվածք» է, քանի որ նրանք փաստորեն ժամանակակիցներ չեն, իսկ արձանագրության մեջ արդեն ասված է, թե ով է կառուցել: Հայտնի է, սակայն, որ գիտնականը 60-ական թվա-կաններին ևս այցելել է հիշյալ վանքը՝ անշուշտ խոստացած ստուգումն ու կանխարձանները հետազոտելու համար: Թե ինչ արդյունքի հասավ շուրջ 40 տարի այս արձանագրության վերծանությանն ու մեկնաբանությանը հետաանու գիտնականը՝ չգիտենք¹⁰:

Այսպիսին է Թեժաուլքի շուրջը եղած գիտական հետաքրքրության համառոտ պատմությունը: Այս ու այնտեղ կան ուրիշ հիշատակություններ ևս, որոնք եղածի վրա որևէ բան չեն ավելացնում, ուստի և անհրաժեշտ չենք համարում դրանց անդրադառնալ¹¹: Փաստական իրողությունն այն է, որ առ այսօր Թեժաուլքի արձանագրությունները մնում են չվերծանված կամ չհրատարակված:

Գլխավոր արձանագրությունը, ինչպես ասվեց, վիճարկված է Եկեղեցու հարավային պատին, բիլին հարող երկու շարքում, պատի ողջ երկարությամբ: Առաջին շարքում գեոհոլված է մեկ, երկրորդում՝ երկու տող: Վերևում արդեն

⁸ Լ. Մեխիսթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 68:
⁹ Նշվ. աշխ., էջ 69:
¹⁰ 1963 թ. սեպտեմբերին, երբ աղագ. Ա. Շանիձեի Քրիստիի Համալսարանում հրատարակեց խոսք էր ասում անժամանակ վախճանված պրոֆ. Լ. Մեխիսթ-Բեկի հիշատակին, նկատեց, թե իրենք (Ա. Շանիձեի և Լ. Մեխիսթ-Բեկը) մտադիր էին հրատարակել Քալաբուրի արձանագրությունը:
¹¹ Նկատի ունենք՝ Յ. Տալան, Մատենագրական մանր ուսումնասիրությունը, 1, Վիեննա, 1895, էջ 30, 2. Ոսկանի մոտ («Արցախի վանքերը», Վիեննա, 1953, էջ 244—245) Պղնձահանքի ա. Աստուածածին վանքը շինված է Մախուսավանքի հետ, ուստի իրեն հիշատակարան բերված է Հորդանանի մեկ ծանոթ արձանագրությունը՝ «Կաման աստուծոյ ևս Յորդանանս շինեցի զԵկեղեցիս ի թվ. ՈՂ...», այն քաղկեդոնիկ «Արձագանքից» (1888 թ., էջ 363, նաև 101):

է terminus ad quem-ին, ապա ելակետային է Իվանի հաղորդած տեղեկությունը իր գրաված երկրների մասին: Նրա առաջադրույցումը հարավ հասել է մինչև Կեչառեցիների երկիրը կամ սահմանը, իսկ այդ նշանակում է, թե նա զեռ չի հասել Գեղարքունիք, Արարատյան դաշտավայր և ապա՝ Անի, այլպես դրանք թվարկումից դուրս չէին մնա կամ իբրև հարավային սահման կհիշատակվեին: Այդ նշանակում է, որ արձանագրությունը վիմագրվել է Անիի գրավումից ոչ ուշ, ուրեմն՝ մինչև 1199 թվականը: Իհարկե, Զաքարյան տան նվաճումների տարեգրության և տեղագրության մենագրական ապագա ուսումնասիրությունը առավել ճշգրտություն կարող է մտցնել այս խնդրում, բայց 1196—1199 թվականների միջոցին գրված լինելու փաստն ինքնին դոհացնում է արձանագրության քրոնիկոնը որոշելու մեր մտահոգությունը: Այստեղից բխում է մի կարևոր եզրակացություն. Իվանի քաղկեդոնական դառնալը տեղի է ունեցել մինչ այդ, որովհետև Թեմուրլեկի նրա կառուցած եկեղեցին կրում է այդ դավանությանը բնորոշ կառուցվածքային տարրեր: Մինչև այժմ ելակետ էր ծառայում 1205 թ. ուշացումով Անիի ժողով ներկայացած Մխ. Գոշի դիմումը, թե «Գուր հոգայք վասն ազգիս, զի մի այդպիսի սովորութեամբ խառնեցին ընդ վիրս, և ևս հոգամ վասն զօրավարիս, զի մի լիցի սա վրացի, իբրև զեղբայր իւր, որում սպասեն վիրք...»¹⁶: Ինչպես երևում է, հիշյալ դավանափոխությունը բավական վաղ է տեղի ունեցել, զեռ նրա՝ մասխուրթուխուցեսությունը շրջանում:

Վերադառնալով արձանագրության սկսվածքին՝ «արարիչ, որդ ելար Գոդգոթա՝ մեղ փրկելու համար, թո խաշափայտով հանդերձ նեղյալներին», պիտի նկատենք, որ այն թվագրված է Սալահադինի կողմից ճյուղաղանդը գրավելու փաստով (1187 թ.), «չորում յաղվեցան քրիստոնեակաչն՝ և անյայտ եղև սուրբ խաչն»¹⁷ կամ, Մխ. Գոշի արտահայտությամբ, «զերի վարեցա նշանն սուրբ հանդերձ թագաւորաւ և բազում զարարք»¹⁸: Քրիստոնյա շատ այլ երկրների նման մեզանում էլ հավատացած են եղել, թե խաչակրաց արշավանքները «տիրոջ գերեզմանը», «նեղյալներին» ու «խաշափայտը» փրկելու համար են ձեռնարկում, որ ակնարկված ենք գտնում և Իվանի արձանագրության մեջ: Երկու տասնամյակ անց, 1223—1224 թվականներին, Իվանեն այլևս ոչ թե ակնարկում, այլ ուղղակի նամակ էր գրում Հոռմի պապին (Ռուսուզան թագուհու գիտությունը ու նրա հետ միաժամանակ) և հայտնում, որ «ես աճամար պաաբասս եմ սուր վայրերը ապառաքելու զեղալ 40 հազար զօրակաճով, ուր էլ զու՛մ կամենա՛մ» և պատասխան ստանում, թե «այնպես

պատրաստվիր թո ողջ դորբով, ինչպես պատշաճ է մեծությունդ»^{18ա}: Արդ. խաչակրության հանդեպ Իվանի, և առհասարակ վրաց թագավորության ցուցաբերած հետաքրքրությունն ու շահագրգռությունը արդյունք էր ինչպես երկրի ռազմական կարողության, այնպես էլ արտաքին քաղաքական հարաբերությունների լայն ծավալի:

Թեմուրլեկի եկեղեցու նույն հարավային պատի վերևից 5-րդ շարքում, մուտքի (զավթի) արևելյան պատի բարձրության ուղղությամբ կա պակասակամ շրջանակ ունեցող մի քար, որ շինության ընթացքում իսկ նախատեսված է եղել արձանագրության համար: Թեև տառերը մասամբ հողմնահարված են, այնուամենայնիվ, ոչ մեծ արձանագրություն լինելու պատճառով կարգացվում է.

Յ(ռասժե), Մ(ցոփյալ)ց
 Ե(շ)լու յ(օրօ)ցես.

Թ II (28)

Աղ. VII, 1

Փարզմանություն. Քրիստոս, ողորմյա՛ Կյուրիկեի (=Կիրակոսի)

նոգուն:
 Այստեղ, հարկավ, անձնանվան բացման մեջ պայմանականություն կա. ³⁰ հասցվածան կարող էր ենթարկվել և՛ յօրօցց -ն, և՛ յօրօլլց-ն, և՛ մեկ այլ անուն, որ լրացուցիչ աղբյուրի շփոթության պատճառով անկարելի է ճշտել: Արձանագրության տեղագրությունը և նրա համար նախապես տեղ հոգալը չի տալիս կարծելու, թե այն վերաբերում է կառուցող վարպետին, ավելի ճիշտ՝ ճարտարապետին, մանավանդ որ Զաքարյան գերպատանում նման անուն կրող անձնավորություն չկար, իսկ վանահայր կամ մեկ ուրիշ հոգևորական գծվար է ենթադրել. այդպիսիք ունենալու համար եկեղեցին արդեն կառուցված պետք է լիներ, մինչդեռ, կրկնում ենք, ներկա արձանագրության դրությունը հոգացվել է տակավին շինարարության ընթացքում: Թև ով է եղել այս Կիրիկե (Կիրակոս) կամ Կիրիկե (Կյուրեղ) կառուցողը, ուրիշ ի՛նչ հիշատակարաններ ու կառույցներ է թողել՝ ոչինչ չգիտենք: Նրա անունը այս շրջանի աղբյուրներում առաջին անգամ է հիշատակվում, եթև

^{18ա} ՏՆ՛ս Թ. Թամար՝Յցոլու, օկտորոս յատուկոմոնս յօրօլլցլու Մորոն..., Յց. 9, բնագիրը՝ էջ 564—667: Ի դեպ, ուշագրավ է այն իրողությունը, որ Իվանեն իր նամակում անհրաժեշտ է նկատում զրև, թե «իմ եղբորդի Շանշեն (Շահնշար)՝ 15 մեծ քաղաքների տերը, համեստորեն գլուխ է խոնարհում ձեր առաջ և ձեր օրհնությունը խնդրում»: Պայք 1324 թ. մայիսի 12-ին դրած պատասխանում հղում է իր օրհնությունը (անդ, էջ 9 և 12): Այս ամենից կարելի է եզրակացնել, թե Իվանեն շահագրգռված էր արտաքին հարաբերությունների ոլորտում ճանաչելի զարթոնք կիրառաարդ կերտորդու տեղն ու գերը: Ճանաչման հետո (1255 թ.) մնիում («տասնհինգ մեծ քաղաքներից» ամենամեծում) Շահնշահի ու նրա բնասիրի անգամների հետ զուգակցուց հետո, Ուլյան Ռուբրուքը գրում է. «Նրանք ինձ սասցին, թե իրենք հողմնական եկեղեցու դավաններ էին և եթև պայք մի քիչ օգնություն ուղարկի իրենց, նրանք դրացի բոլոր երկրները պիտի ենթարկեն եկեղեցուն» (տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ա, Երևան, 1932, էջ 20):

¹⁶ Կ. Գանձակեցի, էջ 177: Իվանի դավանափոխությունը անհանգստություն էր առաջացրել և Կիրիկայում: 1204 թվականին Զաքարյան ծխաղավանական մի քանի հարցերով դիմում է Հովհաննես կաթողիկոսին և կեսն թագավորին: Նորընծա կաթողիկոսը շտապում է Ստամբուլ ժողով գումարել՝ Զաքարյային պատասխանելու համար՝ «զի մի եցլե՛ նա արտափոյ ուղղափառ հաստոյն, որպէս եղբայր իւր»:

¹⁷ «Մանր ժամանակագրություններ», II, 60, հմտ. էջ 85, ծան. 91.

¹⁸ П. М. Мурадян, К хронологии некоторых событий в Грузии и Армении («Բանբեր Մատենագարանի», № 9, էջ 130—131):

հաշվի չառնենք Պղնձահանքում պահպանված մի տապանագիր, որ, սակայն, գրված է ձԼՅ և ոչ՝ ձԵ:

Քեթառույթի պաշտամունքային կառույցն ունի երկրորդ գտնետրոջ խոշոր արձանագրություն՝ փորագրված արևելյան ճակատին: Այն սկսվում է պատի հարավային եզրից և շարունակվում ամբողջ երկայնքով, պատահանի հատվածում բարձրանում նախորդ շարքը, իսկ ապա նորից իջնում է երեսից ու հասնում հյուսիսային եզրը: Արձանագրության շտեղավորված ավարտամասը երկտողի տեսքով զետեղված է այժմի տակի շարքում: Դատելով գրչության հնագրական նկարագրից, կտրելի է վստահանալ, թե այս արձանագրությունը ևս շինարարությանը ժամանակակից է: Ի դեպ, այն ևս փորագրված է մեծադիր տառերով, բառանջատման նույն երկկետ նշանով, տառանիշերի ոչ ակնկալելի համաչափությամբ: Ափսոսանքով պիտի նշել, որ վիմագրի շուրջ կեսը հողմնահարված է, և մեծ դժվարությամբ ու բազմակի փորձերից հետո միայն հաջողվեց վերծանել նրա մի մասի բովանդակությունը: Միջամասի հատվածը այլևս մնալու է անհայտության մեջ, որովհետև այն հիմնովին հողմնահարվել-վերացել է: Աջ կեսի ընթերցումը մասամբ բարդանում է որչ կապերերի առկայությամբ, որոնց դիմել է փորագրողը՝ ասելիքը տեղավորելու անհրաժեշտությունից թեկադրված: Վերծանվող տեքստը այս է.

- 1. + ան(ո)լ(ո)ն լ(մերոման)ն ի(տ)լուսի ան(ո)րոտ-ան(ո)րոտիս Ժլ(բ)ա(ա)ևի Ժլ[...
...|ատ(3)և ևա Մ(լի)ալլ(ա)լլ ց(ա)լ(ո)մ(ա) (?) ի(տ)լ(ա)ո(և)տ(3)և լ(ո)լ(ո)և
2. լ(մրոտ)և(ա)ևա, լ(մրոտ)ևա
3. Ժ(ո)ևա թ(ո)և(ո)ևա.

Ք III (29) Աղ. VII, 2

Քարգմանություն. Աստված փառավորի ամիրայից-ամիրա Բուրայի հովիւն...ին և ողորմա Փաղիչին (?)՝ հանուն հովու, Աստվածամուր, նրա աստված-որդու:

4) Եկեղեցու ներսում կան տապանաքարեր, որոնցից հինգի վրա պահպանվել են վրացերեն արձանագրություններ, նույն շարքում:

ա) ի(տ)լ(ա) | անան Ժ(ա)լ(ա)և(ա) Մ(լի)ալլ(ա)լլ լ(մերոման)ն.

Ք IV (30) Աղ. VIII, 1
Քարգմանություն. [Հ]ասան Բուլայի հովուս ողորմի աստված:

բ) Նախորդի աջ կողքին, տապանագիր ներկայացնող բառը ձուլված է վերևի ուղիղ գծին՝ մի տեսակ դարգամուտիվ ծառայելով: Երկու ծայրերից հողմնահարված է: Այժմ կարգացվում է թե՛ս տառախումբը, որ, թերևս, ընկալվելու է իբրև

[...]թես Մ(լի)ալլ(ա)լլ լ(մերոման)ն
Ք V (31) Աղ. VIII, 2

Քարգմանություն. [. . .] ին ողորմա՛:

դ) ի(տ)լ(ա) | անան | Ժ(ա)լ(ա)և(ա) | լ(մերոման)ն | Մ(լի)ալլ(ա)լլ լ(մերոման)ն.

Ք VI (32) Աղ. VIII, 3
Քարգմանություն. նրանց որդի Սամադավլայի հովուս ողորմի աստված:

զ) Ք ի(տ)լ(ա) | և(ա)լ(ա)և(ա) | Մ(լի)ալլ(ա)լլ լ(մերոման)ն.

Ք VII (33) Աղ. VIII, 4
Քարգմանություն. Մեծն Բուրայի հովուս ողորմի աստված:

ե) Տապանագրերի երրորդ շարքում, երկրորդ տապանի վրա, միջին երեք տողերում Կ հիշեցնող նշանի գործածությամբ.

ցեց և(ա)լ(ա)և(ա) | և(ա)լ(ա)և(ա) | Մ(լի)ալլ(ա)լլ լ(մերոման)ն.

Ք VIII (34) Աղ. IX, 1
Քարգմանություն. Այս է տապան Սալարի (?), ողորմի աստված:

5) Արևմտյան գավթի աջակողմյան պատահանի պսակի վրա (այժմ տեղից բնկած է ու գտնվում է գավթի դիմաց).

և(ա)լ(ա)լ(ա) Մ(լի)ալլ(ա)լլ լ(մերոման)ն.

Ք IX (35) Աղ. IX, 2
Քարգմանություն. Լաշաֆին ողորմի աստված¹⁹:

Որևէ բնություն անցնելուց առաջ, անհրաժեշտ է վերծանության հետ կապված որոշ բացատրություններ տալ.

1) Դատելով երկրորդ տապանաքարի սոլո գրությունից, որ, անշուշտ, լեզու (հողի) բան է, հատուկ անուններում (Ժողա, Ժոժա) ավանդված օ-ն պետք է անհրաժեշտաբար Պ կարդալ (իմա՛ հայտնված է երկրորդ բաղադրիչ Թ-ն), իսկ քանի որ արդի վրացերենում հեն վրացերենի ու-ի երկու բաղադրիչները ձուլված են, վերականգնումը հնարավոր չէ համապատասխան նշանով արտացոլել:

2) Ա և Բ տապանագրերի արանքում կա մեկ տապանաքար ևս, որը, ինչպես երևում է, նույնպես տապանագիր է ունեցել: Եթե Բ-ում ասվում է «նրանց որդի Սամադավլայի...», ապա Հասան Բուլայի կողքին թաղված պետք է լինեն նրա կինը, որոնց որդին է Սամադավլան:

Վերևում արդեն ասվեց, որ որոշ հայադեաներ Քեթառույթի սույն եկեղեցին նույնպես ունեցել են Փանձակեցու, Վարդանի և Օրբելյանի հիշատակած Պղնձահանքի հետ, որ, ըստ պատմիչների տեղեկության, թաղվել են Իվանեն

¹⁹ Անձնանվան Լաշաֆ բացումը պայմանական է:

ու նրա որդի Ավագը: Եթե այդ հաղորդումը իսկապես Թեոփանուսին վերաբերելու, ապա տապանագրերի գոնե մեկ մասը Երկայնաբազուկների քաղկեդոնականությունը ընդունած ճշտված պետք է վերաբերել: Մինչդեռ վերածանությունից պարզվում է, որ առկա անուններից և ոչ մեկը ընտանի չէ Երկայնաբազուկների համար և առհասարակ բոլորովին այլ առճամ է ներկայացված: Գծարխտաբար, տապանագրերում հիշատակվող Հասան Բուզան, Սամազավան ու Բուբան շատ հուշովված դեմքեր չեն, ուստի հիմնականում վրիպել են այդ դարաշրջանի պատմությանը զբաղվող մասնագետների ուշադրությունից: Այժմ, սակայն, տապանագրերը կարողալուց հետո, անհրաժեշտություն է զգացվում ըստ կարելիության լուսաբանել նրանց ինքնությունն ու դործունեությունը, առնչությունը եկեղեցիին կառուցող Երկայնաբազուկների տոհմին: Ինականաբար, ուսումնասիրությունը «Մեծն Բուբայից» պետք է սկսել, որովհետև այդպես հորջորջվելու համար զորքի ու պաշտոնավարության նշանակալիությունն էր անհրաժեշտ, եթե դրանք նաև ըստ տապանագրերի տեղագրության, առաջինը նա է այս եկեղեցում թաղվել: Նրա անունը հիշատակված ենք գտնում Գեղարքունյաց Հայր Օհաննա վանքի կամ Հայրավանքի հարավային պատի (արտաբուստ) հետևյալ արձանագրության մեջ. «Ի թվ հալոցի Ու (1211) նորոգեցա եկեղեցիս յառաջնորդութեան Յովասափի և ներսիսի. մեծ սպարապետն Բուբայն՝ ալե երկրիս, և ալ մարտիչի զալոյն Ոսկերակս, որ է առաջ Քանախո, Բ ալն ջաղաց ի Նորաշիլ: Տը վանական ևս զնաճի ձաղն, որ բերդաժողովուրդ վանիցս. կարգեցար զլլայտունալեան ճրագալոցն և ըլլգլղատի ժամն Կատաին տան: Որ խափանէ կամ չեկեղեցոյս հանէ՝ մասնակից Յուգայի և սատանալի լիցի, ամէն: Վանքիս իմ մլուլքն սվինք վախմն: Ով խաբանի՝ լլլայտ գատի»²⁰:

Ինչպես տեսնում ենք, տապանագրի «մեծ» հորջորջումը այստեղ կրկնված է և միաժամանակ ճշգրտված, որ Բուբան սպարապետ է, տեքստը այդ գավառի («երկրի»): Նվ որովհետև արձանագրությունը գրված է 1211 թ., երբ Հայաստանի այլ գավառների թվում Գեղարքունիքը ևս աղտազրկվել-նվաճվել էր Երկայնաբազուկների կողմից, ապա «մեծ սպարապետ Բուբայն» երկրի տեր կոչվելու համար ինչ-որ անընդուն պետք է ունենար Երկայնաբազուկների, մասնավորապես, Իվանի հետ, թերևս նրա «գործակալներից» մեկը լինելու: Գևա Մ. Ամբաստանցը սրամիտ կասում է կատարել, ենթադրելով, թե «գրույն յիշել սպարապետը» Ստ. Օրբելյանի մոտ հիշատակվող «Բուբա իշխանը» լինի²¹: Այս կասումը հետագայում կրկնել է և Գ. Հովսեփյանը²², բայց լրացուցիչ աղբյուր չունենալով՝ խնդրի բնությունը չի զբաղվել: Օրբելյանը գրում է. «Ապա ի 665 թուականին մինչ կայր ավարէկն Իվանէ ի խտար ի վերայ բերդոյն որ Չարէքն կոչի, գնայ տէր Սարգիս հրամանաւ և

գրով բնույն իրոյ տէր Ստեփաննոսի առաջի Աթարէկին ի խնդր աստուածընկալ սուրբ խաչին: Եւ զի էր նորա զործակալ և հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց, և աւագ հեշպաց մեծ և բարեպաշտ իշխանն Բուպակ կոչեցեալ. և էր սա աներ կիպարտի՝ որդոյ Ելիկովին, և կիպարտն յոյժ սիրեցեալ էր յաչս Իվանէի. և խաչն կայր ի պահեստի ի Պղնձահանքն»²³: Օրբելյանի «Պատմության որոշ ձեռագրերում Բուպակի փոխարեն գրված է Բուպա, որտեղից և անցել է հիշյալ աշխատության Մոսկվայի 1861 թ. հրատարակություն (էջ 258 և 261): Ավելին, Ստ. Օրբելյանի մոտ նույն անձնավորությունը հիշվում է և մեկ այլ կապակցությամբ, բայց արդեն իր իսկական Բուբա անունով (էջ 396—397): Այս պարագայում այլևս պարզ է, որ 1216 թ. անցուղարձերի կապակցությամբ հիշատակված Բուպա-ն (Բուպակ) նույն 1211 թ. արձանագրության Բուբան է²⁴: Այժմ արդեն կարելի է լրիվ պատկերացնել նրա տեղն ու զիրքը: Նա հրամանատար է (արձանագրության մեջ՝ սպարապետ) «ի վերայ ամենայն իշխանութեանց», որ Երկայնաբազուկներին էր պատկանում, Իվանի գործակալը, հեջուրների ավազը, «մեծ և բարեպաշտ իշխան», ուստի այլևս ո՛չ նրա կատարած նվիրատվություններն են առեղծվածային և ո՛չ էլ տապանագրում «Մեծն Բուբա» կոչվելը: Ինչպես տեսնում ենք, իրարից անկախ գրաված բոլոր աղբյուրները նույնն են վկայում: Այս նույն Բուպան (resp. Բուբան) Օրբելյանի մոտ հիշատակվում է և այլ առիթով: 1223 թ. նա ներկա է եղել Կորսվանքի նորակառույց եկեղեցու օծմանը. «բնդ որում էր և մեծ իշխանն Բուպակ (կարդա՛ Բուպա—Պ. Մ.), որ և լնծայէ սուրբ և նորակերտ քաւարանին յիւրոց հալալ արդեանց և հայրենեաց պտուղ բուրրահաւատ զագարակն յերկրիս՝ իւրով սահմանօքն, ջրարբի և անջրդի վայրօք, մեծ ձորովն, որ Թմաձոր կոչի, և Գնչեաց սահմանովն մինչ ի Գանձակայն, որ Հայրեանց տափ կոչի: Եւ հրամայէ գրել վճիռ արձանի անխախտ պայմանաւ և հաստատել ինքեան յիշատակ յամեն տարի տոնել տաան պատարագ մօր իւրոյ... Եւ էր օրինակ վճիռն այսպէս. «Ի ժամանակի թագաւորութեանն որդոյ Թամարին կաշային, յամիրսպասաւորութեանն Հայոց և Վրաց Եահան-շահի, և յաթարկութեանն Իվանէի հօրեղոր նորին, ևս մեղուցեալ ծառայ Քրիստոսի Բուպակ (կարդա՛ Բուպա)՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակատիս... և ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց, զոր իմ բաղկաւս առեալ էի յայլաղ-գեաց և իմ արեամբս թափեալ, և իմ պարտնայրն մեծ սիգելով այլ ինձ էին որոշեալ, զԱղբերիս գիւղ իւր ամեն սահմանան...»²⁵: Սույն վկայությունից լրացուցիչ մանրամասնություններ են պարզվում, որոնք կարող են օգտակար

²⁰ Ս. Բարխուդարյան, Գիվան հայ վիմագրության, հ. IV, էջ 69, արձ. № 261: Հմմտ. Մ. Ամբաստանց, Տեղագիր Գեղարքունի ժողովարդ գավառի, էջ 435—436:
²¹ Անդ.
²² Գ. Հովսեփյան, Խաղարհների կամ Պտղանք հայոց պատմության մեջ, 1969, էջ 163:

²³ Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 352—353:
²⁴ Այդ նույնանունությունը հիշու է կասված և Լ. Բարալյանի կողմից (տե՛ս նրա՝ „Социально-экономическая и политическая история Армении в XIII—XIV веках“, М., 1969, էջ 25—26):
²⁵ Ստ. Օրբելյան, Նշվ. աշխ., էջ 356—357: Օրբելյանը միակ աղբյուրն է, որից թաղել են՝ Ղ. Ալիշանը (Սիսական, էջ 186), Կ. Կոստանյանցը (Վիմական տարեգիր, էջ 67), Գ. Հովսեփյանը (Նշվ. աշխ., էջ 163):

լինել և մյուս տապանագրերի հետ կապված հարցեր քննելիս: Հայտնի է դառնում, որ Բուրան «սպարապետ» կամ «հրամանատար» կոչվել է ոչ միայն Զարբադանց տիրույթների հանդեպ ունեցած վերակազմության, այլ նաև իրակազմում ուղղակի ծառայությունների համար, որոնց մասին անցողիկ հիշատակում է իր ընծայագրում. «Ընծայցիք... գոր իմ բազկաա առեալ էի յայլագգեաց և իմ արեամբս քափեալ (իմա՛ ազատեալ)»: Ընդ որում՝ նա այս ամենի մասին խոսում է տակավին իր պարոնի՝ Իվանե Երկայնաբազուկի օրոք, որի աթարեկությանը էլ նա վարել է այդ մարտերը: «Իշխանաց-իշխան» հիշատակվելը այստեղ չպետք է դիտվի իբրև կաշուն և հատուկ ծառայություններով իմաստավորված տիրոջ, այլ իբրև արժանին հատուցող մեծաբանը, համազոր այլոր պահպանված «մեծ» մակղբիրն²⁶:

Բուրային վերաբերող մի տեղեկություն էլ պահպանվել է Կեչառուչքի ժամատան հյուսիսային պատին (ներքուստ) և հրատարակվել Գ. Հովսեփյանի կողմից²⁷: Երախտավոր հայագետը գրում է. «Գուցե նա (իմա՛ Բուրան կամ Բուպայան—Պ. Մ.) նույն լինի և քիչ հետո հիշվելիք Հայրաձայնի արձանագրության «Առուինչքը» եղծումն է կամ նույն՝ «Առինչք» անվան հետ, որ հավանական ենք համարում, և մի գյուղ է Կոտայքում»²⁸: Հիշյալ գյուղերի նույնությունը ապացուցվում է ոչ միայն տեղագրությանը ու պատկանելությանը, այլև տեղանվան ստուգարանությամբ²⁹: Ինչ խոսք, Առինչքում գտնվող Ոսկերակ այգին 1211 թ. Հայր Օհաննա վանքին ավոդ Բուրան նույն այն Բուպան է, որից ոմն Հայրաձայն 1206 թվականին (ՈՄԵ) հող է գնում նույն Առինչքում, վիճադրելով. «Ես Հայրաձայն գնեցի հող յԱռինչք յիմ պատրոն Բուպան, բազում արդեամբք անկեցի այգի եւ ետու սր ուխտն Կեչառուս... թվիս ՈՄԵ»³⁰, նույն Բուրան Առինչքում ունեցած այգի է նվիրել և Սանահինին, այդ կապակցությամբ թողնելով հետևյալ արձանագրությունը. «Ք քափ ՈԿ (1211 ք.), անուամբն սասուծոյ Ես՝ Բուրայս, քոռն Զաւրե[...] <Ետու յԱստուա> ծածինս զՄամայաքունին այգին յԱռինչք իմ անեւ...»³¹:

Այսպիսով, տապանագրի «Մեծն Բուրան» այլ աղբյուրներում հիշատակված Բուպա-Բուրան է, որի գործունեությանը կարելի է հետևել 1206-ից մինչև 1223 թվականները, անվանի իշխանավոր, Զարբադանց գործակալ, մեծ

²⁶ Այս օրինակով նորից հաստատվում է մեր այն կոսմոսը, թե Սարգիս Երկայնաբազուկը «Երեսնամյաց-Երեսնամյ» է հիշատակվում իբրև ճշմարտ իշխան, մեծ իշխան և ոչ հենց այդ տիտղոսը կրած լինելու համար:
²⁷ Նշվ. աշխ., էջ 315 (Հավելված Ա, 42):
²⁸ Արձանագրության գիտական վերծանության մեջ «Առինչք» է, որով վերանում է բննարկման անհրաժեշտությունը: Բուպայ ընթերցումը թյուր է:
²⁹ Տե՛ս Ս. Մ. Мурадян, Винительные формы в именительном по данным топонимии Армени, «Вестник общ. наук» АН Арм. ССР, 1971, № 4, էջ 23.
³⁰ Գ. Հովսեփյան, Նշվ. աշխ., էջ 314: Արձանագրությունը սասուզի ու սրբաբեր էնք տեղում:
³¹ Ս ՏՆ՝ Վ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը..., էջ 129: Հրատարակել Բուրայս ազավազ ընթերցումը հշտել և տողերիս հեղինակի ուղղությունն է առաջարկել Ս. Ավագյանը:

սպարապետ, պատրոն, իշխանաց իշխան և այլն: Մահացել է, հավանաբար, 1230-ական թվականներին, բավական առաջացած տարիքում, բանի որ տակավին 1200-ական թվականներին Լիպարիտ Օրբելյանին «փեսայացուց ինքեան, ապով նմա դամենօրհնեալ և պեղեցիկ օրիորդն ղԱտիայն (resp. ղԱսիայն), ընդ որ առ ժամ մի ցատուցեալ Աթարէկ Իվանէի»³¹: Ինչպես երևում է, Իվանէի դեղը որ առ ժամ մի ցատուցեալ «առ ժամ մի» է եղել, որից քիչ անց նրան՝ «ի մեծ պայուցվելը ընդամենը «առ ժամ մի» է եղել, որից քիչ անց նրան՝ «ի մեծ դէղէպուպանց ոմն Բուրա անուն» դարձնում են «գործակալ ամենայն տանն Աթարէկին»: Հենց Իվանէի կառուցած եկեղեցին էլ դառնում է նրա ու ժառանգների տապանատուն-աղոթարանը: Բայց հարցը սրանով չի ավարտվում. ինչպես տեսանք, արևելյան ճակատի արձանագրության մեջ Բուրան ամիրայից-ամիրա է կոչված (իմա՛ ամիրապետ), որ իրական բովանդակություն ունեցող տիրոջն է, որպիսին կրում էր միայն Թիֆլիսի կառավարիչը: Ամիրաներ ունեին և Քութախն ու Ժինվանը: Այդպիսիք եղել են նաև Դմանիսում ու Ռուսթավում, բայց դրանք ամիրաներ են և ոչ՝ ամիրայից-ամիրաներ³²: Առայժմ գալիս բավականաչափ առեղծվածային մի խնդիր. ինչպես կարող էր Բուրան Իվանե Երկայնաբազուկի տիրույթների վերակազմում-ձեռնավորը լինել, միաժամանակ Թիֆլիսի կառավարիչ հանդիսանալ մեծուրճելթուրացիների ենթակայության տակ: Դրանք բուրյուրվին տարբեր պաշտոններ են: Ամիրապետի նստոցը Թիֆլիսում պիտի լիներ, իսկ Բուրան թաղված է Թեթառուչքում: Սկզբնաղբյուրներով հայտնի Թիֆլիսի առաջին ամիրապետը Քուրդ Արծրունին է, որը Գեորգի 3-րդ թագավորի հանձնարարությամբ նշանակալի գեր խաղաց 1176—1177 թվականներին՝ Օրբելյան տոհմի ապստամբությունը ճնշելիս: Իրազարժություններին ժամանակակից Քորալքեցիներն կոչում է «բարեպաշտ ամիրապետան Տիխեսաց»³³:

Մի բանի տարի անց, 1185 թվականից սկսած, վրացական աղբյուրներում Թիֆլիսի ամիրապետ է վկայվում Աբուլ-Հասանը, Քարթլիի եպիսկոպոս Բարսեղի եղբայրը, որը Կապտավանի (ԼՇՊՅՈՒ ՄՈՆԱՏՅՈՒՆ) շինարարական արձանագրության մեջ կրում է «երեսնամյաց-երեսնամյ, Քարթլիի ամիրայից-ամիրա, տեր Ռուսթավի և յոթ լեռնապավաների» տիրույթը³⁴: Ակադ. Ս. Երեմյանը հանգամանորեն ուսումնասիրել է այս Աբուլ-Հասանի

³¹ Ստ. Օրբելյան, Նշվ. աշխ., էջ 396—397, հմտ. էջ 361—362, հմտ. «Գիվան», III, 148, 206:
³² Ինտարուստի մասին տե՛ս Վաչագան Բախչալյանի «Մեծ թագավորության ժամանակահատվածը», Երևան, 1966, գլ. 199—221. Դմանիսի նորահայտ մի արձանագրության մեջ հիշվում է ամիրապետության պաշտոն ունեցող ոմն Հոր Միխրիկի որդի (տե՛ս Յ. Յ. Ջաջաբաձե, Նշվ. աշխ., էջ 160—161):
³³ Վ. Հակոբյան, Դավիթ Քարաբեցու հիշատակարանը («Տեղեկագիր», 1958, № 8, էջ 119—120): Սանահին 1181 թ. արձանագրության մեջ (ՈՒ թվականը հիշա չպետք է լինի. սպասելի էր ՈՒԳ—1185 թ., հմտ. Ս. Երեմյանի ստորև վկայակոչվող աշխ., էջ 408): Քուրդը կոչված է ամիր և ոչ՝ ամիրապետ, սակայն դրանից պաշտոնի իջնում չի ենթադրվում (տե՛ս Վ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 104):
³⁴ Ե. Թայաշվիլի, Об Иоанно-Богословской церкви в Тифлисе, СМОИПК, вып. XLIII, Тифл., 1913, стр. 145.

գործակալը դարձավ 12-րդ դարի վերջերին կամ 13-րդ դարի սկզբներին, իսկ նրա հիմնական գործունեությունն ընկնում է 1206—1223 թվականների միջև: Գ. Հովակիմյանի ենթադրած տարիներին Կեչառուլքի միաբան հաշատուր (նույն է՝ հաշատուր) շկար է ալյն: Կարծում ենք, արձանագրության հիշատակությունները լիարժեք կդառնան, եթե այնտեղ վկայակոչված մարդկանց 13-րդ դարի վերջերին կամ 14-րդ դարի սկզբներին փնտրենք: Նվ, հիրավի, Գրիգորիս հայրապետը նույն Գրիգոր Անավարդեցին է (1293—1307 թթ.), Վրաց Գալստե թագավորը Գեորգի Պալճան: է, որին մոնղոլները 1299 թվականից թագավոր էին ճանաչում⁴⁷, հաշատուրը՝ Կեչառուցին (13-րդ դարի վերջին և 14-րդ դարի առաջին տասնամյակներ), իսկ Սահիպանոսը՝ Աղվանից այն կաթողիկոսը, որի օրոք, 1297 թ., Սա. Օրբելյանը ավարտում էր իր պատմությունն ու գրում հիշատակարանը⁴⁸: Ուրեմն արձանագրության ամիս Բուբան նույնանում է ոչ թե 1206, 1211, 1223 թվականներին հիշատակված Բուբայի հետ, ինչպես կարծվել է, այլ Թանատի 14-րդ դարի արձանագրության վկայած Բուբայի, որի պապը Սամաղավլան է:

Ոչ միայն անձնանունների նույնությունը, այլ նաև Օրբելյանց ձեռնարկումներին ունեցած մասնակցությունն ու երբեմնի Ջաբրայան տիրույթներում պատրոն լինելը իրավունք են տալիս եզրակացնելու, որ 13—14-րդ դարերի պարպլիսին սպրած «Բուբային» Թեմառուլքի տապանազրի «Մեծ Բուբայի» տոհմից է, ավելի ճիշտ՝ ծոցը, որի պապ Սամաղավլան ևս թագաված է Թեմառուլքի եկեղեցում: Այս անձնավորության մասին առայժմ որևէ այլ տեղեկություն հայտնի չէ, եթե չհաշվենք «Վրաց ժամանակագրության» մեջ եղած վկայությունը՝ «Սամաղավլա էրիսթավը, ամենայն ուղեմական շնորհով օծոված, ընտիր նետաձիգ...»⁴⁹: Անանուն պատմիչը նրա մասին խոսում է 1297 թվականի դեպքերի կապակցությամբ, երբ Ղազան խանը Հորդա էր կանչում վրաց Գավիթ 6-րդ թագավորին⁵⁰: Հայտնի է միայն, որ այս Սամաղավլան խիստ ազդեցիկ անձնավորություն էր, ուստի պատմիչը «Հեր-Կախեցի դիդերությունների ու աղնաուրների» դեպքը ընդհանուր ձևով ասելուց հետո, անհրաժեշտ է համարում հատկապես շեշտել Սամաղավլայի ներկայությունը: Այս և մեր տապանազրի Սամաղավլանները նույնացնելու ամուր կովան չունենք, թեև հնարավոր է, որ նրանք իրփ նույնն են:

Տապանազրերի հաջորդականություն մասին խոսելիս ասվեց, որ Սամաղավլան Հասան Բուբայի ու նրա կողքին թաղված կնոջ որդին է, ինչը վկայված է «նրանց որդի...» արտահայտությամբ⁵¹: Նշանակում է Հասան

⁴⁷ Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 186, հմտ. օց. չ ճ Վ Յ Յ Օ Ս Յ Օ Յ Օ Ս, նշվ. աշխ., էջ 245—246; Թ. Ժորդանիան ժամանակին ենթադրել է, թե Գեորգին երկու անգամ է թագավորական գահ բարձրացել (չժտեճեճճ, II, էջ 180): Մեր արձանագրությամբ այդ դրույթը փաստարկում է ստանում և առավել ուղարկով դառնում:
⁴⁸ Սա. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 507:
⁴⁹ «Վրաց ժամանակագրություն», էջ 167, բնագիրը տե՛ս Չ. Ա., II, 301—302:
⁵⁰ Հմտ. օց. չ ճ Վ Յ Յ Օ Ս Յ Օ Ս, չժտեճեճճ, III, տճ., 1966, ձՅ, 242.
⁵¹ Կնոջ տապանազարը տարբերվում է մյուսներից իր ունեցած պակով:

Բուբան «Մեծն Բուբայի» անմիջական հաջորդն է, նրա որդին: Այս պարագան համոզիչ է դառնում և ստացած տոհմաժառի անունների հաջորդականությունը: Մեծն Բուբա > Հասան Բուբա > Սամաղավլա > [...] > Բուբայի: Գառնիվ ժամանակադրական հաջորդականությունից, Հասան Բուբայի գործունեությունն ընկնում է 13-րդ դարի 30—50-ական թվականներին, բայց թե նրան պատմությունից հայտնի բաղամթիվ Հասան-ներից որի՞ հետ պետք է նույնացնել, ղժվարանում ենք ասել: Թերևս մասնավոր բնութայամբ հնարավոր լինի պարզել և այդ հարցը⁵²:

Այսպես, ուրեմն, Թեմառուլքի եկեղեցում թաղված անձինք հայոց ու վրաց պատմության մեջ նշանակալի դեր խաղացած գործիչներ են, և երբեմնի վրաց մեծ դիդերով Բուբան ու նրա ժառանգները, որոնց պաշտոններումն ու տիրույթները Ջաբրայան իշխանության սահմաններում էին գտնվում: Իշխանական այս, կարելի է ասել, նորահայտ տոհմը սերտ ազդակցության մեջ էր Օրբելյանների հետ և մեկը այն տներից, որոնք ամբողջ 13-րդ դարի ընթացքում վարում էին երկրի քաղաքական ու տնտեսական կյանքը՝ վերականգնումների բարձր իրազրության մեջ:

⁵² Այնուամենայնիվ, առղծվածային է մնում Կեչառուլքի արձանագրության «...սան թուականուն հայոց» սկզբնամասի իրական բովանդակությունը: Մեր մեկնարանության պարագայում այն չի կարող ո՛չ 610, ո՛չ 710 և ո՛չ էլ 810 լինել:

Լ Ե Ռ Ն Ա Ն Ց Ք

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճակագրական արշավախումբը 1966 թ. օգոստոսի 24-ին Սպիտակի շրջանի Լեռնանցք գյուղում (ս. Մինաս եկեղեցու մոտ) գրանցեց վրացերեն արձանագրության առկայություն: Արշավախմբի ղեկավար, այժմ հանգուցյալ վիճակագրագետ Ս. Բարխուդարյանը հիշյալ փաստի մասին սիրալիք հաղորդեց տողերիս հեղինակին (12/XI 1966 թ.): Եկեղեցու մոտ կան հին շինությունների հետքեր, քառակող կոթող և տապանաքարեր: Վրացերեն արձանագրություն ունեցող քարն այժմ իր տեղում չէ, գտնվում է ճանապարհի կողքին: Այն կանգնեցված է եղել խաչքարի տեսքով, բայց ժամանակի ընթացքում քարի ներքևի մասը կտարվել է, դրանով իսկ զատվել պատվանդանից: Արձանագրության վերջին տողը, հավանաբար, այդ անջատված մասի վրա է մնացել, որը եղած քարաբեկորների մեջ չգտնվեց:

Ճիշտ է, առանձին տառապատկերներ ու նույնիսկ տառաշարքեր զգալիորեն հոգմնահարված են, բայց եղած տառահետքերի շնորհիվ, մանավանդ շարագրանքի բանաձևայնության պարագայում, ամբողջությամբ վերծանելի է:

- 1 Ք և(շ)լսն Զ(յ)լոլոն Մ(յլնլլլլ)ն Լ(մյրտմա)ն.
- 2 և(շ)լսն Լ(շ)Նոծոն Մ(յլնլլլլ)ն Լ(մյրտմա)ն.
- 3-4 և(շ)լսն Թլլլոն-մլոն(ս)Ննոն օլլլ(ս)լլլլն Մ(յլնլլլլ)ն..

Լ Լ (36) Ադ. IX, 3
Թարգմանություն. Բեդլիի հոգուն ողորմի ասավամ: Դուզիբի հոգուն ողորմի ասավամ: Կուսակրոն քանանա Հորդանանի հոգուն ողորմի...

Հիշյալ անձնանուններից բոլորովին անծանոթ է Դուզիբ-ը, այդ իսկ պատճառով էլ Պ ձայնավորի վերականգնումը խիստ պայմանական է, մասամբ վրացերենում Լ Պ Ն ձայնային գոյությունը թելադրված: Պայմանականությունից զերծ չէ և Ն -ից հետո օ կարդալը, թերևս այն կարելի է ընկալել իբրև 3 (այս դեպքում Պ կարդալը արդարացված կլիներ) կամ նույնիսկ 3: Բայց այդ ամենից վիճակը չի փոխվում, և անունը մնում է անծանոթ:

Թե ովքեր են հիշատակված Բեդլիը, Դուզիբը (?) և Հորդանանը՝ որևէ աղբյուրից հայտնի չէ: Թերևս կարելի էր վարկած առաջադրել, թե այս Հորդանանը նույնն է 1247 թ. Մաթուսավանքի արձանագրության մեջ հիշատակածի հետ, որը ըստ Պղնձահանքի արձանագրության տեղեկության, այնտեղի «անգործածական տեղը պիտանի դարձրեց»: Բայց, միայն անունների նույնությունից ելնելով, դժվար է նման վարկած առաջադրել: Նկատելու է սակայն, որ Լեռնանցքի արձանագրության հնագրական նկարագիրը այն 13-րդ դարի գործ համարելուն ամենևին չի հակասում: Տառանիշերը մասնակի ոճական ընդհանրություն են ցուցաբերում և կոռեի վրացերեն տապանագրի գրչության հետ:

Հայաստանի տարածքում պահպանված մյուս բոլոր վիճակի հիշատակարաններից Լեռնանցքի արձանագրությունը մեկ կարևոր հնագրական տարբերություն ունի. դա տառանիշերն իրար ազուցելու (բայց ոչ կասկածելու) ձգտումն է, փաստական մեկ նիշի զբաղեցնելիք հատվածում 2—3 տառապատկեր տեղավորելով: Առհասարակ փորագրողը շատ լավ է պատկերացրել «ասումթավրուլի» գրչության հատկանշական կողմերը, ուստի ազուցումից պատկերի խաթարում չի առաջացել (համտ. Պղնձահանքի արձանագրությունը):

Դատելով Բեդլի և Դուզիբ (?) անձնանունների ոչ տոնացուցային լինելու հանգամանքից և հոգևոր աստիճան մատնացուցող տերմինի բացակայության փաստից, կարելի է ենթադրել, թե նրանք երկուսը աշխարհական անձինք են (մասնավորապես որ Հորդանանի կուսակրոն-քահանա լինելը ասված է): Բայց թե ի՞նչ դեպքի առնչությամբ են նրանք քահանայի հետ միասին հիշատակվել և ե՞րբ հայտնի չէ: Թերևս նույն կոթող-հուշասյան վրա հիշատակվելը միաժամանակյա վախճան է հուշում: Ի դեպ, արձանագրության շարունակության մեջ կարող էին այլ անուններ ևս լինել: Այս ամենը (ներառյալ քարի կանգուն դիրքը) իրավունք են տալիս մտածելու, թե գործ ունենք միջնադարյան կոթող-հուշասյան հետ:

Վրացերեն լեզվով արձանագրված լինելը ինչ-որ շափով արդեն վկայություն է, որ այնտեղ հիշատակված անձինք երկարնակ դավանության պիտի լինեին (այստեղ ազգային պատկանելության հարց չենք արծարծում): Բայց կա երկարնակություն հուշող արտաքին մի մանրամաս. արձանագրության վերևում պատկերված է խաչ՝ ուղղահայաց թևի վարի մասում կրկին հորիզոնականով երկրորդ խաչ ձևացնելով: Սա արդեն հատկանշական երևույթ է: Հիշենք, որ նմանատիպ մի խաչ էլ քանդակված է Երվայնաբազուկների կառուցած Հնեվանքի դավթի հարավային պատին:

Անկասկած, ս. Մինաս եկեղեցու շրջապատի հնագիտական ուսումնասիրությունը կարող է երևան բերել նոր նյութեր, որոնք կնպաստեն կոթողի

1 Տե՛ս այստեղ, Պղնձահանքի վերաբերող հատվածը:

հետ կապված հարցերի լուսարանմանը: Ուրեմն, անտեղի կլիներ այժմ սոսկ ենթադրությունների հիման վրա բացատրություններ առաջարկել:

Եթե նկատի ունենանք Հայաստանում եղած վրացերեն արձանագրությունների տեղագրությունը, այսպես կոչված գյուղի նրանց տարածման ոլորտից մասամբ դուրս է այն ավելի շատ Շիրակին է առնչվում, բան Տաշիր-Չորագետին: Ընդհանուր է, առ այսօր Շիրակում (նկատի ունենք գաղտնավայրային մասը, բայց ոչ Անին) բազմաթիվ հայտնաբերված քարե շատ նկատելի գավառական-մշակութային կենտրոն հայտնի չէ, բայց արդարացի էր ն. Մառը, երբ գրում էր, թե „Грузинские надписи той эпохи (т. е. XIII века — П. М.) в крае (т. е. Шираке—П. М.) не все еще известны. Они находились не только на монастырских церквах, но и на других, рассеянных по области, культовых сооружениях“².

Կեռանցքում գտնված հիշատակարանը հուշում է, թե Զաքարյան տիրապետության այս միջավայրում ևս երկրորդ օջախներ եղել են: Այսպես անհրաժեշտ է հիշել ժամանակին արձարժված մի արձանագրության գոյությունը, որ հետագայում գուրս մնաց գիտնականների ուշադրությունից ու հսկողությունից: Ի ապացույց իր դրույթի, թե «հայ ժողովուրդն ինքն սկիզբն առնելով է վերաբերվում դեպի ամեն մի գրություն բարեբեր վրաս, ինչ լեզվով էլ այն լինի», ն. Մառը վկայակոչում է այսպիսի մի փաստ. «Ալեքսանդրապոլի գավառում բաց գաշտում գտնվել էր քարե խաչի մի բեկոր՝ վրացերեն հետաքրքրաշարժ արձանագրությամբ, հետաքրքրաշարժ ինքնին իր գտնված տեղով: Եվ վրացերեն արձանագրությամբ այդ քարը վերցվել էր ու գիտության համար հոգաձու ձևով փրկվել հայի կողմից: Մենք այդ տեսել ենք սեփական աչքերով»³: Ափսոսանքով պիտի նշել, որ հեղինակը արձանագրության տեքստը չի բերում, թեև, չենք կասկածում, տեղում ընդօրինակած կլիներ: Այդ բեկորը գտնելու մեր ջանքերը ապարդյուն անցան: «Գիտության համար հոգաձու փրկողը», ինչ խոսք, կաշխատեր այն որևէ թանգարանի սեփականություն դարձնել, բայց ո՞ր թանգարանի, հայտնի չէ: Նկատելու է, որ ն. Մառը արձանագրություն կրող բեկորը տեսել է մինչև 1898 թվականը, երբ Հայաստանում եղած թանգարանները դարձել էին լայն հավաքչական աշխատանքի⁴: Նախկին Ալեքսանդրապոլի գավառը ընդգրկում էր բավական նշանակալի տարածք, որի մի մասը այժմ ՄՍՀՄ-ի սահմաններից դուրս է: Եթե Մառը գավառի այդ մասում է քարը տեսել,

այսպես այն գիտության համար այլևս կորած է⁵: Գիտնականի վերաբերյալ խոսքերում արձանագրության բովանդակության անընդունելի ինչ-որ ակնարկ կարելի է մակարերել, թե նրա տեքստը մի տեսակ բանաձևային է եղել, ինչպես հաճախ պատահում է (հիշենք Պղնձահանքի խաչի վրայի արձանագրությունը): Ինչևէ, Շիրակի տարածքից (բացառությամբ Անիի) գիտության հայտնի է դառնում երկու վրացերեն արձանագրություն, թեև մեկի բովանդակությունը անհայտ, իսկ մյուսինը սակավախոս, բայց այնուամենայնիվ իրենց գոյությամբ արդեն նշանակալի:

Թերևս Շիրակի հետ առնչվի վիճաբան մեկ այլ հիշատակարան ևս. 1931 թ. էջմիածնի եկեղեցական թանգարանի այլ նյութերի հետ Երևան տեղափոխվեց նաև վրացերեն արձանագրություն ունեցող շարվածքի ճակատային մի քար: Տարիներ անց, 1967 թ. մայիսի 10-ին Հայաստանի պետական թանգարանի անօրինությունը այն նվիրեց Ս. Զանաշիայի անվան վրաստանի պատմության թանգարանին՝ վերջինիս հիմնադրության հարյուրամյակի կապակցությամբ⁶: Յավոր, ոչ որի հայտնի չէ, թե քարը որտեղից և ե՞րբ է էջմիածնի տեղափոխվել: Համենայն դեպս, ո՞չ Արարատյան գավառից, որովհետև ծանոթ տեղագրական աշխատություններում նրա մասին խոսք չկա, ո՞չ էլ Գուգարքից, որովհետև տեղիս կանգուն հուշարձանները արձատագիր նման քարի պակաս չունեն (խոսքը մեզ ծանոթ և այժմ պահպանվող հուշարձանների մասին է): Կրկնում ենք, թերևս այն Շիրակից լինի: Ամենևին չպիտիվ սույն վրակամբ, անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել նրա վերծանությունը⁷.

1,2 Եսեղուտոս Լ(մր)տոսա<տ> | ձց, մոճոան, Լ(ո)ճն յոյթ-
3,4 մ<ցն> | Մցեցծ(ա) Ե Յ(ո)ճուկկյնո<ն | ցլլցլցուսն...>

Շ (37)

Քարգմանություն. Հանուն աստուծո ևս՝ Միրիան, աճաճացա կաուուցելու պատվական եկեղեցիս...

Արձանագրությունը շարունակվելիս է եղել ներքևի շարքի քարի վրա⁸,

² Н. Я. Марр, Ани, стр. 131.
³ Н. Марр, Грузинский поэт Акакий об армянах, «Новое обозрение», 1898, № 4841—4842; հմմտ. X. А. Вермишев, Материалы для истории грузинно-армянских отношений, СПб., 1904., էջ 73:
⁴ Հայաստանում թանգարանների հիմնադրման համառոտ պատմությունը գրել է պրոֆ. Կ. Կաֆադրյանը (տե՛ս նրա «Հայաստանի թանգարանների պատմությունից», «Լրաբեր», 1972, № 10, էջ 20—35):

⁵ Պատմությունը դեռ չի նշտել մշակութային արժեքների այն աճույնի քանակությունը, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կորցրեց մեր ժողովուրդը: Ն. Մառի նախաձեռնությամբ 1916 թ. կազմակերպված արշավախումբը միայն առանձին նշխարներ կարողացավ փրկել:
⁶ Քարե հուշարձանների ֆոնդ, № 693:
⁷ Վերծանությունը կատարել ենք 1967 թ. դեկտեմբերին, Թիֆլիսի թանգարանի արձանագարանում, Զվարի եկեղեցու խաչի պատվանդանի արձանագրություններն ուսումնասիրելու ժամանակ: Մեկ տարի անց, պրոֆ. Ա. Շանիձեն հրատարակեց արձանագրության դեռ 1960 թվականից պատրաստած վերծանությունն ու լուսանկարը, անհրաժեշտ ծանոթություններով (տե՛ս) Ա. Շանիձե, Грузинская надпись XI—XII вв. из Армении, «თბილისის სპ. უბი-ვერსიტეტის ძველი ქართ. ენის კათედრის შრომები», ტ. 11, «საბუბილო», 1968, გვ. 143—144).
⁸ Զորորդ առիվ վերին եզրամասի առանձին տասնհաբեր նկատելի են պահպանված քարի վարի եզրին:

ուր, ինչպես Ա. Շանիձեն է նկատում, պիտի լիներ կառուցմանը վերաբե-
րող այլ հանգամանքների թվարկում և մանավանդ՝ գուցե և վիմագրման
թվականը: Միքան (նույն՝ Միրիան) անունը 13-րդ դարից սկսած մեզանում
հաճախ է հիշատակվում⁹, բայց մեր արձանագրողին Կրեկ մեկի հետ նույ-
նացնելու կովան չկա: Նույնիսկ դժվար է ասել, թե նա 11-րդ դարի երկրորդ
կամ 12-րդ դարի առաջին կեսերի տեղական ավատատեր է¹⁰, որովհետև
արձանագրության հնագրական տվյալները այդքան որոշակի կովան չեն
տալիս: Հիշյալ թվագրումը բնդունելի կարող է լինել Կյուրիկյան թագավո-
րության սահմաններում վիմագրվելու դեպքում, իսկ Հայաստանի կենտրո-
նական նահանգներում մինչև 12-րդ դարի վերջը, կարելի է ասել մինչև
Անիի 1199 թ. նվաճումը Զաքարյանների կողմից, վրացերեն արձանագրու-
թյան երևան գալը պատճառարանություն չի գտնում:

Արձանագիր այս բարի՝ թանգարանից-թանգարան անցնելու ճակատա-
գիրն ինքնին հաստատումն է ն. Մառի այն հետևություն, թե «Տաշկական
ինտելիգենցիայի մեջ, որ հասարակության ազն է ու նրա դեկավարը, դեպի
օտարի, թե իրենց հնությունները տածած հարգանքը կազմում է նորս
անդամների ամենահամակրելի գծերից մեկը»¹¹: Եվ, հիրավի, էջմիածնի
եկեղեցում ապաստանած մշակութային արժեքների թվում պահպանվել ու
պետական թանգարան է հասել շարվածքի սովորական մի բար՝ վրացերեն
արձանագրությանը: Գուցե պահող-պահպանողները ծանոթ իսկ չէին նրա
բովանդակությանը, բայց արձանագիր լինելը երաշխիք էր հոգածության:

⁹ Տե՛ս «Դիվան», II, 16, 109, IV, 344, և Ս. Խաչիկյան, ԺՊ դարի հայերեն ձեռագրերի
հիշատակարաններ, էջ 368—369, նույնի՝ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»,
Բ, էջ 128, 313, 416 և այլուր: Հմմտ. Հ. Ահալյան, Հայոց անձն. բուսարան, Գ, էջ 349:

¹⁰ Տե՛ս Ա. Շանիձե, նշվ. աշխ., էջ 144:

¹¹ Միկ. Մառ, Հայ-վրացական հարաբերությունների մասին անցյալում, Թիֆլիս, 1898,
էջ 12:

Հ Ն Ե Վ Ա Ն Ք

Հնեվանքի կառուցման ժամանակի մասին տակավին ստույգ որևէ
տեղեկություն հայտնի չէ: Անցողակի գիտվում է միայն, որ վանքը
հունական է կամ վրացական, որովհետև արձանագրությունները գրված են
վրացերեն, իսկ գավթի հարավային ճակատին «հունական ոճի» եռահարկ
խաչ է պատկերված: Ինքնին հասկանալի է, վանքի հիմնարկությունն ու
ազգային պատկանելությունը որոշելու համար այսօրանը բավարար չէ:
ազգային պատկանելությունը որոշելու համար վել հունագավան կամ վրացագա-
նույն հաղորդությամբ այն կարող է համարվել հունագավան կամ վրացագա-
վան (=երկաբնակ) հայոց պատկանող վանք, մանավանդ որ պատմական
այս շրջանի համար միակը չէ: Նշված հարցերը չէին կարող բնութայան
լուրջ առարկա դառնալ, քանի դեռ այստեղ պահպանված վրացերեն արձա-
նագրությունները ուսումնասիրված ու հրատարակված չէին¹:

Հնեվանքը այժմ գտնվում է անհամեմատ ավելի կործանված վիճա-
կում, քան անցյալ դարի վերջերին կամ 20-րդ դարի սկզբներին է եղել, երբ
նկարագրվել է Իս. Հարությունյանի² և ասպո՛ւ Ն. Կալայանի³ կողմից: Իս.
Հարությունյանի մոտ կարգում ենք. «...ճանապարհ բնկանք և կես ժամ
գնալուց հետո բարձրացանք այն փոքրիկ բլուրը, որի վրա շինված է
ՉճՆՎանք կոչված ավերակ եկեղեցին... Սրբատաշ բարից շինված եկեղեցու
արտաքին ձևը չէ պահպանվում հայոց եկեղեցիների ձևից, բացի գմբեթից,
որ տարբեր է եկեղեցու շենքն անայտն է, և կաթողիկոս կանգնած է շորս
խաչածն կարող կամարների վրա. նման է Սանահուն սբ. Գրիգոր եկեղեցուն,
Արևելքից և հարավից ունի երկխորան գավիթներ՝ սրբատաշ սև բարից

¹ Պրոֆ. Լ. Մելիքեթ-Բեկը 1928 թվականին նշում է, որ 1926 թ. ամառը եղել է Հնեվան-
քում և գիտարշավի նյութերը պատրաստում է տպագրության (տե՛ս նրա՝ «ჩრდილო მხარეთა
სომეხთა მოძღვარნი» და მათი ენობა, გვ. 34, հմտ. «ნოյნი» „Об экспедиции в Лори-
Ташир и по ущелью р. Машавери летом 1926г.“, „Известия Кавказского историко-ар-
хеологического института“, т. IV, էջ 135—136). ლეონ მელიქეთ-ბეგი, ლორე-ტაში-
რის ქართული ეპიგრაფიკა, თსუ შრომები, ტ. 108 (აღმ. სერია), თბ, 1964, გვ. 317—319.

² Իս. Հարությունյան, Աշակերտի հուշատեղը, «Լուսավ», 1897, էջ 233—234:

³ Ն. Կալայան, Բուրջալուի գավառ, «Ազգագրական հանդես», 1901, էջ 436:

շինված. հարավային զավթում կա նաև պատարագամատուց սեղան: Խորաններն առանց դռների են և բացվում են եկեղեցու մեջ երկու սյունազարդ կամարներով: Եկեղեցու կաթողիկի և հարավային խորանի ճակատին կան հունարեն և հին վրացերեն (խուցուրի) տառերով արձանագրություններ, այդ վերջին արձանագրության ճակատին քանդակված է հունական խաչ: Եկեղեցու ձևից և արձանագրություններից կարելի է ենթադրել, որ վանքը նախ հունական է եղել, իսկ հետո վրաց տիրապետության ժամանակ ընկել է վրաց ձևերը: Վանքի արևելյան կողմը գտնվում է մի բառանկյունի մեծ շինություն, որի տանիքն ավերված է, իսկ որմերը շինված են ոչ սրբատաշ քարից. ի նկատի ունենալով շենքի անկանոն լուսամուտները և ոչ սրբատաշ քարից շինված լինելը, կարելի է ենթադրել, որ եկեղեցի չէ եղել, այլ հյուսիսում կամ սովորական բնակարան: Վանքի շրջակայքում երևում են ընդարձակ բարակույտեր, որոնք շինությանց հետքեր են և ապացույց են, որ այդտեղ երբեմն բազմամարդ բնակության վայր է եղել⁴:

Թեև Հնեվանքն այստեղ Ձևվանք է կոչված, անկասկած է, սակայն, որ խոսքը պաշտամունքային նույն կառույցի մասին է: Հայագետ Հ. Ոսկյանը, հավանաբար անունների այս պանդանությունը նկատի ունենալով, վանքը կոչում է «Հնէ կամ Ձնէ»⁵: Շրջապատի բնակչությունը Հնեվանք անունը ստուգաբանում է իրեն հունաց վանք, որ խիստ պատշաճ է վանքի զավանությանը: Կուրթանում պատմվում է նաև, թե վանքում միաբանած այլազգի հոգևորականները «կակալ են կտորել» անցորդ տեղեկույիները զլխին: Եթե այս ավանդության մեջ որևէ իրական արձագանք կա, ապա կարելի է նույնիսկ վանքի անվան Հնե բաղադրիչը առնչել «Հնէ» բառին, որովհետև այլազգեն հոգևորականին այդպես որակելու օրինակ գիտությանը հայտնի է⁶: Ինչ վերաբերում է Հնե—Ձն պանդանությանը, ապա Իս. Հարությունյանի գրառումները հրատարակելիս պարզապես Հ-Ձ գրչական վրիպում է տեղի ունեցել:

Ինչպես արդեն նկատվեց, վանքի երկրորդ նկարագրությունը պատկանում է Ն. Լալայանին, որը եղածին որևէ նոր տեղեկություն չի ավելացնում: Նրա աչքից վրիպել է դմբեթի վրայի վրացերեն արձանագրությունը, ուստի անգրադարձել է միայն մեկին. «զավթի հարավային, կամարակառ զոռն վերև կա վրաց խուցուրի տառերով մի արձանագրություն, որ շխարհացա ընդօրինակել»⁷:

⁴ Իս. Հարությունյան, անդ:

⁵ Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 31:

⁶ Տե՛ս Հ. Բաբիկյան, Narratio de rebus Armeniae hունարեն թարգմանությամբ մեջ հասած մի հայ-բաղիկոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենագարանի», № 6, էջ 461, ծան. 27: Գիտելու է, որ հայ մասնագրություն մեջ մի քանի անգամ հիշվում է Հնեի («...և տեր Թխոցորու ի Հոնին»), Հայնի («...տեր Թրոսս ի Հայնի»), Հնեի (այլընթացում), Հինի («Նւ զմեղատ Մկրտիչ... նախնադոս... Հինու և Արդնու») տեղանունը: Նույն տեղանվան շորս տարբերակումները կարող են հարց առաջացնել՝ արդյոք Հնեվանքի մեջ էլ այդ նույն բառահիմքը չէ՞:

⁷ Ն. Լալայան, նշվ. աշխ., էջ 436:

18-րդ դարի վրաց նշանավոր պատմաբան Վախուշտի Աբրեգյանը «Վրաստանի թագավորության նկարագրություն» (աղբյուր՝ սամեղոսա Նախարաթուլոս) աշխատության «Ժամանակակից Քարթլիի նկարագրությունը» բաժնում համառոտակի թվարկում ու ներկայացնում է Լուսու հույությունները: Այստեղ հիշատակվող Ձնի նեղմարիտիսա (ժցելու խեղձարտիսա —կենարար փայտ, իմա՝ ս. հաչ) վանքը, ըստ ամենայնի, նույն Հնեվանքն է: Վախուշտին այսպես է նկարագրում.

...շքալաճ և ևս առնուց արևմտաց... Մուրաթից — Պ. Մ.) արևմուտք կա [հանուն] կենարար փայտի վանք՝ գեղեցիկ, Բերկուց գետի ափին, նույնպես հայկեր են տիրացել: Այստեղ բարձր թաղի մեջ կան բազում այրեր, և այդ այր[խոր]ում գտնվում են բազմաթիվ հին գրքեր, սակայն [տեղանքի] անմատչելի լինելու պատճառով անգործածելի են:

...շքալաճ և ևս առնուց արևմտաց... Մուրաթից — Պ. Մ.) արևմուտք կա [հանուն] կենարար փայտի վանք՝ գեղեցիկ, Բերկուց գետի ափին, նույնպես հայկեր են տիրացել: Այստեղ բարձր թաղի մեջ կան բազում այրեր, և այդ այր[խոր]ում գտնվում են բազմաթիվ հին գրքեր, սակայն [տեղանքի] անմատչելի լինելու պատճառով անգործածելի են:

Թե զրավոր կամ բառավոր ինչ այդպիսի հիման վրա է Վախուշտի վանքս «Ձնի նեղմարիտիսա» անվանում, հայտնի չէ⁸: Տեղիս այլ շինությունների մասին արած նրա դիտողություններից երևում է, որ ձեռքին որևէ հին և վաղանկի աղբյուր չի ունեցել:

Հնեվանքին վերաբերող երկրորդ տեղեկությունը վրաց մասնագրության մեջ հանդիպում ենք 1837 թվականին գրված «Տաղիսի և Սոմխիթի հույությունների նկարագրությունը» երկում⁹: Սակայն այստեղ Հնեվանքին վերաբերող տեղեկությունը նույնությամբ քաղված է Վախուշտի հիշյալ աշխատությունից¹⁰:

Ճարտարապետական այս ոչ երկրորդական կառույցին պատշաճ ուշադրություն դարձվեց միայն վերջերս՝ ակադ. Գ. Չոբինաշվիլու հանգամանակից նկարագրության հրատարակումամբ¹¹: Նա Հնեվանք է անվանել մի քանի

⁸ Ե. Ե. Մանուկ, Լուսու համեմատական Նախարաթուլոս, տձ., 1941, թ. 35, հոսկ. խ. Ե., IV, 308. Թարգմ. համա. Լ. Մելիքյան-Բեկ. վրաց աղբյուրները, Գ. Երևան, 1955, էջ 79:

⁹ Պրոֆ. Կ. Դաֆադարյանը ժցելու-ն հակված է նույնպես կազմակերպելու ժցելու - ի հետ, որոնք իրականում ոչ մի ընդհանուր բան չունեն (տե՛ս «Վրացեր», 1966, № 5, էջ 99):

¹⁰ Ինչպիսիք հրատարակել է Լ. Մելիքյան-Բեկը, տե՛ս նրա՝ «Մասնագրություն Երևանի և Երևանի մոտավոր տեղանունները», Երևան, 1923, №1, թ. 81—96.

¹¹ Հայ. թարգմ. տե՛ս Լ. Մելիքյան-Բեկ, վրաց աղբյուրները..., 5. Գ, էջ 270. Այժմ (Յ. Չոբինաշվիլի, Երևան, 1997) հիշյալ աշխատության հիշյալ նախագիծը հրատարակել են Մ. Չոբինաշվիլի և Մ. Չոբինաշվիլի (Յ. Չոբինաշվիլի, Երևան, 1997) համատեղ խմբագրությամբ: Մեջբերված է Յ. Չոբինաշվիլի «Մեջբերումներից», V, թ. 57—65.

¹² Տե՛ս Գ. Մ. Կոպանցի, Разыскания по армянской архитектуре, Тб., 1967, էջ 71—79:

մեկ բառ, այն էլ զժվար է ասել՝ ինքնակա՞ անուն է, թե՞ նախորդ տողից փոխանցված բառակես:

[ցեց ևօջլօջօ]
ՅՅՖ(ո)և(օ)ա (?)

Հ VIII (45)

Աղ. XII, 3

Քարգմանություն. Այս [է] տապան Զյուզիի (?):

Տապանագրերը, իհարկե, նույն շրջանի շեն, բայց նրանց հիմնական մասը (ա—դ), ըստ գրչության, 13-րդ դարից հին կամ նոր շվետք է լինի, թերևս մասամբ հին է վերջինը՝ գ տապանագիրը, բայց ոչ վաղ 12-րդ դարից, և հայտնի չէ, թե ինչ կովաններից էլ ենելով է Գ. Չուրինաշվիլին այն 10-րդ դարի համարում³²: Կարծում ենք, ե տապանագիրը, ինչպես արդեն նույն հեղինակին է նկատել³³, համեմատաբար նոր է, բայց 14-րդ դարից այս կողմ բերելու հնարական կովան չենք տեսնում, ուստի 15-րդ դարի վերջի կամ 16-րդ դարի գրչություն համարելը հիմնավոր չէ:

Լ. Մելիքանս-Բեկի այցելության տարիներին գավթի բարերից մեկի վրա եղև է երկու արձանագրություն.

ա) յրօսեց, Մեօֆյալց | օոսցծ—Քրիստոս, ողորմյա՛ Հովսեփին:

Հ IX (46)

բ) օոսցծն—Հովսեփին:

Հ X (47)

* * *

Հնեվանքից ոչ հեռու, Կուրթան գյուղի ծայրից սկսվող ձորում պահպանվել է կիսավեր մի եկեղեցի, որ տեղացիները կոչում են «Ճգնավոր»: Այն կառուցված է ժայռերի աստիճանավոր շարունակության արանքում եղած նեղ հարթակում: Պատերից պահպանվել է միայն հյուսիսայինը (վերևի ժայռի ուղղությամբ)՝ հենարան դարձած անկման ենթակա ժայռաբեկորներին: Ժայռի բնական փորվածք-խորշը գործածվել է իբրև գմբեթի մեկ մաս (հյուսիսային): Պատի գրտի շարվածքը սրբատաշ բարից է, ներսինը՝ հասարակ ձևավածքով: Հարավային պատը, որից միայն հետքեր են պահպանվել, կառուցված է եղև ձիշտ ժայռաքարանին: Եկեղեցին, հավանորեն, ունեցել է երկու զուգ՝ դեպի արևմուտք և հյուսիս: Վերջինս, փաստորեն, երթևեկի միակ ճանապարհն է եղել՝ ժայռի փորվածքը իբրև մուտքի գավթի գործածելով: Փլվածքից պահպանված բարերից մեկի վրա կա վրացերեն արձանագրություն՝ բեկված երկու մասի³⁴: Կտրվածքի եզրերին ընկած տառապատ-

³² Г. Н. Чубинашвили, Եղվ. աշխ., էջ 79, ծան. 2:

³³ Անդ.

³⁴ Այս արձանագրությունը վիճարկան արշավներից մեկի ժամանակ լուսանկարել և մեղ է տրամադրել Ա. Շահինյանը: Տեղում աշխատելիս (12/9 1967 թ.) արձանագրության հատվածները ի մի բերեցինք:

կերները մասամբ խաթարվել են, իսկ ստորին մասում՝ 3—4 տասն հարյուրամյակ, փշրվել, որի հետևանքով նկատելիորեն տուժում է արձանագրության ամբողջականությունը: Այս ամենին զուգարվում է և երկու տեղ հողմնահարված լինելը, ուր գրերն ամբողջությամբ անհետ են դարձել, ինչպես նաև՝ բարի երեք անկյունների կտրվածությունը: Եվ, այնուամենայնիվ, արձանագրության վերձանությունը հնարավոր է: Հենց սկզբից ասենք, որ վիճարկողը հասցավումների ու ձայնավորների սղումներ հաճախ է կատարում, բայց համապատասխան «պատիվ» չի գործածում:

Առաջին տողում վերականգնելի է վերջին մեկ-երկու բառը. ավանդական «Հանուն աստծո՛ հօր, ո[...]

 ունենալուց հետո զժվար չէ կոռհել և շարունակությունը, մանավանդ որ հաջորդ տողն սկսվում է «սուրբ հօրու» գարծվածքով: Ուրեմն, պիտի ունենայինք՝ [d o s a ɔ]: Երկրորդ տողի շարունակության ֆ o s ɔ օ բառի ընդգծված նիշը հիմնական մասով ընկել է կտրվածքի մեջ, բայց վերին ձախաճակ կիսաղեղի առկայությամբ միանգամայն վերականգնելի է: Հաջորդ բառի չորս տառանիշ՝ կեսից ներքև, հողմնահարված է, իսկ վերին կուսանների ու բովանդակության թելադրությամբ ընթերցելի է ՁՅՏ. Երրորդ տողի կեսից սկսած հողմնահարված է, բացառությամբ վերջնիսթի օո գրերի: Հենց այս երկու գրի ու չորրորդ տողի սկզբի ձոսɔօ առկայությամբ հավաստիորեն կարելի է վերականգնել [d o s a ɔ] օոլ [s ɔ] օոլ օոս — Մկրտչի բառը, որից առաջ, անշուշտ, պիտի ունենայինք «սուրբ» և «Հովհաննես»՝ ծանոթ հասցավումներով՝ ֆ o s a օց. Չորրորդ տողի հաջորդ բառը ֆ o s a է, ուր պատահիկային տեսքով է պահպանվել է-ն, իսկ օ-ի վերին հորիզոնական գծի աջ մասը հողմնահարված է: Ի՞նչ պետք է ունենայինք շարունակության մեջ. որոշ քայքայվածություններ այստեղ ունենք միմյանց հաջորդող երեք նիշ՝] ր մ ֆ [, իսկ բառի ավարտը հաջորդ տողի սկզբում է՝ օոս . Նման բառահատվածները, մեր հաստատ համոզմամբ, կարող են ամբողջանալ հանձին [ɔ ɔ ց] ր մ ֆ [ɔ ɔ] օոս -ի, հասցավումների բացմամբ՝ ɔ օ ց օ ր մ օ ֆ օ ɔ օ օ ս օ -մեծավկա³⁵ տերմինով: Հաջորդ տողում այս բառը կրկին գործածություն ունի, համեմատաբար ամբողջական տեսքով պահպանված ɔ օ ց օ [ր] մ ֆ օ օ օ ս օ . Առաջին դեպքում չվերականգնված է մնում «մեծավկայի» անունը, որ անպայման պիտի հիշատակված լիներ, այն էլ, դատելով առ այդ մնացած տեղից, երկտառանի հասցավմամբ՝ օո (լ օ ց օ օ), օց (օ օ ց օ ց), թե մեկ այլ բան՝ զժվար է ասել: Բառիս երկրորդ գործածությունը ևս անվանողիցություն չէ եղել, որից պահպանվել է միայն սկզբի գիրը—լ . Հողմնահարված այս տարածքում (լ-ի և հաջորդ բառասկզբի ɔ -ի միջև) դեռ եղել է 4—5 տառապատկեր (ներա զիմաց հաջորդ տողում ունենք 4—5 տառանիշ):

³⁵ Ի դեպ, մտ օ ց օ ր մ օ ֆ օ մ ց բառը անձանոթ է Ս.—Ս. Օրբելիանիի և վերջին տարիներս լույս տեսած ութնատորանոց բացատրական բառարաններին, բայց ունի Գ. Չուրինաշվիլին (1887, էջ 720): Թոգօ օ անջլ օ օ օ օ — հեղտակաղխա բառի նմանողությամբ ɔ օ ց օ ր մ օ ֆ օ մ օ ց -ն կարելի էր «վկայապետ» թարգմանել, բայց հայերենում նման բառ չկա, և հշուտն էլ խորթ է: Ուստի գերադասեցինք «մեծավկա-ն»:

աղեղից այ դժիկ ունենալով³⁹: Քե գրչության այս տեսակը որքան տարածուն է եղել, կարելի է դասել և մեկ այլ փաստից. Անտիոքի վրացական կամ, ճիշտ ևս՝ հայ-վրացական սր Քովմաս և սր Միքայել եկեղեցիներում պահպանված վրացերեն արձանագրությունները նույնպես գրված են ստեղծածայրի ոճավոր այս նույն գրչությամբ⁴⁰:

Վկայակոչված բոլոր արձանագրություններն էլ վերաբերում են 11-րդ դարին, հատկապես այդ դարի առաջին կեսին (կան և 10-րդ դարի վերջերին վերաբերող ենթագրություններ): Նրանց մի մասը ուղղակի թվագիր է, ինչպես, օրինակ՝ Սամթավիսինը (1030 թ.), Սվետիցիսովկիինը (11-րդ դարի 20-ական թվականներ՝ ըստ Մելիքսեդեկ կաթողիկոսի հիշատակության) և այլն: Նշանակում է՝ Հնեվանքից ոչ հեռու գտնվող արձանագրությունը 11-րդ դարի առաջին բառորդի է, որով ճշտվում է և մատու-եկեղեցու շինարարության ժամանակը (նույն արքեպիսկոպոսի երկրորդ արձանագրությունը (Վանանա-վանք) գրված է 1022 թ.): Ինչպես տեսնում ենք, այն Հայաստանում պահպանված հնագույն վրացերեն արձանագրություններից է, միանգամայն ուրույն գրչությամբ: Սույն արձանագրության հնագրական վերլուծությունը բավականաչափ ընդլայնում է մեր պատկերացումները այսպես կոչված «սլաբավոր» գրչության ունեցած տարածքային գործածության վերաբերյալ⁴¹:

³⁹ Գիտնք, որ 7-րդ սուրի ճ-ի ստուգարձության ժամանակ հիշյալ հրատարակության մեջ վրիպում է տեղի ունեցել ճ-նոց -ի փոխարեն արտասանական-թվական համարժեքն է սեղադրվել՝ և-նոց, որ կարող է 3-ի դիմաց 200 կարգացվել:

⁴⁰ *St'ua Jean Mécérian, Expédition archéologique dans l'Antiochène Occidentale*, Beyrouth, 1964, pl. LXXXIII.

⁴¹ Տառերի այսօրինակ ոճավորման գեղարվեստական և ձևագրերում, մասնավորապես գլխադիր-գարգարությունների առիթով (հմտա. յղեցե Յաճաճահոն, ასომთავრული დამწერლობის მხატვრული თავისებურებანი ქართული ხელნაწერების მიხედვით (V—XIII სს.), «მრავალ-თავი», II, 1973, გვ. 236—260).

ԾԱՀՆԱԶԱՐ

Ե. Լալայանի տեղեկությամբ «Գյուլը իր անունն ստացել է Մելիք-Շահնազարից, որի ամուսնուցն (յայլա) է եղել անցյալ դարի սկզբին, իսկ թուրքերից կոչվել է Ղոշ-Քիլիսա, այստեղ եղած երկու եկեղեցիների պատճառով»: «Ղոշ-բիլիսան» նույն «խոշաբիլիսան» է, որից կարելի է վերականգնել բնիկ անունը՝ խոշավանք (?): Անկասկած է, որ միջնադարում այստեղ բավական շին բնակավայր է եղել, այդ են վկայում գյուղում պահպանված պաշտամունքային կառույցները, հին հանգստարանը և, մասնավորապես՝ գյուղի մատուցների մոտ գտնվող ընդարձակ բնակատեղին իր կիսավեր եկեղեցիով: Շահնազարիները այս բնակատեղին այժմ կոչում են «Նարաբա», ծանոթ չլինելով նրա երբեմնի անվանը: Տապանաբարերից միայն մեկի վրա է արձանագրություն պահպանվել. «Այս է հանգիստ Մանկասարին... Ռձժ», որից կարելի է եզրակացնել, թե բնակատեղին ամայացել է 17—18-րդ դարերում: Գյուլամիջի գերեզմանուցում պահպանվել է Ակոբի տապանագիրը, գրված 1716 թ.:

Շահնազարի նոր բնակեցումը կայացավ անցյալ դարի 20-ական թվականներին, Լեր Ալաշկերտից ու շրջակայքից զանգվածային գաղթ տեղի ունեցավ դեպի Շիրակ ու Լոռի²: Տեղում հին բնակչություն չգտած ալաշկերտցիները, բնականաբար, հնարավորություն չունեցան ժառանգելու նախ-

¹ Ե. Լալայան, Բուշայի գավառ, «Աղգ. հանդես», 7 և 8 դրբեր, 1901, էջ 334, հմտա. «Աղգ. հանդես», դրբ 9, 1902, էջ 201—202:

² Վերաբնակության պատմությունը շարադրված է Անտոնյան ուխտի միարև Սարգիս վրդ. Յազեճյանի կողմից: Աշխատության ձևագիրը գտնվում է Երևանում (ըստ տեղացիների հաղորդման), իսկ մեքենագիր օրինակին մենք ծանոթացանք Շահնազարի միջնակարգ դպրոցի տնօրենի մոտ (11/9—1967 թ.): Ինչպես Երևան է, Ալաշկերտից գաղթածների մի մասն էլ բնակություն է հաստատել Ջավախքում: Բարակիթ գյուղի հայտն եկեղեցու բակում (հետագայում կառուցած պարսպից դուրս) պահպանվել են «Ալաշկերտցի Պօղոսի որթի Գրիգորի» (1852—1836 թ.) և «Ալաշկերտցի Պետրոսի կին Սարգուլի» (1852—1839 թ.) տապանագրերը:

կին տեղանունները, և այսօր գործածական միկրոտոպոնիմիկան գերազանցապես նոր միջավայրի ծնունդ է:

Շահնազարում վրացերեն արձանագրությունների գոյություն մեզ հայտնի գրավոր անդրանիկ աղելությունը Ե. Կալայանին է պատկանում: Խոսեղավ տեղին եկեղեցիների մասին, նա գիտում է, որ «Մրանցից մինը այժմ վերանորոգված է և կաթոլիկների ծխական եկեղեցի դարձած: Նախկին դռան կամարակալ քարը վերանորոգված պատի մեջ է զրված, որի վրա վրաց խոյցուրի տառերով կա մի արձանագրություն»³: Մանոթագրության մեջ նա հղում է. «Տե՛ս արձանագրության բաժնում»: Թե՛ս այս հղումից ինչ պետք է եզրակացնել՝ հայտնի չէ, որովհետև աշխատության հաջորդ բաժիններում վրացերեն արձանագրության վերձանություն կամ լուսանկար չկա: Եթև վերջին պարագան ինչ-որ պատահական վրիպման արդյունք չէ, ապա պետք է ենթադրել, Ե. Կալայանը վերձանության ժամանակ դժվարության է հանգիպել և ձեռնպահ է մնացել նրա հրապարակումից⁴: Մենք համոզված էինք, որ Շահնազարի վրացերեն արձանագրությանը անդրադարձած պիտի լինի ակադ. Մ. Բրոսեն, մանավանդ որ նա հրապարակել է այստեղից ոչ շատ հեռու գտնվող Օրոջուլիի (իմա՝ Մաշավերի) արձանագրությունը⁵, սակայն գիտնականի տպագիր աշխատություններում այդպիսին գտնել չհաջողվեց: Տարեց շահնազարցիների տնդամար՝ 1924 թ. այստեղ է եղել ակադ. Ն. Մառը և վերձանել «խոյցերեն գրերը», բայց թե ի՞նչ իրական հիմք կա նման հիշողության համար՝ դժվարանում ենք ասել⁶: Իրողությունն այն է, որ հիշյալ արձանագրություններով առ այսօր զբաղվել է միայն պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը⁷:

Գյուղամիչի ս. Հովհաննես եկեղեցու շուրջը գերեզմանոց է, որ (եկեղեցուց հարավ-արևելք) թաղված է 1853 թ. վախճանված «Տէր Միսիթար գերանուանի» վարդապետը: Ինչպես երևում է այսօրվա կենդանի հիշողությունից, ալաշկերացիների վերաբնակությունն առաջնորդած վարդապետը բավական նշանակալի համարում է ունեցել և, թերևս, այդ է պատճառը, որ գյուղացիները նրա հանգստարանը պատվել են Իրդանշաչ գյուղատեղից բերված եկեղեցու մեծադիր ու շքեղ բարավորով՝ այն տապանաքարի վերածնելով: Բարեբախտաբար, նոր կիրառության առիթով քարը որևէ էական ձևափոխության չի ենթարկվել, իսկ նրա վրայի զարդաքանդակներն ու վրա-

ցերեն արձանագրությունները պահպանվել են անխաթար: Արձանագրություններից մեկը ղեկեղևված է բարավոր-տապանի վերին ձախ հարթակում, կենտրոնում գտնվող հավերժության խորհրդանշանից ձախ, երկարածիգ խաչի երկու կողմերին, ութաոչանոց երկայնի տեսքով: Արձանագրությունը լավ է պահպանվել և կարգացվում է.

1— 8 յ(ձ)տա | շյ(ձ)Ն | րշլսլւլա[ն] ըլլժլւլլոլլոլլոլլոլլ
9— 16 || լալլջլլոլլ ղլլլւլլոլլալլա ղլլալլլոլլլ ըլլ(մերտմա)ճ⁸.

Շր I (49)

Աղ. XIV, 2

Քարգմանություն. Ռուսուլան քագունու ժամանակներից հետո աստված ի քագավորություն Գավրին լինի օգնական:

Երկրորդ արձանագրությունը վիմագրված է քարի ներքևի մասում, ստորին եզրագծի ու նրանով հատվող կիսաշրջանի հարթակում, պակավոր խաչի երկու կողմերին, նախորդի հետ կատարելապես նույն գրչությամբ, յուրաքանչյուր սյունակում յոթ սուր.

1— 5 կ(ա)լ(ցլլուտա) լը(Ձրտոնա)տա | ըա ղլլոլլոլլոլլոլլոլլոլլ ղլլ(ըլլոլլ)

6— 10 ը(Ձր)տ(ոլ)աճղ(ոլ)ձլլոլլոլլատա || ղլլ(մլլոլլ)ա | օղալլնց Ե(ա)տ(լոլլ)ձ-

11— 14 ցլլըլլոլլոլլալլ ը(ձ)ղլլալլ ղլլց | ղլլ(մլլ)ա ձալլալլգալլոլլ.

Շր II (50)

Աղ. XIV, 3

Քարգմանություն. Հանուն աստծո և բաբխասուրյամբ սուրբ Աստվածամեծի, սուրբ Հովհաննես Մկրտչի դրվեց այս սուրբ բաբավոր:

Ի տարբերություն առաջինի, երկրորդ արձանագրության եզրափակող սուղբի որոշ տառանիշեր վատ են պահպանվել: Սակայն վերականգնումը բավականաչափ դյուրին է, որովհետև պահպանված մասերը հուշում են բոսի ինչ լինելը: Կասկածներ ունենալ երկրորդ սյունակի ըա -ն իմաստավորելի: Եթև այն ընդունենք իբրև շագկալ (և), ապա արձանագրությունը պիտի դառնար կիսավրտա, մինչդեռ փաստական շարունակություն չկա և, տեղագրությունից դատելով, չի էլ սպասվում: Ահա այս պարագան թևագրանքով է, որ ըա -ն գիտում ենք ըա ըցձա բայի անցյալ կատարչի (եզ. III դեմք) հապավում (Լ. Մելիքսեթ-Քեկն այն կարգում է ըա ցլլց ըա): Ենամբով մշակված այս մեծադիր քարը եկեղեցու բարավոր է եղել և իբրև այդպիսին կարող էր ղլլմլլ օ (սուրբ) նկատվել⁹: Ասկա հապավումների մի մասը որևէ սկզբունքի չի հետևում. գրիչը հապավել է՝ ինչպես հարմար է

³ Ե. Կալայան, անդ:

⁴ Ե. Կալայանը, ի ղեպ, մտադիր էր արձանագրությունների համահավաք ժողովածու կազմել. որի մասին մասնավոր ծանուցում է հրապարակել «Ազգագրական հանդես» համարներից մեկի հայտարարությունների բաժնում:

⁵ Տե՛ս М. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, St.-Petersbourg, 1851, p. 133—134.

⁶ Նիկողայոս Մառի հեղինակությունը մեր ժողովրդի մեջ այնքան մեծ է, որ հաճախ Մառ ասելով հնագետ է հասկացվել, ուստի այլ գիտնականի այցելությունն էլ կարող էր Ն. Մառի անվան հետ կապվել: Նման մի դեպք տաղերի հեղինակին վկայել է պրոֆ. Բ. Առաքելյանը:

⁷ Լյուդե ղլլոլլլլոլլ-ձլլցլլ, Լոկո—Շաճոլլոլլ ղլլոլլոլլոլլ ղլլոլլըլլալլ, ղլլ. 318—325.

⁸ Լ. Մելիքսեթ-Քեկն առաջին բողո չի վերձանել, իսկ շյձՆ -ը կարգացել է շյ(ձ) և ղլլոլլոլլ իբրև բոնիթոն, այստեղից բխող ղլլուր մեկնաբանություններով:

⁹ Զալլգալլոլլ տերմինի մասին տե՛ս Н. Март, Два грузинских архитектурных термина — «ацрдла» и «балавар», X. В., т. VI, էջ 285—298, օգ. ղլլալլոլլոլլոլլ, մասալլա ղլլոլլոլլոլլ ղլլոլլ ղլլոլլոլլոլլոլլ ղլլոլլոլլոլլ, I, ղլլլլոլլոլլոլլ ղլլոլլոլլոլլոլլ ղլլոլլոլլ ղլլոլլոլլ-լոլլոլլ, տե., 1946, ղլլ. 95—96.

յակ, ուստի սեղան -ի փոխարեն ունենք միայն սե, ետևը...-ի փոխարեն՝ ետևը. Հին վրացերենում բնականոն էր գրել և կարգավորված լեզուներում լեզուներում կամ լեզուներում լեզուներում, մինչդեռ արձանագրության մեջ լեզուներում... ունենալու թելադրանքով հարկադրված ենք լեզուներում լեզուներում վերանայն (ըստ Մեկերսե-Քեկեր՝ լեզուներում լեզուներում)։

Հիշյալ երկու արձանագրություններն էլ թվական չունեն, ուստի թե՛ արձանագրությունների, թե՛ բարիս իբրև բարավոր ծառայած կառույցի (անշուշտ՝ եկեղեցու) շինարարության ստույգ ժամանակը որոշելու համար անհրաժեշտ է հիշատակված անձնավորություններին վերաբերող այլ աղբյուրների բնութագրումը դիտել։ Ըստ այսպես կոչված «Ափխազաց ժամանակագրության», 1222 թ. «Քառարի որդի [Լաշա]-Գեորգին մահացավ և նրա բոլոր Ռուսուղանի թագավոր նստեց»¹⁰։ Այս թվականը հաստատվում է և «Լաշա-Գեորգիի ժամանակակից մատենագրի» վկայությամբ¹¹։ Ինչպես երևում է, Ռուսուղանի թագավորությունն ստանձնելը այնքան էլ հաշտ ու խաղաղ չի բնթացել։ Եթե հավատանք Անանուն ժամանակագրին, ապա «երբ վախճանվեց թագավորը (իմա՝ Լաշան—Պ. Մ.), հավաքվեցին նրա թագավորության բոլոր ավագանիները, իմերացիք ու ամերացիք, երկու կաթողիկոսներն ու եպիսկոպոսները, Նիկիոսից մինչև Դերբենդ՝ բոլոր նրանց հպատակության տակ գտնվողները, և Ռուսուղանի թագավոր կարգեցին, նստեցրին թագավորական գահին, կարգի համաձայն օրհնելով թագավորությունը»¹²։ Խնդիրն այստեղ Ռուսուղանի օժիվը-չօժիվը իրողությունը չէ, այլ այն, որ Լաշա-Գեորգիի կտակի համաձայն Ռուսուղանի թագավորությունը տեղում էր մինչև Լաշայի որդի Գավթի շախահան գահավայր («Իսկ բրոջա՝ Ռուսուղանին, հայտնում եմ ասածու առաջ և ի յուր ձեզ բոլորից, որպեսզի մեծացնի իմ որդի Գավթին, իսկ երբ կկարողանա թագավորել ու վերնավարել՝ թագավոր դարձնի»)»¹³։

Աղբյուրների միաձայն վկայությամբ¹⁴, Ռուսուղանը «բազում հնարիք ջանալով կորուսանել դնա», որպեսզի թագավորությունը իր որդի Գավթին ժառանգի։ Ահա մեր արձանագրության մեջ խոսվում է հենց այս Գավթի մասին, ընդ որում տակավին Ռուսուղանի օրոք, մասնավորապես ակնարկելով, թե հայցումը վերաբերում է «Ռուսուղան քազուհու ժամանակներից նստո»-ին, երբ թագավորությունը Գավթին կտրվի։ Արձանագրողի ակնարկն ու մտահոգությունը հասկանալու համար նորից պիտի հիշենք, որ Լաշայի

¹⁰ «Երկու լեզուներում», Երևան, 1968, թ. 25, համա. էջ 96: Աղբյուրների ու գրականության բնութագրումը տե՛ս օգ. խոսքի շեղում, յերև. ինտրոդ., III, 1966, թ. 23, 37—43: ¹¹ Ե. Գ., I, 37: ¹² «Վրաց ժամանակագրություն», էջ 58: ¹³ Անդ. ¹⁴ Նշվ. աշխ., էջ 81—86, Կ. Գանձակցի, Պատմ. հայոց, էջ 289, Սա. Օրբելյան, Պատմ. նահանգի Սիսական, էջ 420—421 և այլն:

կտակով Ռուսուղանը թագավորելու էր մինչև Լաշայի որդի Գավթի կտտարելահասակ դառնալը։ Հիշյալ ասումով բացառիկ արժեքավոր տեղեկություն է պահպանվել 1232 թ. Գեորգիում գրված մի հիշատակարանում. «Արց, գրեցա սա ի թուխ Հայոց ՈՋԱ, ի գաւառիս Կաշնոյ, ի գերահռչակ սուրբ ուխտս Գեորգայ, ընդ հովանեա սուրբ Աստուածածնիս և սուրբ Լուսաւորչիս Գրիգորի, ձեռամբ մեղապարտ Սոսիանոսի, յիշխանութիւն իշխանոց իշխանի աթարակ Իսանի և որդոյ նորա Աւագին, և վասն զի Վրաց քազուհ ոչ զոյր, ունէր զարուակալութիւնն դուստր Թամարին [Ռուսուղան], և ի հայրապետութեանն Հայոց տէր Կոստանդին և յԱղուանից հայրապետութեանն տէր Յովաննիսի»¹⁵։ Այսպիսի բխում է, որ շատերի աչքին Ռուսուղանը «աթարակալ» էր, ինչպես որ Լաշան էր պատվիրում, իսկ գահի օրինական ժառանգորդը շարունակում էր համարվել Լաշայի որդին։ Որքան էլ փորձենք մեղմացնել Գանձակցու, Օրբելյանի և վրաց Անանուն ժամանակագրի հեղորոշումները Ռուսուղանի՝ եղբորորդու նկատմամբ ձեռնարկած խստութիւնների մասին, ինչպես հակված է Իվ. Ջավախիշվիլին¹⁶, այնուամենայնիվ, փաստ է, որ նա շտապեց իր անշտահաս որդուն թագավոր օժնել՝ եղբորորդու ակնկալություններին ու իրավունքներին վերջ դնելու համար։ Պատահական չէ, որ վրաց մեծավորներից բնորոշ մասնակցեցին այդ պատկարովանքը, և այդպես կատարվեց հավիվ թե նրանց «անպարտու» լինելու պատճառով, ինչպես փորձում է ժամանակագիրը բացատրել (նկատի ունենալով խորեղմացիների ներկայությունը)¹⁷։

Մեր արձանագրությունը վիճարկված է այս եղևություններից հետո, երբ Գավթին մոր գահակից թագավոր էր, ուստի կարևոր է ճշտել, թե ե՞րբ է այդ տեղի ունեցել։ Իվ. Ջավախիշվիլին գտնում է, որ Գավթին ծնված պիտի լինի 1225 թվականին, իսկ բանի որ թագավորվելիս, ըստ ժամանակագրի, հինգ տարեկան էր¹⁸, ապա թագակից է դարձել 1230 թ.¹⁹։ Բայց, կարծում ենք, այս հաշվումներից ոչ մեկը իրական չլսեաք է լինի։ Պիտի բնորոշել աղբյուրների վկայությունը, թե Ռուսուղանն իր որդուն թագակից այն բանից հետո, երբ եղբորորդուն ուղարկեց Գիսանգիի հետ ամուսնացած աղջկա մտտ, իսկ վերջինս, Ջավախիշվիլու հաշվումներով, կարող էր ամուսնանալ 12—13 տարեկան դառնալուց հետո, ասել է՝ 1236—1237 թվականներին (ըստ Արուիֆարաշի հաղորդումների)²⁰։ Գրանից շուտ հիմք չունենք Գավթին օժիված ենթագրելու միջոցն երևում է, հավաստի պիտի լինի «Ափխազաց ժամանակագրության» տեղեկությունը, թե «Ռուսուղանի որդին (իմա՝

¹⁵ Գաբրիել Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 882—883: ¹⁶ Նշվ. աշխ., էջ 107—108: ¹⁷ ՏՆ՝ «Վրաց ժամանակագրություն», էջ 68: ¹⁸ ՏՆ՝ «Անդ», էջ 67—68: ¹⁹ օգ. խոսքի շեղում, Նշվ. աշխ., էջ 106: ²⁰ Այս լույսի տակ, թերևս, սրբագրելի է և Անանուն ժամանակագրի «հինգ տարին»՝ օտեղտեղտա-տանհինգ: Լաշայի որդի Գավթին այդ ժամանակ 10—11 տարեկան էր (ծնված 1216 թ., տե՛ս «Մանր ժամանակագր.», I, էջ 38):

քննությունից այլ իրողություններ բացահայտվեն, բայց մեր խնդրի համար միանգամայն բավարար է հավաստիանալ, որ 11-րդ դարի 90-ական թվականներին Լոսիի Կյուրիկյան թագավորը Աբասն էր (նրա եղբոր՝ Գավիթ Բ-ի հետ կապված հարցերի քննությունը ևս մեր նպատակից դուրս է): Ուրեմն՝ վրաց Գիմիտրե կաթողիկոսի օրոք կառուցված եկեղեցու շինարարական արձանագրության մեջ Աբասի թագավորության հիշատակությունը միանգամայն բնականոն է: Ընդ որում, զա Աբասին վերաբերող վիճաբարական հիշատակություններից ամենահինն է, գրված 1095 թվականին: Մինչդեռ ցարդ կարծվում էր, թե Գիմիտրեի կաթողիկոսությունը տևել է մինչև 1090 թ., որին հաջորդել է Բարսեղ III-ը: Շահնագարի արձանագրությունից պարզվում է, որ վրացագիտության մեջ ընդունված գահակալության այդ տարիները վերանայելի են: Գիմիտրեն կաթողիկոս է եղել մինչև 1095 թ. ներառյալ, և Բարսեղի կաթողիկոսության տարիները դրանից հետո պիտի հաշվել:

Թև ուրբեր են եղել Չնեկայի որդի շորս եղբայրները՝ այլ աղբյուրներից հայտնի չէ. թերևս վրացական վիճաբար արձանագրությունների ու միջնադարյան վավերագրերի գիվաններ հրատարակելուց հետո երևան գան այդ տոհմին ու նրանց ինքնությունը վերաբերող այլ հիշատակություններ և: Թ. Ժորգանիայի հրատարակած աղբյուրներից մեկում, օրինակ, հանդիպում ենք Չնեկասշվիլի Ասաթ աղզանվանը³⁴, իսկ թե որն է փաստական կապ կարելի՞ է տեսնել այդ և շորս եղբայրների ազգանվան միջև՝ դժվարանում ենք ասել: Ավելին, մենք նույնիսկ հնարավորություն չունենք ճշտելու, թե ինչպես պետք է հասկանալ արձանագրության «Չնեկայ-ձե եղբայրներ» որակումը՝ իբրև Չնեկայի շորս որդիներ՝ եղբայրներ, թե՞ պարզապես նրա տոհմին պատկանող շտապիղներ այդ ազգանունով (եթե հայերենի վերածենք՝ Չնեկյաններ), ինչպես որ ունենք Աբուլիթ, Աբուլթի որդի և Աբուլթիթիս-ներ (իբրև՝ հայ. Աբուլթյան) կամ Լիպարիտ, Լիպարիտի որդի, Լիպարիտյան-ներ:

Այս հարցերը ինչպես էլ լուծվեն, Կյուրիկյան թագավորության սահմաններում 11-րդ դարի վերջերին (Աբասի օրոք) վրացերեն արձանագրություն ունենալու փաստը ինքնին ուշագրավ է, մասնավորապես, ինչպես նշեցինք, այն գտնվում է հարստության երկրորդ նստոց Լոսիից ոչ հեռու Ինչխոսք, Կյուրիկյան թագավորության սահմաններում վրացագրի բնակչության առկայություն առանց ուղղակի աղբյուր ունենալու էլ ենթադրվում է, հատկապես, եթե խոսքը նրա հյուսիսային մասին է վերաբերում: Հիշյալ առումով պատահական չէ, որ վրացերեն տապանագիր կա և Լոսիի միջնաբերդից դուրս գտնվող հին գերեզմանոցում: Այստեղ կարդում ենք.

+ Երևա ան(ս)և(ս)և(ս) Մ(ցլ)ն(լ)ո(ս) Լ(մ)ր(ո)ժ(մ)ն.

Լև (52)

Աղ. XIII, 2

³⁴ Երևան, 11, 242. Չնեկացի տոհմն ու նրանց ներկայացուցիչները երկիցս հիշատակված են Սանահնի հայերեն արձանագրություններում (տե՛ս Կ. Ղաֆադաբյան, Սանահնի վանքը..., էջ 139, 153—154):

Թարգմանություն. Անաստասիա արեղային ողորմի ասոված³⁵:

Չնեկայ-ձե եղբայրների թողած շինարարական արձանագրության նույն պատի շարքերում պահպանվել են հին կառուցի այլ քարեր ևս, որոնց վրա դարձյալ վրացերեն գրություններ կան: Այսպես, հարավային պատի ներքևից երրորդ շարքում (պատուհանի տակ) կա արևի ժամացույց՝ վրացատառ ժամանիշերով (Աղ. XV, 2): Նույն պատի հիմնաշարային քարերից մեկի վրա պահպանվել է միաբանական կարճատև արձանագրություն.

յ(ո)ս(ո)ց Մ(ց)ո(ց)ալց մ(ց)լ(ա)ձ մ(ո)ո(ս)լ[ա]ն³⁶.

Շր IV(53)

Աղ. XV, 3

Թարգմանություն. Քրիստոս, ողորմյա՛ Չնեկայ Միխանին:

Ճձ հայտնվումը մեղաձ բացելիս կակետը այն է, որ Չնեկայ-ձե շորս եղբայրներից մեկը կարող էր նման առանձին հիշատակարան թողնել (թերևս ավա՞ղը): Եթե այդ իրական է, ապա կարող էինք ճշտված համարել եկեղեցին կառուցող եղբայրներից մեկի անունը: Ի դեպ, արձանագիր այս քարը իր տեղում չէ, որովհետև այն եռակողմյան շրջանակ-քիվ ունի, որի շարունակությունը հաջորդ շարքերում էր լինելու Գիտենք նաև, որ ներկա գտնված տեղով կիսված շրջանակի առկայությունը իմաստազուրկ է: Արձանագրությունը փորագրված է քիվից դուրս, քարի ստորին կողմին և պահպանվածությունը վիճակին էլ առանձնապես վատ չէ:

Հարավային պատի 3—4 կիսաշարքի քարերից մեկի վրա նույն կարճատևության ուրիշ արձանագրություն է եղել, որ այսօր խիստ հողմնահարված է: Պահպանված տառահարթերից կարծես կարելի է երևա բառ կազմել.

յ(ո)ս(ո)ց Մ(ց)ո(ց)ալց Լ(ս)ց(ո)տ...

Շր V (54)

Թարգմանություն. Քրիստո՛ս, ողորմյա՛ Դավթին...

Քանի որ վերոբերյալ երեք արձանագրությունները (ժամացույցը ներառյալ) գրված են Չնեկայ-ձեների կառուցած եկեղեցուց մնացած քարերի վրա, պիտի ենթադրել, որ դրանք ժամանակակից են շինարարական արձանագրությանը: Այդ հուշող երկու պարզագու ևս կա. նրանցից մեկում ինչ-որ Չնեկայ Միխան է հիշվում, որին կարելի է, ինչպես ասացինք, կառուցող եղբայրներից մեկը համարել, իսկ պատերի վրա պատկերված ժամացույց-ները գերականցապես շինարարության ժամանակակից են՝ նախապես սահմանագրած, արևդոտ տեղում ու համապատասխան քարի վրա (Աղ. XV, 2): Եթե այդպես է, ապա Շահնագարի ս. Գեորգ եկեղեցու պատերին պահպան-

³⁵ Տապանագրի տառերը իրենց հնագրական նկարագրով շատ նման են Չնեկայի տապանագրերի գրերին, թերևս և նույն շրջանի՝ 12—13-րդ դարերի:

³⁶ Լ. Մելիքեթ-Բեկը մըձ է կարդում (sic!):

ված մյուս արձանագրությունները ևս վերաբերում են 11-րդ դարի վերջերին և Հայաստանում եղած վրացերեն արձանագրությունների մեջ առավել հնագույններից են:

* * *

Շահնազարից ոչ հեռու, Զուջաքենո կոչվող գյուղի եզրին, բարձունքի վրա տասնամյակներ առաջ կար կիսավեր միանավ եկեղեցի, որի հյուսիսային պատի սյուներից մեկի վրա, ներքուստ, Լ. Մելիքսեթ-Բեկը տեսել ու ընդօրինակել է հին վրացերեն մի արձանագրություն՝ «Նուսխուրի» գրչությամբ³⁷: Տեսական որոնումներից հետո սողերիս հեղինակին հաջողվեց գտնել արձանագրություն ունեցող բարը (այն գործածվել է իբրև շարքի բար՝ հանրային կառույցներից մեկի արևմտյան պատին, եկեղեցու գտնված սեղից շուրջ մեկ կիլոմետր հարավ): Արձանագրությունը պահպանվել է անխափար և կարդացվում է.

և(ս)ն(ց)լուտա Լ(մրոտսևա)տա ցեց

հ(շո)ն, ցորայլուտա

Գ(օ)նոս(ս)նտա Լ(ս)ց(շո)լուտա

ց(ն)Ս(ս) Լ(ս)նոն Լ(ս)ց(շո)լուտա

Ե Լ(ս)ց(շո)լուտա Լ(ս)նոն Լ(ս)ց(շո)լուտա

Եր VI (55)

Աղ. XVI

Թարգմանություն. Հանուն աստուծո, այս մենք՝ գորակեցի Փիչոսաննա գրեցինք. ով առաջ մահանա՝ բոլոր նրան 10 օր պատարագ տան:

Հազիվ թե արձանագրությունը 13—14-րդ դարերից հին լինի: Շահնազարի վիճաբերին ժամանակակից համարելու Լ. Մելիքսեթ-Բեկի դրույթը չի ապացույցվում: Բայց թերևս նշտ է նրա կոհնումը, թե հանձին Փիչոսանց՝ կոռու բաղկեղոնականներ են հիշատակվում: Պակաս ուշագրավ չէ Գուրակ տեղանվան հիշատակությունը, որից և՛ դորակեցի:

³⁷ Տե՛ս Լ. Մելիքսեթ-Չեցո, *Նշվ. աշխ.*, էջ 322:

ՔՈՐԱՅՐ

Քորայրին վերաբերող հնագույն տեղեկությունը պահպանվել է Վարդանի մոտ. «էին և կանայք թագաւորացոնք՝ կթոնտորեայք կուսութեամբ ի Քորայրն, խորասու և Մարիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Սարկաւազն զգուշական խրատս»¹: Նույն տեղեկությունը կրկնված ենք գտնում և Մխիթար Այրիվանցու մոտ. «խորասու և Մարիամ ի Քորայրն կային կուսութեամբ»²: Հովհաննես Սարկավազը մահացել է 1129 թվականին, ուրեմն խորասուն և Մարիամը «կուսութեամբ ի Քորայրն» կլինեին դրանից առաջ: Այս վկայություններից կարելի է եզրակացնել, որ Քորայրը մենաստանը 11-րդ դարի վերջերին կամ 12-րդի սկզբներին արդեն հիմնադրված է եղել: Հիշյալ տեղեկություններին անդրադարձած հայագետները խորասուին և Մարիամին, իբրև թագավորացուք, նույնացրել են Կյուրիկե 2-րդի աղջիկների հետ: Հիշյալ նույնացումից ելնելով, Լ. Մելիքսեթ-Բեկն առաջարկում է խորասու անունը Ռուսուգան սրբազրել, իբրև՝ խորասու >խո-ուսու< [խո]-ուսու< Ռուսու[գան]> Ռուսուգան³: խորասուին ու Մարիամին Կյուրիկե 2-րդի աղջիկների հետ նույնացնում են և Ն. Ակիևյանն⁴ ու Ղ. Մովսեսյանը⁵:

Կասկածի տակ շանելով Վարդանի հաղորդման ստուգությունը (մանավանդ որ խոսքը Սարկավազի նման հայտնի անձնավորության է վերաբերում), մենք խորասուի և Մարիամի նույնացումը Կյուրիկե 2-րդի աղջիկների հետ ժամանակագրականորեն անկարելի ենք համարում: Վարդանը նրանց մասին խոսում է մինչև 1129 թվականը, Այրիվանցին՝ 1131-ի տակ⁶: Հարց է առաջանում, 12-րդ դարի առաջին քառորդում կուսակրոնության չափազանց

¹ «Հաւարումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 122:

² «Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860, էջ 63:

³ Լ. Մելիքսեթ-Չեցո, լեռնորդի և միսի կոմպլուրի և լեռնորդի Վարդանայի, Երև. տ. Մ. Երևան, VII, 23, 63:

⁴ Ն. Ակիևյան, Գավիթ վարդապետ Քորայրեցի («Հանդէս ամսօրեայ»), 1908, էջ 139—140:

⁵ Ղ. Մովսեսյան, Լօռի կյուրիկեան թագաւորներու պատմութիւն, Վիեննա, 1923, էջ 64:

⁶ Հմմտ. Միք. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. 9, Վենետիկ, 1786, էջ 40:

Մարրամը, օրինակ, կարող էր Հաղբատի Մեծ գավթում 1212 թվականին արձանագրություն թողնել: Կարծում ենք, որ այսպիսի շուրջ հարյուրամյա գործունեություն վերագրելը չի պատճառաբանվում: Վարդանի հիշատակած հորատուն և Մարրամը (եթև պատմիչը չի շփոթում) 11-րդ դարի վերջի կամ 12-րդ դարի առաջին քառորդի անձինք են, հետևաբար, Քորայրի մասին առաջին անգամ խոսվում է ոչ թե Կյուրիկե 2-րդի (1145—1185) զուտարեշի կապակցությամբ, այլ դրանից բավական վաղ: Դիտելու է, որ հիմք չկա հորատու անձնանունը կասկածելի համարել և Ռուսուգան սրբագրել, որովհետև այդ անունը, իրոք, գործածական էր Տաշիր-Չորագետում: Նրան հանդիպում ենք Հաղբատի Մեծ գավթի (արևմտյան պատի ստորին մաս) արձանագրության մեջ, ուր Տովպը, Դեղը, Վանականը, հորիշահը և ուրիշներ պատարագ են առնում իրենց ծնողներին՝ «Մաթունին, Ախպէրաննո և հորասուէ»⁷: Հ. Արմեցու տեղեկությամբ, Սանահնում գտնվելիս է եղել հորատուի տապանագիրը. «Այս է հանգիստ հորասուի, թուին ՉՄ»⁸: Ուրեմն, հորատու անունը արյուրներով ավանդված է և սրբագրելու անհրաժեշտություն չկա:

Քորայրի մենաստանին վերաբերող կարճատև հիշատակություն կա նաև Կիրակոս Գանձակեցու մոտ: Իր Զաքարիա որդու սպանությունը տեղեկացած Շահնշահը 1261 թ. ընդ սրտովին անկեալ՝ ի տրամուծենն մեռաւ: Եւ տարեալ թաղեցին զնա ի Քորայրն, զոր առ կինն նորա ի Հայոց»⁹: Ուրեմն 13-րդ դարի կեսերին Քորայրը միաբնակ հայերից անցել էր երկաբնակներին՝ հայ քաղկեդոնականներին: Ստորև կտեսնենք, որ տեղիս հայերեն ու վրացերեն արձանագրությունների ուսումնասիրությունը ևս հաստատում է նման անցումը:

«Քորայրեցի» անունն է կրում 12-րդ դարի հաղբատյան դպրոցի ներկայացուցիչ Դավիթ վարդապետը: Նրա մասին խոսում են Կիրակոս Գանձակեցին¹⁰, Ներսես Լամբրոնացին¹¹ և ուրիշներ: Կարծիք է եղել, թե Դավիթը Քորայրեցի է կոչվել այնտեղ կրոնավորելու պատճառով: Ն. Ակինյանի համոզմամբ, նա չիր միանձնական կենաց սկիզբն ըրած է Չորագետոյ ափանց վրա՝ Այգեհատ գիւղի կից Քորայր (Քորար կամ վրացերեն Քորեր) ժբ դարու անուանի զեղեցիպաղի մենաստանն»¹²: Նման կորակացությունը ժամանակին առարկել է Լ. Մելիքսեթ-Բեկը¹³, իսկ վերջերս էլ՝ Հ. Ոսկ-

⁷ Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 165: Նույն անձնանունը հմտ. էջ 240:
⁸ «Յովհաննու Արմեցույ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ ս. Նշանին», Հրատարակեց Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1965, էջ 161:
⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 393:
¹⁰ Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 171:
¹¹ «Ներսէսի Լամբրոնացույ Տարոնի եպիսկոպոսի՝ Ասեանարանութիւն և Քուլթ և ծառք», Վենետիկ, 1865, էջ 223:
¹² Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 139:
¹³ Լ. Պեղոյանց-Սեփ, «Իրոջու մեծընդամ ժողովրդին» և մասն յեռնոմ, թ. 193,

յանն¹⁴ ու Վ. Հակոբյանը¹⁵: 1281 թվականին ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում ուղղակի ասվում է, որ Դավիթը Քորայրեցի է կոչվել այնտեղ ծնված լինելու պատճառով. «Գրեցաւ, որ է հանգիստ նորա ր զերահոջակ սուր ուխտն Հաղբատ և մականուն Քորե[ր]ցի կոչեն, վասն ձեռագրան սնտի լինելոյ և նոյն իմեք անտի ծննդեամբ»¹⁶: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Քորայրը ոչ միայն մենաստանի անունն է, այլ նաև բնակատեղիի:

Քորայրը 12—13-րդ դարերի Տաշիր-Չորագետի նշանավոր մենաստաններից է: Մասնագիտական գրականության մեջ դիտված է, որ այստեղի կառույցները երեքից ոչ պակաս խմբի են բաժանվում: Առաջին կամ հնագույն մասը գտնվում է վերևում և վիմափոր է, այլևս անանցանելի: Դրսից երևում են առանձին պատերի հատվածներ, իսկ տեղացիների վկայությամբ՝ այնտեղ տակավին պահպանվում են հնագույն որմնակարների հետքեր¹⁷: «Քորայր» (հետագայում՝ Քորեր) տեղանվան ստուգաբանությունը ևս հավաստում է նշված այլ-մենաստանների սկզբնականությունը: Հայագիտության մեջ դիտված է, որ «Քոր-այր» բառի առաջին մասը վրացական ծագում ունի՝ յոժոժօ—յոյոժօ, որ նշանակում է «անձավ, այր»¹⁸, իսկ երկրորդ մասը հայերեն այր բառն է, որ 13-րդ դարի վերջերից ալ>ե հնչյունափոխությամբ դարձել է Քորեր: Ս. Տեր-Ավետիսյանը հակված է եղել հիշյալ երբազորիչը հոգնակի ցուցիչ համարելու, այսինքն՝ յոժօ-եր¹⁹: Նման ստուգաբանությունը համողիչ չէ թեկուզև այն պատճառով, որ Գանձակեցու և Վարդանի մոտ տեղանունը «Քորայր» է, Լամբրոնացու «Քոթում»՝ «Քորաւ», 1281 թվականի հիշատակարանում՝ Քորե[ր] (նաև «Գիրք պատճառաց»): Հավանաբար, գործ ունենք «այր» բառի հետ²⁰:

¹⁴ Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 54:
¹⁵ Վ. Հակոբյան, Դավիթ Քորայրեցու հիշատակարանը (Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1952, № 8, էջ 113):
¹⁶ Վ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 113: Բերում է բառ Ս. Տեր-Ավետիսյանի Ձեռագրերի ցուցակի (Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 4, էջ 284): Նույն հիշատակարանը գտնում ենք նաև Երուսաղեմի № 1758 ձեռագրում (էջ 491), գրված 1281 թ. (սե՛ս Ն. Եղ. Պողոսյան, Մայր ցուցակ..., հ. 6, էջ 92): Դավիթն այստեղ կոչված է Քաղեցի:
¹⁷ Հմտ. Յեղոյանց-Սեփ, նշվ. աշխ., էջ 63:
¹⁸ յոժօ-յոյոժօ-ի կերպով՝ կարսա, աման, նշանակությունը ևս ծանոթ է եղել հայերին: Հագործնում ի հայտ բերված կաթնային արձանագրության մեջ գործածված է «բոր»՝ աման, կարսա նշանակությամբ: Այդ կապակցությամբ ակադ. Ն. Մալք գրում է. «Котел снабжен армянской надписью 681 г. (1232 г. н. э.), в которой одно слово, в литературе заподозрено, именно бոր qob котел представляет несомненно заимствованное из грузинского Ꚗած qwab-ի котел, проникшее к армянам, по всей видимости через халкедонитскую армянскую среду» (Н. Марр, Ани, стр. 104).
¹⁹ Վերջերս «Քորայր» տեղանվան ստուգաբանության անդրադարձավ Գ. Գալիբեյդազյանը (տե՛ս նրա՝ «Спеленгистические разыскания 1970 года в Армении», «ԵՊՅ» (ԵՊՅ, ԵՊՅ, ԵՊՅ, ԵՊՅ, ԵՊՅ), 1971, №1, թ. 184—185):
²⁰ Լ. Պեղոյանց-Սեփ, նշվ. աշխ., էջ 60—61: Լ. Մելիքսեթ-Բեկի հիշատակարանությունը տե՛ս Վերայ արյուրների..., հ. Գ, էջ 88, ծան. 13:
²¹ Հմտ. Հոսումյար: Թրեխ 1281 թվականի «Քորեցի» ձեռ պատահական եր-ի անկման

Քորալրի երկրորդ հուշարձանախումբը, ինչպես պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկն է արձանագրել, բաղկացած է շուրջ յոթ կառույցից²¹: Երբորդ մասը համեմատաբար նոր է, հայտնի «Ձիթախանց եկեղեցի» հորջորջումով: Հիմնական հուշարձանախմբի «բոլոր եկեղեցիները, առանց այլևայլության, ներկայացնում են միանավ, անգմբեթ բաղիլիկա, միայն տարբեր չափսերի ու համամասնությունների: Նրանց մեջ ամենից հետաքրքիրը գլխավոր եկեղեցին է՝ ժամանակով, որը որմնանկարներով է զարդարված եղել»²²: Անդրազանակով գլխավոր եկեղեցու ճարտարապետական նկարագրին, գիտնականը իրավացիորեն դիտել է, որ արևելյան ճակատը (արտիզ) «արտասովոր սուպ-վորություն է թողնում՝ ընդհանրապես հայտնի մեկ պատուհանի փոխարեն հինգ պատուհան ունի. մեկ խոշոր կենտրոնում, մեկական փոքր նրանից աջ ու ձախ, իսկ երկուսն էլ՝ վերեւից...»²³: Վերջին երկուսի անհրաժեշտությունը թվարկված է զուտ կառուցողական նկատառումներով, ուստի ճարտարապետները պիտի այն բացատրեն, իսկ ինչ վերաբերում է խորանի երեք պատուհաններին, ապա երբորդությունը խորհրդանշող բաղկերանական կառույցների բնորոշ առանձնահատկությունն է²⁴:

Քորալրի մասին եղած գրականությունը մեծ չէ: Այն հիշատակվել է տարբեր աղբյուրներով, սակայն առանց համակողմանի ու ամփոփ քննություն միտումի: Վախուշտի Աբբայացիք մի նախադասությունը է անդրադարձել Քորալրին. «Սրանից (իմա՝ Հազրատից ու Սանահնից—Պ. Մ.) վերև (ճիշտը՝ ներքև—Պ. Մ.) կա փոքր վանք, սակայն մեծաշեն՝ Քորերի, հայոց ձևովն է»²⁵: Վախուշտին, բնական է, հարցը չի մասնավորեցրել և եթև Հազրատն ու Սանահնիք «վրաց թագավորների կողմից կառուցված» է դիտել, ապա Քորալրը առավել հիշատակվում է «հայր ձևովն է» պիտի ասեր, թերև՝ միաբնակ հայոց մենաստան լինելը նկատի ունենալով: Այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ 18-րդ դարի կեսերին Քորալրում գործող եկեղեցի է եղել, այն էլ միաբնակ դավանություն: Թերևս մեր հետախույզները կասկածելի թվար, եթև լրացուցիչ այլ աղբյուր չունենայինք: Մաշտոցի անվան մասնադարանի № 1473 ձևագիրը 1676 թ. ընդօրինակվել է Քորալրում: Գրչի՝ Շմափոն Աբեղեցու Գտեղեցու, հիշատակարանում կարդում ենք (էջ 294Կ).

հետևանք չլինի, այլ Քոր տեղանունից (+ եցի): Այնուամենայնիվ, դրանից երկրորդ բաղադրիչ նշանակությունը չի փոխվում: Կարելի է նույնիսկ մտածել, թե Քոր-ի տակ արդյոք հայերեն Կոփ-էլ բառահիմքը չլիտի՝ որոնել (իմա՝ Կոփայր—Քորայր, հմտ. Կաթիկոփ բառը): Համենայն դեպս՝ տեղանունը Պարոմնոսի մաս հիշատակվող Մոսէսը —Քորարի հետ առնչություն չլիտի ունենա: Վերջինիս մասին մանրամասն տե՛ս J. Marquart, Eransahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, 1901, S. 138, 146.

²¹ Ը, Յղժոթեօ-Յղժո, նշվ. աշխ., էջ 63:
²² 23 Անդ:
²³ Անդ:
²⁴ Նմտ. Ա. Բ. Երևյան, VII դարում հայկական հուշարձանների կրած մի փոփոխություն մասին, ՊԲ, 1966, № 4, էջ 151—172:
²⁵ Յանքժո, Երբորդ և Յանքժո Նախադասության, Երբորդ, 1941, թ. 35. Հայ. թարգմ. հմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց պարսկերենը... հ. Գ, էջ 79:

«Սաացող Մալուքեանց գոյս՝
 Ոգեալ Շմաան վարանելոյս,
 Ի յերկիս Լոտի կոչեցելոյ,
 Ի յանապատիս Քոպալոյ,
 Ի հայոց քվակաճի շրջանն եկեալ Ռորդի,
 Հարիւր երոդ քիւ յանլցի
 Եւ քառ զկնի ներստ դիցի»:

Ապա՝ «Ի հայրապետութեան տեանն Յակոբայ Երջանկոյ Ջուղայեցոյ և ի թագաւորութեան պարսից Շահ Իսմայիլին... Եւ այժմ աւարտումն եղև ի յանապատս Քոպալոս բարձրաբերձ ստոր Աստուածածնիս, զոր նոր սկսեալ եմ հաստատեալ, զոր տէր Յիսուս աղօթիք ձերովք հաստատուն պահեսցէ զստոր տունս: Արդ՝ աղաշեմ դամենայն աղգատահմն իմ լիշատակել... և զնոգեալ եղարձն իմ տանս միաբանաւ տէր Սրապիոնն, տէր Բարսեղն, մահդասի Կիրակոսն» (էջ 320Կ): Պարզ է, որ 17-րդ դարի երկրորդ կեսին Քորալրի եկեղեցին, հավանաբար ինչ-որ շրջանի լուծվածից հետո, նորից վերակազմվել է՝ «նոր սկսեալ եմ հաստատեալ»: Վերջին արտահայտությունը կարելի է երկակի մեկնաբանել՝ գրիչն է այնտեղ նոր հաստատվել և՛ Շմափոն Գտեղեցին ինքն է մենաստանիս վերակենդանացնողը: Բոլոր դեպքերում, շուրջ հոգևորականների առկայությունը այլևս ինքնին ապացույց է նորոգված գործունեության: Վախուշտի արտահայտությունը բերված հիշատակարանի լուսի տակ լիովին ընկալելի է դառնում:

Համեմատաբար մանրամասն է Ս. Ջալալյանցի նկարագրությունը՝ հայերեն արձանագրություն հիշատակմամբ²⁶: Առավել ծավալուն նկարագրությունը տրված է Ե. Կալայանի և Գ. Աղանյանի աշխատություններում²⁷: Տարիներ առաջ հիշյալ նկարագրություններն ի մի բերեց հայագետ Հ. Ոսկյանը, հիմնականում ճիշտ ուղղվածելով մենաստանի հետ կատարված զավանական փոփոխությունները²⁸: Եվ այնուամենայնիվ՝ ամբողջական և պատմականորեն արդարացի քննության համար պահանջվում էր տեղիս հայերեն ու վրացերեն արձանագրությունների ստույգ վերծանություն և պատմա-բանասիրական անհրաժեշտ մեկնաբանություն, մասնավորապես որ նման ուսումնասիրությունը մեծապես կնպաստի Տաշիր-Չորագետի երկաթե մենաստանների առաջացման, որմնանկարազարդման ու այլ հարցերի ճիշտ լուսաբանությանը²⁹:

²⁶ Տե՛ս Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Ա, Տիփլիս, 1842, էջ 102: Վրացերեն արձանագրություններն այստեղ իրեն հունական են նկատված:
²⁷ Տե՛ս Գ. ա. Բ. Աղանյան, Հեից նորից («Լուսա», 1900, էջ 43, 45): Ե. Կալայան, Բորչալուի գավառ («Աղգ. հանդես», 1901, էջ 419—422):
²⁸ Տե՛ս Հ. Ոսկյան, Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, էջ 49—50:
²⁹ Հանգուցյալ Լ. Գուրնովոն մի երկու խոսքով բնութագրել է Քորալրի որմնանկարները: Նա Քորալրը գտել է այն մենաստանների շարքը (Տիգրան Հոնենցի եկեղեցի, Բախտագեղ, Հաղբատ (մասամբ), Ախթալայի վանք (վերին շրջան), Կիրանց վանք, որոնց որմնանկարումը կատարված է վրացական որմնանկարչության ազդեցությամբ, գուցե և նույնիսկ վրացի

ինչպես Հայաստանում պահպանված վրացերեն շատ այլ արձանագրու-
թյուններ, Քորալում վիմագրվածը ևս առաջինը ակադ. Մ. Բրոսեի ուշա-
գրութանն է արժանացել: Նա անձամբ չի եղել տեղում, բայց ձեռքի տակ
ունեցել է Հ. Վ. Արխիսի տրամադրած պատճենները, որոնց անվերապահ վստա-
հել է²⁹: Նա վերծանել ու թարգմանել է երկու վրացերեն արձանագրություն,
բայց բանի որ ինքը չի եղել տեղում, տարբեր արձանագրություններն իրար
խառնելու վտանգից չի կարողացել խուսափել³⁰: Շփոթը այնքան որոշակի
է, որ Թ. Փոքրահյան ճնարավոր է նկատել առանց ձեռքի տակ լուսանկար
կամ պատճեն ունենալու վերականգնել ու որոշակի սրբագրել նրա հրատա-
րակությունը և ապա, իբրև Վրաստանի պատմությանը վերաբերող աղբյուր,
գետեղել իր նշանավոր «Ժամանակագրություններում»³¹:

Կարելի է վստահորեն ենթադրել, թե Քորալի հայերեն և վրացերեն
արձանագրությունների նկատմամբ պատշաճ հետաքրքրություն է ցուցաբերել
ակադ. Ն. Մառը: Նրա հանձնարարության մեջ Ա. Քալանթարը Bibliotheca
Armeno-Georgica մատենաշարի համար պատրաստած է եղել տեղիս արձա-
նագրությունների վերծանությունը: Այդ մատենաշարի կրթորդ գրքի³² վերջում
ներկայացված է գալիք հաստիների ծանուցումը, ուր իբրև «ընդ մամուլ»
գտնվող գործ հիշատակված է «Արձանագրութիւնք վանուցն Քորալի հայ-
կական և ի վրաց լեզու, Ա. Լուսի Քալանթար»³³: Գծախոտարար, Ա. Քալան-
թարի սույն աշխատությանը վիճակված չէր հրատարակվել, իսկ այժմ
հեղինակին հայտնի չէ, թե որտեղ է գտնվում (իհարկե, նրան որևէ օրինակ
պահպանվել է):

4. Կոստանյանցի «Վիմական տարեգրում» տպագիր գրականությունից
բաղված ու ժողովածու է մտնված Քորալի երեք հայերեն արձանագրու-
թյուն³⁴, նախորդ վերծանությունների վրիպում-պակասավորությունը նույնու-

վարպետների կողմից» (Л. А. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, стр. 33). Լ. Գուրնովսի գրությունը, հայ բողոքականության պատմության
ճիշտ լուսարանման զեպրում, մեր համոզմամբ, որոշ սրբագրության կարիք կունենա:
Ասովել վերահայելի է ն. Տոմաշևսկայի մեկնությունը (Н. Толмачевская, Фрески
древней Грузии, Тифлис, 1931, стр. 17—18). Քորալի որմնակարներն ուղեկցող մակա-
գրություններում կան հայկաբանության նկարներ, իսկ այդ նշանակում է, թե վարպետի
համար ընտանի է եղել հայերեն արտասանությունը:

²⁹ M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans
l'Arménie, exécuté en 1847—1848, St.—Petersbourg, 1851, p. 134. Գ. Բաբրաձեն Քորալի
մասին ունեցած համոտու տեղեկանքը բազմ է հիմնականում Բրոսեից՝ վերապատկելով
(ակ'ս Դմ. Բակրաձե, Кавказ в древних памятниках христианства, Тифлис, 1875, էջ 83):

³⁰ Տե՛ս M. Brosset, նշվ. աշխ., էջ 136—140:

³¹ «Յրօնօցոյն», II, 168.

³² «Синодик Крестного монастыря в Иерусалиме», издал Н. Марр, СПб., 1914.

³³ Աշխատությունը, ինչպես երևում է, բովանդակել է բնագրեր (թարգմանություն
հանդերձ) և ուսումնասիրություն, որովհետև ցանկում միայն բնագրեր ներկայացնող
գործերն աստղանիշով տարբերակված են:

³⁴ «Վիմական տարեգրք», կազմեց՝ Կ. Կոստանյանց [վարագրությունն ու առաջարկը՝
ակադ. Ն. Մառի], Ս. Պետերբուրգ, 1913, էջ 30 (1153 թ.), էջ 35 (1185 թ.), էջ 36 (1186 թ.):

թյամբ այս աշխատությունն փոխանցելով: Սխախնրը մասամբ էլ ավիացել
են այն պատճառով, որ Կ. Կոստանյանցը կամեցել է իր ձեռքի տակ եղած
տպագիր օրինակներից որոշ ընտրություն կատարել՝ մեկի վրիպյալ վերծա-
նությունը մյուսին գումարելով:

Քորալի հայերեն և վրացերեն արձանագրությունների միակ ամփոփ
և տեղում կատարված վերծանություն-հրատարակումը պատկանում է պրոֆ-
Լ. Մելիքսեթ-Բեկին³⁵: Նա Քրիլիսիի համալսարանի գործադրամբ Քորալը է
այցելել 1924 թ. մայիսի 18-ին, իսկ մեկ տարի անց երկրորդ անգամ է
եղել տեղում՝ այս անգամ Ս. Տեր-Ավետիսյանի և Գ. Գորգեևի հետ: Լ.
Մելիքսեթ-Բեկի վերծանությունները նախորդների համեմատությամբ առա-
վել ճշգրիտ են ու ամբողջական, բայց ոչ առանց սրբագրելիք և լրացնելիք
տեղիների:

Մինչև Քորալի վրացերեն արձանագրությունների վերծանությանն
անցնելը, անհրաժեշտ ենք համարում տալ հայերենները՝ տեղում կատարված
սրբագրություններով:

Քորալի կառույցների հնագույն մասը, տեղի անմատուց լինելու
պատճառով, տակավին ո՛չ նկարագրված է և, առավել ևս, ո՛չ էլ ուսումնա-
սիրված: Թերևս վիմափոր այդ հատվածներում սպասելի էին հայերեն
արձանագրություններ՝ 11-րդ դարի երկրորդ կեսից 12-րդ դարի առաջին
կեսին ձևաբերող: Այժմ պահպանված հայերեն հնագույն արձանագրու-
թյունը գտնվում է զլխավոր եկեղեցուց արևելք ընկած մատուռ-աղբարանի
մուտքի պատի և բարավորի վրա:

ա) + Ք(րխսո)ս ա(սսոա)ծ, յիշև զՄարիամ և զՌուսուզան ի
զալստեան Բուս:

բ) Թ(իին) Ռի (=1171) /նա Մարիամ՝ դուստր Կիրիկիի/ բազա-
րի, յազգէ Բագրատունի, շինեցի զս(ու)ր կարողիկէս ազնուր(եամ)բ
Բեւ իմն Ռուսուզան՝ յիշատակ մեզ և ծնողաց մեռց և Բարաբեւ
մեռն Ռուսուզան և Եղբար մեռն Արասա: Ռբ Երկրպագէ ք(րխ-
սոս)ի ի ս(ու)ր Բարաբեւն՝ յիշեսչի ի/ Ք(րխսո)ս, զի վասն Եեղու-
րե(ան) տեղույս շաս աշխատեց[աբ]:

Չանդրագոտնարով Գ. Ազանյանի, Ն. Լալայանի, Կ. Կոստանյանի և
Լ. Մելիքսեթ-Բեկի մոտ եղած ալլընթերցումներին, պիտի նշենք, սակայն,
որ տեղում թվականը հատակորեն Ռ է կարգացվում և ոչ՝ ՌԲ, ինչպես

³⁵ Լ. Չեղոյանց-Չեղոյ, յո՞ճերօ և՞ ձօնօ Լոմեքերօ Լա..., թջ. 60—73. Ծանոթությունից
տեղեկանում ենք, որ Գ. Գորգեև Քորալի հարտարակետական նկարագրությանը վերաբերող
հատուկ աշխատություն է ունեցել, որը, որքան մեզ հայտնի է, չի հրատարակված: Գ. Գորգեևի
հարցրումը տե՛ս Լ. Գորգեև, Об экспедиции КИАИ в район Дебеда-чая в конце
1925 и начале 1926 гг., «Известия Кавк. ист.-арх. института», т. IV, 1926, Тифлис, էջ
129, 135—136: Կովկասի պատմահնագիտական ինստիտուտի նիստերից մեկում Ս. Տեր-Ավե-
տիսյանը հանդես է եկել ընդարձակ հաշվետվությամբ Գ. Գորգեևի տեղեկությունը, Ս. Տեր-
Ավետիսյանը առաջարկել է և յո՞ճ +այր ստուգարանությունը:

3. Զանգակատուն-տապանատան հարավային պատին, մուտքից աջ.

Այսպես էլ ինչ-ինչ սրբագրելիքներ կան. բրոնխիոնի տառագիր թվականը |ե|յցտ չէ (6899-5604=1295 թ.), այլ՝ Յցտ -499 (+780=1279 թ.): 7-րդ տողի Յ(անց)ն անձնանունը Յանցն [ո] սրբագրելու անհրաժեշտություն չկա, քանի որ այն վրիպակի կամ մոտացության արդյունք է, այլ վիմագրողների բնութանի արտասանության (հփ. Վանեն-ից) գրատում: Որ նման իրողությունը մտացածին չէ՝ կարելի է հավաստիանալ 4-րդ տողի օցեղ օես յ օն յրժեցիստա անվանածից: Վրացերենում սպասելի էր օցեղ (կամ օցեղ), իսկ հավելյալս -ն հոլովական վերջավորություն չէ, ինչպես կարելի է առաջին հայացքից ենթադրել, այլ հայերեն Ֆիսուս-ի վրացերեն գրադարձություն (թերևս շո ունենալը ես բացատրվի հայերեն ու-ի արտասանության երկբարբառային նրանգով և կամ՝ գրարարյան ոչ երկբարբառի նմանությունը, թեև հիշյալ անվան մեջ ոչ գրվել չէր կարող)⁵²: 8-րդ տողի սամրեցեղ -բառի վերջում օ ավելացնելու անհրաժեշտություն չկա. այն ընթերցվել-ընկալվել է հաջորդ սամբռետես բառի հետ, ուստի վերջինիս հոլովական համաձայնական ցուցիչը վերաբերում է և նրան (այդ պատճառով էլ սեղում ձայնավորի զանազանության որեւէ նշան չկա): Պարզապես թյուրիմացությամբ պիտի բացատրել 10-րդ տողի՝ առանձնակի գրված օ -ի բացումն իբրև լմբեռոտ, երբ նրա (= օ և շ) տակ միայն շքալո կարելի է կարդալ⁵³: Սակայն առավել կարևոր սրբագրելիքը վերաբերում է շարունակության շօտար ճ սասոյեժա արտահայտությանը (բայտ Մեխրեսթ-Քեկի վերծանության): Ք. ժորդանիան, օգտվելով Մ. Քրուսեի հրատարակուից, վերջինիս մոտ եղած այդ ճ-ն դիտել է իբրև ճ(շափշ) բառի համատուություն, որ թեև տառացիորեն ճիշտ չէ, բայց բավականաչափ մոտ է իրողությանը (ժորդանիայի եկակետը արտահայտության հուշած իմաստն է եղել): Լ. Մեխրեսթ-Քեկը վերծանել է միայն ճ և այդպես էլ հրատարակել, որով այն ստացել է Յ-ի արժեք (եթե թարգմանենք՝ ինչպես Յ հույս): Հնարական քննությունից պարզվում է հետևյալը. Ա-ի երկայնական սակունքի միջամասում փակագրված է յ-ի հորիզոնական դիմբ, իսկ տառանիշի վրա հապավման նշան կա, որով բառը կարդացվում է ճ(շափ) . ի դեպ, յ-ի փակագրման նման մի դեպք էլ վկայված է Գևորգ արևելայի երկրորդ արձանագրության մեջ՝ Կպպոկցություն (լ(օ)քլ(օ)-վեց). Վերջում նկատենք, որ 11-րդ տողի շենոբոսա -ի փոխարեն պիտի կարդալ շլենոսա , իսկ հաջորդ տողի սասոյեժա ցլլուս մոլդցոցոբասա-ն՝ սասոյեժիստա ցլլուսմոլդցոցոբոստա.

⁵² Համայնա մի փաստ էլ հանդիպում ենք Պարթիոնի նշանավոր վանքի խաչի վրա եղած արձանագրության մեջ, ան՝ս յայս շոնձեց, քարտեղտա մոնստերո Զլլուգարտե՞՞մի և քիսո Գիօյոն, տձ., 1971, թ. 363.

⁵³ Նկատուելի է, որ Քորայի արձանագրություններում ասովիպլու երկնիչանոց Չվ-ի ներկայացված է բացառապես Չ-ով, ինչպես Անիի՝ Նախիբան կաթողիկոսի արձանագրության մեջ է (տե՛ս իր տեղում): Ուստի մեկ նեխ՝ օ-ն (կրկու կողմերից կետերի մեջ անված) երկակի կիրառություն ունի՝ իբրև շ-ի բաղադրիչ և բառավերջ օ.

Այս սրբագրություններից հետո կունենանք.

- 1-3 յ(օրոն)յ(ո)ննա | շտ. | [մոխլեցե]տա և յ(ա)տմ<ոյցարեցի>-տա Մ(յ)ն լ(մոտ)|[ն]ս և մ(ա)ցնո-
- 4 <ցրո>սն հ(ղ)ն(ո)նա շ(ղ)ն(ո)ն օցլոս յ(ր)ս(ց)ն(ց)տա և Մ(յ)-յ(ց)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն
- 5 <վ(մոլ)ն>նա Մ(յ)ն(ո)ն Մ(յ)ն(ո)ն յ(ա)թա մե շլուր[ն]ս, Մ(յ)ն-Մ(յ)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն
- 6 [ն]սն յ(ա)րգար(ց)լու և տ(ա)նմ(ց)ն(ց)լուր հ(ց)ն(ո)ն յ(ա)ն(ո)ն-յ(ո)ն և յ(ա)ն-յ(ո)ն
- 7 <ս(ս)ն(ո)լ(ար)>նա Մ(յ)ն(ո)ն և յ(ղ)ն(ո)ն յ(անց)ն լ(մոտ) յ(ց)ն(ց)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն
- 8 Ս(յ)ն(ց)լ(ո)ն-նա մ(ա)րն(ո)ն յ(ո)ն հ(ղ)ն(ո)ն յ(ո)ն օր(ո)ն(ո)ն յ(ո)ն յ(ո)ն և յ(ա)ն(ո)ն յ(ա)ն(ո)ն,
- 9 Ս(յ)ն(ո)ն(ց)ն(ո)ն Ս(յ)ն(ո)ն Մ(յ)ն(ո)ն յ(ա)ն յ(ո)ն(ո)ն և յ(ա)ն(ո)ն յ(ո)ն յ(ա)ն(ո)ն(ց)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն
- 10 Սն հ(ղ)ն(ո)ն. Մ(յ)ն(ո)ն, մ(ա)ն(ց)ն(ո)ն և շ(ղ)ն(ո)ն, յ(ո)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն Ս(յ)ն(ո)ն(ո)ն, և օր(ո)ն(ո)ն տ(ա)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն(ո)ն
- 11 յ(ղ)ն(ո)ն(ո)ն յ(անց)ն յ(անց)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն և յ(ղ)ն(ո)ն <կց>տա շլուր(ո)ն(ո)ն յ(ո)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն, օր(ո)ն(ո)ն Ս(յ)ն(ո)ն(ո)ն յ(ղ)ն(ո)ն
- 12 <ճ(ղ)ն(ո)ն>մ(ո)ն(ո)ն <ն(ց)ն(ո)ն>.

Ք III (58)

Աղ. XVIII

Քարգմանություն. Քրոնիկոնի 499-ին (+780=1279): Ողորմածությամբ և մարդասիրությամբ քո՛ աստու և մեր փրկիչ՝ տիրոջ Հիսուս Քրիստոսի, և օգնականությամբ քո ամենայն սուրբ ծնողի, ես՝ Շաննա[ն] մանդատությունիցեսի որդի անառժան Մխարգոն և իմ կողակիցը՝ արարել և ամբողջատար Սադուռի աղջիկ Վանենը, արժանացանք կառուցելու մեր սույն զանգակատուն-տապանատունը՝ մեծ նշույթան մեջ [եղած] ժամանակ, ի փառս քո սուրբ անվան և ի փրկություն ու հաղթս մեր հոգու: Գրացիր, ով փրկիչ ու տեր, ինչպես հուսում ենք, և զերծանիր երկուսեմ շարառանձնից, բայց ոչ փառացյալ հայեցմամբ, այլ հուսո հոժարությամբ:

4. Գլխավոր եկեղեցուն հարող մատուռ-աղոթարանի արևմտյան պատին, գավթից մատուռ տանող մուտքի մոտ քանդակված խաչի վրա.

+ չ(շար)օ յ(ր)ն(ո)ն(ո)ն.

Ք IIIa (59)

Աղ. XIX, 1

Քարգմանություն. Խաչ Քրիստոսի. քիսմի (?):

Հին վրացերենում տեղում բառ կա, որ նշանակում է գլուխ, գագաթ,

կատար, բայց այս իմաստը ամենևին հարկը չէ արձանագրության մեջ առկա գործածությանը: Ավելին, յ-ի վրա գրված է պատիվ, որով կրճատագրության է վիճվում, բայց թե ինչպիսի՞ն կարող էր լինել նրա բացումը, անվա՞ն, թե՞ սովորական բառի հետ գործ ունենք՝ հայտնի չէ:

5. Տապանագրեր գլխավոր եկեղեցու հյուսիսային գավթում.

- ա) Ք ԵՍԵ ՍԱՄԼ(Ա)ՅԻ ՕՅ(Ա)ՆԵ
- Մ(Ա)ՆԸԱԾ(Չ)ՐՈՒՄԵ(Չ)ՇԵՍԻՏԱ
- ԺԻՏԱ ԸԱ ՎՈ(Ա)Յ(Ա)ՅԻՏԱ
- Մ(Ա)ՆՄ(Ե)Ն ԺՄԻՏԱ ՎՈ(Ա)Յ(Ա)-
- ՅԻՏԱ Յ(Ա)Յ-
- Ր(Ա)ՄԵՍԻ. Մ(ԵՄՆԸՅԵ)Ն
- Լ(ՄԵՐՈՒՄԱ)Ն.

Ք IV (60)

Աղ. XIX, 2

Քարգմանություն. Այս [է] տապան իվանն մանդատուրբուխուցեսի որդի և արաբեկ Շաննշանի եղբայր արաբեկ Վահրամի: Ողորմի ասաված:

Վահրամը իվանն Բ-ի որդին է, Շահնշահ Բ-ի եղբայրը: Կենդանի է հիշվում Անիի՝ Արղարիբ Պահլավունու եկեղեցու 1342 թվականի արձանագրության մեջ⁵⁴: Ուրեմն սույն տապանագիրը գրված պիտի լինի 1350-ական թվականներից ոչ վաղ:

- բ) Ք ԵՍԵ ՍԱՄԼ(Ա)Յ-
- Օ ԼՕՂԵՂԵՍԱ⁵⁵
- Ը(Ա)Յ(Օ)ՐՈ(Օ)ՆԻ. Մ(ԵՄՆԸՅԵ)Ն
- Լ(ՄԵՐՈՒՄԱ)Ն.

Ք V (61)

Աղ. XIX, 3

Քարգմանություն. Այս [է] տապան Լուկեցի (?) Պավրի: Ողորմի ասաված:

- գ) Ք ԵՍԵ Ն(Ա)ՄԼ(Ա)ՅԻ ՕՅ(Ա)ՆԵ Մ(Ա)ՆԸ-
- ՎԾ(Չ)ՐՈՒՄ(Չ)Ն(Չ)ՇԵՍԻՏԱ ԱՆ(Չ)ԼԻՏԱ ԸԱ ԵՄՐԿԵՆԵ-
- ԼԻՏԱ Ն(Չ)ԼԱՏ ՄԵՄԸԼԼԻՏԱ
- ՏԱՄ(Ա)ՐԻՏԻ. Մ(ԵՄՆԸՅԵ)Ն Լ(ՄԵՐՈՒՄԱ)Ն.

Ք VI (62)

Աղ. XIX, 4

⁵⁴ Տե՛ս «Փիլան», I, էջ 44, հմտա. Ղ. Ալիջան, նշվ. աշխ., էջ 28, 86: Նկատենք, որ Հոռոմոսի տեքստում նա իր քննդարանությունը ճիշտ է ներկայացնում, իսկ Արղարիբի վիճագրում պատիվ փոխարեն (Շահնշահ Ա.) պատիվ հորն է հիշում (Մեծն Զարգրիս):

⁵⁵ Լոգվելուս - ն կարելի է կարգալ նաև Լոգվելուս: Երկու դեպքում էլ անունը մնում է անձանոթ:

Քարգմանություն. Այս [է] տապան իվանն մանդատուրբուխուցեսի դուստր և Գուրկենեկի Սուլայի ամուսին Քամարի: Ողորմի ասաված:

- դ)
- Շ(Օ)ԸՅ(Օ)ԼԻՏԱ Մ(Ա)ՅՆ-
- ՄԱ Մ(Ա)ՆԸՎԾ(Չ)ՐՈՒՄ(Չ)Ն(Չ)Շ-
- ԵՏԱՏԱ ԺԻՏԱ ԵՂԵՐԻՏԱ
- Յ(ՕՐՕՂԵՅ)Ն(Ա)Ջ. Լ(ՄՐ)ՐՈ(Օ)Ն(Ա)Ր(Յ)Ն Լ(Օ)ՇՅ-
- ԱՏԱ Մ(Օ)ՄԻՅԵ-
- ՆԵՆԵՄ.

Ք VII (63)

Աղ. XX, 1

Քարգմանություն. [Այս է տապան] Շաննշան մանդատուրբուխուցեսի մեղուցյալ որդի Գևորգ (Գիորգի) արեղայի: Ի սեբ աստուծո, հաղորս հիշեցեմ:

- ե) Ք ԵՍԵ ՆԱ-
- ՄԼ(Ա)ՅՋ Մ(Օ)-
- ՐՈՒՅՆԻՏ Ա-
- ՆՄԼԻՏԱ
- ԵՅԱՆՏ-
- ԱՏԻ. Մ(ԵՄՆԸՅԵ)Ն
- Լ(ՄԵՐՈՒՄԱ)Ն.

Ք VIII (64)

Աղ. XX, 2

Քարգմանություն. Այս [է] տապան Միրիանի դուստր Էգանթայի: Ողորմի ասաված:

Եգանթա անձնանունը, ընդգծված յ և տ նիշերի վատ պահպանության պատճառով, կարելի է կարգալ իբրև Լեգանթա, որ անհավանական ենք նկատում:

- զ) Յ(Ա)ՄՕՅ(Ե)ԸԻՏ ՆՄԼԻՏԵ(Ա)Ն ԸՐՄՔՄՆ(Օ)-
- [Լ]ՄԻ ԸԱ ԳԱՄ(Օ)ՄՅՐՈՒ(Ա)ԼՆԻ,
- ԵՄԼՏԱ Շ(Ե)ՇՆԼԻ Մ(Օ)ՄՐԵՅԺԻԱ,
- Մ(Օ)ՄԸԻԱՆ ՅԻՐԻՏ ԱԼՆԻ.
- ԸԻԸՏԱ Ի(Ե)ՄՏԱ ՄՅԵՅ(Ա)Ր[Վ] Յ(ՕՏԱՐՇ)Ա Ը(Ա)Մ-
- ՐԻԵՆ ԻՐՅՈՅ ՆԱՅԵՐՈՒ(Ա)ԼՆԻ.
- ԸԱ Յ(Չ)ՐՈՒՄ(ԵՄ)Լ Ն(Ա)Ր, Ք(ՐԻՏԾ)Ե Լ(ՄԵՐ)ՐՈՒ, Մ(Ե)Ն ԸԱ Մ(Ե)Ն
- ՆԻ ՏԱՄԱՐՏԱԼՆԻ.
- . . . իՄԸ . . . ՆՄՆ (?) ԸԱ ՆՅԱՄՏԱ
- Մ(ԵՄՆԸՅԵ)Ն Լ(ՄԵՐՈՒՄԱ)Ն.

Ք IX (65)

Աղ. XX, 3

Տապանագիրը հանգավոր է և տողատվում է այսպես.

գամոջեզիտ սլուսիցան ցրաշքմնիլնի և ցամոթալնի,
ցալնա ցեցեկի մոմլեցիա, մոմլիան քիրիտ ալնո.
լիլտա հիմտա Մշեթատա ցիտարժա՝ և մարից հոջիս նաջրտեխալնի,
և քարտեղեղ խար, քարիստեղ Լմերտո, Մեն և Մեննի սամարտալնի.
. . . օլլ . . . ՆՄՏ?) և խաՄՏա Մշեթլեցեն Լմերտման.

Քարգամանութիւն (բառացի).

Ելանք ի հոգի խարված ու բոբալիլալ,
Միրա կրակով բռնված, բերանից բոցեր ցայտելով.
Խնդրություններից իմ մեծ՝ իբրև սխմի ծվեցնեք մնացին,
Եվ օրնայալ ես, Քրիստոս աստված՝ դու և Բո դատաստանները:
. . . ին և Խուաշին (?) ոլորմի աստված:

Եթե տապանագիրը անշուքիւն շունի Իվանի կին Խուաքի (նույն
Խուա, Խուաք) կամ Ավագի նույնանուն աղջկա հետ, ապա կարելի է ասել,
թե նրկայանբարդուկների տոհմում եղել է այդ անունը կրող երրորդ անձնա-
վորութիւն ևս (*): Ինչ խոսք, առաջին տողի հոգնակիի գործածութիւնը
(գամոջեզիտ, ցրաշքմնիլնի, ցամոթալնի) մեկից ավելի մարդ-
կանց տապանագիր լինել չի նշանակում. այն թեկադրված է -նի (եր)
հանգավորման գրգամբ: Երրորդ տողի ցիտարժա -ն կարելի է ընդունել
որպես հայկաբանութիւն, համապատասխանելով հայերենի իբրև-ին:

է) Ք ցեց և(ա)ջլ(ա)ցի
Մալցան Մց-
օլլիսա Լ(ա)ցիտիս.
Մ(շեթլեց)ն Լ(մերտմ)ն.

Ք X (66)

Աղ. XXI, 1

Քարգամանութիւն. Այս [է] տապան Շալվայի որդի Դավրի: Ոլորմի աստված:

բ) Ք ցեց և(ա)ջլ(ա)ցի
ցեցեզմեղիսա
Մալցաձև. Մ(շեթլեց)ն
Լ(մերտմ)ն.

Ք XI (67)

Աղ. XXI, 2

Քարգամանութիւն. Այս [է] տապան էգեգմցի (Այգեգմցի) Շալ-
վայի: Ոլորմի աստված:

Ծ. Գլխավոր եկեղեցու ավագ խորանի սեղանի առաջ, շարքի մեջ օգտա-
գործված է մի տապանագրար, որի վրայի տապանագիրը պահպանվել է.

Ք ցեց և(ա)ջլ(ա)ցի ց-
օրցաձև ժիսա մ-
անցիս. Մ(շեթլեց)ն Լ(մերտմ)ն.

Ք XII (68)

Աղ. XXI, 3

Քարգամանութիւն. Այս [է] տապան Գորգայի որդի Մանեյի:
Ոլորմի աստված:

Գ. Տապանագրի տապանատուն-գանդակատան մուտքի առջև.

ա) Ք ցեց և(ա)ջլ(ա)ցի հինգ
Մեղիսա օց(ա)նցի. Մ(շեթլեց)ն
Լ(մերտմ)ն.

Ք XIII (69)

Աղ. XXI, 4

Քարգամանութիւն. Այս [է] տապան Չաչայի որդի Իվանի: Ոլորմի աստված⁵⁶:

բ) Սլուսա մոնստրիսա ամիս
օկոնոմոսիսա և Լորիսա (?)
մ(ա)մ(ա)մ(ա)ցիսա Մեղիսա քեթր(ց)ն
Մ(շեթլեց)ն Լ(մերտմ)ն.

Ք XIV (70)

Քարգամանութիւն. Սույն վանքի իկոնոմոս (տնօրէն) և արժանավոր
(?) Մամամբավարի (Հայրապետի) որդի Պետրի հոգուն ոլորմի
աստված:

Սույն տապանագիրը բարձր ենք Լ. Մելիքսեթ-Բեկի հրապարակումից:
Տեղում մեզ չհաջողվեց գտնել (Թեքև հետազոտում հավաքած-կիտած շինա-
րարական քարերի տակ է մնացել): 2-րդ տողի Լորիսա բառը պայմանա-
կան սրբագրութիւն է. Մելիքսեթ-Բեկի մոտ այն ներկայացված է Լ Ս Օ Լ
տառաշարով և իմաստաղորդի է: Ուշագրավ է Պետրի (=Պետրոս) հայրա-
նունը. վրացիներում մասնագործի նշանակում է հայրապետ, նաև՝ վանա-
հայր: Մ՛չ 13—14-րդ դդ. հայրապետ-կաթողիկոսը, ո՛չ էլ վանահայրը (հար-
կավ կուսակրոն) որդի ունենալ չէին կարող, ուստի այդ բառի տակ ավելի
շուտ հատուկ անուն պետք է տեսնել (տապանագրում սպասելի է հանգուց-
յալի հոր անունը և ոչ պաշտօնը): Վրաց իրականութիւն մեզ մասնագործի
անձնանուն վկայված չէ⁵⁷, մինչդեռ մեզանում նրա Քարգամանութիւն-համա-

⁵⁶ Միջնադարյան վրացական բնագրերում սեռականով տրված և ծագումը ցույց տվող
անունը, մեր համոզմամբ, ավելի շուտ հայրանուն է, քան ազգանուն, ուստի փոխարին ենք
Չաչայի որդի և ոչ՝ Չաչալիկի: Հմմտ. Ս. Ս. Какабадзе, Грузинские документы..., էջ 5.

⁵⁷ Տե՛ս օր. Վլոնցի, քարտեղեղի սեպտաբրի և օգոստոսի, տե., 1967.

պատասխանությունը (Հայրապետ) այսօր էլ շատ տարածված անուն և ազգանուն է⁵⁸: Ուստի տապանագրում գործ պիտի ունենանք Հայրապետ հայրանվան մասնատուր— լեցոսեյալոծա)⁵⁹, այդ պատճառով դերասանցիկը «Հայրապետ» թարգմանել:

8. Տապանադիր տապանատուն-զանգակատան ներսում.

. . . եյա մ(ո)մ(յ)լոլոլցո
 . . . մյ յցոսո մո-
 մ(յ)լոլոլցո.

Ք XV (71)

Աղ. XXI, 5

Թարգմանություն. . . . էլ սպասիր ինձ . . . որդի, քառով (!) սպասիր:

Տապանաքարը միջամասից կտրված է, իսկ արձանագրության տողերի սկզբնամասը խիստ մաշված: Անշուշտ, սա պետք է լինի Շահնշահի որդի Մխարրքձեկի տապանը, ինչպես կառույցիս հարավային պատի 1279 թ. արձանագրությունից տեղեկացանք՝ նախապես արդեն այդ նպատակով շինված: Պահպանվել է և Սաղունի աղջիկ Վանենի տապանը, բայց առանց արձանագրության:

Վրացերեն առաջին երկու արձանագրություններում հիշատակվում է Գևորգ արեղայի շինարարական գործունեությունը: Որքան էլ զարմանալի է, այս Գևորգի ինքնության մասին լրացուցիչ որևէ աղբյուր գիտությունը դեռ հայտնի չէ: Նրա անվանը, փաստորեն, հանդիպում ենք միայն Քորայրի արձանագրություններում: Ընդ որում՝ նա իրեն կոչում է «Շահնշահ մահաատուրթուխուցևի որդի»: Քանի դեռ այս երկու արձանագրությունների վիճակում թվականը ճշգրտված չէր, հակված էինք կարծելու, թե խոսքը Շահնշահ Բ-ին է վերաբերում⁶⁰, սակայն այժմ միանգամայն պարզ է, որ խոսքը Շահնշահ (նույն Շանշե) Ա-ի մասին է (մահ. 1261 թ.), որովհետև 1276 ու 1282 թվականներին նրա որդին կարող էր արեղա լինել, և ոչ նրա թոռ Շահնշահ երկրորդինը (մահ. 1320 թ.): Գանձակեցու տեղեկությամբ Շահնշահ Ա-ի «որդիք բազումը էին... Զարար է և Ասաղ-Սարգիս, և Արտաշիրն և Իվան է»⁶¹: Սակայն այս ցանկը լրիվ չէ. Անիի Առաքելոց եկե-

⁵⁸ 2. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» (հ. 3, էջ 38—47) 10—18-րդ դարերում վկայված է 110 անուն Հայրապետ (վերջինս իր հերթին ասորերեն tabolā բառ-անվան թարգմանությունն է):

⁵⁹ Հմմտ. Ս. Մ. Мурадян, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966, էջ 167:

⁶⁰ Տե՛ս այստեղ՝ Անիին վերաբերող բաժինը:

⁶¹ Կ. Գանձակեցի, Եջլ. աշխ., էջ 393: Ակադ. Կ. Մելիք-Օհանջանյանի հրատարակության մեջ Ավագն ու Սարգիսը եղբայրներ են նկատված, որ հիշտ չէ (հմմտ. Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 175):

ղեցու 1289 թվականի արձանագրությամբ հայտնի է դառնում Շահնշահի մեկ որդի ևս՝ պարոն Աղբուղան⁶²: Ինչպես երևում է, Գանձակեցին նպատակ չի ունեցել թվարկել Շահնշահի բոլոր որդիներին, ուստի իր ցանկից դուրս է թողել թե՛ Աղբուղային, թե՛ Գևորգ արեղային: Հնարավոր է, թե երևա, որ հոգևորական ձեռնադրվելիս Գևորգ (Գիորգի) է հորջորջվել երեք որդիներից մեկը՝ Արտաշիր, Իվան է Բ, Ավագ-Սարգիս, բայց ուրը՝ հայտնի չէ: Աղբուղների ուսումնասիրությունից պարզվում է, որ Շահնշահ Ա-ն ունեցել է մեկ ուրիշ որդի ևս՝ Մխարրքձեկ անունով: Հաղբատի արձանագրություններից մեկում կարգում ենք. «...ես՝ Մխարրքձեկ, որդի Շահնշահի, որդի մեծին Զարարի, և ամուսին մեր Վանենի՝ դուստր ամբարակ Սաթունին... մին կանթեղ արծաթիք վասն արեղատուփեան Իսանէի եղբար իմն և որդոց մերոց...»⁶³: Քորայրի զանգակատան վրացիների արձանագրությունը գալիս է լրացնելու Շահնշահ Ա-ի որդի լինելու փաստը («...ես Շահնշահ մահաատուրթուխուցևի որդի անարժանս Մխարրքձեկ և իմ կողակից ամբարեկ և ամիրսպասալար Սաղունի աղջիկ Վանենը...») և միաժամանակ թվագիր ամենավաղ վկայություններից է նրանց շինարարական գործունեության մասին: Նման բնույթի մի ուշագրավ արձանագրություն էլ Մխարրքձեկը թողել է Սանահնի Մեծ գավթում, վիճարկված մինչև 1280 թվականը, առաջնորդ Կիրակոսի օրոք⁶⁴: Անհրաժեշտ ենք համարում այդ հիշատակարանից ընդարձակ վկայություններ կատարել, քանի որ այնտեղ ևս խոսվում է վրացիներում առկա «մեծ նեղություն ժամանակ» շինարարությունը ձեռնարկելու մասին. «ես՝ ամիրսպասալար Մխարրքձեկս, որդի Շահնշահի, այս ժամ դիս սաբրդանմիշ արար, և վերկիսոյ յարար էր, էկի վանքս ու զտեղս անմարդ գտար, որ ի մուհաւաց և առաջնորդէ և այլ հարկէ աւերած էր և էկիղեցիքս փակած: Եւ զայս խաւարս տեսար, մահո շափ արտեցար, յաւազ զատկին զվարդապետներն ի բաշ ին արարել և այլ շատ նախատինք: Եւ այդ, ես՝ ամիրսպասալար Մխարրքձեկս և թաղաւորազն ամուսին իմ Վանենի, ուխտ դրար աստուծոյ և Աստուածածինս և մեր պապերէ զմեծ արձանս փորեցար և զեկիղէցիք ամեն հարկէ ազատեցար, այսմ հետէ ոչ մուհասիլ և ոչ այլ հարկահան Սանահինս շմանէ...»⁶⁵: Եթե մի կողմ թողնենք այստեղ ավանդված բոլոր տեղեկությունները, այսպե՛ս միայն Սանահինը շինացնելու փաստն ինքնին շատ բան է վկայում. նույն Մխարրքձեկը նույն շրջանում իր ու կնոջ համար տապանատուն է կառուցում Քորայրում:

⁶² Տե՛ս «Գիվան», I, 22:

⁶³ Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 171: Ավելորդ չէր լինի նկատել, որ այս ու ստորև Սանահնից վկայակոչված հայերեն արձանագրություններում Վանենի անունը վրացական արտասանության կնիք է կրում, իսկ Քորայրի վրացիներում հակառակը՝ հայերենի— Յանյե:

⁶⁴ Այս ամենը լրջորեն վերանայելի է դարձնում երկայնաբազուկների ծննդաբանության այն տախտակը, որ երախտավոր Ղ. Ալիշանն է կազմել (տե՛ս նշվ. աշխ.):

⁶⁵ Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 125: Վանենին թագավորազն կոչելը պայմանավորված է Մահկանաբեկի Արժունիներից լինելով:

(ուր հայրն է թաղված) և միաժամանակ շենացնում Սանահնի միարնակ միաբանությունը, «մահու շափ տրամում» նրա փախված լինելու պատճառով: Ինչպես երևում է, մենք կրթման գործունեությունը բնութագրելիս դավանապաշտականությանը ավելի մեծ տեղ ենք հատկացնում, քան այն իրոք ունեցել է: Ի դեպ, երկրի ավեր լինելու՝ Սանահնի ու Քոբայրի արձանագրությունների տեղեկություններին պիտի ավելացնել և Իվանե Աբուլքիթի որդունը Բարանալում, որով պատմական իրական անցուղարձ է վկայվում⁶⁶:

Պակաս ուշադրավ չէ մեկ տեղեկություն ևս. Գևորգ արեղան երկիրյս արձանագրում է, որ Ռատին պատկանող այգին (իմա՛ խաղողի այգին, միջնագրյան տերմինով՝ նորքը) օտար տոհմից (կամ ցեղից) ազատել է և Քոբայրի եկեղեցուն վերադարձրել: Ո՞վ էր Ռատը, որից օտարները բունություն մը խլել են այգին: Նրա ինքնությունը որոշելու այլ ելք չունենք, քան անձնանվան տոհմական պատկանելությունը ճշտելը: Սկսած 10-րդ դարի վերջերից այդ անունը կրում էին Բաղուաշի-Լիպարիտյան տան ներկայացուցիչները⁶⁷: Վերջին Ռատը (3-րդ) էրիսթավաց-էրիսթավ էր, տեր Թրիալեթի ու Արգվեթի: Անժամանակ մահանալու պատճառով (1105 թ.) վրաց Գավրիթ Շինարար թագավորը նրա կալվածները հարբունիս գրավեց, սակայն այս տոհմի մի նոր ճյուղ շարունակվեց Արգվեթում՝ «Կախաբերիձև» անունով⁶⁸: 13-րդ դարի վերջին քառորդում Ռատ անունն էր կրում և Բեգա Սուրամելու որդին, որը Գիմիտրե Անձնուրացի թագավորության տարիներին (1271—1289) նշանակալի մասնակցություն էր բերում երկրում տեղի ունեցող անցուղարձերին⁶⁹: Թերևս այս Ռատը կարող էր նոր կալվածներ ստացած լինել երբեմնի Կյուրիկյան կամ Լիպարիտյանների տանը պատկանող տարածքում: Բայց թե որտե՞ղ էր գտնվում Գևորգ արեղայի հիշատակած այգին, իրոք այս Ռատին էր պատկանում կամ ի՞նչ օտար տոհմ էր նրանից գրավել և երկայնաբազուկ Գևորգն ինչպե՞ս է այն ազատել՝ մնում է շուտաբանված:

Պիտի նկատել, սակայն, որ Ռատ անձնանունը 12-րդ դարում արդեն բավական լայն գործածություն էր գտել. Ռատ երևանցին ու նրա Մրուան և Մևրոր որդիները հիշատակված են Բագնայրի 1210 թվականի արձանագրության մեջ⁷⁰: 1258 թ. մեկ ուրիշ Ռատի որդի, Մկրտիչ անունով, հնձաններ է կառուցում Արուճում և Փարպիում⁷¹: Ռատ անվան գործածության այս լայն շրջանակները ուսումնասիրողին դրևում են Գևորգի հիշատակած

⁶⁶ Մխարրձեյն ու նրա կին Վանենը հիշվում են նաև Արուճի 1285 թ. արձանագրության մեջ:

⁶⁷ Մանրաման տե՛ս Ա. Նեխյան, Լիպարիտ զորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ժողովան ինչորը, «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1947, № 8, էջ 65—79:

⁶⁸ Ա. Նեխյան, նշվ. աշխ., էջ 79: «Վրաց ժամանակագրության» տեղեկությամբ, Կախաբերիձեյները 13-րդ դարի կեսերին Ռաճայի էրիսթավ էին (տե՛ս մեր հրատ., էջ 109):

⁶⁹ Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 152, 154, 164:

⁷⁰ Տե՛ս Վ. Ալիշան, Շիրակ, էջ 117:

⁷¹ Նույն տեղում, էջ 26, հմտ. նույնի՝ «Ալարատ», էջ 145:

անձնավորությունը որևէ մեկի հետ նույնացնելու հնարավորությունից, մանավանդ, երբ դեռ անհայտ է նրանց կալվածների շափն ու տեղադրությունը:

Քոբայրի արձանագրությունները հնարավորություն են տալիս խնդրիս վերաբերող հարցադրում անել միայն, իսկ նրա ուսումնասիրությունը մնում է նոր աղբյուրներ երևան բերելուն:



Իր նշանավոր հնագիտական ուղևորությունների վեցերորդ տեղեկագրի «Հավելվածում» ակադ. Մ. Բրոսեն, Աբիխի տրամադրած տեքստի հիման վրա, վերծանում է վրացերեն մի արձանագրություն, նրա գտնված տեղի մասին տալով հետևյալ բացատրությունը. «Վանանա-վանք կոչված մենաստանում, Դեբեդ և Բամբակ գետերի միախառնումից արևելք, հարավում՝ Քոբերից ոչ հեռու, միանգամայն մեկուսի վայրում, կարգացվում է այս արձանագրությունը, գրված շատ գեղեցիկ, ամենամաքուր և ամենահնավանդ ձևի «խուցուրի» տառերով, առանց կցադրությունների»⁷²: Դժբախտաբար, ո՛չ հանդամանակից քարտեզներով, ո՛չ էլ մասնացուցած տեղանքում անձամբ լինելով չհաջողվեց պարզել, թե իրականում որտեղ է գտնվում հիշյալ Վանանա-վանքը: Տեղացիները նման անուն չեն հիշում, ուստի այս վրացերեն արձանագրությունը գտնելու և տեղում ի նորո վերծանելու մեղքանքերը արդյունք չուփեցին: Եթե Աբիխի տրամադրած տեղեկանքում ինչ-որ վրիպում տեղի չի ունեցել, ապա մնում է ենթադրել, թե անցյալ դարի կեսերից հետո կառույցը փլատակվել է և աստիճանաբար ջնջվել տեղացիների հիշողությունից: Սա, իհարկե, բիշ հավանական վարկած է, բայց առայժմ դժվարանում ենք այլ բացատրություն առաջարկել: Մ. Բրոսեի հրատարակման մեջ արձանագրության տեքստն այսպիսին է.

Յ. Տաքելտա մմիստա ժիստա ևս լլոսա ֆստա
Յեքնիտա ֆլոսա լոտիս մմոռլոստա Յեքնիտա ֆսա ամբյքնիտա
Յե ցոլնեցլեմն մեղա-
նր քեյնեցլեմն մեղն լեմեղ-
նր մը՛նաննիսմն օքմըն քեղ
քլլոսիա՝ լլեցլեղ լլոսա հեմնա
ևս մմոռլոտա հիտա լեղոննա
օլլոն լոն լոտա ֆրնյեյն օլլո
և ևս մն.

Քարգմանկուց առաջ գիտնականը բնագրային որոշ սրբագրություններ է առաջարկել. ա) 3-րդ տողի ցոլնեցլեմն ընթերցումը նա ուղղում է

⁷² M. Brosset, Rapports..., exécuté en 1847—1848, p. 135. Մանակի լրացումներով արձանագրության վերահրատարակությունը տե՛ս «Քրոնիկոն», 1, 243—244, նաև՝ Լ. Մելոյան-Յեգ, Լոռ-Շամոնի ժամանակագրությունը, ՅՊ. 316—317.

Թարգմանություն. Հանուն հոր, որդու և սուրբ հոգու, բարեխոսությանը սուրբ Աստվածածնի, օծանդակությամբ սուրբ Ամբակուծի եւ՝ Հիւնվաճնի աբխազական պատմության, Գիմիտրե մարգարէի որդիս, կառուցեցի այս եկեղեցին՝ հաղորս իմ հոգու և իմ ծնողների երջանկության: Աստված Գավրիին ի թագավորություն փառավորի: Քրոնիկոնը 242 էր (=1022 թ.):

Սա, փաստորեն, Հայաստանի տարածքում պահպանված հնագույն վրացերեն թվագրի արձանագրությունն է, գրված Գագի իշխան, տաշրաց մարգարան Գիմիտրեի որդու ձեռքով: Վրացերեն գրված լինելու շարժառիթը հոր և որդու «հայրենի հայություն» հավատը թողնել և վրացագավան դառնալն է: Որդին ստիպված էր հաշտվել հոր ճակատագրի հետ և իր արձանագրության վերջում փառավորություն մաղթել Գավրիթ Անհողիի թագավորությանը: Շուրջ երկուս և կես տասնամյակի ընթացքում, հնարավոր է, Գավթի ու Գիմիտրեի հակամարտությունը մոռացության էր արվում: Աղբյուրների շարքում վրացական պատճառով չգիտենք, թե ո՞րն էր Գիմիտրեի հանդեպ սկսած հալածանքի բուն պատճառը. Ասողիկը հիշում է միայն «կասկածեալ ի նմանէ» ընդհանուր բնույթի շարժառիթը, որ Մ. էմինը թարգմանել է՝ «отложившись от Гагика»⁷⁷ (պիտի լինի՝ от Давида): Թերևս ընդհարման իրական պատճառըն այն էր, որ Տաշիրքի մարզպանը՝ Գագ ամրոցի տերն ու իշխանը, խոչընդոտում էր Գավթի թագավորության հզորացմանն ու ծավալմանը: Առանց Գագի ղեկավար էր դիմադրել Գանձակի ամիրային, անմիջական սերտություն հաստատել Կախբի թագավորության ու «Աղուանից» կողմերի հետ: Պակաս հետաքրքիր չէ նրա որդու մասին ունեցած մեր անգլեկությունը. Ասողիկի վկայությունը կարելի է մեկնաբանել այսպես՝ մարզպանը որդուն կարգում է Տաշիրքի մամփալ՝ Հինէ-վանք նստոցով⁷⁸: Սակայն անհիմն չի լինի այլ մեկնաբանություն առաջարկել. վրացիներին իրեն թիկունք դարձնող և բաղկեղոնականություն ընդունող Գիմիտրե մարզպանը Տաշիրքի իր մամփալ որդուն հողհորական է ձեռնադրում և միաբանեցնում Հինէ վանքին: Եվ հիրավի, 1022 թ. արձանագրության մեջ, ինչպես տեսանք, նա ոչ միայն այդ վանական կենտրոնի միաբանն է, այլև աբխազական պատմության մարզպանը, որից Գավթիթը գրավել էր «դամենայն ամրոցս նորա և զբոլոր հայրենիսն», չպիտի կարողանար որդուն մամփալություն տալ, քանի որ դա

ինքնին քաղաքական իշխանություն է⁸⁰, այլ մտահոգվել է նրա կենաց ապահովությանը՝ հողհորական ձեռնադրելով ու վանքի միաբան դարձնելով⁸¹:

Արձանագրությունը, ինչպես ասվեց, գրված է կղել «շատ գեղեցիկ, ամենամաքուր և ամենահնավանդ ձևի «խուցուրի» (իմա՝ «աստվածավուրի» — Պ. Մ.) տառերով», որ շատ պատշաճ է առկա բրոնզիկոնին՝ 1022 թ.: Այն միաժամանակ ապացույց է, թե դավանական այլափոխությանը որքան շուտ է հաջորդում գրավոր հիշատակարանի լեզվի փոխումը:

⁸⁰ Մամփայություն ինստիտուտի մասին հայտնական կոանուտներ տե՛ս Պ. Յազնյան, «Ջորջթեյլոս և Եմբոլոս» 3-րդ հատվածի թվագրության ծանոթություններ, Երևան, 1965, թ. 234—237.

⁸¹ Որոշ մանրամասնություններ տե՛ս այստեղ, էջ 146—150:

⁷⁷ «Всеобщая история Степаноса Таронского—Асохика по прозванию», переведена с армянского и объяснена Н. Эминьым, М., 1864, стр. 184—185.

⁷⁸ Մ. էմինը այդպես էլ թարգմանել է: «Մամփալ» բառի տված Մ. Բրոսեի, Մ. էմինի և Ս. Մալխասյանցի ստուգաբանությունները թյուր են: Ծիշա բնությունը տե՛ս Георгий Мерчул, Жизнь св. Григория Хандзтвйского (грузинский текст), введение, издание, перевод Н. Марра, ТР АГФ, VII, СПб., 1911, էջ LXVIII:

⁷⁹ Այս պարագայում Մ. էմինի «и сына своего назначил мампулом таширским в Хюне-ванке» թարգմանությունը փոխարեն պիտի ունենանք «и сына своего—таширского мампала определил [монахом] в Хине-ванке»:

Ա. Որմնահարի ավետարանի բաց էջին՝ վրացերեն (verso) և հայերեն (recto).

Վրացերենն արդի գրչությամբ.

Մե վ(ս)ր նաթելո սո-
ղլոսա, ղ(ս)ձ Մեմ-
ոմոմոցլեց Մե
սրա յոլեղլեց (!)
Յնեղլա, սրամեղ ս-
վՅնեղլեց շՅնթրե-
Յաո ՏալլՅնո՞.

ԵՍ ԵՄ ԼՈՅՍ Ա-
ՇԽԱՐՀԻ ՈՐ Ա-
Ռ ԻՄ ԸՆԴ ԽԱԻ-
ԱՐ ՄԻ ԳՆԱՍՅ-
Է, ԱՅԼ [ԸՆ]ԿԱ-
ԼՅԻ ԶԿԵՍՆ
ՅԱԻՏՏՆԻՅԻ:

ՀՍ I (73)

Քովանդակության առումով արձանագրությունը որևէ կարևոր բան չէ՝ ներկայացնում է Հովհաննու ավետարանի խոսքերը (Ը, 12): Հեռաբերքին այն է, որ սույն քաղվածքը նկատելիորեն այլ խմբագրության է⁵: Այլ խմբագրություն է ներկայացնում և վրացերենը⁶: Ուշագրավ է, որ մակագրությունների հայերենն ու վրացերենը կատարելապես համապատասխանում են միմյանց: Լեզվական որոշ իրողությունից (ու-ի դիմաց ղա) կարելի է եզրակացնել, որ նրանցից մեկը մյուսի թարգմանությունն է: Վերջին պարագայի հետևանքով վրացերենում ունենք այն ժամանակվա խոսակցական լեզվի մի բանի արտացոլումներ՝ սողլոսա *փխ*. սողլոսա, Մեմոմոցլեց *փխ*. Մեմոմոցլեց, շՅնթրեա *փխ*. Շնորեձա, ՏալլՅնո՞.

Բ. Նույն տեղը, «աջ կողմում տաճարին ընծայելու տեսարանի տակին»

[Շածար]Տա մոյ(լ)Մա.

ՀՍ II (74)

Թարգմանություն.Ընծայումն ի տանարին⁷:

Գ. «Նախորդի ձախ կողմում, Քրիստոսի ծննդի պատկերի տակին»:

Մոծա՞.

ՀՍ III (75)

⁴ Մակագրության հայերեն մասի վերջին բառերն ընթերցված ու հրատարակված են Կ. Ղաֆադարյանի հիշյալ աշխատության մեջ (էջ 154):

⁵ Սովորաբար՝ նա նա լոյս աշխարհի, որ գայ զկնի իմ՝ ընդ խաար մի գնացել, այլ ընկացի զլոյս կնաց (տե՛ս 1805, 1817, 1860, 1895 թվականների հրատարակությունները): Նույն է նաև՝ կազ. ավետ., էջ 191:

⁶ Սովորաբար՝ մե վար նաթելո սողլոսա՞. րոմելո Մեմոմոցլեց մե, սրա յոլեղլեց Յնեղլա, սրամեղ յվՅնեղլեց նաթելո շՅնթրեա (DE և Գ. Սուրբարեցու խմբ.), C-ի մեջ ունենք սարընթերցումներ՝ մոմլեցլեց: Յնեղլա սրա յոլեղլեց: Միլոս (տե՛ս) լարտլեղի ոտնոցիս րորի ժլլո ղեղլեցլեց, սա՞մ Մաճեղլեղլու իլլեղլեցլեցիս միլեղլեց, գամոսցա ապո Մանոցմ, տ՞., 1945):

⁷ Նույնի հայերենը հրատարակված է, տե՛ս Կ. Ղաֆադարյան, նվ. աշխ., էջ 155:

Հ Ա Ղ Ր Ա Տ - Մ Ա Ն Ա Հ Ի Ն

Հյուսիսային Հայաստանի վանական հաստատությունների մեծ մասը 11—13-րդ դարերում կատարելապես մերժում էր եկեղեցական միության հնարավորությունը և կիլիկյան հայ գործիչներին մեղադրում հանդուրժողականության մեջ: «Վարդապետը հայոց հիսուսային կողմանց» դպրոցի գոյությունը՝ դժվարացնում էր վրացադավան կամ հունադավան գործիչների գործունեությունն այս շրջանում: Այնուամենայնիվ, պատմական մի շարք հանգամանքների բերումով (մանավանդ Լոուս և Անիի 1204—1205 թթ. ժողովներից հետո), քաղկեդոնականությունը թափանցում էր առանձին վանքեր ու միաբանություններ: Պղնձահանքի, Քորայի ու Հնեվանքի գոյությունը ուղի էր հարթում երկարնակության համար, որքան էլ Հյուսիսային վարդապետները շարունակեին պաշտպանել ավանդական միաբանությունը:

Հաղբատի վանքում վրացերեն արձանագրությունների (ավելի ճիշտ՝ մակագրությունների) անկախության մասին խոսում է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը³. ս. Նշանի ավագ սեղանի պատին (ներքին ծածկ) պատկերված է «Հայր Աստված» «Արարիչ երկնի և երկրի» մակագրությամբ: Տառերի հետքն այժմ հազիվ է նշմարվում: Գատելով ստորե բերվող մակագրություններից ու նույն վարպետի գործ լինելուց, պետք է ենթադրել, որ նվաճ մակագրությունը եղել է նաև վրացերեն լեզվով, թեև նրանից որևէ հետք չկա: Ստորե բերում ենք Ավագ խորանի հիշյալ մակագրությունները.

¹ Նրանց մասին մանրամասն տե՛ս Լ. Մելլոյեթ-ձեյո, «հրճու Մեհարեա սոմեթա մոմլեցլեց» և մատի յոնոծա, Եղ., 1928.

² Այժմյան Քուանյանի, Ստեփանավանի և Նոյեմբերյանի շրջանների տեղանուններն ու կենդանի խոսվածքն ուսումնասիրելիս տակավին նկատելի է պատմական այդ ժամանակաշրջանի կիրքը: Այսպես, օրինակ, Արարատյան բարբառի Լոուս խոսվածքում մեր կողմից գրառվել է 50-ից ավելի վրացաբանություն, որ թեև զուտ միջնադարյան լին, այուհանգեթ՞ ինքնի կարծուր փաստեր են:

³ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 155: Ե. Լալայանի մոտ՝ «Արարիչ երկնի և երկրի ե... ընկալ... ի հաճույս» («Քորչալուի գավառ», էջ 397—398), նույն համտ, Բ. Նեգեկյան, Հնախոս. տեղագրութ., «Արարատ», 1886, էջ 494:

Թարգմանություն. Ծնունդ⁸:

Վերոհիշյալ երեք մակագրություններն էլ կատարված են նույն ձևերով ու միաժամանակ: Չնայած նրանք թվագրված չեն, բայց կարելի է ճշտել գրություն ժամանակը: Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ ս. նշանի ավագ սեղանի ծածկի պատերի վրա պահպանվել են երկու շերտ որմնանկարներ⁹: Մեզ հետաքրքրող մակագրությունները պատկանում են վերին շերտին, որը «աներկրայրեն պատկանում է 13-րդ դարի երկրորդ կեսին և, ամենայն հավանականությամբ, նկարված են հույժուրուզայի կամ նրա վասալներից մեկի միջոցներով, որովհետև նույն տաճարի հարստության պատին պահպանվել է հույժուրուզայի դիմանկարը, որ իր կատարողական արվեստով և ներկերով համընկնում է Ավագ խորանի վերին շերտի որմնանկարներին»¹⁰: Այս միանգամայն ճիշտ դատողությունից հետո պրոֆ. Կ. Ղաֆաղարյանը հույժուրուզայի պատկերին առնթվելով ճակագրությունը թվագրել է 13-րդ դար¹¹, իսկ Ավագ սեղանի ներքնածածկի պատի տեսարաններինը (վերին շերտ)՝ 11-րդ դար¹²: Փաստորեն մեզ հետաքրքրող մակագրությունները ժամանակակից են որմնանկարներին և, հետևաբար, պատկանում են 13-րդ դարին:

Ն. Տոկարսկին, անդրադառնալով ս. նշանի որմնանկարներին, գրում է. «Внутри ее кое-где сохранились остатки росписи на двух слоях штукатурки, покрывавшей чисто тесанную облицовку стен, что показывает, что монастырь довольно продолжительное время был в руках халкидонитов»¹³. Այս եզրակացությունը իսկապես կարուկ է, և այդ առումով տեղին է պրոֆ. Կ. Ղաֆաղարյանի առարկությունը¹⁴, առանձին սրբագրելի տեղիներով: Ս. նշանի որմնանկարները, որքան մեզ հայտնի է, իրենց ծավալով ու կշռով չեն նույնանում նրա թվարկած ալլ եկեղեցիների պատկերազարդումների հետ: Վերոբերյալ վրացական մակագրությունների առկայությունը կարելի է բացատրել եթե ոչ «երկար ժամանակ քաղկեդոնականների ձեռքում» լինելու հանգամանքով, այլա զոնե այդ դավանանքի նկատմամբ ցուցաբերված որոշակի հանդուրժողականությամբ: 13-րդ դարի երկրորդ կեսին հայոց վարդապետների հյուսիսային դպրոցը, մասնավորապես՝ Հաղբատ-Սանահին, ալլևս նախկին կազմն ու հետևողականությունը չունեն: 13-րդ դարի առաջին կեսից իրենց նշանակությամբ ավելի ազդեցիկ էին դարձել նոր Գևորգի և հորանաշատի դպրոցները:

⁸ Հայերենը՝ Ծնունդ Ք(րիստոս)ի (տե՛ս անդ):
⁹ Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ер., 1946, էջ 171: Հմմտ. նույնի՝ «Архитектура Армении IV—XIV вв.», Ер., 1961, էջ 282—283, հմմտ. Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 19:
¹⁰ Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 19:
¹¹ Նշվ. աշխ., էջ 152: Տե՛ս նաև Ն. Մառի հրատ. «Христ. Восток», т. 1, вып. III, 1912, էջ 350—353:
¹² Նշվ. աշխ., էջ 154:
¹³ Н. М. Токарский, նշվ. աշխ., էջ 171, հմմտ. նույնի՝ Архитектура Армении IV—XIV вв., էջ 282—283:
¹⁴ Նշվ. աշխ., էջ 19:

Ի դեպ, Ն. Տոկարսկու եզրակացությունը միակը չէ. դրանից տարիներ առաջ ակադ. Ն. Մառը գրել է. «Любопытны факты, указывающие на во-зобладание в Ахпате за XIII в. если не халкедонитов, то халкедонитского приема в украшении церкви»¹⁵.

Ինչպես երևում է, Ն. Մառի, Ն. Տոկարսկու և Կ. Ղաֆաղարյանի ուշագրությունից վրիպել է մեր մատենագրության մեջ պահպանված մի հիրավի հետաքրքիր վկայություն. ներսես կամբրոնացին իր «Թուղթ առ... կոն»-ում գրում է. «...իսկ ես ունեցով զՔրիստոս վասն իմ օր քստ օրէ առաջի աստուծոյ հօր պատարագ՝ խափանե՛մ զնորս սպասատրելն քահանայական սուրբ զոնտիբ, և բացաւ զիտով, և պաշտօնէից սպասատրութեամբ, զոր հրամայեաց աստուած Մովսիսին զզոնտոցն կարգ, և Պաւղոս զբանալ զլիտոյն, և սուրբ հարքն զպաշտօնէիցն դաս. և ևնագնե՛մ զիշա՛ որպէս Հաղբատայ եպիսկոպոսն, և Երկու թիգ կնկուլ վրացի սաբուլայով, և պատարագե՛մ ևնաղբատեցի սև փիլոնով, և փակե՛մ զզուռն ի վերայս, և ձգե՛մ զվարագոյուն, և անհաղո՛րդ անեմ զժողովուրդն յիւրեանց աստուծոյն քալիչ մահուանէն»¹⁶: «Հիւսիսային կողմանց» վարդապետներին վերաբերող այս փոխհանդիմանությունը, անկասկած, զերծ չէ որոշ չափազանցումից և նկատելի միտումնավոր է, ինչպես այդ երևում է մի երկու էջից հետո եկող նրա խոսքերից (անդ, էջ 223), բայց որ որեէ հիմք ունի՝ նույնպես կասկածից զուրս է:

Խոսելով 1203—1205 թթ. եկեղեցական զանազան անցուղարձերի մասին, Գանձակեցիին նկարագրում է և ա՛յն անհամաձայնությունը, որ առաջացել էր արևելյան նշանավոր վարդապետների, մասնավորապես Հաղբատի միաբանության և ամիրսպասալար Ջաքարիայի միջև: Վերջինս, կիլիկյան թագավորի ու կաթողիկոսի համաձայնությամբ, որոշ նորամուծություն-սրբադրություն էր մտցնում արարողության մեջ, թեև ոչ լիովին քաղկեդոնականացնելով, բայց ինչ-որ չափով, ոչ առանց զրոս ազդեցության. «Եւ այսպէս շփոթումն ունէր զեկեղեցիս արևելից, քանզի ի բազում ժամանակաց հետէ չէին սովոր առնել, զոր խնդրէր նա (իմա՛ Ջաքարիան—Պ. Մ.)՝ և ոչ զտօնսն իւրաքանչիւր ատուր, զի մի՛ պատճառաւ տօնին լուծցին պահքն. և զպատարաքն սուրբ ոչ մատուցանէին սարկաւազաւ և զպրաւ, ալլ միմեանց քահանայքն սպասատրէին: Կործեմ թէ զայս սովորութիւն էին կալեալ ի բոնութենէն տաճկաց, որ ոչ տային համարձակ պաշտել զպաշտօնս իւրեանց քրիստոնէից, ալլ և ո՛չ զդրունս եկեղեցեաց իշխէին թողուլ ի բաց ի ժամ սոսկալի խորհրդոյն, զի մի՛ ոճիրս ինչ գործեսցեն ալլազգիքն, և ոչ զալլսն, զոր նա խորթէր»^{16ա}: Զորավարի հարկադրանքով այդ նորոգումները կատարվեցին (որոնց հետ ստիպված էր հաշտվել և Մխ. Գոռը), նկատելիորեն հեշտացնե-

¹⁵ Н. Марр, Ани, стр. 132, прим. 280.
¹⁶ Տե՛ս «Ներսէսի կամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի՝ Ատենաբանութիւն և Թուղթ և Ճառք», Վեներիկ, 1865, էջ 217—218:
^{16ա} Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 174:

լով Իվաննի ու հաջորդների որոք բաղկեղոնականության թափանցումը: Նույն Գանձակեցու վկայությամբ, 13-րդ դարի կեսերին վեճեր էին ծալք առել Հաղբատի ու Մանահնի միաբանությունների միջև, որոնք, պիտի ենթադրել, միայն սիրույթային չէին: Շահնշահ երկայնաբազուկը (Զաքարիայի որդին) «վրէժխնդիր եղև... Մանահնին... գի Հաղբատ ի Վրաց բազաուրացն հաշուի ևր յայնմ ժամանակի» (էջ 99): Հենց այս տարիներէջ սկսած էլ Հաղբատում վրացերեն մակագրություններ ունեցող որմանակարներ պատկերելու դյուրութիւն ստեղծվեց:

Դ. Հաղբատի Աստվածածին եկեղեցու մուտքի առջև, հայերեն և վրացերեն լեզուներով գրված տապանագիր.

1 «Թ[վին]ՈՄԿԱ

2— 5 եմ եղեալ յայսմ /տապանիս Հոխիսի/մէս ողորմելի և ամուսին

6— 8 բաւէպաշտի տեղոյս մովրա Մարտիրոսի. յանժամանակ/կեանց ելի

9—12 տանեաց /իմոց, սուգ մեծ /բոլի: Ուր հանդիպիք այսմ արձանի ի 13 մի բերան տուր /ուղորմի»:

1—3 Ե՛ս, Տաղ(ա)ցտա (!) Մե՛ցա |մըծեմբարց ցար շե՛ծըւրոյ | ՄշտոսնՏողու-
լամ շոյ-

4—5 ամոտ ցամոսալմըմշլու մե, անձա՛ցոս

6—8 Թողըճրացոս մշլուլը | Յորոմսմե. Թնուլըլընո, ցեցըճրցեմոտ ցոն|Յ

9—11 Միայոտոտոտ տոտոտ Յո|րո Մընըճոճ մոմձա|նոտ. անմոսն|շլըլու Մըլ-
նա 1812].

ՀՄ IV (76)

Աղ. XXII, 1

Թարգմանություն. Այս տապանում եմ գտնվում կյանքից անժամանակ հեռացած դժբախտս ես՝ Հաղբատի մովրավի ամուսին Հոռոմսիմես. հանդիպողք, աղաչում եմ՝ ով կարդա մեկական բերան ողորմի ասեմ: Վախճանվեցի 1812 թվին¹⁷:

Տապանագրի վրացերեն մասը, աննշան տարբերությամբ, համապատասխանում է հայերեն տեքստին¹⁸:

¹⁷ Վրացերեն Հոռոմսիմես-ն (գործածական է թիֆլիսի հայոց բարբառում) - և հայերենի Հոխիսիմես տարբերակումներ են և ոչ տառադարձան հետևանք. վրաց լեզուն ը գաղտնավանկ կաղմոզ ձայնավոր չունի, ուստի այն պետք է փոխարիներ ո, ու կամ ի-ով: Ո-ի անոմանություններ հայերենից փոխանցվելիս տեղի է ունեցել ի-ն հնչյունափոխություն: Նույն երևույթի արդյունք է և՛ փ-մ:

Հայերեն մասի եւ-ը, հնարավոր է, սոսկ վրիպակ է, բայց կարող է նաև տեղադրված արտասանության հետևանք լինել կամ վրացերենի աղբեցություն (վրացերենն ունի միայն է ժամանակակից արտասանությամբ):

¹⁸ Վրացերեն տապանագրի վերջին նախադասությունը անավարա է մնացել տեղի յոզու-
թյան պատճառով: Կրպեսում նրք ըստ հայերենի Հայերենը տողատելի է, բայց շատ պայմանական չափաբերությամբ:

* * *

Մանահնում, Զաքարյանների տոհմական հանգստարանում¹⁹, կան միաժամանակ հայերեն և վրացերեն գրված տապանագրեր, որոնք հետաքրքիր են իրենց երկլեզվականությամբ և, անշուշտ, անձնավորությունների ու նրանց պաշտոն-տիրույթների հիշատակմամբ: Ստորև բերում ենք այդ տապանագրերը, անհրաժեշտ համարելով վրացերեն գրվածը («մխեղրուլի» գրու-
թյամբ) վերաթարգմանել հայերենի, որովհետև այն ավելի հայերենի բառացի համապատասխանությունը չէ:

Ա. Գիր հանգստեան Մաղմոնի երկայնանո/ն մեծ իշխանի տոնմ/ Արդուրե(ան)ց, սոյն միւրբաշի ե սավեանիկ կալէճսի, որ ուրբ/ ամեայ գոյց ը(նդ) Բառ/անի կոչէ գնա տւր՝ /յոյսն ամենի: Թիւ վ(ա)ղն(ա)նի 1816, փետր. 3²⁰:

վրացերեն՝

- 1,2 Տաղլացոյ Ե՛ց արճ տաճալ մոննա|Մո, Կողլըլըլոյ Տողըճոյցո
- 3,4 Տողոմոն արլըլոն|Յո(կ) ըլլոլլորլըլոյցոս. անայոտ ցոյց 48 Մլոնա
- 5 ցոնաճըճան շոյամոտ ցանցըլ
- 6,7 Տողլոտոցան —ցըճրալըլոլըլտ ըս Մընըճոճան մոմձանը-
- 8,9 ըլտ. անցըլըլըլոլ Մլոնա | հոյց. տըճըլըլոյ ճ.

Աղ. XXII, 2

ՀՄ V (77)

Թարգմանություն. Այս է տապան քավաղ (իշխան) միւրբաշի (հագա-
րապետ), կոլեճսի սավեանիկ (կոլեգիական խորհրդական) Սողմոն
Արդուրեցի Գոլգորուկովի (Արդուրյան-երկայնաբազուկի): Հասակով
48 տարեկան էի: Քանզի անժամանակ հեռացա աշխարհից՝ գրպցեմ
և ողորմի ասեմ: Վախճանվեցի 1816 թվին փետրվարի 3:

Տապանագրի հայերեն մասի «երկայնաձեռն»-ը (փխ. երկայնաբազուկ)
նուսիրեն Дюлгорукий-ի բառացի թարգմանությունն է: Վրացերեն Ձեռնըճոճե-
լո-ն ևս երկայնաբազուկ-ի ստույգ համապատասխանությունը չէ: Տարիներ

¹⁹ Կառուցված 1189 թ.՝ «Զաքարէ և Խանէ, որդիք Մեծին Սարգսի շինեցար զհանգստա-
րանս, ի շէջէք ի Քս» (տե՛ս Կ. Ղաֆաղայան, Մանահնի վանքը և նրա արձանագրությունները,
Երևան, 1957, էջ 178):

²⁰ Հայերեն տապանագիրը կարելի է տողատել.

Գիր հանգստեան Մաղմոնի
երկայնանոն մեծ իշխանի,
Տոնմ Արդուրեանց՝ սոյն միւրբաշի
և սավեանիկ կալէճսի,
Որ ուրբ ամեայ գոյց ընդ Բառանի
Կոչէ գնա տւր՝ յոյսն ամենի:
Թիւ վաղնանի 1816, փետր. 3:

առաջ հանդուցյալ պրոֆ. Լ. Մեկերսթ-Բեկեր առաջարկում էր Երկայնաբազուկի կամ Զախարյանների փոխարեն այս տոհմը կոչել Խուրովյանք՝ Խուրովի անունով:

Սողոմոն Երկայնաբազուկի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հովհան Աբրահյանը²¹:

Բ. Մատիւր, ով ան[ձ]ն, ի սոյն /տես(ա)ր(ա)ն, տես զի ննջ է Շի/օշ մեծ իշխան Սաղամո/նեան Երկայնա[բա]զուկ, հօրն /ժառանգ սիրելի յ[ա]-տ[ո]ւկ. ի գո/լ քան և ուրն ամեայ՝ երբ/ալ առ տէր մեծ յուսով /փութայ: Թիւ վ(ա)խն(ա)նի /18 21 նոյեմբերի 19²²:

Վրացերեն՝

- 1—3 մե, ևախալօ յնօյն Յիօմ, յօլղեցէս | րեղիճտրատօրօ, յե Յօլ-
- 4—5 ռմօն արքայօնցոյճկօ-լօրաշտօցօն, յօյս 28 Վրօն,ս,
- 6—7 ջրբալօման յօլղօման ձլմտօւցօ. յեղեղօման ջեղօ-
- 8—9 Զա միօմանօտ, Վրօնս հեյ- յա յեղեղօման, -օտ.

ՀՄ VI (78)

Աղ. XXII, 3

Թարգմանություն. Յս, հանգուցյալ իշխան Շիօշ, կոլեժսկի ռեգիտատուր (կոլեգիական տեսնապես), որլի Սողոմոն Աբրահյանցիկի-Պոլգորուկովի (Աբրահյան-Երկայնաբազուկի), 28 տաբեկան էի. ամգոսք մանր խեյ ինձ: Աղաշում եմ սղուրմի ասև: Թվին 1819, 21 նոյեմբերի:

13-րդ դարի կեսերից սկսած Երկայնաբազուկների ու նրանց տոհմական ճյուղավորումների պետական-պաշտոնական ազդեցությունը թուլանում է: 18-րդ դարում Աբրահյաններին հաջողում է ապացուցել, որ իրենք Երկայնաբազուկների տոհմի շտաբիկոն են: Պահպանվել է Հերակլ 2-րդ թագավորի հրովարտակը, որով Աբրահյանները ճանաչվում են իշխանական տոհմ՝ իրեն Երկայնաբազուկների ժառանգներ²³: Ահա այդ պատճառով էլ 18—19-րդ դարերի Աբրահյան տոհմի տապանագրերում հատկապես շեշտվում է նրանց Երկայնաբազուկ լինելը²⁴:

²¹ յօլղեցէս, I, 1936, հմտ. Պ. Մուրայան, Սայաթ-Նոյան բստ վրացական աղբ., 1963, էջ 91—92:

²² Տապանագիրը չափած է.

Մատիւր, ով ան[ձ]ն, ի սոյն տեսարան,
Յես, զի ննջ է Շիօշ մեծ իշխան՝
Սաղամոնեան Երկայնաբազուկ,
Հօրն ժառանգ սիրելի յատուկ.
Ի գոլ քան և ուրն ամեայ
Երբալ առ տէր՝ մեծ յուսով փութայ:
Թիւ վախանաի 1819, 21 նոյեմբերի:

²³ Տես Ս. Меликсет-Бек, Сигель грузинского царя Ираклия II о князях Аргутинских, «Христ. Восток», т. VI, вып. III, էջ 341—343:

²⁴ Տոհմի համառոտ պատմությունը տես ՀՄ2, I, I:

Հաղթատ-Սանահնից ոչ շատ հեռու գտնվող Օձունի եկեղեցում ևս բուն կառույցին չառնչվող ուշ շրջանի վրացերեն հիշատակարաններ կան, միայն, ի տարբերություն նախորդների, կարճատև միաբանական մակագրության կամ անվանակոչության տեսքով: Օձունի եկեղեցու արևելյան պատի միջամասում ագուցված խաչաքանդակի աջ ու ձախ հարթակներում կան այլադան մակագրություններ, որոնք ժամանակի ընթացքում հողմնահարվել են, դարձել անհատելի: Առկա պատտոկների մեջ, օրինակ, կարելի է կարդալ [...] էլ ԱԹԱՆԱ[Մ], մեկ ուրիշը՝ [...]ՅԻ ԶԱԽԱՀԱՅ, երբորդը՝ ՅՈՒՍ և այլն: Եղածների մեջ առավել կարևորը վերին աջ անկյունում պատկերված սրբի ոտների տակի դրությունն է, որից հաջողվեց կարդալ այս՝ ՍՈ[] ԵՄ[] յՈՂՄ և ՈՂԴ Բ Ի և: Կարծում ենք, որով վերապահություններ, ստանահտերից կարելի է տարբերել, որոնք վերապահվում էր: Նրանով իսկ եկեղեցին Բեռորոս Տյուրմին ձևված լինելու մեր հրապարակած դրույթները նոր կովան են ստանում²⁵: Առկա մակագրությունների մեջ, իհարկե, միայն թիւգորտին անշղիղը կարող է հին լինել՝ տեղադրությունից, գրերի համեմատական խոշորությունից ու հասցեագրման փաստից դատելով:

Խաչաքանդակի ստորին ձախ հարթակում պահպանվել է մանրատառ «աստվածավուլ» մակագրություն, որ նախապես երեք տողից պետք է բաղկանար: Առաջինից մնացել է միայն սկզբի խաչանշանն ու տողամիջից Ծ տառը: Երկրորդ տողը համեմատաբար քիչ է հողմնահարված: Մեկ տառանից հետո պատվի նշան կրող օ ունենալը երաշխիք է, որ այստեղ եղել ջ(ճալ)օ, իսկ վերջինիս թևադրանքով վերծանելի է դառնում նաև հաջորդ բառը՝ երկակի պատվի նշանով՝ մ [] ց, իրա՛ թ(օ) ճ(ց) ճ(ց) ճ(ց): Թև հաջորդ տողի վ(օլլ) ձ(ց) օ անունից հետո ինչ բառ է եղել՝ հնարավոր չէ վերականգնել (թևիկա տողավերջի երկու տառահտեքերը կարելի լինի՝ յց կարդալ): Հեշտ վերականգնումների դոմարը տալիս է.

+ Ծ ... | ջ(ճալ)օ, Թ(օ)[ձ կ(ց)]ճ(ց) | վ(օլլ)ձ(ց) օ... յց(՞)

ՀՄ VII (79)

Թարգմանություն. ... տեք, ուրիշ Փիլիպի (= ֓իլիպուսի) ... որդի:

Փոքր-ինչ ավելի նկատելի մի վրացերեն մակագրություն էլ գտնում ենք արևմտյան մուտքի վերևում, քիվի տակ ղետեղված Աստվածամոր (մանուկը գրկին) քանդակի վրա: Այն դիտությանն արդեն ծանոթ է Գ. Զուրինաշվիլու հրապարակմամբ՝

և(ց)լա լ(ծր)տ(օ)կ[ձ]²⁶.

ՀՄ VIII (80)

²⁵ Պ. Մուրայան, Գիտությունների Օձունի արձանագրությունների վերծանության ամփոփ («Լրարբ», 1973, № 6, էջ 73—76), հմտ. Պ. Մուրայան, «Յոհան Սարկաթ», թև՝ «Յոհան, Գարկ», ՊԲ2, 1974, № 2, էջ 237: Անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ նույն սրբի անուն է կրել մեր հնագույն ճարտարապետական մեկ ուրիշ կոթող ևս՝ Բազարանի եկեղեցին (երբ մասին տես՝ Քուրսու Քուրամալյան, Նյութեր հայկական ճարտարապետության, II, Երևան, 1942, էջ 232—236):

Թարգմանություն. Մայր աստուծո:

Եթե նախորդ դեպքում մակադրության ուշ շրջանի լինելը ահներև էր գրչության տեղից ու պարագաներից դատելով, ապա երկրորդ մակադրություն ունեցող բանդակն ինքը հետագայում է քիվին հարող շարք ագուցվել, որ ահներև է և՛ տեղադրությամբ, և՛ դարդամտաիվով: Գ. Չուբինաշվիլին վերջինիս գոյությունը բացատրում է Օձունի՝ Երկայնաբազուկների տիրույթ լինելու փաստով, հիշեցնելով Կ. Գանձակեցու տեղեկությունը քաղկեդոնական Շահնշահի այտակղ դռնվելու մասին: Կարծում ենք, որ այս բացատրությունը ընդունելի է և՛ պատճառարանության, և՛ ժամանակագրության առումով: Երկու մակադրություններն էլ 12—13-րդ դարերից հին կամ ավելի նոր համարելու կովաններ չկան: Պիտի ավելացնենք միայն, որ այդ մակադրությունները ևս կրում են ոչ վրացական միջավայրի ծնունդ լինելու կնիքը, այլապես անհասկանալի կմնա սովորական լեզու լճմճոսեճ կապակցության շարադասությամբ պահանջվող օ-ի շղոյությունը: Անհարթություն կա և առաջին արձանագրության մեջ, բայց քննարկելուց ձևնպահ ենք մնում, որովհետև ամբողջական վերծանություն չունենք:

²⁶ Տե՛ս Գ. Н. Чубинашвили, Разыскания по армянской архитектуре, էջ 61:

Պ Ղ Ն Ձ Ա Հ Ա Ն Ք

Պղնձահանքը Հյուսիսային Հայաստանի ամենանշանավոր քաղկեդոնական կենտրոնն է: Պատմական սկզբնաղբյուրներում այն մի քանի անգամ է հիշատակվում: Կիրակոս Գանձակեցին Իվանեի մահվան կապակցությամբ գրում է. «Վախճանեցաւ և Իւանէ, եղբայր Զաքարէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն, ի դունն եկեղեցւոյն, զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց՝ վրացի վանս հաստատեաց»¹: Այս տեղեկությունը, գրեթե նույնությամբ, կրկնված է մի քանի էջից հետո. «Եւ զի յառաջ քան զսակաւ ժամանակս մեռեալ էր Իւանէ, տարան թաղեցին զնա ի Պղնձահանքն, զոր իւր շինեալ էր վանս վրաց, առեալ ի հայոց»²: Այդ հիշատակություններից բանասեր-հնագետները եզրակացրել են, որ Պղնձահանքը, ավելի ճիշտ՝ Պղնձահանքի ս. Աստվածածին եկեղեցին, կառուցել է Իվանե Երկայնաբազուկը: Միայն Ն. Ակիխյանն է դիտել, որ «առեալ ի հայոց՝ վրաց վանս հաստատեաց» ասելով, «իմանալու է անշուշտ այն իմաստով, թե հոն քաղկեդոնիկ հայերու վանք հաստատեց»³: Իրոք էլ, եթե ի սկզբանե վանքը կառուցվեր իբրև «վրացի վանս», ապա պատմիչը չէր ընդգծի «առեալ ի հայոց» արտահայտությունը⁴: Նշանակում է՝ արտահայտությունը ուղղակիորեն վերաբերում է վանքին՝ իբրև հոգևոր կենտրոնի և ոչ Պղնձահանք կոչված տեղանքին կամ Ախթալա գյուղին⁵, որ

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 222:

² Նույն տեղում, էջ 238:

³ Ն. Ակիխյան, Միմեոն Պղնձահանքի և իր թարգմանութունները վրացերենէ, Վիեննա, 1951, էջ 4:

⁴ Զաքարյանները Յրբելյանների հայածումից հետո Հյուսիսային Հայաստանի տերն էին, Թամարի օրոք իրենց իշխանությունը տարածելով նաև Երբակի ու մի շարք այլ զավանների վրա: Պատմական աղբյուրներում ոչ մի անգամ Զաքարյանների տիրությունը որևէ տարածության հանդեպ «առեալ ի հայոց» չի դիտվել և, հասկանալի պատճառներով, չէր էլ կարող Հայազգի Երկայնաբազուկները որոշ արձանագրություններում նույնիսկ իբրև թագավոր են հորջորջվում՝ ազգանվեր ու շինարարական արտակարգ բեղուն գործունեությամբ:

⁵ Ն. Քաղաշվիլին գրում է. «По словам армянских историков Вардана Великого, Киракоза Гандзакнийского и Степана Орбеллиани, Иване, приняв православие, взял у армян местность называемую Пгидзахайк (Медный рудник) и воздвиг там грузинский

Պղնձահանքի (Ախթալայի) ս. Աստվածածին վանքը, բայց Այտրի արձանագրությունից մականերովու տեղեկության, 1188 թ. կառուցել է Կյուրիկե Զ-րդի զրատար Մարիամը: ԵՍ ՄԱՐԻԱՄ Գ/ՈՒՍՐ ԿԻՐԻԿԷ/Ի, ԿԱՆԳՆՅԻ Զ/ՊՂՆՋԱՀԱՆՔ/ՍԱՅՍ ՀՈՂՆՏ/ՍԻ ՍԲ ԱԾԱԾ/ԻՆՍ, ՈՐՔ ԵՐ/ԿԻՊՊԱԳԷՔ՝ Ձ/ՄԵՉ 3ԱՂԱԽ/Ս 3ԻՇՆՅԷՔ/; ՌՈՒ ՈՒ: Ի՛հարկե, «սուրբ աստուածածինս» անկող առաջին հերթին պետք է հասկանալ այդ խաչաքար, որին պիտի երկրպագիք, սակայն «Պղնձահանքս հողհատի սուրբ աստուածածինս» ամբողջական արտահայտությունը իրավունք է տալիս մտածելու, թե խոսքը վերաբերում է Պղնձահանքի բուն կառուցյին՝ ս. Աստվածածին վանքին, այլուպես ստիպված պիտի լինենք այդ միջավայրում մեկ ուրիշ «Պղնձահանք» տեղանուն փնտրել: «Հողհատ» տերմինի գոյությունը ևս, որ մեր մատենագրության մեջ առաջին անգամ է վկայվում (հաջորդ գործածությունը գրառված է Մարմաշենի 1201 թ. արձանագրության մեջ), հանք ունեցող տեղանք է մատնացուցում (հող+հատ (հատանել) — հողափոր, հանքափոր նշանակությամբ) և հուշում, որ խոսքը Պղնձահանքին է վերաբերում: Եթե այս վարկածը մերժենք, կարելի պիտի լինի մտածել, թե Պղնձահանք վանքը մինչ այդ արդեն կառուցված էր, և Մարիամը վկայակոչում է այն¹⁹:

1216 թ. Պղնձահանքն արդեն նշանավոր մտնք էր, և Իվանեն այնտեղ էր պահում Պոսշ կողմնակալի որդի Վասակ իշխանի ընծայած Օրբելյանների «աստուածընկալ սուրբ խաչը», Ստ. Օրբելյանի ծանոթությունը՝ «և խաչն կայր ի պահեստի ի Պղնձահանքն»²⁰: Ինքին հասկանալի է, որ խնդրու առկա դարձած խաչը Պղնձահանքին ի պահպանություն է տրվել իբրև կրթական-դավանարանական նշանավոր կենտրոն: Եվ իբրք՝ խաչը շուրջ եղած վեճերն ու հավակնություններն այնքան են մեծանում, որ Իվանեն Գլինում նախկինը շունչոյք կազմով «գատաստան» է հրապարակում: «Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր, հրամայելք քննել՝ զԲուբայն (տպ. զԲուբայն) և զՄարծուանն, զԻվան Գուլեն և զՄեմնա Զաղէլն (տպ. զմեմնաշաղէլն), զմեծ ճղանդիտեղն՝ որ եկեալ էր ի թագաւորութենէ, զմեմամղաւուն (տպ. զմիրամ

¹⁹ Տարբերակ չէ, որ Մարիամը «Պղնձահանքս հողհատի ս. Աստվածածինը» կանգնեցնելու իր շինարարական արձանագրությունը գեոսոցի է առանձին խաչարար վրա: Արաս վաղամետիկի կին Վաները ևս Սանահնի կամուրջը կառուցելու վերաբերյալ իր արձանագրությունը փորագրել է տվել ասանձին խաչարար վրա:

Այս և սուրբ վկայակոչվող հայերեն մյուս արձանագրությունները բազմի ենք գույություն ունեցող հրատարակություններից, սակայն, օգտվելով վիճաբան Ս. Ավագյանի սիրելիությունից, տեքստերը համեմատեցինք տեղում նրա կատարած վերծանությունների հետ և անհրաժեշտ սրբագրումներ կատարեցինք:

Հոդված-հոդգրամ սերմինի նշանակությունը ճշտելիս նկատանել է Անիի վիճաբաններից մեկում հանդիպող բառատար (տե՛ս «Գիվան...», 1, 61):

²⁰ Ստ. Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Քիֆլիս, 1910, էջ 353: Նույն պատմիչի վկայությամբ՝ երբ Իվանն Երկայնարագուկին են հանձնվում նրա իսկ պաշարած Զարեք բերդը բանալիները, վերջինս «յոթ խնդացեալ և զարմացեալ ընդ սրահելինս՝ հրամայէ ապա ձիկնուպարին իւրոյ զհանին՝ Անուֆրէ անուն, գնալ ընդ տեսն Սարգսի (Նորվանքի կալիկուպարներից — Պ. Մ.): և տալ զխաչն ի նա ի Պղնձահանքն ուլար. որ և առ յամայն կատարեցաւ» (անդ, էջ 354):

ժղարն) Վարձէոյ և զմիմամղաւուն (տպ. զմիրամ ժղարն) Պղնձահանքին և զմեծ մամթավարն (resp. մամամթավարն) Գարշտուեցն, զԳագեցին և զՄածնարեղեցին և այլ բազում զեղէպուլք ևս, և զղատին Տիղեաց և զղատին Անույ և զղատին Գունայ և զանուանի շէին Սուրմարույ, ընդ որոց և զմեծ կալիկուպուն Անույ և զկալիկուպուն Բջնույ և զկալիկուպուն Հարաթաթայ»²¹: Օրբելյանի վկայությունից երևում է, որ Պղնձահանքի տառաչուրը և թե ոչ ձողնդիղեկին, ապա Վարձայի կալիկուպուն հավասար լիազորություններ ձողնդիղեկին, ապա Վարձայի կալիկուպուն հավասար լիազորություններ ձողնդիղեկին, ապա Վարձայի կալիկուպուն է: Այստեղից կարելի է եզրակացնել, թե Պղնձահանքը Գուգարքի (Տաշիր-Ջորաղեախ) քաղկեդոնական վանքերի ու եկեղեցիների կենտրոնն է եղել և դրանով իսկ նշանակալից դեր է խաղացել պատմա-հշակութային կյանքում²²:

Պղնձահանքի վերաբերմամբ հավաստի է Գանձակեցու տեղեկությունը, «զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց՝ վրացի վանս հաստատեաց», բայց այդ չի նշանակում, թե վանքը դարձավ զուտ վրացազգի հողերականների միաբանություն: Իվանն Երկայնարագուկն ու նրա որդի Ավագը, Կիրակոս Գանձակեցու և Վարդանի տեղեկությունը, թաղված են Պղնձահանքում՝ «ի դունն եկեղեցույն» (Իվանի), «ի գրեղմանի հօր իւրոյ Իանէի» (Ավագը)²³: Երկայնարագուկիների այստեղ թաղվելը ինքնին վկայում է, որ վանքն ու միաբանությունը օտար չեն եղել բուն միջավայրին²⁴: Երբ Զաբարեն դավադրաբար սպանվում է Հուլավուի կողմից, Օձունում գտնվող նրա հայրը՝ Շահնշահը, «չործամ լուա զգոթն... ի նեղսրտովիւն անկեալ՝ ի տրամովեանն մեռաւ: Եւ տարեալ թաղեցին զնա ի Քոբայրեն, զոր առ կինն նոցա ի հայոց»²⁵: Այստեղից պարզ ի պարզս երևում է, որ Երկայնարագուկիների ննջեցյալները թաղվում էին հայրենական միջավայրում: Ի դեպ, վերբերյալ արտահայտու-

²¹ Նույն տեղում, էջ 355: Գատական այդ քննության և նրա մասնակիցների կենտրոնյան անուն տե՛ս Լ. Անիկիս-Բեկ, Մի վկայություն գերագույն դատակազմության և դատավարության մասին Զաբարյան Հայաստանում, «Տեղեկագիր», 1945, № 3—4, էջ 73—81:

²² Գրականության մեջ հաճախ է նշվում, որ ս. Աստվածածին վրացական վանք է: Երկար ժամանակ բանասիրությանը հայտնի չէր, որ «վրաց վանք», «վրացի» ասելով պատմական Հայաստանի սահմաններում հասկացել են ոչ միայն իրազեկ ազգուրյամբ վրացի, այլ նաև՝ վրացի ըստ զավաճության, վրացագովան հայազգի Այդ գագոնիքի բանալին, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, ախարմիկոս Ե. Մանո հայտնարեց հայ բաղիկոնականությանը եվրոպա իր նշանավոր աշխատությամբ (Н. Марр, Аркауи, монгольское название христиан, в связи с вопросом..., СІВ, 1905, стр. 17—21). Ե. Մանո իսկ լրացումներ տողերիս հեղինակի ծանոթագրություններով տե՛ս «К вопросу об Аркауи» (ՀՍՄՀ ՊՊ. «Տեղեկագիր», հատ. դեռ., 1964, №12, էջ 49—59): Հուսական ազգուրյաներում ևս՝ '13-րդ տերմինը կրկնելու զավանակալն իմաստով է զործածվել (հմմտ. А. П. Каждан, Армяне в составе господствующего класса византийской империи в XI—XII вв., Ер., 1975, стр. 143—145):

²³ Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 321, 322 և 238, հմմտ. Վարդան, Հաարամն պատմութեան..., Վենետիկ, 1862, էջ 148:

²⁴ Տապանարարները այժմ չեն երևում: Ազ. Երիցյանը ենթադրում է, որ Իվանն ու Ավագը թաղված պետք է լինեն տողերկրյա մտաբի մոտակայքում (Առ. Ерпцов, նշվ. աշխ., էջ 23), հմմտ. Բ. Լալայան, նշվ. աշխ., էջ 430:

²⁵ Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 393:

Յլունը մի անգամ ևս հաստատում է, որ «առեպի ի հայոց»-ը իսկապես եղած վանքը կամ եկեղեցին վրացադավան դարձնելուն է վերաբերում, որովհետև Քորայրը մինչ այդ վաղուց արդեն հայանի էր իբրև միաբնակ հաստատություն՝ Կյուրիկե Բ-ի աղջիկների հոգաբարձությամբ կառուցված²⁶:

Առաջնորդանիստ ս. Աստվածածին վանքից ներքև, ավերակ բերդի հանդիման, կա մի եկեղեցի, որի հարավային դռան առջև «Տակայական ու սրանչակերտ հուշարձանի վրա»²⁷ հետևյալ արձանագրությունը կա. «Ի քվիս ՈՂԳ կա/նգնեցա սուրբ տերո/նականս յարե/շատուրիւն/ Աագին և ծինա/մծղարուրեան/ Պետրի և Իս/րայակա/նս շա/մազապա, ևս Յա/կար Եւէց կանգն/եցի զխաշս ի հա/նգրաւ/արան/ի մերո. /զիս /ևս/ զա-մ/ուսի/ն իմ յ/աղար/ս յի/շեցեմ»²⁸: Եթե խաշարձան կանգնեցնողը իր դավանանքով շահնչվեր Պղնձահանքին, ապա «ծինամծղարուրեան Պետրի» արտահայտությունը այստեղ չէինք ունենա. Հաղբատի առաջնորդ, դանդակատան կառուցող, ծագումով «ի բաղաբէն Անուց» Համազասպի հիշատակությունն էլ բավական էր: Ուրեմն ՈՂԳ (=1245 թ.) և դրանից առաջ Պղնձահանքում հայ բաղկեղոնականներ են եղել: Որ նման մեկնությունը բռնադրուսիկ չէ՝ ապացուցվում է նույն եկեղեցու հարավային դռան ճակատին գրված խիստ աղավաղ արձանագրությամբ. «Կամա բարեա/րեիս Ասաուծոյ, յամս աստուածագաւ ար/է (?)/Գլմարա, առաջնորդուրեան/ տէր Յովանիսի, ծինամծղարուրեան/ն (Սիմոն ?), ղեկանազուրեան Աւրուպիրիւն/ ևս մեղ [...]²⁹»: Որքան էլ թերի ու աղավաղ, արձանագրությունը կարելի է թվա-

²⁶ Պղնձահանքի ս. Աստվածածին եկեղեցու աջ խորանում պահպանվել է Մովսես քահանայի տապանաբարը (սկզբնապես խաչքար տիտի եղած լինի): Տաղանադիրն է. «Երմովն քահանա յազաթս յիշեալքի»: Հմմտ. Ս. Լալայան, նշվ. աշխ., էջ 244: Ս. Ավագյանի տեղեկությամբ՝ Ս. Բարխուդարյանի զիտավորած իրենց արշավանքները տապանագրի տառաձևերը նկատի ունենալով, խաչքարը մինչև 10-րդ դարի էր համարում:

²⁷ Գ. Աղանյան, նշվ. աշխ.:

²⁸ Հմմտ. Ս. Լալայան, նշվ. աշխ., էջ 431, Գ. Աղանյան, նշվ. աշխ., էջ 246: Ս. Զալայանի մոտ (նշվ. աշխ., էջ 85) արձանագրությունը բառացի չի վերծանված, այլ որված է ընդհանուր բովանդակությամբ: Մուրալովը իր ուղեգրությունները հրատարակելիս, անկասկած, ուստիև թարգմանությամբ բերված արձանագրության տեքստը բաղչել է (Թարգմանի միջոցով) Ս. Զալայանի գրքի՝ նորից աղավաղ: Որ իբրև Մուրալովի աղբյուրը նշված «Ճանապարհորդություն»-ն է, երևում է հետևյալից. Զալայանը «ծինամծղարուրեան Պետրի» բառերի արանքում, իբրև ծանոթության ցուցիչ «2» է դրել, տողատակ հղելով, մինչդեռ Մուրալովը և նրա թարգմանիչը այդ «2»-ը ընդունել են իբրև 2-րդ (իմա՝ [Երկրորդ] Պետրի) և ուղղակի թարգմանել «...Петр II» (տե՛ս նրա՝ «Грузия и Армения», էջ 315—316): Զալայանի բերած տեքստից է օգտվել նաև Ե. Թաղաշվիլի՝ ուսանելի թարգմանելով (տե՛ս նրա՝ նշվ. աշխ., էջ 148): Արձանագրության նորագույն և սուսյզ հրատ. տե՛ս Լ. Ծղաճյան-Ջեզո, ԼՂՈՂՅՈՒՆ ԺՅՈՒ. ԳՅՈՅՏՈՒՆՆԵՐԸ. ԶՅ. 313.

²⁹ Արձանագրություն կրող քարը, ինչպես ճիշտ նկատել է Գ. Աղանյանը, փոխված է (Գ. Աղանյան, նշվ. աշխ., էջ 247), հավանաբար, բուն արձանագրված քարի ընկնելուց կամ քարզվելուց հետո նորի է տեղադրվել՝ նախորդի վրա գրածի անհաջող ընդօրինակմամբ: Ս. Ավագյանի վերծանության մեջ Սիմոն անունը չկա: Այդ դեպքում խախտվում է արտահայտության բնականոնությունը:

գրել. «արբէ»-ն, անշուշտ, «արբային» է, իսկ «Գլմարէն»՝ Դեմետր 1-ին՝ Դավիթ Շինարարի որդուն, չի կարող վերաբերել (1125—1156), քանի որ այդ շրջանում Պղնձահանքում «ծինամծղար» լինել չէր կարող (վանքը դեռ չէր հիմնադրված): Տերմինն այստեղ գործածական դարձավ միայն Իվան Երկայնաբազուկի բաղկեղոնական դառնալուց և Պղնձահանքը «ի հայոց» առնելուց հետո, 13-րդ դ. առաջին տասնամյակից ոչ շուտ: Ուրեմն, արձանագրության մեջ հիշվող Դեմետրեն վրաց թագավոր Դիմիտրի 2-րդ Անճնուրացն է (1271—1289): Իրոք էլ, այդ շրջանում Հաղբատի առաջնորդը Հովանան են էր, հիշված մի քանի արձանագրություններում³⁰: Այլևս անկասկած է, որ մեզ հետաքրքրող արձանագրությունը գրված է 1271—1289 թթ. ընթացքում: Հետևաբար, այդ թվականներին էլ Պղնձահանքում վրացադավան հայեր էին: Թերևս այս եղբայրությանը հակասող դիմելի վերաբերյալ տեքստում հիշվող, «ծինամծղարուրեանն» Սիմոնի և «ղեկանազուրեան Աւրուպիրիւն» տերմինների ու անձնանունների վրացական լինելը (բացի Սիմոնից, եթե այստեղ որևէ անուն կա ու վերականգնումը ճիշտ է)³¹: Բանն այն է, որ 12—13-րդ դդ. հայ բաղկեղոնականների շրջանում գործածական էին վրացական բառեր ու տերմիններ, հատկապես կապված եկեղեցու հետ: Անհի Տիգրան Հոնենցի արձանագրության մեջ ունենք խաւս (ხაუსი), խուցես (ხუცესი)³², աճղարձագիր (აძღვრძი), վիմագիր արձանագրություններում ու պատմիչների մոտ կան ուրիշ բառեր ևս, օրինակ՝ Իոք—ქუბო³³, կրուլ (კრულ) և այլն³⁴: Նշանակում է «ծինամծղար» և «ղեկանազ» տերմինների տակ չի կարելի միայն վրացագրի գործիչ հասկանալ, երբ նրանք հայկական աղբյուրներում են գործածված, այլ՝ նրանց վրացադավանությունը, թեև հայ-բաղկեղոնական մենաստաններում վրացի հոգևորականների անկախությունը ամենելին չի բացառվում: Ինչ վերաբերում է Աւրուպիր անձնանվանը (Ռոմեոսոսո—Ոսկերեհան), ապա այն գործածական է ոչ միայն երկաթնակ հայերի միջավայրում, այլ նաև, կարելի է ասել, Վրաստանի հետ անմիջական երթևեկ ունեցող Հյուսիսային Հայաստանում³⁵:

³⁰ Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 275—277, «Ժամանակագրական ցանկ Հաղբատի առաջնորդների և վանահայրերի»: Ցանկը այնուհետև լրացվեց Ն. Մովսիսյանի կողմից («Սիւն», 1964, № 8, օգոստոս, էջ 225—229):

³¹ Այս Սիմոն (?) չի կարող Սիմոն Պղնձահանցին լինել, ինչպես Լ. Մեխրիսթ-Քեկն է կարծում, որովհետև վերջինս 1248 թ. «լույժ ծերացեալ» էր, 60 տարեկան և ապա՝ առաջնորդ չի եղել, այլ քահանա, կրթավար:

³² Տե՛ս Գ. Ալիշան, Շիրակ, էջ 75—78: Կ. Կոստանյանց, վիմական տարեգիր, Ս. Պետրոսբուրգ, 1913, էջ 58—59, «Գիվան...», 1, էջ 63:

³³ Տե՛ս Կ. Մարք, Անի, էջ 104:

³⁴ Տե՛ս Գ. Ալիշան, Շիրակ, էջ 62: Վրաց մատենագրության մեջ ևս ի նշան հայադավանության երբևէ գործածվել են հայերեն բառեր՝ օճանեղճո (առաջնորդ), Ռոմեոսոսո (հոգևոր տեր) և այլն:

³⁵ Սանահնի Քոթուկում (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 3031) պահպանվել է հայոց ՈՂԳ (=1184 թ.) գրված Զարբիա և Իվան Երկայնաբազուկների ընծայականը, որի գրողը Աւրուպիր (նույն Ռոմեոսոսո) սարկավազն է. «այսպես գրեցաւ Աւրուպիր սարկավազի ձեռնարք» (Ձեռ. № 3031, էջ 312): Անիի արձանագրություններից մեկում գործածվել է

Թոռին Բուրբեիլի, որ էր աներ իր...»⁴⁶, որին ինքը՝ Թաղավորը «առ երեսս պատուեալ զնա՝ ապ նմա զղղեալն Լոռու»⁴⁷։

Այսպիսով, Ախթալա գյուղի նվերման մասին կարող էր խոսվել 1438 թ., մինչև Ալեքսանդր I-ի մահը՝ 1443 թ.։ Արդ, ինչպես է առաջացել 1398 թ., որ առկա է վրացերեն բնագրում։ Այստեղ գործ սենեք սխալ ընթեքցանության հետ։ Վրացերեն մեղ անհայտ գաղափար օրինակում եղել է յ. Ե33 «նուխտրի» գրչությամբ։ Ընդօրինակողը մոռացել է, որ Ե-ն հարություն-վորի ցուցիչն է և ոչ՝ յճ շտեմուտի հայտարարումը, և կարգացել է յճ [տեմուտե], որով թվականը պակասել է հարություն, իսկ «նուխտրի» յ-ն, ելուստի կարճության պատճառով, ընկալել է իրեն Յ և այստեղից էլ՝ Յ3 = 86 (1312=1398), մինչդեռ իրականում պետք է լիներ յ. Ե33 = 126 (1312=1438), որը համապատասխանում է պատմական իրողությունների և հավաստված վերոբերյալ այլազան զորություններով։ Ուրեմն՝ հայտնի է դառնում, որ 1438 թ. արդեն Ախթալա անունով գյուղ եղել է կոխում, որի ավերակները այսօր էլ կան⁴⁸։ Գլուղի առաջ հայ բնատնիքներ, ինչպես տեղեկացանք, իրենց կալվածներով նվերբերվել են Մցխեթին։ Այստեղից նաև բխում է, որ Գանձակեցու հարգողունները (Իվանե Երկայնաբաղուկի կողմից Պղնձահանքը հայտնից առնելու մասին) իրականում վերաբերում են վանքին և ոչ գյուղին։ Գանձակեցու պատմության այդ հատվածի վկայակոչումը բանասիրության մեջ իբրև տեղանքի (местность) վերաբերող, ինչպես տեսնում ենք, վերանայելի է⁴⁹։

Վերջին և ամենից կարևոր ապացույցը Սիմեոն Պղնձահանեցու մատենագրական գործունեությունն է։ Երևանի Մատենադարանի № 1013 ձեռագրի հիշատակարանում (էջ 241V) նա առաջին անգամ իր մասին հաղորդում է «Յամի 321Ե երբորի յախտեից թուռն գրեցառ և աւարտեցառ գիրքս Դրիգորի նաւացւոյ եպիսկոպոսի յ[ը]նդիր և լաւ արիւնակաց հնոց, որ Թարգմանացն գրած էր, ձեռամբ մեղապարտ և անարժան կրանուորի

⁴⁶ Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ և չաբորպաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 117։

⁴⁷ Անդ։

⁴⁸ Հանգուցյալ սակախեթիս ն. Բերձենիշվիրուն, ինչպես երևում է հայտնի չի եղել Ախթալա գյուղանվան գոյությունը վախուշից առաջ (18-րդ դ.)։ Նա կարծում է, որ վախուշտին ձեռքի սակ ինչ-որ պարտք է ունեցել՝ Զոանշիրի մոտ հիշվող Ագարակի եպիսկոպոսությանը նույնանցելով Ախթալայի հետ (տե՛ս Ե. Եղածեցե՞նցՅօլօ, Նախադեմոս օժտօրօօն Եւրօտեցեմ, 1, տծ., 1964, ձգ. 311—312, ձան. 24)։ Իրականում վախուշտին սխալվում է՝ 12—13-րդ դդ. Պղնձահանքի քղզկեցինական եպիսկոպոսությանը նույնանցելով վախճանեց Գորգասալի օրոք (5-րդ դ.) հիմնված Ագարակի եպիսկոպոսության հետ (Ագարակը գտնվում է Լոթի բերդից ոչ հեռու, տե՛ս Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 379, 383, 385)։

⁴⁹ «... И взял у армян местность, называемую Пгидзаханк» (Ал. Ерицов, *Իզվ. աշխ.*, էջ 21); «... и взял у армян местность, называемую Пгидзаханк» (Е. Такайшвили, *Իզվ. աշխ.*, էջ 143), *Նմտ. Դմ. Բակրաձե, Կավկազ в деревнях памятина христианства, Тифлис, 1875, էջ 34*։

Սիմէոնի, յերկիրս Հայոց, մեռ՜ ի Լառէ, ի վաճճն ուր կոչի Սպլէնձահան, ընդ հովանեալ սուր Աստուածամէին, յիշխանութիւն Իվանէ աթապապին, շինողի վանիցս, զոր յերկար ժամանակ արասցէ տէր որդովն իւրովք հանդերձ։ Արդ տղաշնմ՝ որք ընթեռնոյք կամ արկինակէք, յիշման արժանի արարէք, և որք յիշէք՝ յիշեալ լիցիք ի տեսնէ»⁵⁰։ «Յախտեից թիւր» բյուզանդական թվականն է, որ առավելագույնս զորո՞թական էր Վրաստանում՝ արարչագործությունից մինչև Քրիստոս հաշվելիս⁵¹, ուրեմն՝ 6735—5508=1227։ Հիշատակարանը այլևս կասկած չի թողնում, որ «յերկիրս Հայոց մերձ ի Լառէ» գտնվող Սպլենձահան-Պղնձահանքը վրացադավան հայերի հաստատություն է եղել, որոնց, թերևս, ամենանշանավոր երախտավորն ու ներկայացուցիչը Սիմեոն կրոնավորն է⁵²։

Պրոկղ Դիտոդիսոսի «Շաղկապքի» հիշատակարանում Պղնձահանեցին ազնվաբար ու ուղղակիորեն հիշում է իր ձեռնարկության զորապետձեռք. «Քարբմանեցառ պիրքս, որ է Շ[ա]ղկապ և գլուխ աստուածաբանութեան Պրոկղէ Դիտոդիսոսի պղատոնական իմաստասիրի, ձեռամբ Սիմէոնի անպիտան քահանայ կրօնատրի ի վրաց լեզուէ ի հայ լեզուս, յերկիրս Հայոց, ի վանս վրաց, ուր կոչի Պղնձահանք, յախտեից թուսականին 320Զ (=1248)։ Աղաշնմ գձեղ, ով եղբարք, զի յոյժ աշխատութեամբ Թարբմանեցի. նախ զի ոչ էի արժանի այսպիսի սպասաւորութեան՝ սակս շաղախեալ գոլ մեղօք. երկրորդ՝ զի յոյժ ծերացեալ էի և տկարացեալ չաւաց և ի՛մտաց և ի զօրութենէ. զի զվ ամենիւմ էի։ Այլ զի ոչ էր սա քաբմանեալ ի մեքս լեզու. և սա է մայր աստուածաբանութեան առաջին... և սա յայն սակս քաբմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մեռմէ...»⁵³։ Հայկական և վրացական մատենագրության հանդեպ ցուցաբերած այսպիսի ծանոթությունը, հավանա-

⁵⁰ Հիշատակարանն առաջին անգամ հրատարակել է ու գնահատել ն. Ակիկյանը (տե՛ս նրա՝ «Սիմէոն Պղնձահանեցի և իր վարդապետութիւնները վրացերեն», Վիեննա, 1951, էջ 7—8)։

⁵¹ Այդ մասին տե՛ս Ժ. Յոյլոստից, *Բյուզանդական ժգջլ Նախադեմոս, սքեռուցեմ...», Ե.* II, տծ., 1945, ձգ. 325—341, ձմտ. ն. Ակիկյան, *Իզվ. աշխ.*, էջ 8, ձմտ. Պ. Մուրադյան, *Հայ-վրացական գրական-մշակութային փոխհարաբերությունները* (սկզբից սկզբից մինչև ս. Բրայ վարդապետությունը), ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1964, № 10, էջ 57։

⁵² Սիմեոնի վարդապետությանը (վրացերենից) մեր ձեռագրերում պահպանվել են Պրոկղ Դիտոդիսոսի «Շաղկապը աստուածաբանական», Հովհան Դամասկոսցու «Աղբիր գրություն», Հովհան Սինալեցու «Մանրուղի աստուածային ելից», հարավար է՝ «Ժամագիրք Յուսայ» և մի բանի այլ գործեր։ Ն. Ակիկյանը նրան է հատկացնում և «Քարբից ցիտերբայի» հայերեն վարդապետությունը (Իզվ. աշխ., էջ 161—188), որ, սակայն, տակավին կարոտ է ապացուցման։ Այս տեսության դեմ, ժամանակագրության տեսակետից, տարրվում է Բ. Արուստան (տե՛ս յնչա՞րտոս Եւրօտեցեմ Եւրօտեցեմ Եւրօտեցեմ Եւրօտեցեմ, հարավար է՝ «Ժամագիրք Յուսայ», ձգ. V—VIII, 01—32, ձմտ. նույնի), «Քարբից ցիտերբայի կամ վրաց պատմության» հին հայերեն վարդապետությունը, «էւրօտեցեմ» ՄԱՀ ժողովմասիկետի կից պետական ձեռագրատան (Մատենադարանի) գրական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 31—40)։ Պղնձահանեցին վարդապետ է, լեզվական իրողություններից ենթադրելով, մի երկու փիլիսոփայական-դավանաբանական գործ են, որոնց մասին մենք առանձին հաղորդում ենք պարտաստում։

⁵³ Տե՛ս ն. Ակիկյան, *Իզվ. աշխ.*, էջ 23—24։

բար, և հարուստ գրադարանի առկայությունն է ապացուցում Պղնձահան-
բուն, և արժանավոր կրթօջախի գոյությունը:

Պղնձահանքի միաբանները, անշուշտ, Իվանի Երկայնարագուլիի հովանա-
վորությամբ, շարունակում էին հայերինը՝ «հայ լեզու» ճանաչել, Հայաս-
տանը՝ «լերկիրս հայոց», հայ մատենագրությունը՝ «մեր լեզու, ... մի պակաս
եղիցի յազգէ մերմէ»: Պղնձահանեցին ևս, հավատարիմ իր ժամանակի
դավանարանական ըմբռնումներին, ս. Աստվածածինը «վանս վրաց» է
անվանում⁵⁴: Հարկավ իրավացի էր Ն. Մառր, երբ գրում էր. «В 1248-ом году
монах Симеон перевел труд Прокла с грузинского языка, в Армении, в
«грузинском» монастыре Пгндзаханке, т. е. в монастыре Медной руды.
Теперь, после разъяснений, данных мною об армянах-халкедонитах, нам
не трудно понять, что может означать в устах армянина-антихалкедонита
термин «грузинский» в применении к этому монастырю. «Грузинский»
здесь, несомненно, термин конфессиональный, равнозначущий «халкедон-
нитскому». Известно, что монастырь Пгндзаханк, армянский, одно вре-
мя антихалкедонитский, армянином князем Иванэ Долгоруким, при-
соединившимся к халкедонитской, т. е. греко-православной церкви, был
обращен в халкедонитский, по тогдашней местной терминологии—гру-
зинский. Понятно, как сам князь Иванэ с присоединением к халкедон-
нитской церкви не переставал быть армянином, так монастырь продол-
жал быть армянским; с переходом к армянам-халкедонитам для мона-
стыря облегчалось лишь культурное общение с грузинами. На почве
этого сближения и возникает, надо думать, армянский перевод Бого-
словских начал Прокла с грузинского»⁵⁵.

Պղնձահանքի միաբանները հավասար սիրով են ուսումնասիրել հայկա-
կան ու վրացական մատենագրությունը, չեն մերժել մեկի նվաճումները և
չեն երկմտել մյուսը հարստացնելու աղնիվ ձգտման մեջ: Իրեն ապացույց
Պղնձահանքի միաբանների՝ նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս եկող
մատենագրական եղելությունների տեղակութային և քաղկեդոնական այլ վան-
քերի հետ զործակցության, կարելի է վկայակոչել հետևյալը. Բեռլինի
№ 25 հայերեն ձեռագրում⁵⁶, որ ըստ նկարագրության բովանդակում
է Հովհան Մինայեցու «Սանդուխթ աստուածային ելիցը» («Կղիմաբ»),
20-րդ դլիի վերջում պահպանվել է հետևյալ հիշատակարանը. «Թարգման-

⁵⁴ Ի դեպ, «Նոր բառգիրք հայկադեան լեզուի» հեղինակները, ծանոթանալով հիշատա-
կարանի «ի վանս վրաց»-ին, կարծել են թե այն «Մարգանեակ ի ձև» Սիմեոնի բահանայի
վրացոյ է», որովհետև այն ժամանակ վրացի հայոց համար միայն էթնիկական հասկացո-
ղություն էր և նրա դավանարանական (конфессиональный) խմատը դեռ բացահայտված չէր
Տե՛ս «Նոր բառգիրք...», Վենետիկ, 1836, էջ 18 (2-րդ սյունակ):

⁵⁵ Н. Марр, Иоанн Петрицкий, грузинский неоплатоник XI—XII века, СПб., 1909, стр. 8—9.

⁵⁶ Նկարագրությունը տե՛ս Dr. N. Karamianz, Verzeichniss der armenischen Hand-
schriften..., Berlin, 1888, S. 18.

եակ է մինչև ասո ի սրբամիտ կրանաւորէ Մինաւէ Սինակեցէ ի Տրայի-
զոն Բաղախ: Իսկ աստուսա՛ ի Սիմ[է.]ոն քահանայէ կրանաւորէ՛ վրաց
բարբառով⁵⁷, Երևանի Մատենադարանի № 1925 ձեռագրում (էջ 89 Վ)
բերված հիշատակարանի երկրորդ մասն է պահպանվել. «Սրբասեղև կրա-
նաւոր Սիմեոն, թարգմանեցի Խճոքն ի վեր, ի վրաց լեզուն»: Բնական
է, որ նույն երկստիություն՝ կեսը մեկ և կեսը մյուս թարգմանչի կողմից
հայերեն փոխադրվելը (ըստ որում Մինաս Սյունակացինը՝ հունարենից,
Սիմեոնինը՝ վրացիներից) որոշակի պայմանավորվածություն է վկայում.
Պղնձահանբում ոչ միայն գիտելին ինչ է կատարվում հետավոր Տրայիզոնում,
մանավանդ դավանակիցների շրջանում, այլ և շարունակում էին նրանց ինչ-
ինչ պատճառներով կիսավարտ մնացած գործը:

1582 թ. Իսան գրիչը Ակնի գավառի «ի վանս որ կոչի Նորվան, ընդ
հովանեակ ամենաարուհի Աստուածածին... վանքն որ կոչի Աթմա» ընդ-
օրինակում է [«Ձունական շարակնոց»], ավանդելով այս հիշատակարանը.
«... Սուրբ հայրն մեր պապա Մինասի և պապա Սիմոնի թարգմանեակ էր ի
վրաց լեզուէ ի մեր լեզու...»⁵⁸: Այլևս պարզ է, Պղնձահանքի կրոնավորը
գործակցում է տրայիզոնցի Մինասի հետ միանգամայն պատճառարանված
ու պայմանավորված:

Ահա այս նկատի ունենալով ենք մենք ասում, թե Անիի վրացագավան-
վրացական եկեղեցուց հետո, Պղնձահանքը հայ երկարնակության ամենա-
նշանավոր կենտրոնն էր:

«Հունական շարակնոցի» թարգմանության պարագան էական նշանակու-
թյուն ունի Պղնձահանքի հետ կապված այլ հարցեր բնեխա: Ակադեմիկոս
Կ. Կեկելիձի հեղինակավոր ընդհանրացմամբ «... թարգմանական ստեղծա-
գործությունները այս կամ այն գրականության մեջ պատահաբար ու ան-
նպատակ չեն հայտնվում. նրանք կոչված են այն սոցիալական ու մշակու-
թային-պատմական պահանջմունքներով, որ առաջադրում է մտքի տեղական
հոսանքը. թարգմանվում է այն, ինչ պահանջում է էական, ամենօրյա
անհրաժեշտությունը, թարգմանվում է օտար նյութը, իսկ ընտրությունը
կատարում է, թարգմանում ու յուրացնում է ազգային առանձնահատկու-
թյունն ու գիտակցությունը, մի խոսքով՝ թարգմանվում է այն, ինչի հանդեպ
անհրաժեշտ պահանջ կա...»⁵⁹:

Արդ, «Հունական շարակնոցը» ևս թարգմանվել է գործնական նկատ-
ուումով, այսինքն՝ վրացագավան վանքը շի ունեցել քաղկեդոնական խմբա-
գրության «պաշտամանց գիրք», հետևաբար, ծիսակատարության մի մասը

⁵⁷ Ն. Ալիևյան, նշվ. աշխ., էջ 106:

⁵⁸ Բ. Սարգիսյան, Պրեզիդենտական «Աստուածարանական շաղկապաց» հայկական
թարգմանության խնդիրն և... («Բազմավեպ», 1894, էջ 328, ծան., համա. Ն. Ալիևյան, նշվ.
աշխ., էջ 193): «Շարակնոցի» թարգմանության մասին տես նաև օղոս Էմբլեյ, ինտելլիգենտ և
սոցիալիստ Լուդեգրադնի ֆրոնտիստներ IX—X ևս—Մի, տն., 1944, թ. 017.

⁵⁹ Գ. Կեյզեօղլու, Մոսկովի համալսարանի ասպրանդոս Գեդեոն Կարապետյանի և ուրիշ
տեղի, «Երգիչը...», Կ., 1, թ. 185.

զոնի պետք է կատարվեր հունարեն կամ վրացերեն լեզվով (այս դեպքում՝ երկրորդով): «Շարակնոցը» հայերենի են թարգմանել, որպեսզի ամբողջ ծխակատարությունը մայրենի լեզվով լինի՝ հայերեն: Ն. Ակինյանը իրավացի չպետք է լինի, կարծելով, որ մինչև «Շարակնոցի» թարգմանությունը «Քե Հոռոմոց աշխարհին և թե Վրաստանի մեջ անոնց (հայ-հոռոմների) — Պ. Մ.) ծխակատարությունը հունարեն և վրացերեն լեզվով էր: Գոնի ծանոթ չեն հայերեն լեզվով ծխարանները»⁶⁰: Ծիշտ է, մինչև 13-րդ դ. սկիզբը հայերենով քաղկեդոնական ծխական գրականություն ձևակերպում չկա (մինչև այժմ հայտնի չէ), բայց այդ չի նշանակում, որ չի էլ եղել նկատի պետք է ունենալ, որ հայ երկաթենակների ինքնուրույն ու թարգմանական մատենագրությունից միայն փշրանքներ են պահպանվել⁶¹, որովհետև պաշտոնական եկեղեցին անխախտի կարող էր, ինչպես Կաղանկատվացին է գրում, սնորվներով «ի պետն Տրտու» լցնել⁶²: Մինչդեռ հայկական ու հունական աղբյուրներից պետք է, որ սակավին ս. Սարայի օրոք (Յրդ դ.), նրա կտակի համաձայն, երկաթենակ (հետագայում՝ ծաք) հայերը իրավունք են ունեցել ժամասացությունը կատարել մայրենի լեզվով, բացառությամբ «Սուրբ աստուածի»՝ հայոց «որ խաչեցար» հավելման պատճառով: Այդ աեղեկությունը բավասովում է Նիկոն Սևաբեցու «Տակախկոնում» պահպանված (11-րդ դ.) ս. Միմեոնի վանահոր՝ Երուսաղեմի պատրիարքին հղված ուղերձի պատճենով⁶³: Հայկական աղբյուրներում ևս ասվում է, որ ծաթերը «միայն լեզուով և գրով են հայլ, և այլով ամենայնիս միարան ընդ նոյն յունաց և ամենայն գրոց նոցա, որպէս յայտ է այժմ ի Հոռոմոց սանէն մինչև ի Յոյնք և ի Կաֆա և ի յայլ տեղիս, որք բազումք կան ի նոցունց յամենայն տեղիս»⁶⁴: Ուրեմն, կար հայերեն, քաղկեդոնական ծխական գրականություն, և հայ-հոռոմները ժամասացությունը հիմնականում կատարում էին հայերեն, թեև հունարեն կամ վրացերեն կատարվող առանձին բացառություններ ևս կարող էին լինել: Այստեղ տեղին է կրկին վկայակոչել Անիի վերաբերմամբ Ն. Մառի համոզիչ եզրակացությունը. «Естественно, грузинский язык не исключался в армянских халкедонитских церквах XIII в. ...Грузинский язык, быть может, постепенно усиливался, позднее еще более усиливался в армянской халкедонитской церкви, но бесспорно, что армяне-халкедониты в церкви пользовались своєю родной речью.

⁶⁰ Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 189:
⁶¹ Այդ գրականության ցանկը տե՛ս նույն տեղում, էջ 224—262:
⁶² «Մովսէսի Կաղանկատուացւոյ՝ Պատմութիւն Աղուտնից աշխարհի», Մոսկվա, 1860, էջ 239:
⁶³ Н. Марр, Аркаун, էջ 35, հմտ. Ն. Աղոց, Ծաթ-Հայր («Հանդէս ամսօրհայ», 1912, էջ 257—271): Հոդվածի առու. բնագիրը տե՛ս ЖМНП, 1911, էջ 238—249, հմտ. П. Мурадян, Неопубликованная статья Н. Я. Марра об „Аркауне“, ՀՄՄՀԳԱ, «Տեղեկագիր», հատ. գիտ., 1964, №12, էջ 55:
⁶⁴ Միխայիլ Ապագանցի, Աղանդաւոր հայր (տե՛ս Ղ. Ակիշան, Հայագատում, Վենետիկ, 1901, էջ 553):

В Ани, Шираке и прилежащих областях было значительное количество халкедонитских общин, тогда как грузинские надписи района чрезвычайно малочисленны»⁶⁵.

Հայ-հոռոմների՝ մայրենի լեզվով արարողություն կատարելու հանգամանքը վերջերս հաստատվեց նոր փաստերով. հայագետ Հ. Քյուրտյանը հրատարակեց իր հավաքածուի № 99 ձեռագրի (ավետարան) բովանդակած նյութերը: Հիշատակարաններից պարզվում է, որ ոմն Կողմաս վանական 1203 թվականից առաջ կազմել է Հայսամվուրքի բողոքովին նոր՝ հայ-հոռոմ խմբագրություն («Կատարեցաւ աստուծով սենեֆառո բովանդակ ամենայն տարոյն սուրբ մարտիրոսաց և հայրապետաց և ճգնաւորաց... լուսաւորիք սովաւ յիշեցէք զմեղապարտ զրիչս... յարժանաւոր աղաւթս ձեք. ընդ նմին և զպատուական քահանա կրանաւոր, յարմարող սենեֆառոյս զԿողմաս»): Այլ խմբագրություն է ներկայացնում և հիշատակարան բովանդակող ավետարանը, որովհետև «հայ-հոռոմ մը բուն ոսկեղարյան բնագիրը վերստին համեմատած է հույն բնագրին հետ և իր նկատած տարբերությունները նշանակած է» («Բաղմավէլդ», 1974, № 3—4, էջ 410): Ի դեպ, հիշատակարանում իսկ ասված է, որ Հայսամվուրքը «բոս կարգին Հոռոմոց» է (էջ 280):

Վերևում անուշված ավյանները, կարծում ենք, բավարար են եզրակացունելու համար, որ.

- ա) Պղնձահանքը, իրրև վանական հաստատություն, գոյություն է ունեցել Իվանե Երկայնաբաղուկի քաղկեդոնականություն ընդունելուց առաջ:
- բ) Աղբյուրների «վրացի վանք» արտահայտությունը իրականում մատնանշում է տեղի վրացադավանությունը:
- գ) Պղնձահանքի ծինամձղվար-առաջնորդը իր ենթակայության տակ ունեցել է Հյուսիսային Հայաստանի քաղկեդոնական հաստատությունները:
- դ) Պղնձահանքը եղել է հայ-վրացական նշանավոր կրթօջախ, մատենադրական բեղմնավոր գործունեության ուշագրավ կենտրոն:

* * *

Պղնձահանք այցելած ճանապարհորդ-դիտնականները հիմնականում գրազվել են ս. Աստվածածին վանքի ճարտարապետական նկարագրությամբ, բազմիցս կոչելով այն «եղակի», «սքանչելի», «հոյակապ» և այլն⁶⁶: Անցյալ դարի վերջին Պղնձահանք է այցելել Աղ. Երիցյանը, որը մինչ այդ, ինչպես նշեցինք, համառոտ տեղեկանք էր ստագրել⁶⁷: Նա «при помощи пропусковой бумаги» պատճենում է ս. Գեորգ մատուռի վրացերեն բավական ընդարձակ արձանագրությունը և հետագայում ի վերածնություն տալիս Ծ.

⁶⁵ Н. Марр, Ани, стр. 131—132.
⁶⁶ Дм. Баградзе, Кавказ в древних памятниках христианства, стр. 34.
⁶⁷ Ал. Ерицов, նշվ. աշխ., էջ 20—24:

Քաղաքը 1894 թ.՝ Վերջինս ընդօրինակության վրայից վերծանում է այն և, առկցելով վրացերեն տալանագրերի ու մակագրությունների իր գրառումներին⁶⁹, հրատարակում 1901 թ.⁷⁰: Նորագույն հրատարակությունը, սրբագրելի տեղիներով, պատկանում է Լ. Մելիքսեթ-Քեկիկ: Տեղում աշխատելու ժամանակ համոզվեցինք, որ ընդօրինակության վրայից վերծանելու պատճառով է. Քաղաքը միտ առանձին վրիպումներ են եղել: Ստորև տալիս ենք Պղնձահանքում պահպանված վրացերեն արձանագրությունների վերամուտքն ու հայերեն թարգմանությունը, անհրաժեշտ ծանոթագրություններով:

1. Աստվածածին վանք (տեղացիների հունարան հորչորչամար՝ Մեյ-րիման): Որքան էլ զարմանալի է, վանքի սրբատաշ ու կատարելագույն լավ պահպանված պատերի վրա արտաքուստ ոչ մի արձանագրություն չկա: Դժվար է պատկերացնել, որ Տաշիրի, Շիրակի և Արարատյան գավառներում հարյուրից ավելի արձանագրություն փորագրած երկայնաբաղուկները իրենց «ատալ ի հայր» առաջնորդանիստ շինության վրա ոչինչ չեն գրել (գուցե այս պարագան որևէ բացատրություն ունի): Ներսից գրեթե ամբողջությամբ ծածկված է որմնանկարներով՝ աստվածաշնչական դանդաղ թեմաներով¹: Նրանց վրա կան բազմաթիվ վրացերեն մակագրություններ (աստվածաշնչական անձնանուններ, տեսարանների անվանակոչումներ, մարդարեական ասույթներ և այլն): Այսպես, օրինակ, հարավային պատին եղած որմնանկարներից մեկի բռնած փաթաթի վրա գրված է.

1—4 ժմ(ս)ո, մար]ալդը մոլլոլոլը ց(ս)եկլըց(ս)ե]....|
5—7 և ց(ս)եմնե]լըծոլը, | ր(ոմըլմ)ն շլլլլլ...
Պ I (81) Աղ. XXIII, 1

Քարգամանություն. նորայր, ամենայն օր սպասիր ելնելուն... և պատրաստվիր, որդ գիտես...

Մակագիր փաթաթներ կան և հանդիպակաց պատի որմնանկարներում:
Մակագրությունների նշանակալի մասը նվիրված է պատկերված անձանց ինքնությանը, ինչպես, օրինակ՝
Մ(մու)լ ձեց(ս)կլ—սուրբ Քենեակիտուս
Մ(մու)լ Ն(ոմ)լ—սուրբ Սիմեոն
Մ(մու)լ ց(ս)ըրոս—սուրբ Նվազրուս

68 E. Такайшвили, նշվ. աշխ., էջ 138:
69 Պղնձահանքում է. Քաղաքը 1894 թ., իր իսկ խոսքով՝ «всего на несколько часов» (անդ):
70 Նույն տեղում, էջ 138—145:
71 Որմնանկարները, ինչպես երևում է, երկշերտ են, ընդ որում՝ նախնականը մակագրություններով հարուստ չի եղել: Հունարեն մակագրությունների հրատարակությունը սեխ. Թ. Սախունի Սեբե, Կոնստանդնուպոլիսում հրատարակված է, Կոնստանդնուպոլիս, 1951, թ. 350—363.

Մ(մու)լ ձեց(ս)կլ—սուրբ Դանիել
Պ II (82)

Այս բնույթի որմնանկարներից մասնավոր ուշագրության է արժանի վրահան ազգային եկեղեցու սրբերից երկուսի՝ Նքոթիմեսու և Գեորգի Սուրբասրեցիների պատկերումը արևմտյան պատին.

Մ(մու)լ ձեց(ս)կլ—սուրբ Նքոթիմեսու Սուրբասրեցի
Մ(մու)լ ձեց(ս)կլ—սուրբ Գեորգի Սուրբասրեցի
Պ III (83)

Մակագրությունների մի խումբ էլ տեսարաններին է հասկացված, ինչպես, օրինակ՝

Մ(ո)լ ձեց(ս)կլ—ժնուց Գրիսասի
Նամոտեց—գրախտ
Պ IV (84)

Ախթալայի այս վանքը 19-րդ դարում հանդիսանում էր Մելիքիշիկի (Մելիքով) իշխանական տան հանգստարանը, ուստի պահպանվել են «մխեղրուկ» գրությունների շարք տապանագրեր, դերադանցապես մարմարե սալիկների վրա գրված: Ստորև ժամանակագրական հերթականությամբ տալիս ենք նրանցից մի քանիսի (համեմատարար կարերների) վերամուտքները.

- ա) 1 Ք(ոն)կոն շլլ, յ լեց(ս)եց(ս)եց⁷².
- 2 Ք. Կոմոս և Նոտեսաջոս Կոչևոս մո-
- 3 ցր Նեցեցիս ցարաջոսեջոս լեց(ս)ա, րոմեց(ս) Վոչյոս
- 4 ցաջոս Մեց(ս) լեց(ս)ա լեց(ս)եց(ս)եց(ս)ե
- 5 լեց(ս)լ լեց(ս)եց(ս)լ լեց(ս)ա լեց(ս)եց(ս)եց(ս)ե
- 6 Ք(ո) լեց(ս) լեց(ս)ա լեց(ս)ա լեց(ս)եց(ս)եց(ս)ե
- 7 լեց(ս) լեց(ս)ա լեց(ս) լեց(ս)ա լեց(ս)ա լեց(ս)ա
- 8 Կոչ(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս)
- 9 լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս)
- 10 լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս) լեց(ս)

Պ V (85) Աղ. XXIII, 3
Քարգամանություն. Քրոնիկոնի 490 (+1312=1802 թ.) սեպտեմբերի 1: Ամենայն տոնմերի ու ցեղերի հատուկ բնութան հատուցող եղա և ես, որս էի ճակատի որդի (ճակատիշիկի) Մգենարուկի դուստր և ամուսին Մուխիբի պալադ իշխանաց (բավալաց) [տոնմից] Մեկի որդի Թեյմուրազի՝ Քամարե [ս]. վախճանվեցի 55 տարեկան ու որդի մեջ բողի եր-

⁷² Կարելի է և ալ տրոհում առաջարկել Ք(ոն)կոն շլլ, լեց(ս)եց(ս)եց(ս)ե(1)

Բարոյակիրք հաջողյալ:
 Ու երբ փութով բառամեց ծաղկյալը
 Եվ շյուր՝ պաղի պատրաստյալը—
 Մնողին ընկավ ողբ այնպիսի,
 Որ դարնացրեց օրերը նրա՝
 Զրկված սիրեցյալ դուստրից,
 Մայրը՝ Սոփիա, աղչիկ էրիսթ[ո]լ Մելոյի,
 Արցունքով է դնում այս քարը,
 Որ ամեն անցողի հետ ասեմ.
 «Մերերի հետ թող հանգչի, Քրիստոս ասոված,
 Քո աղախնի հոգին»:
 Մնյալ է 1834 թ. օգոստոսի 26-ին,
 Վախճանվեց հուլիսի 10-ին, 1856 թվին:

2. Ս. Երուզրայան եկեղեցի: Գտնվում է նախորդից Հյուսիս-արևմուտք: Երկհարկ շինություն է, ավելի շուտ՝ երկու մասուռ, առաջինը նիւղային: Այստեղ, ճիշտ է նկատել Ն. Քաղալչիլին, վրացական շատ արձանագրու- լիչոններ են եղել: Նրանց մի մասը անցյալ դարի վերջերին արդեն հողմնա- հարվել ու ոչնչացել էր: Վերին մասուռի նախագավթի մոտ եղև են բավական բանակույթամբ տասանադրեր, որոնցից այժմ մեկն է պահպանվել (մյուսները բարեկարգման ժամանակ մնացել են ասֆալտի տակ): Բարեբախտաբար, այն ամենը, ինչ անցյալ դարի վերջերին տկավին պահպանված է եղել, Ն. Քաղալ- չիլին ընդօրինակել է, որտեղից քաղելով և լրացնում ենք:

- Նախագավթի կամարի վրա.
 + լ(մրտ)ոսատշև լ(ո)ցցա
 Կ(ս)ջտ, մ(ս)մ(ս)նո ֆ(միւժ)նո,
 Ե(ո)ձց(ո)լոսա մոջ
 Ե(ն)ձլլ(ս)յոսո(Յ)և.

Պ VIII (88) Աղ. XXIV, 1
 Թարգմանություն. Ի սեր աստծո՝ աղրեցեմ, սուր հայեր, մեղա- պատ Մոս (Մովսես) լուսարիս համար:
 Տասանադրեր
 ա) օտանց Մ(քլնլըը)ն լ(մերոմ)ն.
 Պ IX (89)
 Թարգմանություն. Խոանեին (Հովհաննի) ողորմի ասոված:

բ) մոսցև մ(ո)ժ(լաո)նա Մ(քլնլըը)ն լ(մերոմ)ն.
 Պ X (90)

Թարգմանություն. Մովսես վարդապետին ողորմի ասոված⁷⁴:

⁷⁴ Ն. Քաղալչիլին մոտջլար-ն (վարդապետ) Թարգմանել է «կրոնավոր» (священ- ник): 1. Մելիքյան Ք. Բեկը մոտջլար-ի փոխարեն կարդացել է մձ (եղբայր), որ թիւր է (սե'ս «լորդե-ժամոթն քարտ քեթրաւիյայ», թ. 314):

դ) լըգանոնսա
 Ն(ո)լ(ո)նս Մ(քլնլըը)ն
 լ(մերոմ)ն⁷⁵.
 Պ XI (91) Աղ. XXIV, 2
 Թարգմանություն. Նիկոլոզ (Նիկոլոս) սարկավազին ողորմի ասու- ված:

դ) Ն(ո)մ(ը)ոնս
 Մ(քլնլըը)ն, Մ(թալ)ո
 լ(մերո)ո.
 Պ XII (92)
 Թարգմանություն. Ողորմյա՝ Սիմեոնին, տեր ասոված:
 Եկեղեցու մեջ, խաչի վրա (այժմ չկա).

- ժլըը(ս)ք || խ(ո)ս(ժ)ցի.
 սա || ուձ-
 օլոսա || Մ(քլնլը-
 ձլը)ա || լ(ոմ)ո(ժ)րց,
 ց(ո)ր(ց)ոս || և Ն(ոմ)ոնս
 Մ(քլնլըը)ն, || լ(մերո)ո
 Մ(թալ)ո.
 Պ XIII (93)

Թարգմանություն. Հաղարայոն (զարայոն) Քրիստոսի: Սույն տե- ղիս կաուղողներ Գիմիտրեին, Գիւրգիին և Սիմեոնին ողորմյա՝ տեր ասոված⁷⁶:

3. Ս. Կեռզ մատուռի մասի վերևում⁷⁷:

- 1 խ. մը, շլորնո և Ն(շ)լոտա Ն(ս)ֆ(ս)լ(ո)ն(ը)լո ֆ(ն)մ(ձ)լարո Յ(ը)ժ(ը), լորն ց(ք)մ(ը)ն ալմ(ը)ն(ը)ն(ս)լ զ(Յ)ժ(ո)նա
- 2 սոն Ն(ս)ն(ը)լնա Ն(ը)լ(ս) ֆ(մ)մ(ս)տա մ(ո)ց(ք)լ(ո)տ(ս)նա, Նա(ձ)լ(ը)լ(ս)- լ(ս)լ մ(ս)տա և Յ(ո)ր(ը)լ(ս)-Յ(ս)ժ(ո)նա և ձ(ս)մ(ը)ր(ը)լ(ս)ա
- 3 լ(ո)ր(ս)տ(ս)ա ին(ձ)ա՝ Ն(ս)մ(ո)լ(ո)ց(ը)լ(ս)ա՞ և Ն(շ)լոնս ի(ք)մ(ս)նա Ն(ս)լ(ո)ց(ը)լ(ս)-Ն(ս)ն(ը)լ(ս)ա, և ձ(ս)ն(ը)լ(ս)ն(ը)՝ ս(ո)ւ(ր)մ(ը)լ(ս)ա մ(ո)ց(ո)լ(շ)լ(ո)տա ձ(ը)լ(ս)ն(ս)լ(ս)ա
- 4 մե(ո)րը ձ(ը)լ(ս)ն(ս) ձ(ը)լ(ս)ն(ս) կ(ս)յ(ո)ս — մոնս ձ(ս)-

⁷⁵ Տասանադրի այժմ պահպանվում է: Ն. Քաղալչիլին կարդացել է ձ(ն)ո Ն(ը)լ(ո) կանոն զրված է բերականական ճիշտ համաձայնությամբ, ինչպես մենք ենք վերծանել:
⁷⁶ «Տեղիս կաուղողներ» արտահայտությունը խաչի վրա լինելով, հաղիվ թե եկեղեցուն կամ մատուռին վերաբերի, թե այդպիսի հարավորություն չի բացատրում: Գուցե դա վերաբերում է խաչ կրող սեղանին, ալիկ ճիշտ՝ պատվանդանին, որ նախաշանկար և հալ- վրացական ինքնատիպ ոմի ուղարկված մի նմուշ է:

Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում արձանագրության այն մասը, որտեղ խոսվում է առաջնորդին ազգակից (տոհմակից) մարդկանց մասին: Այստեղ կարող ենք ենթադրել, թե Պղնձահանքում վանահայրությունը ժառանգական է եղել⁸³, ուստի Պետրեն նախապես պարտավորեցնում է նրանց:

Ե. Թաղաշվիլու այցելության տարիներին ս. Գևորգ մատուռում եղել է վրացերեն արձանագրություն կրող մի խաչ (կարծյոք, հիմա իր տեղում է, բայց վերջին այցելության ժամանակ վրիպել ենք այն ստուգել): Արձանագրությունը վերցնում ենք Ե. Թաղաշվիլու հրատարակությունից՝ բացելով հապավումները.

չ(շար)օ լ(րօսժեց)օ.
օ(ո)րժ(օ)նՏ Մ(յընժըց)ն լ(մերտմ)ն,
ր(ոմըլմ)ն յեց շչ մօրօ
օժց(օ)լլօ Ն(օ)ճմօր յո.
Պ XV(95)

Թարգմանություն. խաչ Քրիստոսի: Իորդանին (Հորդ[ան]անին) ողորմի ասաված, որ այս անգործածական տեղը պիտանի դարձրեց⁸⁴:

Հորդանանը շինարարությամբ է պարապել նաև այլուր. Մաթոսավանքի արձանագրությունից տեղեկացանք, որ նա 13-րդ դարի կեսերի դործել է: Նշանակում է՝ խաչի վրայի սույն արձանագրությունը 1247 թ. մի երկու տարի առաջ կամ հետո է գրված, իսկ խաչի այլուստ բերված լինելը որոշակի է: Ավելացնենք նաև, որ այն բանաձևայնությամբ հիշեցնում է Բրդաձորից ոչ հեռու գտնվող խաչքարի թիկունքի արձանագրությունը: Թ. Բարնավելին վերջինս թվագրում է 13-րդ դարի առաջին քառորդով⁸⁵, որ հարկը է և մեր արձանագրության երևան գալու ժամանակին:

⁸³ Հմմտ. Ե. Такайшвили, նշվ. աշխ., էջ 143:

⁸⁴ «Անգործածական տեղը պիտանի դարձրեց» արտահայտությունը Ե. Թաղաշվիլին բացատրում է այսպես՝ Իորդանը (Հորդանանը) մաքրել է տեղը և այնտեղ խաչ կանգնեցրել կարծում ենք, ավելի բնական կլինի ենթադրել, որ նա խաչքարի շրջապատում եղած անմաշկ հողը մշակելի է դարձել կամ այնտեղ որևէ շինություն կառուցել: Ի դեպ, մեզ հետաքրքրող արտահայտությամբ սկզբնաղբյուրներում երբեմն ակնարկվում է նոր հող-տիրույթ ձեռք բերելը: «Քվարի» տերմինի իրավական նշանակության մասին տես Յ. Յոլոթգազ, քարտուղի Սամբոլոսի ժեզլեմի լասալեղտ Սաթրաթեղոս Լաֆիլադրալ Վարժարանում, «մեզնե» (ԻՍԹ, արժ.: Ներո), 1972, № 4, ՅՑ. 148—155.

⁸⁵ Տե՛ս Լ. Մուսխելիճիան, քննարկ քարտուղի-գեոգրաֆիկական քննարկության շրջանում (1956—1958 ՎՄ) Մեղրեցի, «ԵՍԽ. ԻՍԹ. Գեոգրաֆ. քրեթլու», I, տ. 1, 1960, ՅՑ. 61.

ԲԱՐԱՆԱ-ԿՈՂՐ

Պատմական Կողբուփոր գավառի կենտրոնը՝ սկզբնաղբյուրներից հայտնի Կողբ կամ Կողբաքար ավանը, վաղ ու միջնադարյան հուշարձաններով հարուստ հնավայր է: Ոչ մեծ տարածքի վրա կան բազմաթիվ եկեղեցիներ, մատուռներ, հին բնակատեղիներ, խաչքարեր՝ այլազան բովանդակություն ունեցող ու տարբեր դարաշրջանների վերաբերող հայերեն վիճակագիր արձանագրություններով: 1963 թ. ՀՍՍՀ ԳՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճակագրական արշավախումբը (ղեկ.՝ Ս. Բարխուդարյան) Նոյեմբերյանի շրջկենտրոնից ոչ հեռու, Բարանա կոչվող տեղանքում, ուր հանգստարան կա, նկատեց վրացերեն արձանագրություն ունեցող մի վեմ: Տեքստը պատճեննելու փորձերը անհաջող անցան, բայց գրավեց նրա գոյությունը: Երեք տարի անց, այդ նույն արձանագիր քարի մասին ծանուցվեց Հայաստանի պատմության թանգարանի տնօրինությանն ու, վերջինիս խորհրդով՝ ակադ. Ա. Շանիձենին: Վրացական հուշարձանների ուսումնասիրության նախանձախնդիր գիտնականը, վիճակագրագետ Վ. Յիսկարիշվիլու ուղեկցությամբ, 1966 թ. օգոստոսի 3—4-ին եղավ տեղում և նախնական հետազոտություն կատարեց: Որոշ ժամանակ անց, քարը սեղափոխվեց Հայաստանի պատմության թանգարան, ուր Ա. Շանիձեն ու Վ. Յիսկարիշվիլին շարունակեցին արձանագրության վերծանության իրենց աշխատանքը և արդյունքները, ուղեգրական մանրամասնությունների հետ միասին, հրատարակեցին 1968 թ. «Բարանայի բերդի արձանագրությունը» խորագրով:

Արձանագրությունը երկար ժամանակ, կարելի է ասել հարյուրամյակներ, գտնվել է բաց տեղանքում (բերդի մուտքի մոտ, որի ավերակները դեռ նկատելի են), ուստի մամուլակալ է, իսկ տեղ-տեղ էլ հողմնահարվել: Այնուամենայնիվ, պահպանվել է առանց շատ մեծ վնասվածքների և հնարավոր է

¹ Նրանց համոտտ թվարկում տես Մ. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 384—387:

² Մանուցող տեղացի հնագետ Ս. Ջիլիգարյանն է եղել:

³ Դպրոցի ՅՈՒՆԵՍԿՈ և ՎՍՍՀ Կոնսերվացիոն, ՅՈՒՆԵՍԿՈ Կոնսերվացիոն, «ժեզլեմ քարտ. ԵՍԽ. Կոնսերվացիոն Մոնումենտ», Ե. 11, «Սաթրաթեղու», տ. 1, 1968, ՅՑ. 17—26.

տեքստի վերծանությունը: Ակադ. Ա. Շանիձեն հիմնականում այն կատարել է պայմանական կամ թևական որոշ ընթերցումներով, միաժամանակ դիտելով, որ դիտական ուսումնասիրության համար անհրաժեշտ է մաքրել քարք կամ, որ նույնն է, հարկավոր է սպասել մինչև քարի մաքրումը⁴: Ուստի նա կատարել է արձանագրության բովանդակության հետ կապված պատմա-բանասիրական բնույթի որոշ հարցադրումներ, շանդրադառնալով նրանց քննությանը: Գնահատելով այս նորահայտ արձանագրության նշանակությունը, Ա. Շանիձեն գրում է. «Հին բերդեր մեզանում շատ կան, սակայն նրանց արձանագրությունները չեն պահպանվել: Առավել ևս ուշագրավ է Բարանայի բերդի արձանագրությունը, որը հին շրջանի համար միակն է»⁵:

Քանի որ արձարձված հողվածում արված են արձանագրություն ունեցող քարի նկարագրությունն ու հանդամանքները, ինչպես նաև՝ հավաստի ընթերցումների պատճառաբանությունը, այլևս անհրաժեշտ չենք համարում անդադառնալ հիշյալ խնդիրներին, թեև որոշ պատճառաբանություններ անհարկի կամ վերանայելի ենք համարում: Մեր հիմնական խնդիրն է՝ արձանագրության սղբյուրագիտական քննությունից առաջ անդրադառնալ վերծանության մեջ թեական համարված բառերին ու դարձվածքներին, իսկ գլխավորը՝ ձշգրտել առանձին բառերի ընթերցումը:

Տող 1. Ա. Շանիձեն ճիշտ է նկատել, որ չորրորդ նիշը է և ոչ Յ, իմա՝ օյ: Հասկանալի է անձնական վերջում գրված բառանջատիչ երկու կետերը, միմյանց մոտիկ փորված լինելու պատճառով, կտրվածքով միացել են: Արձանագրության այլ տողերում ևս Յ կա, և ամենուր աչ ելուստի՝ հիմնական ստեղծի միացնող սլանագիծը ընդհանուրին հավասար փորվածք ունի: Կասկած չի հարուցում նաև նույն տողի ծղլղ տառաշարքը, որին հետևում են օ-ին հատուկ տառահետքեր (նկատելի է փորվածքի ուղղությունը): Եվ քանի որ երկու տառահիշերն էլ խիստ ինքնատիպ են, կարելի է վստահ լինել առկա ընթերցման մեջ և առանց կասկածանքի վերականգնել նաև հաջորդը՝ և -ն: Վերջին տառահիշից դիտելի է միայն ստորին ձախ բուրակը: Բառանջատիչ երկու կետի տեղագրությունից երևում է, որ տառահիշը աչակողմյան ստեղծ չի ունեցել, որ նորից և -ին է բնորոշ (Ն, Լ, Յ տառեր ենթադրելը այս պարագայում անկարելի է, որովհետև դրանք վերին ձախ ելուստ կամ բուրակ են ենթադրում, որ չկա): Ահա, ծղլղտոս կարգալուց հետո ինքնին վերականգնելի է դառնում և բառակերպի տառը. նրանից պահպանվել է ձախակողմյան ստեղծ-փորակը, որի ներքևի մասում թերությունը որոշակի է, իսկ վերևում, ընդհակառակը, ուղղագիծ է դառնում: Պահպանվել է և վերին հորիզոնական գծիկը, որը, իբրև սույն արձանագրության մեջ օ -ի գրություն ինքնատիպություն, միացման կետից ձախ քիչ է շարունակվել (հմմտ. երրորդ տողի Ջ-ն, օճ-ն): Բառի հիմնական մասը վրաց իրականության մեջ արդեն այնքան

հայտնի անուն է մատնացուցում և այնքան եզակի, որ օծլղլղտոս -ից բացի ուրիշ որևէ ընթերցում անհնար է առաջարկել, մանավանդ, երբ տողի շարունակությունից տեղեկանում ենք, որ խոսքը ամիրապատարի մասին է: «Եվանս կուրպատարար» ունենալուց հետո, երեք հնարավոր թևականություն կարելի է առաջարկել՝ Օրբելի, Մխարգոնելի և Արուլբի ուղի: Առաջինը բացառվում է ծղլղլղտոս ունենալու պատճառով, երկրորդը ոչինչ ընդհանուր չունի սովորաբարի հետ (եթև շասնք նաև, որ վրաց Գիմիտրի թագավորի օրոք Իվանն Երկայնաբազուկը կամ չէր ծնվել, եթև խոսքը Գավիթ Շինարարի որդի Գիմիտրիի մասին է, և կամ վաղուց արդեն մահացած էր՝ եթև խոսքը Գիմիտրի Զ-րդին է վերաբերում): Հաջորդ բառը վատ է պահպանված, բայց սեղում են բառանջատման կետերը, որոնց միջև չորս տառանիշ կա: Վերջին երկու տառը ճճ են, պատմի նշանով (ուրեմն՝ թ(օ)ճ), որ անվանական հոլոքի վերջավորությունն է (Ձց օցօցց ...ձօճ): Մնում է պարզել մեկ հարց. սկզբի երկու տառանիշերը ի՞նչ պետք է կարգալ՝ ձձ, ձձ, թԽ՞ օյ: Առաջինը բացառվում է, քանի որ ձձձ-ի (ձձձձձ) ղեպքում պիտի ունենայինք և երկրորդ՝ ձ, որ չկա, քանի որ ձձձ-ի հավասարման նշան, որ չկա, ձ-ի ստորին բուրակի գոյության որևէ հետք, որ նույնպես չկա: ձձ -ի ղեպքում (իմա՝ ձձձձձ), բացի թվարկած ունենալիքներից, սպասելի էր առաջին ձ-ի վերին հորիզոնական ելուստ, որպիսին չի եղել և չկա: Ուրեմն, միակ բնականոն և սակա տառահետքերով թևակողմի ընթերցումը ձձձ-ն է (իմա՝ ձձձձ): Բավականաչափ շուշափելի է ն-ի վերին մասը:

Այսպիսով, օծլղլղտոս ձձ(օ)ճ ընթերցումը ըստ ամենայնի իրական է և հիմնավոր կասկածանքի առիթ չունենք⁶:

Հաջորդ բառից որոշակի կարգացվում է օլ]օօձձձձ տառաշարքը, երկու կողմերից կետերի մեջ առնված, թեև ոչ բոլոր տառերն են լիովին անխաթար: Այսպես, առաջին օ -ից պահպանվել են վերին և ստորին հատկանշական մասերը, երկրորդ օ -ից՝ խիստ որոշակի ստորին մասը: Մյուս տառահիշերի քայքայված տեղերի պատկերը մակարերվում է փորվածքի պատճառով փոս ընկնող հետքերով: Մասնավոր վերականգնման կարիք է զգում երկրորդ տառահիշը, որի տեղը վերևում անկյունավոր փակագծերով է նշված: օ-ի և օ -ի միջև հաստատուպես ինչ-որ գիր կա. այդ երևում է և՛ տառահետքով, և՛ մանավանդ, հիշյալ երկու նիշերի միջև մնացող տարածությունը: Բարեբախտաբար, ստեղծներին հարող քարի հարթակը խիստ քայքայված չէ և կարելի է կոահել, թե տառապատկերի փորվածքը ինչ ուղղություն կարող էր ունենալ. ակներև է մեկ վերծից ստեղծի հետք, վերևում ուղղանկյան տակ ձախ թերթիկ ելուստով: «Աստմթավրուլի» գրություն միայն երկու նիշ կարող էր այսպիսի կառուցվածք ունենալ օ-ն և Ն-ն: Երկրորդը բացառվում է այն պարզ պատճառով, որ ստորին աչ մասում փորակ պետք է ունենար,

⁴ Նշվ. աշխ., էջ 22, 26:

⁵ Նշվ. աշխ., էջ 26:

⁶ Ա. Շանիձեի խոսքերով՝ «Վ. Յիսկարիշվիլուն այս [ընթերցումը] կասկածելի է թվում: Ոչ էլ ես եմ համոզված, որ այսպես լինի, բայց այլ որևէ բան պակաս ենթադրելի է» (Նշվ. աշխ., էջ 23):

ոտն-օն է, մանավանդ որ արձանագրության մեջ խոսվում է այդքան ամուլա ընթացքում կատարած շինարարության մասին: Ուստի պիտի վերականգնել՝ [ոտն]ևս:

Տող 6. Միջամասում տառաշարերը բավական վատ են պահպանվել: Միանգամայն ընդունելի է ապացույցված համարելով սողի սկզբի ու վերջի երկուական բառերի վերծանությունը, անհրաժեշտ ենք համարում անզրահանուկ հրրորդին, ըստ եղած վերծանության՝ ԼՈՓՈՅՐՈ (օջեռն) օա:

Նախապես ասենք, որ քարի վրա օջ գրությունն ոչ մի հետք չկա: Արձանագրության մեջ երկու անգամ օջ կա գործածված, այն էլ նույն սողում (մջծես և մջեսև) ուստի տառանիշիս գրվությունը հեշտ ստուգելի է. երկու փորակները վերին մասում հատվում են ստեղնի եզրակետում, վերից վար փոքր-ինչ սեղմված շրջագիծ կաղմելով: Մինչդեռ հիշյալ գրվու- թյանը բնորոշ որևէ հետք չունենք. պահպանված են ձախակողմյան ուղղա- հայաց ստեղնի և նրանից կորույթյամբ աջ թեքվող ելուստի նշմարելի հետքեր: Ընդ որում, հենց այդ տառանիշի (ինչպես երևում է՝ և-ի) վրա էլ պատվի նշան է գրված: Եթե օջեռն օա առանձին բառ ունենայինք, ապա այն ԼՈՓՈՅՐՈ-ից անջատված պետք է լիներ երկկետով, որից հետք չկա: Ավելին, ո՛չ Գիմիարե 1-ը և ո՛չ էլ 11-ը սոսի ակնաղ թագավոր հորջորջվելու փաստական առիթ չունեին, որովհետև նրանք երկուսն էլ, եկեղեցական տերմինով ասած, համայն վրաց թագավորներ էին: Ուստի վերծանությունը պետք է ճշգրտել, և ԼՈՓՈՅՐՈ օջեռն օա մեջտեսև-ի փոխարեն կարգով ԼՈՓՈՅՐՈ-ՐՈՍԵՏԱ մեջտեսև¹⁴:

Արձանագրության հաջորդ սողերում ընթերցման ճշգրտելիքներ չկան և պահպանվածության աստիճանն էլ անհամեմատ մխիթարական է:

Ամփոփելով սույն քննությունը, արձանագրության վերականգնված բնագիրը կլինի հետևյալը.

- 1 մե օ(ճան)ց օծլլեոտիս ժեմ(ան), օտաձ(ա)լթ(ան) և օմօ-
- 2 րնաս(ա)լարմ(ան) Լմանիս Կաջիլց և Ե-օ-
- 3 եց օց(ան)ց և Եօրի տ(ան)ա համուլոյ(ան)ց. ցեց
- 4 ժ(լլ)ց(ան) Լլտա յ(ան)տա օջջոօ և ևսՄի-
- 5 Մի <ոյ>օ: Դոտնևս օլլցս ցեց Եից օջ-
- 6 օց մ(լլ)լ(ան)ա Լմնոյրիս(ան)տա մ(լլ)լ(ան)և. ևս
- 7 Մ(լլ)լ(ան)ա Լ(մերտմ)ան տ(լլ)լ(ան) ցեցոյ յ(ան)մի մոլլց(ան), րոլլց և-
- 8 Լցոմի տ(լլ)լ(ան) Լլլց օլլց ցրոլլ(լլ)լ(ան) Մ(ոն)օ
- 9 Լ(ոյ)լ(ան)ոյրիս(ան)և. օլլ(ան)և.

ՔԿ I (96)

Աղ. XXV

¹⁴ Հապավումը թիրա կարելի է բացել և ԼՈՓՈՅՐՈՒՍԵՏԱ:

Յարդամություն. Ես, Իվանն Մրուկբի որդիս՝ արարելիս և ամիր- սպասալարս, Գմանխը վերցրի և բերդ կառուցեցի ու կիրք մետս բերի: Այս երկիրը երկար ժամանակ ավեր ու անարկու էր. չորս ամսում սույն բերդը կառուցեցի՝ Գիմիարե արքայի թագավորության օրոք: Եվ մեզա- նից հետո աստված ձեզ այնպիսի ժամանակ տա, որ ձեր կայանը Բաղդաս դառնա՝ Գիմիարեի հավատարմությանը ներքո: Ամեն:

Սույն արձանագրությունը ամենից առաջ աչքի է զարնում իր, այսպես ասած, դորձնականությամբ. նրանում բանաձևային ու ավանդական ոչինչ չկա, և իրադրություն-եղելությունները թվարկված են խիստ որոշակի շարա- գրանքով: Միակ «ավանդականը» թվական չունենալն է, որ հարկադրում է լրացուցիչ քննություն կատարել՝ ընձևած ավանդները լրարժեք դարձնելու համար¹⁵: Զարմանալի զուգադիպությամբ, 12—13-րդ դարերի վրաց պատմու- թյան մեջ երկու Գիմիարե թագավոր կա (1125—1156 և 1270—1289 թվական- ներ) և երկուսի օրոք էլ Արուկբի որդի եղել է¹⁶: Նրանցից առաջինի մասին նորոշ վկայություն քաղում ենք «Աշա-Գեորգի Ժամանակվա մատենագրի» կրկից, ըստ որի «իր թագավորության քսաներորդ տարում» «Գիմիարեն երկից, ըստ որի «իր թագավորության քսաներորդ տարում» «Գիմիարեն Արուկբի որդի Իվանեի զլուրը հասցե»¹⁷ (1125+20=1145 թ.): «Թագակրաց պատմությունն ու ներբողյալն» աղբյուրից տեղեկանում ենք, որ այս Իվանեն նշանավոր (զամոռեցեո) անձնավորություն է եղել, որին փախստյան է մատենել թուրք Կուլը կամ նրա հայրը¹⁸: Վարդանը նրա մասին պատմում է, թե «Իսկ թագաւորն (իւմա՛ Դավիթ Շինարարը—Պ. Մ.) զԱրուկբի և զորդին իւր զԻւանէ թողալ յ Ամի՛ դառնալ յերկիր իւր, ընդ իւր տանելով զԱյլսուար որդուլք իւրուլք, ուրք անդէն մեռան և ոչ ևս դարձան»¹⁹: Այդ նույն «Աղբյ- սուարի» որդիներից մեկը՝ Փաղույնը, «Իբրև Լուսա... զմաճն Դավթի, դալ ի խնդիր հայրենի քաղաքին Անույ, և աղերսանօք խնդրէ յԱյուկբի և յաւազց քաղաքին. և զի կայր քաղաքն ի մեծի վտանգի ի թուրքաց, ևս ի նա Այուկբի՝

¹⁵ Ակաղ. Ա. Շանիձի համոզմամբ՝ «Տեղի շղույթյամբ պետք է բացատրել, որ վերջում սպասելի բրնձիկոնը չի դրված» (նշվ. աշխ., էջ 24): Թերևս ընդունելի պատճառաբանություն է, եթև հաշվի չառնենք, որ բաղձաթիվ այլ արձանագրությունների ա թվական չունեն, իսկ գրելու տեղ՝ կամեցածի շահ:

¹⁶ Մրուկբի որդի և ոչ՝ Մրուկբիս-ան գրելու պատճառն այն է, որ այդ ազգանունը մեր ժամանակագրությանը ծանոթ է հիշյալ ձևով: Հայերենի համար առավել ընտանի կլիներ Արու- կբյան գրել՝ Դամո. Գիմիար Մրասա որդի-Արասյան), բայց այս էլ ավելորդ թուրքմատչու- թյան տեղիք կարող էր տալ: «Արուկբյան» դրոմ ենք տոհմի մասին խոսելիս:

¹⁷ Մ. Մ., I, 367; Ակաղ. Ն. Բերձնիշվիլին 11—12-րդ դարերում Արուկբյան տոհմի տիրույթ է նկատում Մուրթան-Ձիզադներ (անհա նրա՝ սալթ. Սեթ. Սեթոսեցե, I, 52): Նույն գիտնականի համոզմամբ՝ Դավթ Շինարարը, այլ նախարարական տների թվում, կոտրել է և Արուկբյան- ների հպարտությունը (նշվ. աշխ., II, 41): Աղբյուրը, հավանաբար, Դավթ Շինարարի նշա- նավոր «Կտակն» է (տես ՚Մարտ. Սեթարտ. ժյցւցըն», Ժ. II, 83. 12—18):

¹⁸ Մ. Մ., I, 7.
¹⁹ «Հաւարուսն Պատմութեան Վարդանայ վարդապետա», վննտիկ, 1862, էջ 119: Սուույն է մանրամասն քննությունը տես Ք. Յարջաբով, Բամլենոմե քննարկ XII և-ն ճեղ- րոյ թղտոյեղն Սալթ Սեթարտու, Լոմ, Ժ. 165, տձ., 1975, թյ. 81—89.

խնայելով ի քրիստոնեայան, ևս առանել չորդին իր Իւանէ, զի մի կորիցէ ի լաճայ մարտիցն: Եւ ինքն անցեալ գնաց ի տուն իւր»²⁰; Ս. Անեցու տեղեկությամբ «ՇՀԸ թուին... Ապուլեթի և Իւանէ որդի նորա զԴիմախիս առին» (էջ 129):

Այստեղ հարկ չկա լրացուցիչ մանրամասնությունների մեջ մտնել, որովհետև Իվանե Արուսեանի որդի առաջինը մեր արձանագրության մեջ հիշատակված անձնավորությունը չի կարող լինել: Վերջինս արքայի և ամիրսպասալար է, իսկ պատմական հավաստի տեղեկություններով ավարելիության ինստիտուտը վրաց արքունիքում կիրառություն գտալ միայն 13-րդ դարի սկզբներին, և այդ պաշտոնը առաջին անգամ Իվանե Երկայնաբազուկը կրեց²¹: Ուրեմն բնությունը պիտի վերաբերի Արուսեանի այն որդիներից մեկին, որոնց հանդեպ, ըստ «Վրաց ժամանակագրության» հաղորդման, շարագործություն արեց Ահմադ խանը. նա «սպանեց Հունաստանից բերած իր եղբայր Ղոնդարդին և Արուսեանի երկու որդիներին, որոնք փախել էին Սագունից: [Սպանությանը աջակցեց նաև] Սագունի որդի Խուսիբուզան»²²: Ստ. Օրբելյանի վկայության շնորհիվ հնարավոր է դառնում ճշտել, որ սպանված Արուսեանի եղբայրները նշանավոր Չազանի որդիներն էին: Նա գրում է. «Եւ յերրորդում ամի տէրութեան իւրոյ [Ահմադ] Կսպանի Մուղան գմիւս եղբայրն զՂանդարթայն և գտուտանն Հոռոց զԽիսթադինն և զԵրկուս որդիսն Յագանին»²³: Այս Յագան-Չազան Արուսեանի (Երիսթապաց-Էրիսթավ Իվանեի որդին) գիտությունը հայտնի է ևս այլ աղբյուրներից, մասնավորապես՝ պահպանվել է 1260 թվականը կրող նրա հրովարտակը²⁴, իսկ Երուսաղեմի ս. Խաչ հեղեղցու Հայտնավորքի հիշատակագրություններում նրա հիշատակին «աղապ» (միջնադարյան վկայված տերմինով՝ «սէր», իմաստաբար, մատաղ) է սահմանվում²⁵: Բարանայի արձանագրության մեջ հիշատակված Իվանեի հինգ այս Յագանի որդիներից մեկն է, որի անունը ևս հայտնի է Ք. Փորդանիայի հրատարակած վավերագրերում²⁶: Նրանց սպանությունը տեղի է ունեցել, ինչպես «Վրաց ժամանակագրության» վկայակցված հատվածից իմացանք, Ահմադ խանի օրոք՝ նրա նույնպիսի ամիրսպասալարի կողմից: Ահմադ Թևուդարի խանության շրջանը 1282—1284 թվականներին է ընկնում²⁷, իսկ հիշյալ շարագործությունը նա կատա-

